

KANTSASAR / ANNUAL SPECIAL

# ԱՂՁԱՄԱՐ

ԲԵՐԻՈՅ ԸՍՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ  
ՍՈՒՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԸ




ԲԱՅՐԵՆ  
ՓԵՆՈՐԸ

ԲԱՅՍԱՌԻԿ  
2021







ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹԻՒՆ ՆԱԽԱԳԱՆ  
ՊԱՇՇԱՐ ԱԼ ԱՍԱՏ



**ԳԵՐՇ. Տ. ՄԱՍԻՍ ՍՐԲ. ԵՊՍ. ԶՕՊՈՒԵԱՆ**  
**ԱՌԱԶՆՈՐԴ ՆԱՅՈՑ ԲԵՐԻՈՅ ԹԵՄԻՆ**

KANTSASAR / ANNUAL SPECIAL



# ԱՆՉԱՍԱՐ

ԲԱՑԱՌԻԿ  
2021

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ  
ԿԱԶՄ

ԽՄԲԱԳԻՐ՝  
ԶԱՐՄԻԿ ԶԻԼԱԲՕՇԵԱՆ - ՊՕՂԻԿԵԱՆ

ԷԶԱԴՐՈՂ ԵՒ ՁԵԲԱԲՈՐՈՂ՝  
ՅՈՎՍԷՓ ԶԱԼՕՂԼԵԱՆ

ԳՐԱՇԱՐ՝  
ԱՆԻ ԹՈՓԱԼԵԱՆ - ՍԱՐՈՒԽԱՆ

ՍՐԲԱԳՐԻՉՆԵՐ՝  
ԶԵՓԻԲԻ ՊԱՊԻԿԵԱՆ - ԱԲԱԳԵԱՆ  
ՎԵՆԱՆ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

ԿԱՅՔԷԶԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՐ՝  
ՔՐԻՍՏ ԽՐՈՅԵԱՆ

ՆԱՇՈՒԱՊԱՆ՝  
ՍԵԲԱԿ ԿԻԼՎԱՆԷՍԵԱՆ

ԲԱՑԱՌԻԿԻ ՄԵԿԵՆԱՍ՝  
ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.  
ԱԲԵՏԻՍ ԳԱՐԱԿԻԼԼԷԵԱՆ



## ՍՈՒՐԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆՈՒԹԵԱՄԲ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՆՉՑՈՂ ԵՒ ԴԱՏԱՊԱՐՏՈՂ ԲԱՆԱԶԵԻ ՄԸ



Հինգշաբթի, 14 Փետրուար 2020-ին, ՍԱՆԱ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ պատմական քայլով մը Սուրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ ընդունեց 20-րդ դարու սկիզբը Օսմանեան Կայսրութեան ծրագրաւորումով եւ գործադրութեամբ իրականացած Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող եւ դատապարտող բանաձեւ մը:

Բանաձեւին մէջ կ'ըսուէր.«Սուրիական Արաբական Հանրապետութեան խորհրդարանը կը ճանչնայ եւ կը դատապարտէ Հայոց Ցեղասպանութիւնը, որ գործադրուեցաւ Օսմանեան պետութեան ձեռամբ, քսաներորդ դարու սկիզբը: Խորհրդարանը կը դատապարտէ նաեւ որեւէ կողմէ այս յանցագործութիւնը ուրանալու կամ պատմութիւնը նենգափոխելու փորձերը, հաստատելով որ Հայոց Ցեղասպանութիւնը մարդկութեան դէմ ի գործ դրուած ամենէն դաժան ու սարսափելի յանցագործութիւններէն մէկն է»:

Բանաձեւին մէջ կը յիշուէր նաեւ որ. «Սուրիոյ խորհրդարանը իր ամբողջական զօրակցութիւնն ու կարեկցանքը կը յայտնէ բարեկամ հայ ժողովուրդին, հաստատելով որ հայերը, սուրիանիները, ասորիները եւ այլօք այդ ժամանակաշրջանին Օսմանեան Կայսրութեան կողմէ համակարգուած ցեղային սպանդի եւ զանգուածային ջարդերու զոհը դարձան: Ուստի խորհրդարանը կոչ կ'ուղղէ աշխարհի խորհրդարաններուն, համաշխարհային հասարակական կարծիքին եւ ողջ միջազգային հանրութեան ճանչնալու եւ դատապարտելու Հայոց Ցեղասպանութիւնը»:

Սիւրիոյ խորհրդարանի նախագահ Համմուտա Սապպաղ իր խօսքին մէջ ըսաւ. «Մենք Սուրիոյ մէջ ապրեցանք ու կ'ապրինք ատելութիւն սերմանող օսմանեան գաղափարախօսութեամբ առաջնորդուող թրքական բռնարարքներն ու յարձակողապաշտ քաղաքականութիւնը, ուստի ցաւով կը յիշենք Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտողանի նախնիներուն կողմէ կատարուած սարսափելի յանցագործութիւնը բարեկամ հայ ժողովուրդին նկատմամբ, որ ի կատար ածուեցաւ ցեղասպանութեամբ, տղամարդոց, կանանց, ծերերու եւ մանուկներու վայրագ սպանութեամբ»:

Սապպաղ եզրափակելով ըսաւ. «Սուրիացիները քաջածանօթ են այս տեսակի նողկալի ցեղասպանական յանցագործութիւններուն, որովհետեւ անոնք կ'ենթարկուին նոյն տեսակի դաժան ահաբեկչութեան, նոյն յանցագործին կողմէ, եւ որովհետեւ սուրիացի ժողովուրդն էր որ փրկեց ու ապաստան տուաւ 1915-ին Օսմանեան կայսրութեան ցեղասպանական արարքներէն մազապուրծ փրկուողներուն»:



## ՆԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՆԱՏԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՂՕՂԱՆՋՆԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ՊԻՏԻ ՆՆՉԵՆ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԷՆ ՆԵՐՍ ԵՒ ՍՈՒԳՆ ՈՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ ՆՊԱՐՏՈՒԹԵԱՆ



*Մասիս Եպս. Զօպուեան  
Առաջնորդ Հայոց Բերիոյ Թեմին*

Նոր տարուան սեմին, Քրիստոսի Սուրբ Ծնունդով եւ Աստուածայայտնութեամբ հոգիներու փրկութեան լուսաւոր կեանքի հորիզոնը կը բացուի մեր առջեւ, վերաքննելու եւ վերակազմակերպելու մեր հաւաքական թէ անհատական կեանքը:

Ակնարկ մը նետելով յաջողութիւններով եւ դժուարութիւններով լեցուն մեր պատմութեան վրայ, պիտի տեսնենք, որ հայ ժողովուրդը առաջին ժողովուրդն էր, որ ընկալեց Աստուածորդոյն պատգամները, աւետաբեր Աւետիսը, որ դարձաւ մեր միասնականութեան եւ փրկութեան գրաւականը: Մեր պատմութեան հանգրուանները կը վկայեն հայ ժողովուրդին ունեցած հաւատարմութիւնը քրիստոնէական հաւատքին նկատմամբ, 301-ին Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակելով, 406-ին՝ հայ գիրերու գիւտով եւ Աստուածաշունչի հայերէն թարգմանութեամբ, 451-ին՝ «վասն հաւատքի եւ հայրենեաց» մղուած պատերազմով, ապա հայրենքի ազատութեան եւ մեր ինքնութեան պահպանման համար մղուած հերոսական մարտերով, որոնց ընթացքին հայ ժողովուրդի գաւակները իրենց

կեանքը նուիրաբերեցին եւ որպէս լոյսի որդիներ հաւատարիմ մնացին քրիստոնէական հաւատքին եւ Քրիստոսի ուսուցումներուն:

2020 թուականը մարդկութեան համար մարտահրաւերներով եւ դժուարութիւններով լեցուն տարեշրջան մը հանդիսացաւ: Նոր պայմաններու լոյսին տակ, պսակածեւ ժառիրի համավարակին տարածումը մարդկութեան ընկերային կեանքը սահմանափակեց եւ հազարաւոր կեանքեր խլեց: Հայ համայնքը եւս համաճարակին պատճառով ունեցաւ կորուստներ, հիմնականօրէն ազգային կեանքէն ներս ծառայողներ: Աւելին, տնտեսական ծանր իրավիճակը եկաւ դժուարացնելու մեր ընտանիքներուն կեանքը եւ ազգային թէ եկեղեցական կառոյցներուն գործունէութիւնը: Հոս հարց կու տանք, թէ արդեօք մարդկութիւնը դերակատարութիւն ունի այս պատահածներուն մէջ եւ իր ապրելաճով չի՞ կրնար փոխել իրավիճակը: Վըստահաբար կրնայ, երբ իր ուշադրութեան կիզակետը դարձնէ մեր Փրկիչը՝ Յիսուս Քրիստոսը եւ քրիստոնէական հաւատքի առաքնութիւններով բարեգարդարէ իր կեանքը՝ բարիք ցանկալով իր նմանին:



# Գանձասար

Բերիոյ Յայոց Թեմի բոլոր շրջանները՝ Յալէպ, Գամիշլի, Լաթաքիա, Թարթուս եւ Քեսապ եկեղեցական թե ազգային ծաղկուն գործունեութիւն ունեցան, սակայն նոյնպէս ենթարկուեցան համաճարակին պարտադրած նոր գործելաոճին: ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին ցուցմունքներով եկեղեցական արարողութիւնները որոշ ժամանակ մը դնւիսակ եւ առջանց սփռումով կատարուեցան, ապահովելու համար մեր ժողովուրդի գաւակներուն առողջութիւնը: Հովուական այցելութիւններով յաճախ գտնուեցանք Բերիոյ Յայոց Թեմի բոլոր շրջաններու մեր ժողովուրդի գաւակներուն հետ, գտնելու հետեւ մեր հայրական քաջալերանքը ցուցաբերեցինք անոնց: Մեզի համար ուրախութիւն էր Դամասկոսի եւ Գամիշլիի մեր ազգային վարժարանները երկրորդական բաժինով օժտելու նախաձեռնութիւնը, յօգուտ մեր ժողովուրդի գաւակներուն:

Անցնող ամիսները ցաւով լեցուն ամիսներ եղան հայ ժողովուրդին համար, որովհետեւ Արցախի գոյապայքարը վերջ գտաւ պարտուողական համաճայնագիրի ստորագրութեամբ եւ պատճառ դարձաւ, որ մենք կորսնցնենք Արցախի մեր պապենական մեծաթիւ հողատարածքները: Փառք ու պատիւ մեր զինուորներուն եւ նահատակներուն, որոնք ահագանգը լսելով Յայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքէն փութացին Արցախ եւ առաջնագիծի վրայ իրենց ամենաթանկագիւղը՝ կեանքը ընծայաբերելով մինչեւ վերջին վայրկեան հաստատուն մնացին իրենց վըստահուած առաքելութեան վրայ: Սուրիահայ երիտասարդները անմասն չմնացին Արցախի հերոսական մարտերուն իրենց մասնակցութիւնը բերելէ: Սուրիոյ պատերազմին հայկական թաղամասերը պաշտպանող մեր խիզախ երիտասարդները այս անգամ հասան Արցախի օգնութեան եւ իրենց ընտանիքները ձգելով հայրենիքի պաշտպանութիւնը առաջնահերթ նկատեցին:

*«Մեծագոյն սերը այն սերն է, որով մարդ ինքզինք կը գոհէ իր բարեկամներուն համար» (Յհ 15.13):*

Սիրելի՛ հարազատներ,

Աստուածաշնչական այս համարը մեծ խորհուրդ ունի ինքն իր մէջ: Քրիստոնէական բառապաշարին եւ ուսուցումներուն մէջ զոհողութիւնը, համբերութիւնը եւ սերը ամենաշատ կրկնուած եւ ուսուցանուած բառերն են: Յիսուս իր աշակերտներուն սորվեցուց, որ կեանքի սերերուն մէջ կայ մեծագոյն սեր մը, որ կը թարգմանուի զոհողութեամբ, նահատակութեամբ, նուիրումով եւ ծառայութեամբ՝ մեր բարեկամներուն եւ ընկերներուն նկատմամբ: Յայկական առումով մեր այբուբենի բառապաշարին մէջ «հայրենիք», «ազատութիւն», «Յայաստան», «Արցախ», «պահանջատիրութիւն», «հայկական հարց», «հայ դատ» բառերը մեր էութեան մաս կազմող եւ առօրեայ կեանքին մէջ ամենաշատ գործածուող բառերն են:

Անցնող օրերուն, Արցախի գոյապայքարին նահատակուած շուրջ 5000 նահատակները եւ հազարաւոր վիրաւորները ընտրեցին սիրոյ տարբեր ճանապարհ մը, արտայայտելով իրենց գերագոյն սերն ու նուիրումը քրիստոնէական հաւատքին եւ մեր հայրենիքին՝ Յայաստանին եւ Արցախին նկատմամբ:

21-րդ դարու հայ պատմիչը, երբ լսէ վերապրող մեր հերոսներուն պատումները եւ անոնց կատարած հերոսական գործողութիւնները, հակառակ ռազմական պարտութեան վստահօրէն պիտի սքանչանայ եւ պիտի խոնարհի մեր երիտասարդութեան երկաթեայ կամքին եւ ծով զոհողութեան առջեւ: 21-րդ դարուն բոլորս ենթակայ ենք անտարբերութեան, թուամորթութեան, յանձնուելու հոգեբանութեան, սակայն հակառակ բոլոր մարտահրաւերներուն եւ հաճոյքներուն, ահաւասիկ կը տեսնենք մեր ազգի հերոս երիտասարդները, գիտակից հայորդիները, որոնք ընտրեցին կեանքի դժուարին, բայց պատուաբեր ճանապարհ մը, որ զոհողութեան եւ գիտակից մահուան ճանապարհն է եւ դժմ յանդիման եկան մահուան հետ: Ո՞ր կը գտնենք այսօր նման երիտասարդներ, որոնք երբեմն զէնքով, երբեմն առանց զէն-



քի, այլ խաչի զօրութեամբ ընտրեցին պատերազմի դաշտը: Անոնք նահատակուեցան այն հողին վրայ, ուր իրենց եղբայրները 30 տարիներ առաջ պայքարելով եւ իրենց արիւնը թափելով ապահովեցին Արցախի ազատութիւնը: Անցնող շաբաթներուն, մեր նախնիներու նոյն հաւատքով եւ կամքով տոգորուած, նոյն կրթութեամբ եւ դաստիարակութեամբ կերտուած մեր նոր սերունդի քաջարի երիտասարդներէն հազարաւոր նուիրեալներ, բանակին մէջ ծառայողներ թէ աշխարհականներ, երբեմն պարզ քաղաքացիներ, Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքէն փութացին Արցախ՝ շարունակելու հայրենիքի ազատագրութեան անվերջ պայքարը եւ պաշտպանելու հայրենի հողին վրայ կառուցուած մեր նուիրական կառոյցները, վանքերն ու եկեղեցիները՝ ցեղասպան թշնամիին հարուածներէն:

Եթէ հարց տանք վիրաւոր երիտասարդին, որ այսօր կը գտնուի Հայաստանի հիւանդանոցներուն մէջ, թէ կ'արժե՞ր արդեօք այս պատերազմը մղել եւ հազարաւոր զոհեր, մարտիրոսներ եւ վիրաւորներ ունենալ, վստահ ենք, որ մեր բոլոր երիտասարդները պիտի պատասխանեն ըսելով՝ այո՛, կ'արժէ: Հայրենիքին եւ քրիստոնէական հաւատքին համար նահատակութիւնը կ'արժէ, որովհետեւ անոնք հերոսական պայքարով եւ զոհողութեամբ արժեւորեցին մեր ազգի նուիրական արժէքները, որոնցմէ մեծագոյնը հայրենիքն է եւ հայրենի հողին ժառանգուած քրիստոնէական մեր հաւատքը:

Սիրելի՛ հարազատներ,

Հայրենիքը ոսկիով չի գնուիր: Մեր նախահայրերը ոսկիով չգնեցին զայն: Հայրենիքը գնուեցաւ ո՛չ գիտնականներուն հանճարով, եւ ո՛չ ալ փոքր զոհողութիւններով, որոնցմով երբեմն կը հպարտանանք, այլ արեամբ եւ կենդանի գիտակից նահատակութեամբ՝ ազգի ազատութեան նուիրական սեղանին վրայ:

Ոմանք նահատակուեցան հայրենիքին համար, սակայն շատեր պէտք է ապրին հայ-

րենիքին համար: Անոնք մեռան, որպէսզի մենք ապրինք: Մեր ապրած կեանքը որքանո՞վ կ'արժեւորենք եւ արդեօք անոնց կընքած մահը աւելի քաղցր չե՞ք քան մեր ապրած կեանքը: Որքանո՞վ ուրախ է այսօր հայուն սիրտը: Ո՞ր եւ մեր նախնիին հպարտութիւնն ու անցեալի փառքերը, որոնց մասին հպարտութեամբ կը խօսեինք օտար ազգերուն եւ ժողովուրդներուն:

Այսօր խոստովանիւք, որ հայը ընկճուած է, հայը ռազմականօրէն պարտութիւն կրած է: Հազարաւոր զոհեր, երիտասարդներ իրենց մատղաշ տարիքը ընծայաբերեցին ազգի նուիրական սեղանին վրայ: Անոնք Քրիստոսի մասին չքարոզեցին, այլ Քրիստոսի համար իրենց արիւնը զոհաբերեցին, ո՛չ խօսքով, այլ գործով: Անոնք Աւետարանը չբռնեցին, սակայն Աւետարանին համար իրենց կենդանի աչքերով մահը տեսան եւ հողին յանձնուեցան: Այս է վաւերական քրիստոնէան, որ ո՛չ խօսքով, ո՛չ լաւ պատգամելով եւ ո՛չ ալ լաւ քարոզելով, այլ իր ամենասուղը՝ կեանքը ընծայաբերելով իր ամէն ինչը կու տայ ազգին համար: Ազգին համար կու տանք մեր քսակէն, մեր ժամանակէն, կը զոհենք շատ բաներ, սակայն քիչեր են անոնք, որոնք իրենց ամէն ինչը կու տան՝ իրենց անձերը կը նուիրաբերեն վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց:

2000 տարի առաջ այլ ճակատամարտ մը մղուեցաւ: Երիտասարդ մը՝ Յիսուսը, քաջութիւնը ունեցաւ առանձնաբար պայքարելու չարին բոլոր ուժերուն դէմ: Շատեր կարծեցին, թէ Յիսուսի մղած պայքարը անյոյս եւ անօգուտ պայքար մըն է: Շատեր հեռացան եւ Քրիստոսը խաչին վրայ առանձին ձգեցին:

Քրիստոսի պայքարը ներքին պայքար մըն էր: Սուգը պատած էր ամենուրեք, այնպէս ինչպէս Աւագ Հինգշաբթի երեկոյեան եւ Աւագ Ուրբաթ կը յիշենք Քրիստոսի խաչելութիւնն ու թաղումը եւ կը սգանք, սակայն տարբեր էր երրորդ օրուան պատկերը՝ յարութեան առաւօտը: Այսօր մենք եւս պէտք է խտացնենք մեր ներքին մղումը: Ներքին պայքար մըն է որ կը մղուի այսօր հայուն մէջ,



# Գանձասար

երբեմն հայր հայուն դեմ դժբախտաբար: Այսօր հայը պետք է վերանորոգե իր յանձնառութիւնը, յոյսը եւ հաւատը՝ իր հայրենիքին նկատմամբ, այն խոր համոզումով, որ յարութեան երրորդ օրը անպակաս պիտի ըլլայ մեր կեանքէն եւ մեր նահատակներուն յարութեան եւ յաղթանակի դօղանշները դարձեալ պիտի հնչեն մեր եկեղեցիներէն ներս եւ սուգն ու պարտութիւնը պիտի փոխակերպուին յաղթանակի ու հպարտութեան:

Ի գուր տեղ չէր անոնց նահատակութիւնը: Այո՛, այսօր սուգի մեջ ենք, սակայն իւրաքանչիւր հայ պետք է աշխատանք տանի այդ սուգն ու տկարութիւնը փոխակերպելու զօրութեամբ, յոյսով, հաւատքով եւ լաւատեսութեամբ: Եթէ այդպէս չընենք՝ վաւերական պարտութիւն մը կրած կ'ըլլանք:

Այսօր հայ ժողովուրդը պարտուած չէ, այլ պետք է անգամ մը եւս ոտքի կանգնի: Հայաստանի մեջ մասնաւորաբար մեր հայրենիքին շուրջ պետք է միանան մեր կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները, պաշտպանեն մեր հայրենիքը, այնպէս ինչպէս դարեր շարունակ մեր ժողովուրդի գաւակները պաշտպանեցին, պայքարեցան եւ 28 Մայիս 1918-ին ազատ եւ անկախ Հայաստանը շնորհեցին մեզ: Պետք է վերանորոգենք մեր ուխտը, գիտակցութիւնը, յանձնառութիւնը, հաւատքը եւ յոյսը, որպէսզի օր մը Տիրոջ կամքով վերատիրանանք մեր կորսնցուցած հայրենիքին:

22 Նոյեմբերը Արցախի նահատակ հերոսներու յիշատակի օր հռչակուեցաւ եւ համայն հայութիւնը հոգեհանգստեան արարողութեամբ աղօթք բարձրացուց առ Աստուած, մեր նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար: Հիմնուելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի կոչին վրայ, Բերիոյ Հայոց Թեմը նոյնպէս յարգեց իր նահատակները: Մեր հայրական կոչը պիտի ըլլայ մեր ժողովուրդի գաւակներուն՝ պահել հաւատքը Պօղոս առաքեալի բառերով. «*Հաւատքը պահեցի եւ պայքարը մղեցի*»: Հաւատքը պետք է պահենք առաջին հերթին մեր անձերուն

նկատմամբ: Հայը պետք է հպարտ մնայ իր անցեալով, մերժելով տկարութիւնն ու պարտութիւնը, ինքնավստահ կերպով կազմակերպէ հայրենի մեր կեանքը, ինչու չէ՛ նաեւ ազգային-թեմական կեանքը: Հայ ժողովուրդը տկարութիւն չի ճանչնար: Հետեւաբար, պետք չէ յանձնուիւնք ներկայ պարտութեան եւ տկարութեան: Երկրորդ՝ Հաւատքը պետք է պահենք մեր իտեալներուն եւ ձգտումներուն նկատմամբ: Մեր իտեալները, երազներն ու ձգտումները պետք է կենդանի մնան մանաւա՛նդ մեր Նոր սերունդի երիտասարդներուն մեջ, որովհետեւ անոնք են ապագայ մեր պայքարող երիտասարդները, բանիւ եւ գործով: Եւ վերջապէս ամենակարեւորը հաւատքը պետք է պահենք Աստուծոյ նկատմամբ, այն Աստծոյն, որ մեր ցաւերուն ընկերակից եղաւ մեր ամբողջ պատմութեան ընթացքին:

Յիշելով Հալէպահայ երեք խիզախ նահատակները՝ Յարութը, Մոսիկը եւ Յակոբը, որոնք անցնող օրերուն հայրենի հողին հերոսաբար յանձնուեցան, եկե՛ք սիրելի հարազատներ անոնց հետ միասին որպէս սուրիահայեր վերանորոգենք մեր ուխտը եւ լաւատեսութեամբ ու հաւատքով շարունակենք պայքարի մեր գոյերթը: Զրիստոնեական եկեղեցւոյ պայքարը խաչով սկսաւ, սակայն իր աւարտին չհասաւ: Նոյնն է պարագան մեր ազգին, որպէս եկեղեցի մեր պայքարը վերջ չունի: Հայուն համար յանձնուիլ գոյութիւն չունի: Պիտի շարունակենք մեր պայքարը նոյն յանձնառութեամբ եւ գիտակցութեամբ, եւ Նոր յաղթանակներ ձեռք պիտի ձգենք ի փառք ու պատիւ մեր նահատակներուն, Հայաստանին եւ Արցախին:

Նոր տարուան առիթով մեր բարեմադրութիւնները կը փոխանցենք սուրիահայութեան կեանքը արտացոլացնող «Գանձասար» շաբաթաթերթի վարչութեան եւ խմբագրակազմին, որոնց հարթակէն աստուածային ներգործութեամբ արեւշատ, առողջ եւ Նոր ձեռքբերումներու տարի կը մաղթենք համայն հայութեան, սուրիահայ համայնքին, Բերիոյ Հայոց Թեմի բոլոր շրջաններուն, ժողովականութեան եւ ժողովուրդին:

Խմբագրական

# ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԱՆԻՔԸ

*Չարմիկ Պողիկեան*

2020-ին, սուրիական պատերազմի բախումնային փուլերու աւարտին, տագնապին վրայ ազդեցութիւն բանեցնող ուժերու վերադասաւորման շարժումներ նկատուեցան: Յատկապէս այն ուժերուն, որոնք առանց Սուրիոյ կառավարութեան համամտութեան ներխուժեցին Սուրիա եւ հրահրեցին տագնապը:

Յատկապէս Սուրիոյ Զիւսիսային շրջանին հետ կապուած ճամբաներու վերաբացումով, թրքական ուժերուն շարք մը ապահովական գօտիներէն դուրս գալով նկատելի էր, որ ռուս-թրքական համաձայնութիւնը որոշակի արդիւնքի հասած էր սուրիական կարգ մը տարածքները թրքական ուժերու վերահսկողութենէն մասամբ դուրս բերելու առումով: Այնուամենայնիւ այդ ուժերը տակաւին կը գրաւեն Սուրիոյ հիւսիսային շրջանի նկատառելի տարածքներ եւ կը շահագործեն սուրիական հողը, անոր բերքն ու ջուրը, նոյնիսկ ժողովուրդէն մաս մը՝ իրենց այլազան ծրագիրներուն ծառայեցնելու համար:

Ամերիկեան միջամտութեան ազդեցութիւնը եւս, զինուորական առումով մեղմանալով մեկտեղ, առկայ կը մնայ հիւսիսային շրջանին մէջ, յատկապէս այդ ուժերուն ենթակայ խմբաւորումներու կողմէ Սուրիոյ քարիւղային հանքերու գրաւումով, զանոնք պետական վերահսկողութենէն դուրս պահելով եւ ԱՄՆ-ի պարտադրած տնտեսական պատժամիջոցներով:

Սուրիոյ պետութիւնը դիւանագիտական, զինուորական, արտաքին եւ ներքին քաղաքականութեան իր բոլոր միջոցները լարած աստիճանաբար կը ջանայ դուրս մղել օտար ուժերն ու վերատիրանալ յատկապէս հիւսիսային շրջաններու իր բռնագրաւուած տարածքներուն, հանքերուն, գիւղատնտեսական արտերուն եւ վերաբանեցնել նահանգներու միջեւ բնականոն երթելակութիւնը, երկաթուղագիծերն ու վերականգնել արտաքին աշխարհի հետ օդային կապը: Այս գործընթացը, սակայն, տակաւին ժամանակի կը կարօտի, նկատի ունենալով տարածաշրջա-



# Գանձասար

Նային հարցերն ու տարբեր ուժերու ազդեցութեանց փոփոխութիւնները գինուորական եւ քաղաքական նոր կացութիւններու լոյսին տակ:

Հայկական առումով տարին յատկանշուեցաւ Սուրիական խորհրդարանին կողմէ Հայոց Տեղասպանութեան ճանաչումով եւ դատապարտումով: Այս ճանաչումը կարելոր էր յատկապէս այն առումով, որ 1915-ին Օսմանեան կայսրութեան ծրագրաւորումով եւ գործադրումով սուրիական հողերուն վրայ շարունակուող Հայոց Տեղասպանութեան վկայութիւնը կ'ամրագրուէր ականատես ժողովուրդը՝ սուրիացիները ներկայացնող խորհրդարանին որոշումով: Սուրիան եղաւ արաբական երկրորդ հանրապետութիւնը, որ ճանչցաւ եւ դատապարտեց զայն, հաստատելով որ ցեղասպանութիւնը ոչ թէ կրօնական, այլ ցեղային բնաշնչման եւ ժողովուրդ մը հայրենագուրկ դարձնելու, անոր հայրենիքին տիրանալու նպատակով իրականացած մարդկային սպանդ էր, որ պետք է դատապարտուի քաղաքակիրթ աշխարհին կողմէ՝ խուսափելու համար անոր կրկնութենէն:

Այս խօսքերը լոկ դատապարտումի արտայայտութիւններ չէին, այլ թրքական բարբարոսութիւններու շարունակուող ալիքը վերջնականապէս կասեցնելու կոչ քաղաքակիրթ աշխարհին: Այն ալիքը, որ իր կործանարար դերակատարութիւնը ունեցած էր նաեւ Սուրիոյ տարածքին ու բոլոր քաղաքական դիտարկումները կը հաստատէին, որ մօտիկ ապագային պիտի ուղղուի նաեւ Հարաւային Կովկաս, այնտեղ եւս տարածաշրջանային ուժերու վերադասաւորման նպատակով:

Այս ալիքը կանգ չէր առած ու չէր կրնար առնել, այնքան ատեն որ չէր դատապարտուած Թուրքիան. եւ ահա ան՝ անցնելով Միջին Արեւելքէն, իրապէս ալ եկաւ, հասաւ Հարաւային Կովկաս, փանթուրանական իր ծրագիրներուն յագուրդ տալու՝ սկսելով տա-

րածաշրջանի ամենէն տագնապալի վայրէ՛ն՝ Արցախէն:

Հաւանաբար ոմանց համար անիրատեսական կը թուէր սուրիական տագնապի օրերուն հնչած այն ահագանգը, որ Հալէպի սահմանները պաշտպանողը կը պաշտպանէ նաեւ Արցախի սահմանը: Օրերը սակայն փաստեցին անոր իրաւացիութիւնը:

Թրքական բարբարոսութիւնները, անոր հովանիին տակ գործող ահաբեկիչները հասան Արցախ ու բռնկեցաւ Արցախի դէմ պատերազմը, որ յանգեցաւ հայկական տարածքներու կորուստին եւ Հայաստանի սահմաններուն թշնամիին անմիջական ազդեցութեան գօտիին մէջ յայտնուելուն:

Ատրպէյճանաթրքական յարձակումները ուղղուած էին ոչ միայն հայկական Արցախին, այլեւ տարածաշրջանին մէջ հայկական պետականութեան գոյութեան դէմ եւ տրամաբանական շարունակութիւնն էին 1915-ի Հայոց Տեղասպանութեան: Պատերազմի բոլոր տուեալները, ներառեալ Թուրքիոյ եւ Ատրպէյճանի նախագահներուն շնթալից յայտարարութիւնները Երեւան հասնելու նկրտումներուն շուրջ, կը հաստատէին այս իրողութիւնը:

Խօսքը տարածքներ գրաւելով միայն Արցախի հարցը գինուորական միջոցներով լուծելու մասին չէր, այլ փանթուրքիզմի ծրագիրի իրագործումին եւ շրջանին մէջ ահաբեկչութեան արմատական ներկայութիւն հաստատելու թուրքատրպէյճանական հեռակայ նպատակին, որպէս սպառնալիք ոչ միայն հայկական պետութեան գոյութեան, այլեւ Հիւսիսային Կովկասին եւ Իրանին: Վերջին գարգացումները ցոյց տուին, որ Թուրքիան, Ատրպէյճանը օգտագործելով որպէս յարձակող կողմ, պիտի չգոհանայ հայկական կողմին 9 Նոյեմբերի տխրահռչակ համաձայնագիրով որոշուած տարածքներու յանձնումով, այլեւ նկրտումներ ունի հասնելու մինչեւ Սիւնիք, աստիճանաբար հայկական պետութեան գոյութեան սպառնալու եւ

ողջ տարածաշրջանը գլխավորաբար իր ազդեցութեան գոտին դարձնելու, բնականաբար ծառայելով նաեւ խորայլեան եւ ամերիկեան ծրագիրներու, ներկայութիւն դառնալով Իրանի անմիջական սահմաններուն վրայ:

Այս հեռակայ ծրագիրները գուշակելով, Ռուսիա, որ սկիզբը տարտամ քայլերով մօտեցաւ արցախեան պատերազմի հրահրումին՝ թոյլ տալով ատրպէյճանաթրքական ուժերուն յառաջընթացին, զինադադարի յաջորդ օրն իսկ, առանց ժամանակ վատնելու իր զինուորական խաղաղապահ ուժերը տեղադրէ Արցախ: Այնպիսի զինուորական հեռահաս ուժեր, որոնք յստակօրէն կը բացայայտեն, որ տեղադրուած են դիմադրելու ոչ միայն Ատրպէյճանի սահմանափակ եւ յայտնի ուժերը, այլեւ մօտիկ ապագային, տարածաշրջանին մէջ գերպետութիւններու ուժերու վերադասաւորման համար նախատեսուող պատերազմը:

Արցախեան հարցը այս ժամանակահատուածին շահագործուեցաւ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ կողմէ՝ ի նպաստ Ատրպէյճանին, որովհետեւ թրքական կողմը քաջ գիտեր, որ արեւմտեան աշխարհը իր շահերու ապահովումով պիտի զբաղէր դարադարձի այս ժամանակահատուածին մէջ ուժերու վերադասաւորման քաղաքական մեծ խաղին մէջ:

ԵԱՀԿ Մինսքի դերակատարութիւնն իսկ շրջանցուեցաւ, փոխարէնը Թուրքիան դարձաւ Արցախի հարցին լուծման միջամտող կողմ եւ արեւմտեան աշխարհէն գործնական արձագանգի ոչ մէկ քայլ նշմարուեցաւ:

Հայաստանի ներկայ իշխանութիւնները այս բոլորը կանխատեսելու եւ համահայկական ներուժն ու դիւանագիտական, յարաբերական աշխատանքները լաւապէս յառաջ տանելու պարտադրանքին տակ էին, սակայն փոխարէնը ներքին հարցերու լայնամաշտապ ալիք մը բարձրացուցին, արդարացնելու պարտուողական իրենց արտաքին քաղաքականութիւնը:

Հայ զինուորներն ու կամաւորները արիաբար կռուեցան յանուն հայրենիքի, սակայն անոնք իրենց ետին չգտան կազմակերպ ու վճռական յենարան մը, որ իր դաշնակիցներուն հետ այնքան սերտ եւ փոխադարձ շահաւետ յարաբերութիւններ մշակելու էր մինչ պատերազմը, որ նուազագոյն վնասներով դուրս գար ու հողերու եւ մարդկային կորուստի այս ծաւալին չհասցներ մեր հայրենիքն ու ժողովուրդը:

Արցախի ու Հայաստանի դէմ պատերազմը չէ աւարտած: Գերարդիական նման պատերազմի դէմ դնելու եւ մեր հայրենիքին անվտանգութիւնը ապահովելու համար պատրաստ պետք է ըլլալ նոր, ճարտարագիտական եւ ոչ թէ դէմ առ դէմ բախումներով ընթացող պատերազմի «արուեստը» իւրացնելու եւ հայոց բանակի արհեստագիտական մակարդակն ու զինուորական կարելիութիւնները արագ կշռոյթներով զարգացնելու համար:

Այս բոլորը կը պահանջեն տնտեսական, զինուորական ու գիտական կարելիութիւններ, բայց մանաւանդ հայկական աշխարհի համերաշխ գործակցութիւնն ու Հայաստանի եւ Սփիւռքի ոչ միայն տնտեսական, այլեւ՝ մարդկային, գիտական, զինուորական, դիւանագիտական ուժերու, կարելիութիւններու եւ յարաբերութիւններու համադրուած գերլարումը: Հայաստանի արտաքին քաղաքականութիւնը արթուն պահակը դառնալու է դաշնակիցներու հետ սերտ գործակցութեան, նոր դաշնակիցներու որոնման եւ հակաթրքական առանցքի տարբեր ուժերու հետ գործակցութեան ծաւալման:

Նոր տարուան սեմին, Հայաստան աշխարհը հարկ է որ ունենայ նոր, ազգային, պետական եւ համահայկական մեր շահերուն հսկող, համահայկական ներուժը առողջ ծրագրաւորումով օգտագործող ղեկավարութիւն, որ կորուստէ փրկէ մեր հայրենիքն ու ժողովուրդը եւ վերջ տայ պարտուողական քաղաքականութեան:



## ԲԵՐԻՈՅ ՆԱՅՈՅ ԹԵՄԻ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ Նոկտեմբեր 2019-Դեկտեմբեր 2020

Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի նախագահութեամբ Ազգային Երեսփոխանական ժողովի 168-րդ նիստը գումարուեցաւ Շաբաթ, 17 Նոկտեմբեր 2020-ին, Ազգային Առաջնորդարանի դահլիճէն ներս: Յետ անցնող միամեայ գործունեութեան Ազգային Կրօնական եւ Վարչութեան ժողովներու տեղեկագիրներու հանգամանալից քննարկման, գնահատականներ արձանագրուեցան թեմի տարածքին իրականացած բազմաբնոյթ իրագործումներուն եւ ծաւալած աշխատանքներուն գծով, որոնք որպէս յարաճուն վերելք եւ շարունակութիւն այս պատմական թեմին պատկառելի աւանդին, գայն կը դնեն Նոր յանձնառութիւններու դիմաց: Ազգային Վարչութեան բազմազան ու տարաբնոյթ աշխատանքները առաւել արդիւնաւորելու հեռանկարով, Ազգային Երեսփոխանական ժողովը որոշեց եօթը անդամներու փոխարէն ինը անդամ ներառել Ազգային Վարչութեան մէջ: Զետեւաբար ժողովի որոշումով Ազգային Վարչութեան կազմը կրեց հետեւեալ պատկերը.

- Տիար Ծորճ Շահինեան
- Երկրչի. Մարալ Գալայճեան-Սեմերճեան
- Փաստրն. Զուրի Ապահունի-Պօշկեղենեան
- Փաստրն. Պայքար Թովմասեան
- Տիար Յարութ Յայրապետեան
- Տիար Յրայր Թրթռեան
- Տիար Յարութ Չամիչեան
- Տիար Մանօ Տեր Մանուէլեան
- Տիար Յովսէփ Գասապեան

Բերիոյ Յայոց Թեմը իր առաջնորդով, Յալէպի եւ շրջաններու բոլոր կառոյցներով սուրիական պատերազմի տագնապալից

օրերուն ամենայն յանձնառութեամբ եւ պատասխանատուութեան գիտակցութեամբ շարունակեց գործել եւ իր ներդրումը բերել սուրիական օրհնեալ հայրենիքը կրկին ծաղկեցնելու գործընթացին, կառչած մնալով մեր ազգային-եկեղեցական արժէքներուն:

Սուրիական պատերազմի վերջալոյսի օրերուն, սուրիահայութիւնը բերկրալի օրեր ապրեցաւ ի տես Յալէպի ամբողջական ազատագրումին, որուն յաջորդեց Սուրիոյ Խորհրդարանին կողմէ Յայոց Յեղասպանութեան ճանաչումն ու դատապարտումը: Պատմական պահ մը, որ յոյս ներշնչեց եւ թեմին զաւակները մղեց ստեղծագործ ներկայութեամբ գոյատեւելու, որպէս Սուրիոյ ժողովուրդին կարելոր մէկ բաղադրիչը:

Այս տրամադրութեամբ, Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի 168-րդ նիստին ընտրուած եւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետին 111/2019 Նոկտեմբեր 2020 պաշտօնագիրով վաւերացուած Ազգ. Վարչութիւնը, նկատի ունենալով ներկայիս տիրող տնտեսական ծանր իրավիճակը եւ



յետ պատերազմին սուրիահայութեան դիմագրաւած դժուարութիւններն ու Նոր մարտահրաւերները, ի մասնաւորի պսակածեւ

ժահրի համավարակի տարածման վտանգը, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Յոր՝ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, վերոյիշեալ ժամանակաշրջանին առաջնահերթութիւնը տալով մարդակերտումի յոյժ կարելոր աշխատանքին եւ յարմարելով համավարակին ստեղծած նախագգուշական պայմաններուն, իրագործեց հետեւեալ աշխատանքները.

## 1-Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողով

Անցնող տարուան ընթացքին, Ազգային Երեսփոխանական Ժողովի դիւանին հետ խորհրդակցաբար, Ազգային Վարչութեան առաջարկով գումարուեցան Ազգային Երեսփոխանական Ժողովի 167-րդ եւ 168-րդ նիստերը:

### 2-Աշխատանքային Ուղեգիծ

Յետ սուրիական պատերազմին, վերաշինութեան եւ վերականգնումի աշխատանքը շարունակելով, Ազգ. Վարչութիւնը իր գործունեութիւնը յառաջ տարաւ հետեւեալ բնագաւառներէն ներս.

### Ա) Ազգ. Առաջնորդարան

-Ազգային Առաջնորդարանի եւ Սրբոց Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ պատմական տարածաշրջանը աշխուժացնելու առաջադրանքով, Ազգային Վարչութիւնը իրականացուց Ազգային Առաջնորդարանի



փոխադրութիւնը, զայն վերադարձնելով իր հիմնական վայրը՝ Սալիպէ թաղամաս եւ համալրեց Առաջնորդարանի ընդհանուր կահաւորումը, գրասենեակները եւ պաշտօնէութեան կազմը:

- Ազգային Առաջնորդարանի դիւանապետ նշանակուեցաւ տիար Զրիստափոր

Յապոյեան:

- Պսակածեւ ժահրի համավարակի տարածման օրերուն, Ազգային Վարչութիւնը հետեւելով երկրիս Առողջապահութեան Նախարարութեան հրապարակած նախագգուշական կանոններուն եւ հիմնուելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին հաղորդագրութեան վրայ, Ազգային Առաջնորդարանի պաշտօնավարութեան ժամերը սահմանափակեց եւ եկեղեցական արարողութիւնները դռնփակ եւ առցանց սփռումով իրագործեց:

-Յետամուտ եղաւ Ազգային կալուածներու բոլոր իրաւաբանական եւ այլ օրինական խնդիրներու հետապնդման:

-Ձեռնարկեց ազգապատկան կալուածներու շահարկման ծրագիրներ:

-Յատուկ հոգատարութիւն ցուցաբերեց շրջաններու ազգային մարմիններու յառաջացման եւ գործունեութեան, յաճախակի այցելութիւններով եւ աշխատանքային նիստերով:

- Ազգ. Առաջնորդարանին յատկացուց դիմատետրի յատուկ էջ (Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդութիւն անունով), որ կը հաղորդէ Բերիոյ Յայոց Թեմի բոլոր շրջաններու գործունեութեանց լուրերը: Նշեալ դիմատետրի էջը պիտի կապուի Բերիոյ Յայոց Թեմի պաշտօնական կայքին, որ ներկայիս վերականգնումի ընթացքին մէջ է:

### Բ) Ազգային Մարմիններ

- Ազգային Վարչութիւնը անհրաժեշտ նկատելով թեմի ժողովուրդին հետ գործակցութիւնը, թեմի բազմապիսի պահանջներուն լոյսին տակ հետամուտ եղաւ Ազգային մարմիններու կազմութեան եւ անոնց վըստահուած աշխատանքի իրագործման: Առ այդ յառաջացան խորհուրդներ, հոգաբարձութիւններ, ինսամակալութիւններ եւ թաղականութիւններ:

- Ազգ. Երեսփոխանական Ժողովի առաջադրանքով յառաջացան երեք յանձնախումբեր՝ ուսումնակրթական, տնտեսական եւ կալուածային:

- Յառաջացան նաեւ ներքին կանոնագիրի վերամշակման, ազգային վարժարաններու հանրակառքերու վիճակի հետապնդման եւ արխիւներու փճացման յանձնախումբեր:

- Խառն նիստով յառաջացան Դատաս-



# Գանձասար

տանական հորհուրդը, Վերաքննիչ Ատես-  
նը եւ Ժառանգական եւ Կտակից Հոգաբար-  
ձուքինը:

Ազգ. Վարչութեան առաջին կազմի ընտ-  
րութենէն ետք, կատարուեցաւ Ազգային հե-  
տեւեալ մարմիններու նշանակումը, որ հաս-  
տատուեցաւ նաեւ 168-րդ Ազգ. Երեսփոխա-  
նական ժողովով ընտրուած Ազգային Վար-  
չութեան կազմին կողմէ.

## **-Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանի Խնամակալութիւն**

- 1- Տիգրան Պետրոսեան
- 2- Յովսէփ Էլէյճեան
- 3- Վերա Գաբրիէլեան-Գեորգեան
- 4- Ռաֆֆի Թանաշեան
- 5- Նորիկ Մարաշլեան
- 6- Վիգէն Մազլումեան
- 7- Յարութ Մինասեան

## **-Ազգային Միացեալ Նախակրթարանի Հոգաբարձութիւն, Հալէպ**

- 1- Յարութ Լեպլէպճեան
- 2- Գօգօ Թիւֆէնքճեան
- 3- Սոնա Տէր Պօղոսեան-Տարազճեան
- 4- Վաչէ Ճուհարեան
- 5- Գուրգէն Գալուստեան
- 6- Ռաֆֆի Պօշկէզէնեան
- 7- Մինաս Ապաճեան

## **-Ուսումնական Խորհուրդ**

- 1- Սիլվա Ճապաղջուրեան
- 2- Սեւան Ազարիկեան-Պարմաքսզեան
- 3- Գօգօ Հայիկեան
- 4- Նանար Պապեան-Քիլեճեան
- 5- Սեւանայ Հալլաճեան
- 6- Նորա Օհանեան-Տէր Պետրոսեան
- 7- Նանոր Տէկիրմենճեան-Սիւլահեան
- 8- Միհրան Վարդապետեան
- 9- Լեւոն Շառոյեան

## **-Լաթաքիոյ Ազգ. Սրբոց Նահատակաց Վարժարանի Հոգաբարձութիւն**

- 1- Մեղրիկ Ապահունի-Մանճեան
- 2- Ռաֆֆի Գոչեան
- 3- Թագուհի Մկրտիչ-Գրիգորեան
- 4- Ալեքս Գալլաքեան
- 5- Սիրան Աւընեան-Ամպարճեան

## **-Քեսապի Ազգ. Ուսումնասիրաց Միաց-**

## **եալ Ճեմարանի Հոգաբարձութիւն**

- 1- Նշան Լևոնեան
- 2- Արա Քէշիշեան
- 3- Արա Գազազեան
- 4- Չենոբ Կարճիկեան
- 5- Անի Աշըգեան
- 6- Թամար Ղազարեան
- 7- Էլիզապէթ Գըլընճեան

## **-Դամասկոսի Ազգ. Միացեալ Վարժարանի Հոգաբարձութիւն**

- 1- Դոկտ. Նորա Արիսեան
- 2- Յակոբ Պետիրեան
- 3- Սամի Կարապետեան
- 4- Ծովիկ Ճունտարեան-Միսիրեան
- 5- Ծովակ Պաղպուտարեան
- 6- Կարօ Այարեան
- 7- Ճորճիկ Առաքելեան

## **- Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Թա- ղականութիւն**

- 1- Պետիկ Յովհաննէսեան
- 2- Կարօ Մելքոնեան
- 3- Գարեգին Կարապետեան
- 4- Խաժակ Տիլպերեան
- 5- Յարութ Չգուշեան
- 6- Ժողէֆ Պալապանեան
- 7- Յովհաննէս Գվըրեան
- 8- Չաքար Ղազարեան
- 9- Չարեհ Ստեփանեան

## **- Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղակա- նութիւն**

- 1- Ճորճ Գոզանեան
- 2- Յովսէփ Խարաճեան
- 3- Յակոբ Արոյեան
- 4- Մայտա Եագուպեան-Յովհաննէսեան
- 5- Ճորճ Գասապեան
- 6- Գօգօ Տէր Պօղոսեան
- 7- Կարպիս Յարութիւնեան
- 8- Լիա Քիլեճեան-Մաթոսեան
- 9- Չոհրապ Սարաճեան

## **-Հալէպի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Թաղակա- նութիւն**

- 1- Յարութ Կարապետեան
- 2- Սարգիս Դանիէլեան
- 3- Վահէ Թերզեան
- 4- Նազարէթ Խորըլարեան
- 5- Աշոտ Թեճիրեան



- 6- Հրաչ Խրոյեան
- 7- Յակոբ Փայասեան
- 8- Իգապէլ Հալլաճեան
- 9- Մանիա Ազեզեան

## **- Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ Թաղականութիւն**

- 1- Շահէ Շահինեան
- 2- Սարգիս Կիրակոսեան
- 3- Խաչիկ Վերտանեան
- 4- Ռաֆֆի Սողոյեան
- 5- Մովսէս Ֆազճեան
- 6- Ծորճ Պաթթուք
- 7- Շաքէ Սելեան
- 8- Դաւիթ Հալլաճեան
- 9- Չուարթ Սարգիս

## **-Լաթաքիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդ**

- 1- Աւետիս Կարպուշեան
- 2- Վահէ Կարճիկեան
- 3- Մովսէս Աբգարեան
- 4- Չաւեն Բեօրքիւնեան
- 5- Սարգիս Բէչէճեան
- 6- Աբրահամ Ճապալուր
- 7- Մարօ Սողոմոնեան

## **-Քեսապի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Թաղականութիւն**

- 1- Աբրահամ Կարճիկեան
- 2- Յովհաննէս Մանճիկեան
- 3- Ժիրայր Չելչեպեան
- 4- Ռաֆֆի Հանէշեան
- 5- Խաչիկ Մանճիկեան
- 6- Վիգէն Լևոնեան
- 7- Գուրգէն Ղազարեան

## **-Գամիշլիի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Թաղական Խորհուրդ**

- 1- Ղուկաս Դարբինեան
- 2- Սեդրակ Ղուկասեան
- 3- Վարդան Մուրատեան
- 4- Սազօ Կարապետեան
- 5- Յակոբ Դաւիթեան
- 6- Յակոբ Խաչատուրեան
- 7- Խաչիկ Գասպարեան
- 8- Ապօրլ Ահատ Տօնապետեան
- 9- Յարութ Մանուկեան

## **-Տերիքի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ**

## **Թաղականութիւն**

- 1- Սարգիս Աբրահամեան
- 2- Սերոբ Սուսան
- 3- Նուպար Կենճոյեան
- 4- Յակոբ Իսրայէլեան
- 5- Պետրոս Թովմասեան
- 6- Վրէժ Վարթօ
- 7- Շանթ Թովմասեան

## **-Հասիչէի Ս. Յովհաննու Կարապետ Եկեղեցւոյ Թաղականութիւն**

- 1- Արսէն Յակոբ Նալպանտեան
- 2- Թորգոմ Կարապետ Սարգիսեան
- 3- Գեորգ Յակոբ Բասմեան
- 4- Սուրէն Մարտիրոս Տէր Նիկողոսեան
- 5- Սիմոն Փանոս Աւագեան
- 6- Պարգէլ Արսէն Պետրոսեան
- 7- Անդրանիկ Սողոմոն Նորիկեան

## **-Թարթուսի Թաղական Խորհուրդ**

- 1- Աւօ Զիրքիւքեան
- 2- Յովիկ Գլըճեան
- 3- Չարեհ Արոյեան
- 4- Սեւակ Պզտիկեան
- 5- Մակի Կարապետեան
- 6- Կարօ Գրիգորեան
- 7- Վահէ Շամաքեան

## **-Ընկերային Ծառայութեան Խորհուրդ**

- 1- Փիեռ Մուսալլի
- 2- Թագուհի Թաշճեան
- 3- Պերճ Գասապեան
- 4- Արշօ Գալէմբերեան-Զիլիսեան
- 5- Գալուստ Գալուստեան
- 6- Շահէ Բանոյեան
- 7- Արուս Սնապուլեան-Չաղլասեան

## **-Տնտեսական Խորհուրդ**

- 1- Յովսէփ Գատեհճեան
- 2- Մակի Պերպերեան
- 3- Արմէն Գասպարեան
- 4- Վիգէն Զիւլիկեան
- 5- Մուշեղ Պայրամեան
- 6- Միրնա Թումիկեան
- 7- Վանիկ Մանուկեան

## **-Կալուածոց Հոգաբարձութիւն**

- 1- Կարպիս Մարաշլեան
- 2- Սնապուլ Սնապուլեան
- 3- Գեորգ Մանուկեան

# Գանձասար

- 4- Սիլվա Նազարեան-Բախանեան
- 5- Սարգիս Գրատեան
- 6- Գարլօ Օհանեան
- 7- Յարութ Վարդապետեան
- 8- Վարդան Առաքելեան
- 9- Պատրիկ Զրաքեան

### 3- Թեմական

- Բերիոյ Հայոց Թեմը երախտագիտական զգացումներով հանդիսաւորապէս յիշատակեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դարեկանքի 90-ամեակը: Արարողութեան հիւրաբար ներկայ գտնուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբան Հոգ. Ս. Վահրիճ Վրդ. Ղարախանեան:

- Բերիոյ Հայոց Թեմի բոլոր եկեղեցիներէն ներս յընթացս Սուրբ եւ Անմահ Պատարագին Հայրապետական Մաղթանքի արարողակարգ կատարուեցաւ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կաթողիկոսական ընտրութեան եւ օծման 25-ամեակին առիթով:

- Բերիոյ Հայոց Թեմի բոլոր եկեղեցիներէն ներս յընթացս Սուրբ եւ Անմահ Պատարագին Հանրապետական Մաղթանքի արարողակարգ եւ եռագոյն դրօշի օրհնութիւն կատարուեցաւ, ՀՀ Ա. Անկախութեան եւ Վերանկախացման առիթներով:



-Եպիսկոպոսական հանդիսաւոր պատարագ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հիմնադրութեան 90-ամեակին առիթով:

-Թեմիս բոլոր եկեղեցիներէն ներս տեղի ունեցաւ Արցախի մէջ հալէպահայ նահատակներու հոգեհանգստեան արարողութիւն, նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տեր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի:

-Թեմիս բոլոր եկեղեցիներէն ներս տեղի ունեցաւ Արցախի մէջ հալէպահայ նահատակներու հոգեհանգստեան արարողութիւն, նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տեր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի:

Թեմը պիտի շարունակէ ուշադրութիւն

ընծայել նաեւ հայ երիտասարդ տարրին եւ զայն աւելի լայն համեմատութեամբ ներգրաւել ազգային, միութենական եւ եկեղեցական կեանքէն ներս:

### 4- Հովուական Այցելութիւններ

Թեմակալ Առաջնորդին գլխաւորութեամբ, ընկերակցութեամբ Ազգային Վարչութեան անդամներուն եւ ազգայիններու, հովուական ու աշխատանքային այցելութիւններ տրուեցան թեմի գանազան շրջաններուն, զանոնք աշխուժացնելու եւ վերակազմակերպելու հեռանկարով: Հանդիպումներ տեղի ունեցան նաեւ շրջաններու վարժարաններու հոգաբարձութեանց եւ եկեղեցիներու թաղականութեանց հետ:

Անցնող շրջանին Առաջնորդ Սրբազան Հայրը ունեցաւ հետեւեալ հովուական այցելութիւնները.

- Թարթուսի եւ Լաթաքիոյ հայ համայնքներուն (14-18 Նոյեմբեր 2019), Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով:

- Դամասկոսի հայ համայնքին (22 Նոյեմբեր 2019-ին, հովանաւորելով Ազգային Միացեալ վարժարանի բացման հանդիսութիւնը եւ 4 Նոյեմբեր 2020-ին):

- Գամիշլիի հայ համայնքին (21 Դեկտեմբեր 2019), որուն ընթացքին Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ տեղի ունեցաւ սարկալազաց ձեռնադրութիւն: Ինչպէս նաեւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կողմէ Արժ. Ս. Պսակ Բինյ. Պերպերեանին լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեցաւ:

- Լաթաքիոյ եւ Բեսապի մեր համայնքի զաւակներուն (7-10 Փետրուար 2020-ին եւ 23 Սեպտեմբեր 2020-ին):

- Ծովափնեայ շրջանին՝ Թարթուս, Լաթաքիա, Բեսապ եւ Պանիաս (15-23 Յունիս 2020-ին եւ 13-15 Նոյեմբեր 2020-ին):

-Ճեզիրէի հայ համայնքին 13 Դեկտեմբեր 2020-ին, Գամիշլի, Տերիք եւ Հասիչէ:

Բերիոյ հայոց Թեմի Ծառայութեան Շքանշանի տուչութիւն

Ազգային Վարչութեան որոշումով, Բերիոյ Հայոց Թեմի Ծառայութեան շքանշանով պարգեւատրուեցաւ Գամիշլիի ազգային տիար Վարդգէս Սիմոնեան: Պարգեւատրու-



մը տեղի ունեցաւ Գամիշլի մէջ, Երկուշաբթի, 14 Դեկտեմբեր 2020-ին, Առաջնորդա-



կան Փոխանորդութեան դահլիճէն ներս, ձեռամբ եւ օրհնութեամբ Գերշ Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի:

### 5- Պետական Այցելութիւններ, Հանդիպումներ եւ Մասնակցութիւններ

Պաշտօնական, շնորհաւորական, աշխատանքային կարգ մը յատուկ հարցերու հետապնդման օրակարգերով Առաջնորդ Սըրբազան Հայրը, ընկերակցութեամբ Ազգային Կրօնական Ժողովի, Ազգային Վարչութեան ներկայացուցիչներու եւ ազգայիններու, անցնող շրջանին պետական բարձրաստիճան պատասխանատուներու շարք մը այցելութիւններ տուաւ:

- «Պաաս» կուսակցութեան Հալէպի կուսակցապետին, հետեւեալ առիթներով.

Ա. Ներքին կուսակցական ընտրութիւններուն յաջողութեան առիթով:



Բ. Հալէպ քաղաքի ամբողջական ազատագրումին առիթով, որմէ ետք Սրբազան Հայրը Նոյն առիթով իր մասնակցութիւնը բե-

րաւ ժողովրդական հաւաքին:

Գ. Շնորհաւորելու կուսակցութեան նորընտիր կազմը:

Դ. Երեսփոխանական հարցին շուրջ խորհրդակցութիւններ կատարելու:

- Սրբազան Հայրը ցաւակցական այցելութիւն տուաւ Հալէպի Մուֆթի դոկտ. Մահմուտ Աքքեմին՝ իր եղբօր մահուան տխուր առիթով:

- Հայոց Ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման որոշումին առիթով Սըրբազան Հայրը յատուկ պատուիրակութեամբ Դամասկոս մեկնելով շնորհակալական այցելութիւն տուաւ Սուրիոյ Խորհրդարանի Նախագահ Համմուտա Սապպադին: Ինչպէս նաեւ հանդիպում ունեցաւ Սուրիոյ Հանրապետութեան Մուֆթիին եւ Կրօնական Կալուածներու Նախարարին հետ:

- Իր մասնակցութիւնը բերաւ Հալէպ ժամանած Նախարարական պատուիրակութեան հանդիպումին:

- Նոյեմբեր ամսուան մէջ Դամասկոսի մէջ հանդիպում ունեցաւ Վարչապետ Հուսէյն Արնուսի, ինչպէս նաեւ Սուրիոյ Ներքին առեւտուրի Նախարար Թալալ ալ Պարազիին, կրօնական կալուածներու, կրթութեան Նախարարներուն եւ Պարսկաստանի դեսպանին հետ:

- Չօրակցական այցելութիւն Սուրիոյ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Մեծարգոյ Տիգրան Գեոգեանի: Այցելութեան ընթացքին արժարժուեցան Արցախի ու Հայաստանի հայ ժողովուրդին միասնական ճիգերով նեցուկ կանգնելու անհրաժեշտութեան ու ներկայ իրավիճակին առնչուող հարցեր:

- Հանդիպում Հալէպի Նահանգապետ տիար Հուսէին Տիապի, Հասիչէի Նահանգապետ տիար Հասան Հալիմի, Լաթաքիոյ Նահանգապետ տիար Իպրահիմ Խըտըր ալ Սալէմի եւ Թարթուսի Նահանգապետ տիար Սաֆուան Ապու Սաատիի հետ:

- 22 Նոյեմբերին, բարձր հովանաւորութեամբ Հալէպի Նահանգապետ Հուսէյն Տիապի, Նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, կազմակերպութեամբ Սուրիահայ Օգնութեան Խաչի (ՍՕԽ) Շրջանային Վարչութեան, բացումը կատարուեցաւ ՍՕԽ-ի վերանորոգուած ընկերաբժշկական կեդրոնին:

# Գանձասար

## 6- Պետական Ընդունելություններ

- Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօնին առիթով Առաջնորդ Սրբազան Յայրը շնորհաւորական այցելություններ ընդունեց Յալէպի պետական, ապահովական եւ կրօնական բարձրաստիճան պատասխանատուներէ, Ազգային Առաջնորդարանի դահլիճէն ներս:

- Իր գրասենեակին մէջ ընդունեց Յալէպի Նահանգապետին ներկայացուցիչը եւ Յալէպի քաղաքապետարանէն պատուիրակություն մը:

- Ազգային Առաջնորդարանէն ներս ընդունեց Սուրիոյ Հանրապետութեան Մուֆթի տոքթ. Ահմետ Պետրըտտին Հասսունը (10/12/2019), ազգային մարմիններու ներկայացուցիչներու ներկայութեամբ: Կողմերը զրուցեցին կրօններու երկխօսութեան, գործակցութեան եւ յարաբերութիւններու ամրապնդման կարելորութեան մասին:

- Ընդունեց պատուիրակություն մը՝ բաղկացած Սուրիոյ Կրօնական Կալուածներու Նախարարէն, Յալէպի Կրօնական Կալուածներու տնօրէնէն եւ փոխտնօրէնէն (22/2/2020):

## 7- Ներքին Այցելություններ

Սրբազան Յայրը անցնող շրջանին յաճախակի կերպով այցելություններ տուաւ ազգային եւ հայկական վարժարաններուն,



Հայ Ծերանոցին, ՀՀ Մարդասիրական Առաքելութեան Խումբին, ազգային կառոյցներուն եւ հալէպահայ Նահատակներու ընտանիքներուն, Ազգային Պատսպարանին, Յալէպի մէջ գործող մշակութային, բարեսիրական եւ մարզական միութիւններուն եւ կազմակերպություններուն:

## 8- Յարանուանական

Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան եւ Ազգ. Վարչությունը պաշտօնական յարաբերութիւն մշակեցին քոյր համայնքներու համայնքապետներուն հետ, ինչպէս նաեւ քրիստոնեայ համայնքներուն եւ իսլամ հոգեւոր պետերուն հետ՝ խորհրդակցելու Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն եւ յատկապէս յետ Յալէպի ամբողջական ազատագրումին, ժողովուրդին կեանքի վերակազմակերպման շուրջ:

## 9-Միջեկեղեցական

-Թեմակալ Առաջնորդը հետեւողականօրէն մասնակցություն բերաւ ամսական հերթականութեամբ գումարուած Յալէպի քրիստոնեայ համայնքներու հոգեւոր առաջնորդներու ժողովներուն, ինչպէս նաեւ միջեկեղեցական եւ միջհամայնքային հանդիպումներուն:

-Այցելություն Ասորի ուղղափառ եկեղեցւոյ Առաջնորդ Մար Մորիս Ամսիհի, Գամիշլի:

## ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի «Հայ Եկեղեցին» Հատորի Արաբերէն Թարգմանությունը Ներկայացուցաւ Հոգեւոր Առաջնորդներու Ժողովին

Շաբաթ, 26 Սեպտեմբեր 2020-ին, Յալէպի Ասորի Ուղղափառ Համայնքի Առաջնորդարանէն ներս, հիւրընկալութեամբ Ասորի Ուղղափառ Համայնքի Պատրիարքական Փոխանորդ Գերաշնորհ Պուրթոս Զասիս Եպիսկոպոսի, ներկայութեամբ հոգեւոր առաջնորդներու, անոնց ընկերակցող հոգե-



ւորականներու եւ համայնքային ներկայացուցիչներու, տեղի ունեցաւ Սուրիոյ Զրիս-



տոնեայ Համայնքներու Հոգեւոր Առաջնորդներուն ժողովը:

Բերիոյ Հայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մասիս Ս. Եպս. Չօպուեանի հրաւերով՝ նիստին հիւրաբար ներկայ գտնուեցաւ Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հեղինակած՝ «Հայ Եկեղեցին» հատորի արաբերէն թարգմանութեան թարգմանիչ, հալէպահայ դոկտոր Հուրի Ազէզեան, որ հանգամանօրէն անդրադարձաւ գիրքին բովանդակութեան:

### **Միջին Արեւելքի Եկեղեցիներու Խորհուրդին Եւ Բարեսիրական Միութիւններու Հետ Գործակցութիւն**

Սրբազան Հայրը իր մասնակցութիւնը բերաւ Միջին Արեւելքի Եկեղեցիներու Դամասկոսի Խորհուրդի գրասենեակի ժողովներուն, հերթական եւ առցանց (Հալէպ) նիստերով: Այս խորհուրդին ժողովները կը միտին հոլանտական եկեղեցիներու կողմէ նիւթական օժանդակութիւն տրամադրել քրիստոնեայ համայնքներուն:

Ազգ. Վարչութիւնը հետամուտ եղաւ զանազան ծրագիրներէ օժանդակութիւններ ապահովել թեմիս զաւակներուն:

### **-Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկ**

Թեմիս ժողովուրդին այլազան կարիքներու բաւարարման ի խնդիր, Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկին հետ գործակցութիւնը շարունակուեցաւ:

### **-Հաուրրոտ Զարակեօզեան Հաստատութիւն**

Հաստատութիւնը շարունակեց ազգային վարժարաններու աշակերտութեան բժշկական ծառայութեան գործը:

### **-Արտաւազդ Տնկիկեան Հիմնադրամ**

Բարեսիրական-մարդասիրական բնագաւառէն ներս, հիմնադրամը շարունակեց գործնական ներդրում ունենալ թեմիս զաւակներուն՝ համաձայն իրեն յատուկ կանոնադրութեան տրամադրութեանց:

### **11- Կալուածային-Ճինարարական**

- 2020-ի սկիզբը, Սրբոց Զառամնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ կարգ մը բաժիններու (Նախկին առաջնորդարանի կարգ մը բա-

ժիններ, Գանձատուն, թաղականութեան Նախկին գրասենեակ եւ այլն) շինարարական աշխատանքները ընթացք առին, սակայն պսակածեւ ժահրի համաճարակին ստեղծած պայմաններուն բերումով դադրեցան:

- «Ն. Աղբալեան» սրահը վերանորոգուեցաւ եւ կահաւորուեցաւ, ապա սկսաւ տրամադրուիլ թեմի զաւակներուն:

- Ս. Յակոբ եկեղեցւոյ շինարարական աշխատանքները ամբողջացան:

- Հրկիզուած Ս. Գեորգ եկեղեցւոյ շինարարական թղթածրարը պատրաստուեցաւ:

- «Օշական» գրատունի կահաւորման աշխատանքը աւարտին հասաւ:

- Ազգային գերեզմանատան վերադասաւորման աշխատանքները ամբողջացան եւ վերատեսութեան ենթարկուեցան փեթակներու եւ գերեզմաններու 2020 տարեշրջանի կոր սակերը:

### **12- Ուսումնակրթական**

- Ազգ. Վարչութիւնը այս շրջանին կարգաւորեց ազգ. վարժարաններու օրինականապետական թղթածրարները:

- Դամասկոսի Ազգ. Միացեալ վարժարանը երկրորդական բաժինով օժտելու դիմում կատարուեցաւ Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան եւ բացումը տեղի ունեցաւ 4 Դեկտեմբեր 2020-ին, կրթութեան Նախարար տոքթ. Տարեմ Թապպաաի ձեռամբ:

- Լաթաքիոյ եւ Գամիշլիի ազգային վարժարանները երկրորդական կարգերու բաժինով օժտելու առաջարկները վաւերացուեցան:

- Դամասկոսի Ազգային Միացեալ վարժարանի տնօրէնուհի նշանակուեցաւ տիկին Ծովակ Պաղպուտարեան:

- Ուսումնական Խորհուրդի ուսուցիչներու համակարգիչի ամառնային դասընթացք կազմակերպուեցաւ, յաջորդ տարեշրջաններուն արդիականացած ձեւով դասաւանդութիւնները շարունակելու նպատակով:

- Ճեզիրէի շրջանի ազգային վարժարաններու աշակերտութեան Ուսումնական Խորհուրդին պատրաստած հայերէն լեզուի դասագիրքերը տրամադրուեցան:

### **13- Չօրակցական Նախաձեռնութիւններ Ա) Չօրակցական Նամակներ**

# Գանձասար

- Շնորհաւորական նամակ Արցախի նախագահին՝ նախագահական պաշտօնի ստանձնումին առիթով:

- ՀՀ Վարչապետին՝ Հայաստանի հիւսիսարեւելեան սահմանին խաղաղութիւն մաղթելով:

- Վեհափառ Հայրապետին եւ Լիբանանի Թեմի Առաջնորդին՝ Լիբանանի նաւահանգիստի պայթումին տխուր առիթով:

Բ) Հայաստանի եւ Արցախի համար զօրակցական արարողութիւններ

-Հոգեհանգստեան արարողութիւն՝ Հայաստանի հիւսիսարեւելեան սահմաններուն հրթիռակոծումին նահատակուող հերոսներու յիշատակին, հայ երեք համայնքապետներուն մասնակցութեամբ եւ ՀՀ Հալէպի Գըլխաւոր Հիւպատոսին եւ ՀՀ Մարդասիրական խումբի գնդապետին ներկայութեամբ:

-Արցախի զօրակցութեան աղօթք՝ Ատըրպէյճանի կողմէ սանձազերծուած պատերազմէն յաղթական դուրս գալու բարեմաղթանքով:

- 5 Հոկտեմբեր 2020-ին, Սրբազան Հայրը մասնակցեցաւ Արցախի զօրակցութեան ժողովրդային հաւաքին, ուր խօսք առնելով դատապարտեց Արցախի դէմ թուրքիոյ եւ Ատրպէյճանի ոտնձգութիւնները:

Գ) Արցախի Հիմնադրամ

Հոկտեմբեր ամսուն, վերականգնեցաւ Արցախի Հիմնադրամը՝ նիւթական օժանդակութիւն հայթայթելու Արցախի պատերազմէն տուժած եւ տեղահան դարձած մեր ժողովուրդին:

## 14- Սուրիոյ Երեսփոխանական Ընտրութիւններ

Սուրիոյ Երեսփոխանական ընտրութիւնները տեղի ունեցան 19 Յուլիս 2019-ին: Հայ համայնքի պաշտօնական թեկնածուն էր տիար Ժիրայր Ռէիսեան: Ազգային իշխանութիւնը իր զօրակցութիւնը յայտնեց եւ նեցուկ կանգնեցաւ հայ համայնքի երեսփոխանին յաջողութեան:

Ընտրութեան արդիւնքով Սուրիոյ խորհրդարանին մաս կազմեցին երեք հայ երեսփոխաններ՝ տիար Ժիրայր Ռէիսեան (ազգի թեկնածու), Դամասկոսէն դոկտ. Նորա Արիսեան (անկախ թեկնածու), ինչպէս նաեւ Հալէպէն իրաւաբան Լիւսի Իսկէնեան (Պաաս կուսակցութեան թեկնածու):

Ընտրութիւններէն ետք, Սրբազան Հայրը ընդունեց հալէպահայ երկու երեսփոխանները եւ կապ հաստատեց Դամասկոսի հայ երեսփոխանին հետ՝ շնորհաւորելով անոնց ընտրութիւնը եւ յաջողութիւն մաղթելով անոնց:

## 15- Տնտեսական

- Տիրող տնտեսական իրավիճակի լոյսին տակ, վերատեսութեան ենթարկուեցան ծիսակատարութիւններու, վկայագիրներու, դատաստանական խորհուրդի եւ շնորհաւորական առիթներու բացիկներու սակագիրները:

-Տնտեսական ծանր օրերուն, Ազգային Վարչութիւնը Ազգային պաշտօնէութեան ամսականներու յաւելում կատարեց եւ պարբերաբար դրամաշնորհներ տրամադրեց անոնց:

## 16- Մեր Կորուստները

Ազգային Վարչութեան աշխատանքային այս շրջանին, համաճարակին հետեւանքով իրենց մահկանացուն կնքեցին վաստակաւոր ազգային գործիչ եւ Ազգային Վարչութեան ատենապետ տիար Յարութիւն Զիլիսեան, Կալուածոց Հոգաբարձութեան անդամ տիար Վարդան Առաքելեան եւ Համագ-գայինի Սուրիոյ Շրջ. Վարչութեան անդամ եւ ճեմարանի հայերէնաւանդ ուսուցչուհի օրդ. Յուշիկ Ղազարեան:

Ազգային Վարչութիւնը բոլոր հանգուցեալներուն հոգւոյն պարտն ու պատշաճը տնօրինեց:

Թեմս իր որդիական երախտագիտութիւնը կը յայտնէ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին՝ իր հովուապետութեան համար, ինչպէս նաեւ թեմակալ առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանին, որոնց ցուցմունքներով ու առանցքային դերակատարութեամբ Բերիոյ Հայոց Թեմի ազգայինները նուիրական աշխատանք տարին՝ առաւել ծաղկեցնելու եւ պայծառացնելու զայն, նոյնիսկ այսպիսի ծանր պայմաններու մէջ անոնք շարունակեցին աննկուն կամքով դիմակայել նոր մարտահրաւերներ՝ կառչած մնալով հնագոյն համայնքի անկախութեանց ու ժառանգութեանց:

Բոլորին կը մաղթենք բարի եւ բեղուն գործունէութեան տարի:



## ՏԵՂԵԿԱԳԻՐ ՆԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ 2020

Համազգայինի Հայ Կրթական և Մշակութային Միության Սուրիոյ շրջանը կը շարունակէ գործել իր մասնաճիւղերով և միաւորներով: Սակայն 2020 թուականի սկիզբը յայտ եկած պսակածէ ժահրի համաճարակին (covid19) պատճառով, երկրի կառավարութեան որոշումներուն համաձայն, մեկնելով առողջապահական իրավիճակի մտահոգութիւններէն, միութեանս բոլոր գործունէութիւնները, դասընթացքներն ու հաւաքները առժամաբար կասեցուցեցան:

Համազգայինը, իբրեւ հայ մշակութային պաշտպան, շարունակեց իր գործունէութիւնը, Մայիսին երբ Սուրիոյ կառավարութիւնը կրկին արտօնեց մշակութային ձեռնարկները: Միութիւնս վերագտաւ իր աշխուժութիւնը, հակառակ երկրի մէջ տիրող տընտեսական դժուարութիւններուն և համաճարակին ստեղծած արգելքներուն:

Համաճարակին պատճառով Համազգայինը կորսնցուց իր վաստակաւոր երկու ընկերները՝ ընկ. Վարդան Առաքելեանը և Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ ընկի. Յուշիկ Ղազարեանը, որոնց մահը խորապէս ցնցեց համազգայնականները:

### Ա. Շրջանային Վարչութիւն

Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը հետամուտ եղաւ բոլոր վարչութիւններու գործունէութեանց հետ տեւողակալութեան:

Միութիւնս իր մասնակցութիւնը բերաւ 24 Ապրիլ 2020-ի ծաղկեմատոյցի արորողութեան, որ տեղի ունեցաւ Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակի ապրիլեան յուշարձանին դիմաց:

Շրջ. Վարչութիւնը կազմակերպեց հե-

տելեալ ձեռնարկները.-

Ա.-Հայաստանի Ա. Հանրապետութեան 102-ամեակին նուիրուած տօնախմբութիւն:



Բ.-Սուրիոյ խորհրդարանական ընտրութիւններու հայութեան թեկնածու տիար Ժի-



րայր Բէիսեանի նախընտրական հանրահաւաքը՝ ԱԶԵ Ճեմարանի շրջափակէն ներս:

Գ.-Արցախեան պատերազմի իրադարձութիւններուն շուրջ, 9 Նոյեմբեր 2020-ին ստորագրուած եռակողմ համաձայնագիրին առնչութեամբ Շրջ. Վարչութիւնը, բողոքի նամակ մը ներկայացուց Հայաստանի Հանրապետութեան Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգսեանին: Նամակի բովանդակութեան մէջ շեշտը դրուած էր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականի պահանջքին վրայ:

Շրջ. Վարչութիւնը վերամուտի առիթով

# Գանձասար

Սուրիոյ շրջանի հայկական դպրոցներու աշակերտութեանց նուիրեց գրչատուփեր:

## **Բ-Մասնաճիւղեր**

### **1-«Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղ**

Մասնաճիւղի վարչութիւնը կը հովանաւորէ գրական, երաժշտական, «Սարդարապատ» եւ «Շուշի» պարաօլիմպիկներու, ընկերային եւ տիկնանց յանձնախումբերու աշխատանքները:

Մասնաճիւղի վարչութիւնը Փետրուարին կազմակերպեց յանձնախումբերու ծանօթացման երեկոյ ԱՄԺ Տան «Լ. Շանթ» սրահէն ներս:

Ընկերային Յանձնախումբը Փետրուարին կազմակերպեց Սիրոյ Օրուան նուիրուած հաւաք:

Տիկնանց Յանձնախումբը Բարեկենդանի առիթով կազմակերպեց նախաճաշ: Յանձնախումբը կազմակերպեց նաեւ չիրի եւ հայկական քաղցրաւենիքի դասընթացք:

Երաժշտական Յանձնախումբը Յուլիս



ամսուան մէջ հանրութեան հրամցուց «Աշուղական երեկոյ» մը:

«Շուշի» մանկապատանեկան պարաօլիմպիկները Յոկտեմբերին իր մասնակցութիւնը բերաւ Յալեպի մէջ տեղի ունեցած սուրիական մանկական փառատօսին:

Նոյեմբերին Գրական Յանձնախումբը



կազմակերպեց Ասմունքի Երեկոյ, որուն մասնակիցները ասմունքի դասընթացքին

հետեւող աշակերտ-աշակերտուհիները եղան: Դասատուն եր մասնաճիւղի վարչութեան անդամ ընկի. Ռիթա Կաղեան-Տիքալիքեան:

Մասնաճիւղը Նոյեմբեր 2020-ին գումարեց իր տարեկան անդամական 36-րդ ընդհանուր ժողովը եւ ընտրեց նոր վարչութիւն:

### **2-«Վահան Նաւասարդեան» Մասնաճիւղ, Լաթաքիա**

«Վահան Նաւասարդեան» մասնաճիւղը իր աշխոյժ ներդրումը ունի տեղւոյն հայ համայնքի կեանքին մէջ, կազմակերպելով մշակութային զանազան ձեռնարկներ:

Այս տարի մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպեց Սիրոյ տօսին առիթով պարանցիկ երեկոյ, գծագրութեան դասընթացք



արուեստագետ գծագրիչ Տիկ. Մարիա Ազարի ղեկավարութեամբ: Վարչութիւնը ունեցաւ հարցազրոյց մը Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Վազգէն Բեօշկերեանի հետ, նիւթ ունենալով՝ «Ազգային եկեղեցի, միութիւն եւ ընտանիք փոխյարաբերութիւններ»:

### **3-«Յամօ Օհանջանեան» Մասնաճիւղ, Բեսապ**

Մասնաճիւղը կազմակերպեց Ամենայն Յայոց Բանաստեղծ Յովհաննէս Թումանեան



նի ծննդեան 150-րդ ամեակին նուիրուած հանդիսութիւն, «Ես Կարդալ Կը Սիրեմ» փոք-



րիկներու յատուկ ձեռնարկ, «Երիտասարդական Երեկոյ» անուան տակ երիտասարդներու հաւաք մը եւ գրական քննարկումներու երեկոյ:

#### 4-«ԼԵՆԻՆ ՇԱՆՔ» Մասնաճիւղ, Դամասկոս

Համազգայինի Դամասկոսի «ԼԵՆԻՆ ՇԱՆՔ» մասնաճիւղը հակառակ դիմակայած մարտահրաւերներուն եւ մարդուժի նուազու-



մին, կազմակերպեց Վարդանանց տոնակատարութիւն, որուն պատգամը փոխանցեց Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան:

Մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպեց նաեւ դասախօսական երեկոյ մը Հայաստանի եւ Արցախի վերջին իրադարձութիւններուն մասին, դասախօսն էր՝ պրն. Սարգիս Պուրունսուզեան:

#### 5-«ԱԼԵՏԻԱ Ահարոնեան» Մասնաճիւղ, Փամիշլի

Մասնաճիւղը կազմակերպեց «Փարոս» ամառնային դպրոցը, որ ներկայ պայմաններուն մէջ քաջալերական էր:



Մասնաճիւղին նպատակն էր համախմբել հայ մանուկները եւ զանոնք դուրս բերել ներկայ մտահոգիչ կացութենէն:

Ամառնային դպրոցը 40 օրերու տեւողութեամբ զարգացուց հայ մանուկի ներաշխարհը արուեստի եւ արդի խաղերու բազմատեսակ ճիւղերով:

Սուրիոյ պատերազմական տարիներուն, Համազգայինի Հայագիտական հիմնարկը կը դիմագրաւեր կենցաղային եւ սիրական դժուարութիւններ: Հիմնարկը որպէս սկզբունք որդեգրեց արեւմտահայերէնի պահպանման նշանաբանը եւ շարունակեց կանգուն մնալ իր վսեմ առաքելութեան մէջ:

#### Գ- Միաւորներ

#### 1-Համազգայինի Հալէպի Հայագիտական հիմնարկ

Մասնաճիւղի վարչութիւնը ուսուցիչ-աշակերտ յարաբերութիւնները ամրապնդելու նպատակով Յունիս 2020-ին կազմակերպեց դասախօսներու եւ ուսանողներու հետ ամալերջի հաւաք մը:



Հիմնարկի վարչութիւնը երիտասարդ խաւը քաջալերելու միտումով Հալէպի հայկական երկրորդական վարժարաններու 12-րդ կարգի հայերէնի մէջ առաջին հանդիսացող 2019-2020 տարեշրջանի աշակերտութեանց յատկացուց հայագիտականի ուսման տարիներուն համար կրթական նպաստ:

Հիմնարկի 2020-2021 վերամուտը բաց յայտարարուեցաւ նորակառոյց Համազգայինի «Չաւարեան» մշակութային կեդրոնէն ներս, ուր կը շարունակուին դասաւանդութիւնները:

Հիմնարկի 2020-2021 վերամուտը բաց յայտարարուեցաւ նորակառոյց Համազգայինի «Չաւարեան» մշակութային կեդրոնէն ներս, ուր կը շարունակուին դասաւանդութիւնները:

Հիմնարկի 2020-2021 վերամուտը բաց յայտարարուեցաւ նորակառոյց Համազգայինի «Չաւարեան» մշակութային կեդրոնէն ներս, ուր կը շարունակուին դասաւանդութիւնները:

Հիմնարկի 2020-2021 վերամուտը բաց յայտարարուեցաւ նորակառոյց Համազգայինի «Չաւարեան» մշակութային կեդրոնէն ներս, ուր կը շարունակուին դասաւանդութիւնները:

# Գանձասար

## 2-«Բարսեղ Կանաչեան» Երաժշտական Դպրոց

Դպրոցը կը շարունակէ գործել Ազգ. Կիւլ-պէսկէան վարժարանէն ներս: Կանաչեանի



աշակերտներն ու ուսուցիչները յաճախակի մասնակցութիւն կը բերեն համայնքէն ներս կազմակերպուած տօնակատարութիւններու երաժշտական բաժիններուն:

## 3-«Չուարթնոց» Երգչախումբի միաւոր

Երգչախումբը կը գործէ գեղարուեստական դէկավարութեամբ տիկին Գայիանէ Սիմոնեան-Տերեանի: Երգչախումբը իր մաս-



նակցութիւնը բերաւ ՀՅԴաշխարհային 129-րդ ամեակի հանդիսութեան եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան 102-ամեակին նուիրուած տօնախմբութեան:

«Չուարթնոց» երգչախումբը 2020-ին նախատեսած էր իր տարեկան համերգը մատուցել, սակայն պսակաձեւ ժահրի համաճարակին ստեղծած դժուարին պայմաններուն մէջ կարելի չէր իրագործել յիշեալ ձեռնարկը:

## 4-«Լեւոն Շանթ» թատերական միաւոր

Միաւորի վարչութիւնը կը գործէ յանձնախումբերու դրութեամբ: Այս տարեշրջանին միաւորի վարչութիւնը կազմակերպեց պատանիներու դերասանական դասընթացը՝ պրն. Էլիա Գաճմինիի հետ:

Միաւորը կը պատրաստէ նաեւ մանկա-

պատանեկան թատրոն մը եւ նախատեսուած է բեմ բարձրացնել զայն յառաջիկայ տարեշրջանին:

## Դ. «Չաւարեան» Մշակութային կեդրոն

Համազգայինի «Չաւարեան» կեդրոնի ինամակալութիւնը զարկ տուաւ վերանորոգման եւ շինարարական հսկայ աշխատանքներուն: Ինամակալութիւնը Շրջանա-



յին Վարչութեան օժանդակութեամբ որելէ ճիգ չխնայելով լաւագոյնս իրագործեց: Ներկայիս «Չաւարեան» կեդրոն փոխադրուելով իրենց գործունէութիւնները կը շարունակեն՝ «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղը, «Լեւոն Շանթ» թատերական միաւորը, Հայագիտական հիմնարկը եւ «Չուարթնոց» երգչախումբը:

## Ե. Առցանց գործունէութիւններ

Մարտ 2020-ին պետական որոշումով դադրած էին Համազգայինի գործունէութիւնները: Այս միջոցին Համազգայինի Սուրբոյ շրջանի բոլոր ձեռնարկները դադրած ըլլալով մէկտեղ, վարչութիւնները իրենց աշխատանքները առցանց ներկայացուցին հանրութեան:

1-«Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղի գրական յանձնախումբը իր դիմատետրի էջին վրայ գետեղեց ասմունքի դասընթացներուն հետեւող աշակերտ-աշակերտուհիներուն ասմունքներուն տեսերիզները:

Մասնաճիւղի երաժշտական յանձնախումբը իր համեստ ուժերով արցախեան մարտիկներուն նուիրուած երգ պատրաստելով տեղադրեց դիմատետրի էջին վրայ:

2-«Չուարթնոց» երգչախումբի անդամները իրենց տուններէն երգ արձանագրելով պատրաստեցին տեսերիզ մը Հայաստանի Ա. Հանրապետութեան 102-ամեակին առիթով:



# Բացարիկ 2021

Արցախեան պատերազմին որպես զօրակցութիւն, երգչախումբը Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ բակէն ներս երգչախումբը արձանագրեց Նոր տեսերիզ մը, զայն նուիրելով հայոց բանակի մեր քաջարի մարտիկներուն:

3-Թատերական միաւորի անդամները համաճարակի հետեւանքով շրջագայութեան արգիլումի օրերուն երգիծական քառեակներ տեղադրեցին դիմատետրի իրենց էջին վրայ:

Միաւորը պատրաստեց ու գետնէնց նաեւ «Կար Ու Չկար» Յովհաննէս Թումանեանի հեքիաթներու շարքը տեսալսողական դրութեամբ եւ «Թատրոնի Ծնունդը» խորագիրով պատրաստուած տեսերիզ մը: Միաւորի վարչականները յատուկ տեսերիզով անդրադարձան Թատրոնի Միջազգային Օրուան եւ ընթերցեցին այդ օրուան առիթով գրուած 2020-ի նամակէն հատուածներ:

4-«Բարսեղ Կանաչեան» երաժշտական դպրոցի աշակերտները եւս տեսերիզներով հանդէս եկան եւ իրենց ուսուցիչներուն հըս-

կողութեան տակ երաժշտական կտորներ ներկայացուցին դիմատետրի մէջ:

5-Այս արգելափակման շրջանին յատկանշական էր Հայագիտական հիմնարկի



տարած արդիւնաւետ աշխատանքը: Հիմնարկի դասախօսները շարունակեցին իրենց դասապահերը իւրաքանչիւր կարգի հետ առցանց ուղիղ միացումով:

6-Լաթաքիոյ «Վահան Նաւասարդեան» մասնաճիւղը դիմատետրի վրայ իրագործեց «Պատմութիւն Կարդանք եւ Պատմենք» ծրագիրը, ուր մանուկները իրենց տուններէն ընթերցեցին պատմութիւններ:



## ՍՕ ԽԱՉԻ ՈՒԽՏԻ ՎԵՐԱՆԱՍՏԱՏՈՒՄ

100-ամեակը բոլորած Սուրիահայ Օգնութեան Խաչը կը շարունակէ գործել նոյն ոգիով եւ արդիական ոճով, իր շուրջ համախըմբելով նուիրեալներու եւ ծառայողներու փառանգ մը: Ունի ՍՕ Խաչի աշխոյժ անդամուհիներ, որոնք իրենց ներքին կարողականութիւնը ի սպաս դնելով մարդասիրական գործին պատրաստ են դեր վերցնելու մեր ընկերային, հասարակական եւ քաղաքական հոլովոյթին մէջ՝ կազմակերպելով հասութեաբեր ձեռնարկներ եւ հաւաքական ճիգով նպաստելով գաղութի զարգացման:

Այս համերաշխ ընտանիքը, որուն կեանքը լեցուած է սիրով, տարածուած է Սուրիոյ բոլոր նահանգներուն մէջ՝ իր հարուստ գործունեութեամբ արձանագրելով 100-ամեայ պատմութիւն:

ՍՕ Խաչի ընտանիքը այս մթնոլորտին մէջ գործեց յանձնառութեամբ ու նուիրումով, անոր լայնածաւալ գործունեութեան միամեայ ամփոփ պատկերը կը ներկայացնենք ստորեւ:

### ՅԱՐԱԲԵՐՎԱԿԱՆ

26 Յոկտեմբեր 2019-ին ընտրուած ՍՕ Խաչի Շրջանային Վարչութիւնը շարունակած է իր աշխատանքային ծրագիրը պահելով գործավարութեան դրութիւնը:

ՍՕ Խաչը որպէս բարեսիրական միութիւն իր լայնածաւալ եւ բազմաբնոյթ գործունեութեան զուգահեռ, յարաբերութիւններ ունեցած է ՀՅԴ-ի Կեդրոնական Վարչութեան, ՍՕԽ-ի մասնաճիւղերուն եւ շրջանային յանձնախումբերուն, Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Ս. Մասիս Ս. Եպս. Զօպուեանի, ՀՀ Յալէպի գլխաւոր հիւպատոս տիար Արմէն Սարգիսեանի, Հայ Կաթողիկէ եւ Աւետարանական համայնքապետներուն,

Սուրիոյ Վերականգնումի եւ Շտապ Օգնութեան Մարմին, Բերիոյ Յայոց Թեմի Նպաստից Յանձնախումբին, Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկին, Հ.Գարակեօզեան հիմնարկին, ուղեկից միութիւններուն, պետական մարմիններուն՝ Ընկերային Ծառայութեան եւ Աշխատանքի Տնօրէնութեան, Սուրիական Կարմիր Մահիկի Հալէպի Տնօրէնութեան եւ Պետական Վարչութեան հետ, UNHCR-ի, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխանին, նախագահական պալատի ներկայացուցիչին, ՀՀ Մարդասիրական Ծառայութեան խմբակի ընդհանուր ղեկավարին, *ալ Ամանա ալ Սուրիէ Լիլթանսիէ* ներկայացուցիչին հետ, որոնք ընթացած են յարգալից եւ փոխադարձ համագործակցութեան ոգիով:



Յարաբերական այս օղակէն ներս Շրջանային Վարչութիւնը՝

-Հանդիպումներ ունեցած է Բերիոյ Յայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Ս. Եպս. Զօպուեանի հետ եւ զեկուցած միութեանս վարած աշխատանքներուն, յատկապէս՝ Ընկերաբժշկական կեդրոնի վերաշինութեան եւ կազմակերպական գործընթացին շուրջ, ինչպէս նաեւ Պատսպարանի սաներու հետ կապուած մանրամասնութիւններուն շուրջ:



- Սուրիոյ Վերականգնումի եւ Շտապ Օգնութեան Կեդր. Մարմինն եւ Բերիոյ Հայոց Թեմի Նպաստից Յանձնախումբին մէջ ունեցած է իր ներկայացուցիչները, որոնց ջանքերով, յաճախ ՍՕ Խաչի ընտանիքին եւ Ազգ. Պատասպարանի սաներուն կարելի եղած է մեծաքանակ օժանդակութիւն ապահովել, դրկուած Հայաստանի Հանրապետութեան, Ռուսիոյ Դաշնութեան եւ այլ բարեսիրական միութիւններէ (սննդամթերք, հանդերձ, կօշիկ, գրեկական պիտոյք, ծածկոց, խաղալիք եւ այլն):

- Ընկերային Ծառայութեան եւ Աշխատանքի տնօրէնութեան հետ յարաբերութիւնը ընթացած է միութեանս պետական վարչութեան միջոցաւ տարեկան օրացոյցի հրատարակութեան եւ պետական արտօնագիրներու ապահովման եւ այլ հարցերով:

- 27-28 եւ 29 Մայիս, Բամատանի առիթով, մասնակցութիւն բերած է (Լքմթնա Սաուա - Մեր պատառը միասին) ծրագրին, ԻՖԹԱՐԻ ճաշ մատուցելով Հալէպի շրջակայքը պաշտպանող պահակակէտերու պետական զինուորներուն, շուրջ 100 հոգիի:

- Սուրիական Կարմիր Մահիկի Հալէպի տնօրէնութենէն ապահոված է սննդամթերք՝ «Փեթակ» խոհանոցին եւ դեղորայք՝ դարմանատան համար:

-2019-ին ընտրուած Պետական Վարչութեան կազմը շարունակած է իր աշխատանքը: Մասնակցած է Ընկ. Ծառայութեան եւ Աշխատանքի տնօրէնութեան եւ Բարեսիրական Միութիւններու Համընկերակցութեան ժողովներուն, շնորհաւորական այցելութիւններ տուած է Ֆթըր եւ Ատհա տօներուն առիթով:

-Փետրուար 2020-ին Նախագահական պալատէն առաքուած սննդակողովները բաշխած է նպաստընկալներուն, ՍՕ Խաչի վարչակազմերուն, յանձնախումբերուն եւ պաշտօնէութեանց:

## ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Ա. - Շրջ. Վարչութեան Ժողովներ

Շրջանային Վարչութիւնը մօտէն հետեւած է մասնաճիւղերու եւ Շրջանային յանձնախումբերու կազմակերպչական աշխատանքներուն, մշակած է գործունէութեան ծրագիր, գործադրած է ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան շրջաբերականներով ներկա-

յացուած թելադրանքները: Յատուկ օրակարգերով հանդիպումներ ունեցած է Պետական Վարչութեան, Շրջանային յանձնախումբերուն, մասնաճիւղերու վարչութիւններուն եւ անհատներու հետ:

-Հետամուտ եղած է մասնաճիւղերու անդամական ընդհանուր ժողովներու գումարման, վարչութիւններու ընտրութեան, առաջարկներու գործադրութեան, ընկերային կեանքի բարեփոխման, կամաւոր աշխատանքի քաջալերանքին եւ համայնքի նպաստընկալներու կարիքներու ապահովման:

-Ըստ կարիքի, յառաջացուցած է ժամանակաւոր յանձնախումբեր, ինչպէս կանոնագիրի սերտողութեան, ընկերաբժշկական կեդրոնի վերաշինութեան եւ «Մայրերու Օր»ուան հանդիսութեան կազմակերպման համար:

- Իրականացուցած է լիազումար առցանց մէկ կիստ «Էրեբունի», «Շուշի», «Մեղրի» եւ «Գետաշէն» մասնաճիւղերու Շրջ. Վարչութեան ընկերուիներուն հետ:

-Մասնակցած է ՀՕՄ-ի միաւորներու խորհրդակցական բնոյթ ունեցող առցանց ժողովին լիբանանահայութեան, սուրիահայութեան եւ Արցախի օժանդակութեան օրակարգերով:

- Առցանց հարցազրոյց ունեցած է Քորոնա համաճարակի օրերուն եւ այս ծիրէն ներս մինչ օրս ՍՕԽաչի ծաւալած գործունէութեան մասին «Հորիզոն»ի հեռուստակայանին, ինչպէս նաեւ «Գանձասար» շաբաթաթերթին հետ:

## Բ. - Մասնաճիւղեր

ՍՕ Խաչը Սուրիոյ շրջանին մէջ կը գործէ 10 մասնաճիւղերով, որոնք կը գործեն Շրջանային Վարչութեան կողքին: Անոնք կազմակերպած են տոհմիկ երեկոներ, դաստիարակչական դասախօսութիւններ, դասընթացքներ, հաւաքոյթներ, պտոյտներ, ցուցահանդէս եւ ճաշի վաճառքներ, հարց-պատասխանի մրցոյթներ, բարեսիրական, կըրթական, առողջապահական եւ խնամատարական աշխատանքներու առընթեր:

Իւրաքանչիւր մասնաճիւղ ունի իր դիմատետրի էջը, իսկ ձեռնարկներուն թղթակցութիւնները լոյս տեսած են «Գանձասար» շաբաթաթերթին մէջ:

-Մասնաճիւղերը կատարած են իրենց

# Գանձասար

նիւթական յատկացումները առողջապահական եւ ինամատարական յանձնախումբերուն:

-Այցելած են եւ ճաշ մատակարարած Ազգ.Պատսպարանի սաներուն եւ Հայ Ծերանոցի պատսպարեալներուն:

-Մասնակցութիւն բերած են շրջանէս ներս կայացած հանդիսութիւններուն, Սուրիոյ երեսփոխանական ընտրութեան եւ Արցախի գորակցութեան:

-Զօրավիգ կանգնած են շրջանայինի նախաձեռնութիւններուն, Արցախի Ֆոնտի նուիրահաւաքին, կեդրոնի վերանորոգութեան բացառիկ յատկացումով եւ Պսակածեւ ժահրի համաճարակէն տառապողներուն շտապ օգնութեան ձեռք երկարելով:

## **\*Պսակածեւ ժահր**

ՍՕ Խաչի նորակազմ Շրջանային Վարչութիւնն ու մասնաճիւղերը ինչպէս նաեւ Շրջանային յանձնախումբերը, որոնք նոր թափով ու եռանդուն աշխատանքով լծուած էին իրականացնելու իրենց մշակած ծրագիրները, կարճ ժամանակ անց համաշխարհային բնոյթ առած պսակածեւ «Քորոնա» ժահրը եկաւ ջլատելու ամէն ճիգ եւ գործունէութիւն:

Սկզբնական օրերուն նկատի առնուեցան նախագգուշական միջոցները: Աւելի ուշ, երբ համաճարակը մուտք գործեց Սուրիա, հետեւելով Առողջապահութեան Նախարարութեան եւ Ազգ.Իշխանութեան թելադրութիւններուն, կասեցուեցան ՍՕ Խաչի բոլոր ձեռնարկները:

Ժողովուրդին առողջապահական եւ սնունդի մատակարարման ու անհրաժեշտ դեղորայքի ու շտապ օգնութեան ծովածալալ կարիքներուն հասնելու նպատակաւ, Առողջապահական, «Փեթակ» խոհանոց, Խնամատարական եւ Աշխատանոցի յանձնախումբերը շարունակեցին իրենց աշխատանքները:

Աւելի ուշ, Օգոստոսին, համաճարակը տարածուեցաւ հայ համայնքէն ներս: Սուրիոյ քաղաքական կացութեան հետեւանքով ստեղծուած տնտեսական անել կացութիւնը եւ պսակածեւ ժահրի դեմ պայքարելու հնարաւորութիւնները, դեղորայքի եւ բժշկական օգնութեան միջոցները խիստ սահմանափակ էին:

Այս կացութեան մէջ ՍՕ Խաչի Շրջանա-

յին Վարչութիւնը անմիջապէս հնարաւորութեան սահմաններուն մէջ ձեռք երկարեց ժողովուրդին, դարմանատունը բաց պահելով, հիւանդներուն նախագգուշութեան միջոց, դեղորայք տրամադրելով, հիւանդանոցային իրավիճակներուն մէջ գտնուողներուն նիւթական ներդրում կատարելով, իսկ տարեցներուն անհրաժեշտ դեղորայքը հասցնելով անոնց բնակարանները:

Իսկ աշխատանոցէն ներս պատրաստուեցան դնչակապեր, որոնք անվճար տրամադրուեցան բոլորին: Հետագային ըստ պահանջի՝ վճարումով:

Խնամատարական յանձնախումբի կողմէ նպաստընկալ ընտանիքներուն «Պսակ Մը Տաք Ծաշ»ի ՀՕՄ-ի ծրագիրը շարունակուեցաւ, անոնց տրամադրուեցաւ նաեւ ուտեստեղէնի տեսականի եւ նիւթական օժանդակութիւն: Իսկ «Փեթակ» խոհանոցը շարունակեց պատրաստել ճաշեր մեր մամիկներուն եւ պապիկներուն համար:

Ահագանգային այս օրերուն ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան «Աջակցութիւն Սուրիահայութեան՝ համաճարակի պայքարին դէմ» կոչին արձագանգեցին ՀՕՄ-ի միաւորները, Սուրիայէն գաղթած խաչուհիներն ու անհատները, որոնք փութացին իրենց օգնութեան ձեռք երկարելու սուրիահայութեան, որոնց համար մեծապէս շնորհակալ ենք:

Այսուհանդերձ պսակածեւ ժահրը, մեզմէ խլեց գաղութիս պատկառելի եւ գործունեայ լաւագոյն երիտասարդ տարրերը:

## **\*Տնտեսական Փոքր Ծրագիրներ**

Երկրիս տնտեսական տագնապին հետեւանքով, անգործութեան մատնուած երիտասարդութեան գործ հայթայթելու եւ անոնց օրապահիկը ապահովելու միտումով Նախագահական պալատէն հասած առաջարկին ընդառաջելով, Փետրուար ամսուան մէջ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ դահլիճէն ներս, սկիզբ առաւ «Տնտեսական Փոքր Ծրագիրներ» ձեռնարկը, ՍՕ Խաչի Պետական Վարչութեան ընկերուհիներու անմիջական ներկայութեամբ եւ հսկողութեամբ: Դիմորդներուն թիւը հասաւ շուրջ 550-ի :

Այս ծրագրի համար յառաջացաւ յանձնախումբ մը, որ սերտեց դիմորդներուն ներկայացուցած ծրագիրները եւ կատարեց համապատասխան տնօրինում եւ աջակցութիւն:



Ցարդ աշխատանքը կը շարունակուի առաւելագոյնս օգտակար դառնալու համար դիմորդներուն:

## **\*Ալ Ամանա Ալ Սուրիէ Լիթանմիէ**

Սուրիոյ Առաջին Տիկնոջ անմիջական ու բարձր հովանաւորութիւնը վայելող պետական Ալ Ամանա Ալ Սուրիէ Լիթանմիէ ընկերութեան, 19 Յուլիս 2020-ին կազմակերպած բարեսիրական միութիւններու յատուկ վեցօրեայ դասընթացքին ՍՕ Խաչը իր մասնակցութիւնը բերաւ երեք ընկերուհիներով: Դասընթացքի աւարտին իւրաքանչիւր միութիւն ներկայացուց իր յատուկ ծրագիրը եւ որուն արժեւորումը կատարուելէ ետք, ներկայացուած ծրագիրը ընդունուեցաւ եւ տրամադրուեցաւ կոկիկ գումար մը նպաստելով առողջապահական մարձումի կեդրոնի իրականացման մեր ծրագիրին:

Անմիջապէս շատ կարճ ժամանակամիջոցին, սոյն ծրագիրին համար յատկացուեցաւ Ընկերաբժշկական կեդրոնի Տարրալուծարանի մուտքի սենեակը, կահաւորուեցաւ եւ զետեղուեցան մարձումի անհրաժեշտ գործիքներն ու կահոյքը, հարազատ մնալով կողմերու ստորագրած համաձայնութեան:

Նոյեմբեր 20-էն սկսեալ կեդրոնը արդէն կեանքի կոչուած է ունենալով մասնագետ երեք աշխատողներ (Յովսէփ Յակոբեան, Շանթ Գանթարճեան եւ Ժիւլիէթ Մսթրիի) եւ իր մարդասիրական անվճար ծառայութիւնը կը մատուցէ Զալէպի հայ թէ օտար բնակչութեան:

## **\*Արցախի Օժանդակութիւն**

Սեպտեմբեր 27-էն ի վեր համայն հայութիւնը, պայքարեցաւ Արցախի դէմ շղթայազերծուած, թուրքիոյ անմիջական հովանաւորութեամբ ու Ատրպէյճանի կողմէ ի գործ դրուած լայնածաւալ յարձակումներուն դէմ: Տեղի ունեցած ռազմական գործողութիւններուն հետեւանքով վնասուեցան մեր հազարամեայ մշակութային կոթողները, եկեղեցիները, մանկատուները, որուն մէջ նաեւ ԶՕՄ-ի ջանքերով Արցախի ողջ տարածքին կառուցուած ՍՕՄ մանկապարտեզներու կառոյցները, անտէր ու անտուն թողլով հարիւրաւոր անպատսպար երեխաներ:

Սուրիահայ Օգնութեան Խաչը ընդառաջելով Զայ Օգնութեան Միութեան կոչին, իր

մասնաճիւղերով ու խաչուհիներու անսակարկ նուիրումով, փութաց իր նիւթական եւ բարոյական աջակցութիւնը բերելու յանուն հայրենիքի պաշտպանութեան իրենց արիւնը հեղած մեր ազատամարտիկներուն, Զայոց բանակին եւ Արցախի մեր հայրենակիցներուն:

9 Նոյեմբեր 2020-ին ԶԶ Վարչապետ Նիկոլ Փաշինեանին կողմէ պատերազմի դադարեցման մասին ստորագրուած եռակողմանի համաձայնագիրը եկաւ զգեստելու ոչ միայն հայ ժողովուրդի արժանապատուութիւնը, այլեւ՝ ընդհանրապէս պահանջատիրական մեր բոլոր իրաւունքները:

Սուրիահայ Օգնութեան Խաչը եւս իր ընդվզումը յայտնեց բողոքագիր նամակով մը յղուած ԶԶ Զալէպի գլխաւոր Զիւպատոսին, ուր բուն կերպով դատապարտեց ստորագրուած եռակողմանի այս ամօթալի ու նուաստացուցիչ համաձայնագիրը եւ պահանջեց Վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը:

Ցարդ, ՍՕ Խաչը որպէս ԶՕՄ-ի մէկ շառաւիղ, հաստատակամ կը մնայ շարունակելու մարդասիրական ծառայութիւնները Արցախի ժողովուրդին եւ նահատակներու ընտանիքներուն:

## **ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԵՐ**

ՍՕ Խաչի Շրջանային Վարչութիւնը իրագործելու համար իր բազմաբնոյթ գործունեութիւնը յառաջացուցած է 10 Շրջ. Յանձնախումբեր, որոնք կը վարեն մասնագիտական գործունեութիւն, նոյն հետեւողականութեամբ կը գործէ Զաշուեքննիչ Մարմինը:

## **\*ՍՕ Խաչ - Ազգ. Պատսպարանի Յանձնախումբ**

ՍՕ Խաչ - Ազգ. Պատսպարանը ընտանեկան տաքունկ շրջապատէ եւ նիւթական բարօր պայմաններէ զուրկ փոքրիկներու խնամատարութեան կեդրոնն է, որ կը գործէ Ազգային Իշխանութեան եւ Սուրիահայ Օգնութեան Խաչի հովանիին ներքեւ:

Զալէպի Ազգ. Պատսպարանը, որպէս եզակի կառոյց, արժանացած է ԶՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան եւ ԶՕՄ-ի մեծ ընտանիքին ուշադրութեան իրենց կատարած նուիրատուութիւններով, որոնք նշանակալից տեղ ունեցած են սաներու բարօր կեան-

# Գանձասար

քի ապահովման մեջ: Պատասպարանի սանե-  
րը կ'ուսանին մանկապարտեզէն մինչեւ հա-  
մալսարան ու կը վայելեն ՍՕ Խաչի խնամա-  
տարութիւնը մինչեւ ամուսնութիւն կամ զի-



նուորագրութիւն եւ կամ ընտանեկան վիճա-  
կի բարելաւում:

Սաները ունեցած են մտերմիկ հաւաքներ  
պատասպարանէն դուրս՝ Միսիթարեան եւ Նոր  
Գիւղի պարտեզներէն ներս, ինչպէս նաեւ հիւ-  
րընկալուած՝ բարերարներու կողմէ:

Անոնք ամառնային արձակուրդը կ'ան-  
ցընեն Զեսապի Կազդուրման Կայանէն ներս:  
Այս տարի զանց առնուեցաւ ճամբարը՝ պսա-  
կածէ ժահրի համաճարակի պատճառաւ:

Ներկայիս Պատասպարանը ունի 10 մա-  
յուն եւ 26 անբարօր պայմաններ ունեցող  
այցելու սաներ:

Յանձնախումբը հետամուտ եղած է սա-  
ներու ուսումնակրթական եւ կենցաղային  
հարցերուն: Մօտէն հետաքրքրուած է պրո-  
վէի եւ պաքալորեայի աշակերտներուն դա-  
սապատրաստութեան եւ ուսուցիչներու հե-  
տեւողական աշխատանքին, առ ի պատրաս-  
տութիւն պետական քննութեան:

Մնայուն եւ այցելու սաներուն յետմիջօ-  
րէի դասապատրաստութեան կը հետեւին  
շուրջ 11 ուսուցիչներ:

Յաջորդաբար 33 Հալէպի Գլխաւոր Հիւ-  
պատոսի բարի տնօրինումով, Պատասպարան  
այցելած են Մարդասիրական առաքելութե-  
ամբ Սուրիա գտնուող հայաստանեան  
գումարտակի ներկայացուցիչները եւ ման-  
կական հանդերձանք, խաղալիք, գիրքեր եւ  
գրեական պիտոյք նուիրած են պատասպա-  
րանի սաներուն:

Որպէս երախտագիտութիւն հայրենի-  
քէն ժամանած մարդասիրական խմբակի զի-

նուորներուն Պատասպարանին տուած յաճա-  
խակի այցելութեանց՝ Պատասպարանի սանե-  
րը յանձնախումբին եւ Շրջ.Վարչութեան ըն-  
կերուհիներուն հետ այցելած են անոնց զօ-  
րանոց-բանակատեղին, ծանօթանալու  
իրենց գործունեութեան ու առաքելութեան,  
իրենց հետ ունենալով նաեւ համեստ հիւրա-  
սիրութիւն մը:

Յանձնախումբը ստացած է պատուոյ գիր  
հայկական բարեսիրական զինուորներէն  
պատասպարանի անձնակազմին ուղղուած,  
սաներուն նկատմամբ իրենց հոգատար վե-  
րաբերմունքին համար:

Յանձնախումբը շարունակած է գործակ-  
ցիլ բարեսիրական այլ կազմակերպութեանց  
հետ եւ հիւրընկալած կազմակերպութիւն-  
ներու, միութիւններու ներկայացուցիչներ եւ  
անհատ բարերարներ:

Յարգ, պատասպարանը ունի եօթը մա-  
յուն եւ այցելու պաշտօնեաներ:

## \*Առողջապահական

Նոր Գիւղի շրջանին մէջ գտնուող ՍՕ Խա-  
չի դարմանատունը Օգոստոս ամսուան  
սկիզբը առժամեայ կեդրոնէն տեղափոխուե-  
ցաւ վերանորոգուած Ընկերաբժշկական



կեդրոնի առաջին յարկը, պահելով աշխա-  
տանքային Նոյն ժամերը՝ առաւօտեան ժա-  
մը 9:00-2:00, ընդունելով հայ եւ օտար  
հիւանդներ:

Դարմանատունը ունի իր տնօրէնուհին,  
2 բոյժ քոյր, տարրալուծարանի մէկ պատաս-  
խանատու բժշկուհի եւ մնայուն ու այցելու -  
21- բժիշկներ, իրենց մասնագիտական բա-  
ժիններով՝ Ներքին հիւանդութիւններու,  
Մանկաբուժական, Ոսկրային, Մաշկային,  
Կանացի, Սրտանօթային, Ջղային համա-  
կարգի, Ատամաբուժական, Ակնաբուժա-



րան, Գեղձային, Անոթային վիրաբուժություն, Միզասեռական, Սննդակարգային, Զիթ-Ականջ-Կոկորդ:

2019-ին պետական հրաւերով, ՀՀ Մար-



դասիրական առաքելութեամբ Հալւէպ գըտ-նուող հայրենի մասնագետ բժիշկներու 4-րդ եւ 5-րդ խմբակները կամաւոր կը ծառայեն դարմանատունէն ներս եւ համագործակցութեան բարձր ոգիով կը սատարեն դարմանատան: Անոնք «Պատուոյ Գիր»ով պարգեւատրած են դարմանատան գործունեայ բժիշկները, բոյժբոյրերն ու առողջապահական յանձնախումբի 2 ընկերուհիներ, Ինչպէս նաեւ Շրջ.Վարչութեան նախկին եւ նոր ատենապետուհիները, իրենց բժախնոյի ու հետեւողական աշխատանքին համար:

Այս շրջանին դարմանատունը օժտուեցաւ իտալական մակնիշով կատարելագործուած *Էքոյի* գործիքով մը:

2020-ի համաշխարհային բնոյթ առած պսակածեւ ժահրի համաճարակի պատճառով, դարմանատան սպասարկութիւնը կըրկնապատկուեցաւ եւ առնուեցան նախագգուշական բոլոր միջոցները: Հականեխուեցան դարմանատունն ու Ընկերաբժշկական կեդրոնը իր բոլոր յարկերով: Ապահովուեցան շտապ օգնութեան եւ կանխարգիլման նպաստող դեղորայք, հականեխիչ, յաւելեալ սարքաւորում շնչառական խնդիրներ ունեցող հիւանդներուն համար ինչպէս՝ թթուածինի գործիք, հիւանդի անկողին եւայլն. եւ դնչակապեր: Ժողովուրդին բաժնուեցան անվճար անհրաժեշտ դեղերն ու հականեխիչները: Իսկ 20 Մարտ 2020-ին, Հալւէպ ժամանած 5-րդ խմբակի ՀՀ բժիշկները պաշտօնապէս այցելած են դարմանատուն եւ

յանձնած իրենց հետ բերած որոշ քանակի դեղորայք եւ արեան ճնշում չափող գործիքներ:

Պետական Ընկերային Ծառայութեան գրասենեակի թելադրանքին համաձայն, պատրաստուեցաւ Զորոնայի մասին տեղեկատուական արաբատառ թերթիկ մը եւ Շրջ. Վարչութեան միջոցաւ բաժնուեցաւ Նպաստից Յանձնախումբին եւ ՍՕ Խաչի Խնամատարական Յանձնախումբի նպաստընկալներուն:

Ազգ. Առաջնորդարանի կողմէ կազմուած Կեդր. Առողջապահական յանձնախումբին մէջ, ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան ներկայացուցիչին կողքին ունեցած է իր ներկայացուցիչները:

Արտակարգ այս դրութեան որպէս բժըշկական կեդրոն սկստի առնուած էր ՍՕ Խաչի դարմանատունը, որ առաւօտեան ժամը 9:00-6:00 պիտի գործեր օգտակար դառնալու համար հայ համայնքի զաւակներուն: Իսկ Յանձնախումբի ընկերուհիները կ'եսօրէ ետք հերթապահութեան դրութեամբ ներկայ գտնուեցան դարմանատուն:

Դարմանատունը կը գործակցի Ճիւղիշեան Յիշատակի ձեռնարկի, Հաւուրտ Գարակեօզեան հաստատութեան, Պետական Համալսարանի հիւանդանոցի տարրալուծարանի եւ Հալւէպի Կարմիր Մահիկի տնօրէնութեանց հետ:

Յանձնախումբը կազմակերպած է առողջապահական նախաձեռնութիւններ եւ դասախօսութիւններ՝

-Մէկ շաբթուան տեւողութեամբ անվճար արշաւ շաքարախտ եւ գերճնշումէ տառապող հիւանդներուն:

-Հոկտեմբեր ամիսը «Կուրծքի Քաղցկեղ»ի անվճար քննութիւն:

-Օժանդակած է Հայ Ծերանոցի ծերերուն արեան խմբաւորման ճշդումին:

-Կազմակերպած է դասախօսութիւններ՝ «Պսակածեւ ժահրի Համաճարակ» եւ «Առողջ Այրելակերպ» նիւթերով:

-Հոկտեմբեր ամսուն ներկայացուցիչով մը մասնակցած է Հալւէպի պետական Առողջապահութեան նախարարութեան կազմակերպած առողջապահական դասախօսութեան:

-Յանձնախումբը ունի դիմատետրի իր էջը, ուր տեղադրուած են այժմու դարմանա-

# Գանձասար

տան նկարներն ու կեդրոնի մատուցած ծառայութեան մանրամասնութիւնները:

## \*Խնամատարական

Յանձնախումբը ստանձնած է ՀՕՄ-ի կեդրոնական Վարչութեան «Պնակ Մը Տաք Ճաշ»-ի ծրագրի մատակարարումը, շաբաթական երկօրեայ դրութեամբ, 362 ընտանիքի ներառելով հայկական թաղամասերը իրականացնելու պահակ տղոց:

Յանձնախումբը նիւթական օժանդակութեան կողքին, կարիքաւոր ընտանիքներուն հայթայթած է սնունդ, զգեստեղէն եւ անհատ բարերարներէ ու միութիւններէ տրամադրուած սուէրներ:

Այս շրջանին պատրաստած են նպաստը նկատելու յատուկ քարտերը եւ իրագործած պահեստի կանաչեղէններ չորցնելու աշխատանքը՝ օգտագործելու համար «Պնակ Մը Տաք Ճաշ»-ի պատրաստութեան:

## \*«Փեթակ» խոհանոց

Նոր Գիւղի ազգապատկան «Սիս» համալիրի, Ազգ. Պատսպարանի կեդրոնի յարակից բաժնին մէջ գործող, առողջարար յատկութիւններով օժտուած եւ Սուրիոյ մակարդակով համբաւ վայելած «Փեթակ» խոհանոցը, միշտ ձգտած է բարձրացնել խոհանոցի արտադրութեան որակը եւ քայլ պահած՝ շրջանի տնտեսական պայմաններուն համապատասխանող ճաշացուցակներու



գիւներու ճշմամբ: Ան ազգային ճաշատեսակներով գոհացում տուած է հայ թէ օտար ընտանիքներու պահանջներուն: Ինչպէս նաեւ միութիւններու եւ անհատներու պատուէրներուն:

Հոն երկօրեայ դրութեամբ կը պատրաստուին նաեւ ՀՕՄ-ի ծրագիր «Պնակ մը Տաք Ճաշ», միութիւններու եւ անհատներու

պատուէրներու կողքին:

Ձեռարուեստի եւ Աշխատանոցի յանձնախումբերու կողքին «Փեթակ» խոհանոցն ալ մասնակցած է արաբական եւ ՍՕ Խաչի Ամանորի առթիւ կազմակերպուած ցուցահանդես-վաճառքներուն:

2020 Օգոստոսին մեծ ներդրում բերած է Սուրիոյ Խորհրդարանի Երեսփոխանական ընտրութեան աշխատանքներուն մատակարարելով ճաշ եւ հիւրասիրութիւն քուէատուփերու պատասխանատուներուն եւ պարտականութիւն ստանձնած երիտասարդութեան:

Աւելի ուշ, Սեպտեմբերին, «Մէլետին» հեռուստաընկերութեան թղթակիցները այցելած են «Փեթակ» վաճառատուն եւ նկարահանած այնտեղ իրականացած աշխատանքը, իրենց խոհանոցի յայտագիրին մէջ ներառելով հայկական ճաշատեսակները:

## \*Ձեռարուեստ

Յանձնախումբը Հայկական ասեղներու պահպանման մշակոյթը կը փոխանցէ սերունդէ սերունդ, դասընթացքներու եւ ցուցա-



հանդեսներու ընդմէջէն, պահպանելով գաւառներու իւրաքանչեւ ոճը: Դասընթացքները սկսած են Նոյեմբեր ամսուան ընթացքին, ունենալով շուրջ 50 մասնակիցներ:

Վիլլաներու շրջանին մէջ գտնուող «Նախշատան» վաճառատունը կը գործէ իր շուրջ համախմբելով հայկական ձեռագործներով հետաքրքրուողներու փաղանգ մը ու կը ջանայ կորուստ փրկել հայկական մշակոյթը: Ան նաեւ կը նպաստէ խաչուիներու եւ անհատներու՝ գործ հայթայթելով անոնցմէ շատերուն:



Յանձնախումբը Աշխատանոցին հետ միասին, Մարտ ամսուան մեջ իրականացուցած է գեղջ-վաճառք Նախշատունեն ներս, երկու շաբթուան տևողութեամբ, Միջինքի, «Մայրերու Օրուան», ուսուցչաց տօնի եւ Ս. Չատկուան ձեռագործներու: Մասնակցութիւն բերած է ՍՕԽ-ի «Ամանոր»ի եւ պետական ցուցահանդես-վաճառքներուն: Ինչպէս նաեւ բարեգարդած է Ընկերաբժշկական կեդրոնի «Գ. Զամալեան» սրահը եւ իոն գտնուող ձեռարուեստի ցուցափեղկերը արժեքաւոր ձեռագործներու ցուցադրումով:

Երկրորդ վաճառատուն.

Սեպտեմբերին, Շրջ. Վարչութեան ջանքերով, վաճառատունը ունեցաւ իր երկրորդ բաժինը Սիւլէյմանիէի Ազգ. Միացեալ Նախակրթարանի կից գտնուող ազգապատկան Նախկին վաճառատունեն ներս:



Վաճառատունը շուտով կեանքի կոչուեցաւ ունենալով իր պաշտօնեան: Զոն ցուցադրուեցան Աշխատանոցի եւ Ձեռարուեստի արտադրանքները եւ արդէն իսկ ունի իր մնայուն յաճախորդները եւ Նախշատան կողքին կ'ապահովէ նիւթական կոկիկ գումար մը:

## \*Աշխատանոց

Ազգ. Սահակեան վարժարանի ներքնասրահէն ներս ժամանակաւորապէս գործող աշխատանոցը, Ապրիլ ամսուն տեղափոխուեցաւ վերանորոգուած Ընկերաբժշկական կեդրոնի գետնայարկը, իր լրիւ կազմածով ու պաշտօնեութեամբ:



Աշխատանոցի գոյութեան հիմնական նպատակն է գործ հայթայթել հայ տիկիններուն եւ եկամտաբեր աղբիւր հանդիսանալ ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան:

Յանձնախումբը կը գործակցի քոյր միութիւններու, Զայկական վարժարաններու, եկեղեցիներու, բարեսիրական հաստատութիւններու, անհատական վաճառատուներու հետ ստանձնելով համազգեստներու, ամաւերջի հանդեսներու, մարզական, պարային եւ երգչախմբային տարագներու, տպագրուած ծածկոցներու պատրաստութիւնը, նաեւ կ'իրագործէ ԶՕՄ-ի Քանատայի միաւորի նուիրատուութեամբ «Տաքուկ Չգեստներ»ու ծրագիրը: Կը մասնակցի միութեանս եւ պետական ցուցահանդես-վաճառքներուն: Կը համագործակցի Ձեռարուեստի յանձնախումբին հետ աշխատանոցի արտադրութիւնները ցուցադրելով Նախշատան եւ 2-րդ վաճառատունեն ներս: Մասնակցած է Մարտ ամսուան ընթացքին Նախշատունեն ներս կայացած գեղջ-վաճառքին եւ ապահոված՝ կոկիկ գումար մը:

Պսակածեւ ժահրի հետեւանքով, աշխատանոցէն ներս պատրաստուած են հազարաւոր դնչակապեր եւ բաժնուած, ըստ պահանջի:

Այս շրջանին աշխատանոցը օժտուած է գերարդիական կարի մեքենայով, որ կը դի-

# Գանձասար

րացնէ մեծաքանակ պատուերներու իրականացման աշխատանքը:

## \*Դաստիարակչական

Յանձնախումբը կազմակերպած է Մեծ Պահքի դասախօսութիւն մը, Մարտ ամսուան ընթացքին, դասախօս ունենալով Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանը: Անոր յաջորդող օրերուն կարելի չէ եղած իրականացնել նախապէս մշակուած դասախօսական ծրագիրը, պակասեւ ժահրի պատճառաւ: Սակայն յանձնախումբը շարունակած է իր աշխատանքը համացանցի միջոցաւ՝ դաստիարակչականի դիմատետրի էջով, ուր գետնդրուած են 21 զանազան նիւթեր: Հոկտեմբեր ամսուն կազմակերպած է «Արցախն Այսօր» դասախօսութիւնը՝ խտասալիկի ցուցադրութեամբ: Դասախօսութիւններուն թղթակցութիւնները լոյս տեսած են «Գանձասար» շաբաթաթերթին մէջ:

## \*Մանկամտոր

ՍՕ Խաչի «ԿԱԿԱԶ» մանկամտորը, 2017-ին վերսկսաւ գործել Ազգ. Պատասպարանի տարածքէն ներս, առաւօտեան ժամը 8:00-2:00, ունենալով յարմարաւետ պայմաններ եւ խնամատար պաշտօնեաներ:

Յանձնախումբը ճիգ չէ խնայած բարօր



եւ ուրախ մթնոլորտ ստեղծելու իր խնամքին յանձնուած 3 ամսականէն մինչեւ 3 տարեկան երեխաներուն, որոնց մայրերը ընդհանրապէս վարժարաններու ուսուցչուհիներ են: Անոնք հերթապահութեան ամենօրեայ դրութեամբ ներկայութիւն եղած են կեդրոնէն ներս, իրագել դառնալու մանկամտորէն ներս տարուած, երեխաներու խնամատարական եւ դաստիարակչական գործընթացին, որուն համար պատրաստած են յատուկ ծրագիր:

Յանձնախումբը կազմակերպած է Բարեկենդանի տօնախմբութիւն (փոքրերու յատուկ), վիճակահանութիւն, «Երեխաներու Խաղի Օր» յատուկ յայտագրով, Տեառնընդառաջի առթիւ լապտերներ՝ ծնողներուն նուիրելու:

Մանկամտորը փոխադրուելով վերանորոգուած կեդրոնը, բարեգարդած է սրահը եւ ապահոված կարիքները, իսկ Հոկտեմբեր 5-ին ընդունած է մանուկները, որոնց թիւը կը հասնի շուրջ 12-ի:

Մանկամտորը ունի դիմատետրի իր էջը «ՍՕԽ-ի Կակաչ Մանկամտոր» անունով:

## \*Արխիւային

Յանձնախումբը շարունակած է ՍՕԽ-ի արխիւներու մէկտեղման եւ տարիներու յաջորդականութեամբ դասաւորելու աշխատանքը: Պատասպարանէն ներս պահ դրուած արխիւները տեղափոխած են Ընկերաթշկական կեդրոնի 3-րդ յարկ, արխիւայինի յատկացուած սենեակը: Ծրագրի իրականացումը կ'ենթադրէ երկարաշունչ եւ երկարաժամկետ աշխատանք:

## \*Հրատարակչական

Հրատարակչական յանձնախումբին վըստահուած է ՍՕ Խաչի տեղեկատուի պատրաստութիւնը: Երկարաժամկետ այս ծրագիրը յանձնախումբին կողմէ կ'իրագործուի աչալուրջ մօտեցումով եւ բժախնդրօրէն: Անոր կողքին, յանձնախումբը կը հետապնդէ իրեն վստահուած տարեկան պատի օրացոյցի աշխատանքը:

## ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

### Ա. - ՀՕՄ-Ի ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը յատուկ կարեւորութեամբ շարունակած է իր մարդասիրական ծրագիրները Սուրիոյ մէջ: Իսկ Շրջ. Վարչութիւնը հետամուտ եղած է այդ ծրագիրներու անխափան շարունակութեան:

- «Պնակ մը Տաք Ճաշ» ծրագիրը իրագործուած է շաբաթական երկօրեայ դրութեամբ, «Փեթակ» խոհանոցի մատակարարութեամբ եւ խնամատարական Յանձնախումբի հսկողութեամբ: Յիշեալ ծրագրէն կ'օգտուին 362 նպաստընկալներ:



-«Տաքուկ Բնակարան» ծրագրի գծով վառելահիւթի գումարներ յատկացուած են 300 նպաստընկալներու:

-Քանատայի Միաւորիներըրումով 2020-ին իրականացած է 425 ձմեռնային վերարկուներու պատրաստութիւնը ՍՕ Խաչի աշխատանոցէն ներս եւ բաշխումը՝ Ազգ. Միացեալ Նախակրթարանի եւ մանկապարտեզի աշակերտութեանց:

- «ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՖՈՆՏ» նպաստէ 2019-2020 տարեշրջանին օգտուած են 3ալէպի պետական համալսարանի գեղագիտական եւ երկրաչափական ճիւղերու յառաջադէմ երկու ուսանողուհիներ:

## Բ.- ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

- 10, 11 եւ 12 Յուլիս 2020-ին, շրջաններու մասնաճիւղերու վերաշխուժացման նպատակով, այցելութիւններ տուած է Զեսապի՝ «Մեղրի», Գարատուրանի՝ «Գետաշէն» եւ Լաթաքիոյ՝ «Շուշի» մասնաճիւղերուն եւ ներկայ գտնուած Անդամական Ընդհանուր ժողովներուն ու Վարչական ընտրութիւններուն:

- Փետրուար եւ 3ոկտեմբեր 2020-ին այցելած է Դամասկոս եւ ներկայ գտնուած «Էրեբունի» մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովին եւ վարչական ընտրութեան:

## ՔԱՐՈՉՉԱԿԱՆ - ՅՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ

Ա.- Միութեանս աշխատանքն ու գործունեութիւնը առաւելագոյնս ցոլացնելու հիմնական ազդակներէն մէկը եղած է քարոզչութիւնը, իր գանազան միջոցներով:

Առ այդ, ՍՕ Խաչի գործունեութիւնը օրը օրին իրապարակուած է «Գանձասար»ի էջերով, յայտարարութիւններով, յատուկ հաղորդագրութիւններով, թղթակցութիւններով, իսկ պաշտօնական հանդիսութիւնները ուղիղ եթերով սփռուած են Ռատիօ Երագի ճամբով:

Բ.- Նախորդ շրջանին ստեղծուած դիմատետրի յատուկ էջը՝ «Souriahay Oknoutian Khach - Շրջանային Վարչութիւն» անունով, շարունակած է գործել եւ նպաստել միութեանս գործունեութեան քարոզչութեան տարածման: Էջը այսօր ունի 3000-էն անելի հետեւող:

Գ.- 3րապարակած է միութեան 2020-ի

պատի տարեկան օրացոյցը, նուիրուած Արցախի:

## ԳԵՐԱՉԱՆՑ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ԾՐԱԳԻՐ

Շարունակած է «Գերագանց Ուսանողներու ծրագիր»ը, եւ նիւթական պարգեւներով գնահատած՝ Սուրիոյ տարածքին Ազգային վարժարաններու, Միջնակարգի եւ Երկրորդականի պետական քննութեանց առաջին երեք դիրքերը գրաւած հայ աշակերտները:

## ԾԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ.- Ա.-ԸՆԿԵՐԱԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՂՈՆ

2018 Սեպտեմբեր 15-ին սկսած Ընկերաբժշկական կեդրոնի վերանորոգութեան աշխատանքները անարտեցան Մայիս ամսուն: Շրջ. Վարչութեան յաճախակի հետապնդումներուն շնորհիւ կարելի դարձաւ շէնքի յարկերու կահաւորումը, լման սարքերով:

Բնականաբար կիսաքանդ շէնքի վերանորոգութիւնը կ'ենթադրէր հսկայական գումար: Նախապէս պատրաստուած ենթահողի շնորհիւ եւ Սուրիոյ մէջ գործող բարեսիրական միութեան ծաւալուն եւ աշխույժ գործունեութեան առ ի գնահատանք, շէնքը վերանորոգուեցաւ Սուրիոյ վսեմաշուք Նախագահ Տոքթ.Պաշար Ալ Ասատի եւ Առաջին Տիկնոջ՝ Ասմա Ալ Ասատի կատարած նիւթական բացառիկ օժանդակութեամբ:

Այս գծով, ՍՕ Խաչի Պետական Վարչութեան անունով, յատուկ շնորհակալական նամակով մը, Նախագահական պալատին փոխանցուեցաւ միութեանս երախտագիտական ջերմ զգացումներն ու շնորհակալիքը:

Բերիոյ Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, պատուիրակութեամբ մը, 6 Ապրիլ 2020-ին, պաշտօնական այցելութիւն տուաւ ՍՕ Խաչի Ընկերաբժշկական կեդրոն եւ Դարմանատան պաշտօնէութեան հետ հանդիպում ունենալով, գնահատեց անոնց ազգանուէր ու մարդասիրական գործունեութիւնը, նամանաւանդ աշխարհի դիմագրաւած այս դժուարին օրերուն, ապա գօտեակնդեց գանոնք համբերութեամբ եւ ապագայ գալիք պայծառ օրերու հաւատքով ու հեռանկարով:

Ընկերաբժշկական կեդրոնէն ներս իրա-

# Գանձասար

գործուեցան հետեւեալ աշխատանքները.-

1-Դրան մուտքին զետեղուեցաւ հիմնաքարի վրայ փորագրուած շէնքի անունը.

2-Շէնքի մուտքին զետեղուեցաւ յատուկ ցուցանակ մը, ցանկագրուած հիմնադրութեան բարերարներուն անունները: Ինչպէս նաեւ այլ բաժին մը բժիշկներու անունները իրենց մասնագիտութիւններով:

3-Դարմանատունը օժտուեցաւ բժշկական եքոյի նոր սարքով:

4-Բարեգարդուեցաւ «Գոհարիկ Զամալեան» սրահը արդիական կազմածով, հայկական ասեղնագործերու նմոյշներու ցուցադրութեամբ, արդիական ոճով: Ինչպէս նաեւ ձեռագործերու յատուկ ցուցափեղկերուն մէջ ցուցադրուեցան հայկական գաւառներէ մեզի ժառանգ հասած, հայ կնոջ ձեռակերտով ասեղնագործուած, գեղեցիկ եւ նրբաճաշակ ձեռագործեր: Սրահը օժտուեցաւ նաեւ ձայնայինի լման սարքով մը:

5-Չետեղուեցան Նախագահական պալատէն միութեանս ուղարկուած լուսանկարները, Ազգ. Պատուիրակութեան Սուրբոյ Նախագահին տուած այցելութեան օրուան առթիւ:

22 Նոյեմբեր 2020-ին վերանորոգուած



Ընկերաբժշկական կեդրոնի շէնքի մուտքին զետեղուած հիմնաքարի բացումը կատա-



րուեցաւ բարձր հովանաւորութեամբ Զալէպի Նահանգապետ տիար Զուսէյն Տիապի, Նախագահութեամբ Բերիոյ Զայոց թեմի Բարե-



ջան Առաջնորդ Գերշ.Տ.Մասիս Սրբ. Զօպուեանի ձեռամբ: Ապա պաշտօնական այս բացումին հրաւիրեալները՝ հայ երեք համայնքապետները, Սուրբոյ խորհրդարանի երեսփոխանն ու պետական, ազգային մարմիններու ներկայացուցիչները ուղղուեցան «Գ.Զամալեան» սրահ, ուր տեղի ունեցաւ բացման հանդիսութիւն եւ հիւրասիրութիւն:

## Բ.-ԿԱԶՂՈՒՐՄԱՆ ԿԱՅԱՆ

Կազդուրման Կայանի հսկողութիւնն ու հետապնդումը յանձնուած է Զեսապի «Մեդրի» մասնաճիւղի մօտ Շրջ. Վարչութեան ներկայացուցիչի կողմէ յառաջացած եռանդամ յանձնախումբի մը, որ ցանկագրած է կեդրոնի գոյքերը եւ կահաւորած ու մաքրած սրահը: Զանդիպում ունեցած են նաեւ կապալառու տիար Վահագն Ղազարեանի հետ ստուգելու Կազդուրման Կայանէն ներս անոր յանձնարարուած աշխատանքներու ամբողջացումը: Ցանկապատումի ամբողջացման եւ նոր ծառատնկումի աշխատանքները ընթացքի մէջ են:

Այս տարի Կազդուրման կայանի ձիթապտուղի բերքէն չորս թիթեղ ձեթ տրամադրուած է Ազգ. Պատասպարանին:

## ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ-ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

1.-15-16-17 Փետրուար 2020-ին երկու ընկերուհիներով մասնակցած է Ընկերային Ծառայութեան եւ Աշխատանքի գրասենեակի տնօրէնութեան կազմակերպած հաշուապահական դասընթացքին:

2.- Շրջ.Վարչութիւնը լրիւ կազմով ու մասնաճիւղերու ընկերուհիներով մասնակցած է ԶՄԸՄ-ի կազմակերպած քայլարշաւին՝ Կիրակի, 23 Փետրուար 2020-ի առաւօտ-



եան, Հալեպի ազատագրման լաւե առ ի երախտագիտութիւն Սուրիոյ խորհրդարանէն ներս Հայոց Յեղասպանութեան բանաձեւի ընդունման առիթներով:

3.- Հայ Ծերանոցի Մայրերու Օրուան հանդիսութեանց եւ Մեծն Ներսէսի աւանդական ճաշկերոյթին:

4.- Ունեցած է իր ներկայացուցիչը ապրիլեան կեդրոնական հանդիսութեան կազմակերպիչ յանձնախումբին մէջ եւ հայերէն բացման խօսքով հանդէս եկած: Ինչպէս նաեւ մեծաթիւ խաչուհիներով մասնակցած է մոմավառութեան, ծաղկեմատոյցին եւ արեան տուչութեան:

5.-25 Մայիս 2020-ին, Րամատանի առիթով, պաշտօնական այցելութիւն տուած է Պետական Վարչութեան հետ Ընկ. Ծառայութեան եւ Աշխատանքի գրասենեակի տնօրէնին: Ինչպէս նաեւ հիւրասիրած Նոր Գիւղի երեք զինուորական կեդրոններու զինուորներուն:

6.-19 Յուլիս 2020-ին Սուրիոյ խորհրդարանի երեսփոխանական ընտրութեան քուէատուփերու հսկողութեան, ճաշի մատակարարման «Փեթակ» խոհանոցի պատրաստութեամբ եւ այլ աշխատանքներուն:

7.-Երկրիս Նախագահին թելադրութեամբ, Սուրիոյ Նախագահական Պալատի ներկայացուցիչը, այցելած է վերանորոգուած ընկերաբժշկական կեդրոն, ներկայութեամբ Շրջ.Վարչութեան ատենապետին, պետական վարչութեան ընկերուհիներուն եւ Պատկան Մարմնի ներկայացուցիչին: Ան շրջել է ետք կեդրոնի բոլոր յարկերը, իր գոհունակութիւնը յայտնած է տարուած աշխատանքին գծով: Ապա, Ազգ. Պատսպարանէն ներս կայացած հանդիպումով, ներկայացուցիչը փոխանցած է Նախագահին սերն ու գնահատանքը հայ համայնքին նկատմամբ եւ նշած, թէ հայութիւնը իր աշխատասիրութեամբ, վարպետ արհեստաւորներով եւ հաւատարմութեամբ կը մնայ այս երկրին պատուաւոր քաղաքացին: Ինչպէս նաեւ փոխանցած է, թէ Նախագահը իր պատրաստակամութիւնը յայտնած է հայ երիտասարդութեան աշխատանքի գծով նիւթապէս օգտակար դառնալու:

8.- 21 Սեպտեմբեր 2020-ին, ընդառաջած է Հայաստանի վերանկախացման 29-րդ տա-

րեդարձին առթիւ ՀՀ Հալեպի Գլխաւոր Հիւպատոսութեան կազմակերպած հրաւերին Հիւպատոսարանէն ներս: Այս առթիւ կազմա, համապատասխան շնորհաւորագիր եւ ծաղկեղով մը ուղարկած է Հիւպատոսարան:

9.-Շաբաթ, 10 Հոկտեմբեր 2020-ին, Պետական Ընկերային Ծառայութեան գրասենեակի Նախաձեռնութեամբ շտապ օգնութիւն կատարած է ծովեզերեայ շրջանի հրդեհին պատճառով 100 հատ սաւան եւ բարձր ուղարկելով անտուն մնացած ընտանիքներուն: Պատսպարանի յանձնախումբը եւս իր մասնակցութիւնը բերած է իր պահեստանոցէն որոշ հագուստեղէն եւ ուտելիք (մաքարոն) տրամադրելով: Սոյն օժանդակութիւնը լաւ արձագանգ ունեցած է պետութեան մօտ: Աւելի ուշ, Նոյեմբեր ամսուն, ընդառաջելով Սուրիոյ Նախարարութեան գրասենեակի հրաւերին ներկայ գտնուած է Դամասկոսի մէջ կայացած հանդիպման, որուն ընթացքին բարձր գնահատուած է միութեանս մարդասիրական Նախաձեռնութիւնը:

10.-5-6 Հոկտեմբեր 2020-ին, ներկայացուցիչով մը, մասնակցած է ՄԱԿ-ի Հալեպի մասնաճիւղի գրասենեակի կազմակերպած երկօրեայ դասախօսութեան մը՝ «Ընկերային Բրտութիւն» նիւթով, «Շիրաթոն» պանդոկէն ներս:

11.-28 Հոկտեմբեր 2020-ին, երկու ներկայացուցիչով, մասնակցած է Պետական Առողջապահութեան տնօրէնութեան կազմակերպած առողջապահական դասախօսութեան «Թաուլիտ» հիւանդանոցէն ներս:

12.-Մասնակցած է 28 Յուլիս 2020-ին երեսփոխանական ընտրութեան ներդրում բերողներու ընթրիքի հրաւերին, իսկ 29 Յուլիս 2020-ին, Ազգ. Առաջնորդարանի կազմակերպած շնորհաւորական ընդունելութեան. Ազգ. Առաջնորդարանի թեկնածու՝ տիար Ժիրայր Ռէիսեանի երեսփոխանական ընտրութեան յաջողութեան առիթով:

13.-Նկատի ունենալով վերջին շրջանին Գամիշլիի մէջ տեղի ունեցած ջուրի տագնապը՝ թրքական կառավարութեան անմարդկային շրջափակումին հետեւանքով, նիւթական օժանդակութեամբ նպաստեց Գամիշլիի մասնաճիւղին, իրենց միջոցաւ հասնելու համար հայ ընտանիքներու կարիքներուն:

## 102-ՐԴ ԱՄԵԱԿԸ ԲՈՒՈՐԱԾ ՆԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՆԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ 2020 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ

1918-ին գաղթական հայ ժողովուրդի տառապանքն էլ վերապրելու տենչն էն ծնունդ առած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, բոլորելով իր հիմնադրութեան 102-րդ ամեակը, վերանորոգ թափով կը շարունակէ սերունդներ կերտելու եւ անոնց ֆիզիքական եւ ազգային դաստիարակութիւնը ապահովելու առաքելութիւնը:

2020-ին, Սուրիոյ շրջանի «Դամասկոս» եւ «Հալէպ» մասնաճիւղերը բոլորեցին իրենց հիմնադրութեան 95-ամեակները եւ կազմակերպուած կերպով կը շարունակեն սերունդներ դաստիարակելու սուրբ գործը:

ՀԱԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը իրեն համարատու Շրջանային Սկաւուտ Խորհուրդին եւ հինգ մասնաճիւղերուն՝ Դամասկոսի, Հալէպի, Լաթաքիոյ, Գամիշլիի եւ Զեսապի հետ համախորհուրդ, հակառակ տնտեսական, առողջապահական ծանր պայմաններուն եւ Արցախի գոյապայքարի իրավիճակին, նոր պայմաններու լոյսին տակ լաւատեսութեամբ եւ յոյսով տոգորուած կը շարունակէ իր ծառայութիւնը:

Պսակաձեւ ժահրի համավարակին պատճառով 14 Մարտ 2020-էն սկսեալ միութեան հաւաքական գործունեութիւնները դադրեցան, սակայն առցանց դրութիւնը որդեգրելով աշխատանքները շարունակուեցան, ապա առողջապահական վիճակի բարելաւումին հետ, նախազգուշական օրէնքները յարգելով աստիճանաբար վերսկսան հաւաքական գործունեութիւնները:

Ամփոփ կերպով կը ներկայացնենք 2020 տարեշրջանի Միութեան միամեայ գործունեութիւնը:

**ՀԱԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւն եւ իրեն համարատու Յանձնախումբեր**

- 2019-ին, ՀԱԸՄ-ի Սուրիոյ 21-րդ ներկայացուցչական ժողովին ընտրուած ՀԱԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կազմը, բաղկացած հետեւեալ քոյր-եղբայրներէ, երկրորդ տարին մուտք գործելով կը շարունակէ իրեն վստահուած առաքելութիւնը.-



Հալէպ նստավայրի քոյր-եղբայրներն են՝  
Եղբ. Աւետիս Տերվիշեան Ատենապետ  
Եղբ. Կարո Գալայճեան Ատենադպիր  
Եղբ. Յարութ Օգճեան Գանձապահ  
Քոյր Մարիա Գաբուճեան Հաշուապահ  
Եղբ. Արսո Փայասեան Խորհրդական  
Եղբ. Եղիա Զիլճեան Խորհրդական



Սուրիոյ շրջաններու Շրջ. Վարչութեան  
անդամներն են՝  
Եղբ. Չաւեն Գասպարեան (Գամիշլի)  
Խորհրդական



Եղբ. Մինաս Պալեան (Լաթաքիա) Խորհրդական

Եղբ. Գեորգ Գալեմբերեան (Դամասկոս) Խորհրդական

ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Զեօշկերեան իր տարիներու փորձառութեամբ սատար կը հանդիսանայ Սուրիոյ շրջանի Միութեան գործունեութիւններուն:



ՀՄԸՄ-ի Սուրիոյ IT-ի պատասխանատու նշանակուեցաւ քոյր Մարինա Չիլմբօշեան-Պօղիկեան, որ մասնակցեցաւ ԿՎ-ի IT ներկայացուցիչներու առցանց ժողովին:

- 13 Փետրուար 2020-ին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը իր երախտագիտութիւնը յայտնելով դիմատետրի էջին ճամբով ողջունեց Հայոց Յեղասպանութեան ճանաչման ու դատապարտման բանաձեւին ընդունումը Սուրիոյ խորհրդարանին կողմէ:

- 23 Փետրուար 2020-ին, հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան-



Նի, «Հալէպ» մասնաճիւղի վարչութեան հետ Հալէպի ամբողջական ազատագրումին եւ



Սուրիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչումին նուիրուած ժողովրդային-սկաուտական տողանցք կազ-

մակերպեց: Այս առիթով Շրջ. Վարչութիւնը շնորհակալական երկլէզու խօսք սփռեց դիմատետրի էջին ճամբով բոլոր անոնց, որոնք սատար հանդիսացան տողանցքի յաջողութեան:

- 23-26 Ապրիլ 2020-ին իր մասնակցութիւնը բերաւ Հայոց Յեղասպանութեան 105-րդ տարելիցին նուիրուած Նախաձեռնութիւններուն՝ մոմավառութեան, արեան տուջութեան, միջ-յարանուանական ոգեկոչումին, Սուրբ եւ Անմահ Պատարագին եւ ապրիլեան Նահատակներու յուշակոթողի ծաղկեմատոյցին: Այս առիթով Շրջ. Վարչութիւնը իր խօսքը սփռեց դիմատետրի էջին ճամբով:

-29-30 Մայիս 2020-ին, Շրջ. Վարչութիւնը իր մասնակցութիւնը բերաւ Հայաստանի Ա. Հանրապետութեան կերտման 102-ամեակին նուիրուած հոգեհանգստեան արարողութեան, ապա եկեղեցւոյ ներքնասրահէն ներս Հայ Երիտասարդաց Միութեան կազմակերպած տօնակատարութեան: Իսկ յաջորդ օրը Առաջնորդ Սրբազան Զօր Նախագահութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած Սուրբ եւ Անմահ Պատարագին, որուն ընթացքին կատարուեցաւ Հանրապետական մաղթանք եւ Հայաստանի Հանրապետութեան եռագոյն դրօշի օրհնութիւն, ապա Նաեւ հոգեհանգստեան արարողութեան՝ ի յիշատակ Մայիսեան հերոսամարտերու Նահատակներուն:

- 10 Յունիս 2020-ին մեծարելով միութեան երեց եղբայրները, երախտագիտական այցելութիւն տուաւ ՀՄԸՄ-ական երեց եղբայր Չաւեն Տէրվիշեանի, ընկերակցութեամբ՝ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Զեօշկերեանի եւ ՀՄԸՄ-ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան ներկայացուցիչին եւ առ ի երախտագիտութիւն յուշանուէրով պատուեց երեց եղբայրը:

- 1 Յուլիս 2020-ին, այցելութիւն տուաւ ՀՄԸՄ-ական վաստակաշատ երեց եղբայր Անդրանիկ Սիւլիւքճեանի, ընկերակցութեամբ՝ ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամին եւ Հալէպի Վարչութեան ներկայացուցիչին եւ յուշանուէրով մեծարեց երեց եղբայրը:

- 14 Յուլիս 2020-ին իր մասնակցութիւնը բերաւ Սուրիոյ խորհրդարանի ընտրութիւններու Նախօրեակին Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի շրջափակէն ներս տեղի ունեցած ժողովրդային Նախընտրական հաւաքին:

# Գանձասար

Իսկ 19 Յուլիս 2020-ին, իր մասնակցությունը բերաւ Սուրիոյ Խորհրդարանի ընտրարշաւի աշխատանքներուն՝ ի նպաստ հայ ազգի թեկնածու յանձնա տնօրէն ժիրայր Ռէստանի: Այս դիմատետրի ճամբով շնորհաւորական խօսք ուղղեց երեսփոխանական ընտրություններուն յաղթական արդիւնքներով դուրս եկած երեք հայ թեկնածուներուն:

- 4 Օգոստոս 2020-ին, ՅԱԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը, Սուրիոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդը եւ Սուրիոյ ՅԱԸՄ-ականները իրենց խորագրաց ցաւակցութիւնը եւ ամբողջական գորակցութիւնը յայտնեցին ՅԱԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան, ՅԱԸՄ-ի Լիբանանի Շրջ. Վարչութեան եւ Լիբանանի ՅԱԸՄ-ականներուն՝ նաւահանգիստի պայթումին պատճառով:

- 15 Սեպտեմբեր 2020-ին, ՅԱԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը եւ ՅԱԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան Սուրիոյ անդամը խորհրդակցական հանդիպում ունեցան Սուրիոյ Խորհրդարանի երեսփոխան Տիար ժիրայր Ռէստանի հետ:

- 20 Սեպտեմբեր 2020-ին դիմատետրի էջին ճամբով շնորհաւորական խօսք սփռեց Յայաստանի վերանկախացման տօնին առիթով:

- 25 Յոկտեմբեր 2020-ին, մասնակցությունը բերաւ Արցախի գորակցութեան նուիրուած ժողովրդային հաւաքին, Ազիզիէ թաղամասի հրապարակը:

- 31 Յոկտեմբեր 2020-ին, ՅԱԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ատենապետ եղբ. Աւետիս Տերվիշեան իր մասնակցությունը բերաւ ՅԱԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Միութեան 26-րդ Շրջանային եւ Մեկուսի շրջաններու ատենապետներու առցանց ժողովին:

- 8 Նոյեմբեր 2020-ին, ՅԱԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութիւնը այցելելով Յայաստանի Յանրապետութեան Յալէպի Գլխաւոր Յիւպատոս մեծարգոյ Արմէն Սարգսեանի, ամբողջական գորակցութիւն յայտնեց Արցախի Յանրապետութեան ու հայոց բանակին եւ այս առիթով գորակցական գիր եւ Սուրիոյ սկաուտներու գորակցական նամակները յանձնեց պարոն հիւպատոսին, զանոնք հասցնելու առաջնագիծին վրայ մարտնչող հայ զինուորներուն:

- 15 Նոյեմբեր 2020-ին, ՅԱԸՄ-ի հիմնադ-

րութեան 102-րդ ամեակին առիթով եւ ՅԱԸՄ-ական հին եւ նոր ննջեցեալներու ու Արցախի նահատակներու յիշատակին, հովանաւորութեամբ՝ Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Յալէպի Սրբոց Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, տարագաւոր ՅԱԸՄ-ական սկաուտներու ներկայութեամբ:

- 17 Նոյեմբեր 2020-ի միջօրէին, եռանդամ պատուիրակութեամբ այցելելով Յայաստանի Յանրապետութեան Յալէպի Գլխաւոր Յիւպատոս մեծարգոյ Արմէն Սարգսեանի, անոր յանձնեց բողոքագիր մը, ուր խստօրէն դատապարտեց Յայաստանի վարչապետին ստորագրած Արցախի մեր հողերուն մեծ մասը թշնամիին յանձնելու պարտաւորական համաձայնագիրը եւ պահանջեց վարչապետ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը:

- 3 Դեկտեմբեր 2020-ին, Շրջ. Վարչութեան «Յալէպ» նստավայրի կազմը առցանց ժողով գումարեց ՅԱԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան հետ, ներկայութեամբ՝ ՅԱԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան Սուրիոյ անդամին: Օրակարգի կետերուն առանցքը կը կազմէր ամփոփ գեկոյցով քննարկել ՅԱԸՄ-ի Սուրիոյ շրջանի մասնաճիւղերու սկաուտական եւ մարզական գործունէությունները եւ անոնց դիմագրաւած մարտահրաւերները:

- Դեկտեմբեր ամսուան վերջին շաբաթը Շրջ. Վարչութիւնը առցանց ժողովներ գումարեց Սուրիոյ հինգ մասնաճիւղերու վարչութեանց հետ եւ մօտէն ծանօթացաւ անոնց դիմագրաւած դժուարություններուն եւ ներկայացուած առաջարկներուն:

## Գրական Յանձնախումբ

Գրական յանձնախումբը ՅԱԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան հովանաւորութեամբ, Սուրիոյ շրջանի ՅԱԸՄ-ի բոլոր գործունէություններուն թղթակցությունները սփռելով նպաստեց միութեան քարոզչական աշխատանքին:

- Պսակածել ժահրի համավարակի տարածման օրերուն նախագրուչական միջոցներու անդրադարձ կատարեց դիմատետրի էջին ճամբով:



# Բացարիկ 2021

- ՀՄԸՄ-ական յիշատակները ի յայտ բերելու եւ ՀՄԸՄ-ական նկարներ հաւաքելու շարք մը կազմակերպեց դիմատետրի միջոցով:

- Հայոց Տեղասպանութեան յիշատակին առցանց մոմավառութեան հրաւիրեց ՀՄԸՄ-ականները:

- Սուրիոյ հինգ մասնաճիւղերու մասնակցութեամբ Հայոց Տեղասպանութեան նուիրուած ասամուքի տեսերիզ պատրաստեց եւ սփռեց:

- (YouTube)ի էջին միջոցով սփռեց 33 տարի առաջ ՀՄԸՄ-ի պարտէզէն ներս տեղի ունեցած ոտնազնդակի յիշատակելի մրցաշարքը:

- Արցախեան նահատակներուն եւ ի մասնաւորի Արցախի ՀՄԸՄ-ական նահատակներուն նուիրուած թերթիկ մը պատրաստեց՝ Միութեան 102-րդ ամեակին առիթով տեղի ունեցած հոգեհանգստեան արարողութեան:

## ՍԵՎԱՄ Մարզական Յանձնախումբ

- 18 Յունուար 2020-ին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան ՍԵՎԱՄ մարզական յանձնախումբը, շարունակելով 2019-2020 տարեշրջանի միջ-վարժարանային մարզական մրցաշարքերը, կազմակերպեց քունկ ֆուտբոլի մրցաշարք, Հայ ՍԵՎ Գօտիներու Միութեան կերպով ներս:



եան կերպով ներս:

- 31 Յունուար 2020-ին, ՀՄԸՄ-ի պասքէթպոլի փոքր դաշտէն ներս տեղի ունեցաւ միջ-վարժարանային պասքէթի անհատական (shooting) մրցաշարքը:

- 1 Փետրուար 2020-ին, կազմակերպեց պասքէթի (3x3 street ball) միջ-վարժարանային մրցումը:

- 14, 15 Փետրուար 2020-ին, տեղի ունեցան միջ-վարժարանային տղոց եւ աղջկանց

ճատրակի մրցաշարքերը:



- 6 Մարտ 2020-ին, Ա.Մանուկեան Ժող. Տան «Շաւարշ Զրիսեան» սրահէն ներս կազ-



մակերպեց միջ-դպրոցական Զարաթի մրցումը:

Յանձնախումբին կողմէ բոլոր ախոյեանները գնահատուեցան հաստատագիրներով:

ՍԵՎԱՄ Մարզական յանձնախումբին



գործունեութիւնը ընդհատուեցաւ պսակածեւ ժահրի համավարակին պատճառով:

## Սուրիոյ Ներքին Կանոնագրի Վերամշակման Յանձնախումբ

Յանձնախումբը կը սերտէ Սուրիոյ ներքին կանոնագրի յօդուածները եւ անհրաժեշտ փոփոխութիւնները կը կատարէ, ներկայ իրավիճակի լոյսին տակ:

## ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդ

- Հայաստանի Ա. Հանրապետութեան

# Գանձասար

Կերտման 102-րդ ամեակին առիթով, Շրջանային Սկաուտ Խորհուրդը Միութեան հինգ մասնաճիւղերուն մասնակցութեամբ Մայիսեան հերոսամարտերուն եւ Հայաստանի անկախութեան կերտման պատմութիւնը եւ այս առիթով Սուրիոյ Շրջանային Խորհուրդին խօսքը ներկայացնող շարունակական տեսերիզներ պատրաստեց եւ դիմատետրի էջին ճամբով սփռեց գանոնք:

- 8 Յուլիս 2020-ին սկիզբ առաւ «Վկայեալ Կարգ»-ի դասախօսական շարքի առցանց տարբերակի պատրաստութիւնը եւ երեք մասերով ամբողջացաւ 13 Օգոստոս 2020-ին:

- 25 Յուլիս, 2 եւ 9 Օգոստոս 2020-ին շրջանային խմբապետ՝ եղբ. Յովիկ Փամբալեան եւ շրջանային խմբապետուհի՝ քոյր Թամար Աւետեան իրենց մասնակցութիւնը բերին ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած Համա-ՀՄԸՄական խմբապետական առաջին առցանց համագումարին, իր երեք փուլերով, մասնակցութեամբ ՀՄԸՄ-ի շրջանային եւ մէկուսի շրջաններու / 67/սկաուտ խմբապետներու: Սուրիոյ զեկոյցը համակարգչային ծրագիրով ներկայացուց եղբ. Յովիկ Փամբալեան:

- Արցախի զօրակցութեան տեսերիզ պատրաստուեցաւ հինգ մասնաճիւղերուն մասնակցութեամբ եւ սփռուեցաւ դիմատետրի էջին ճամբով:

- 6 Դեկտեմբեր 2020-ին, Սուրիոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդի Հրատարակչական Յանձնախումբը կազմակերպեց հարց-պատասխանի մրցում, երեք-պարմաններուն եւ արի-արենոյշներուն յատուկ, Նուիրուած՝ Արցախեան պատերազմին, Ա. Մանուկեան Ժ. Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս:

Շրջ. Սկաուտ Խորհուրդի Հրատարակչական յանձնախումբը ազգային-եկեղեցական տօներու, դաստիարակչական եւ սկաուտական գիտելիքներով հարուստ թերթիկներ պատրաստեց գալլ-արծուիկներուն եւ սկաուտական կազմերուն:

## Դամասկոս

6 Մարտ 2020-ին, «Ա. Ահարոնեան» կեդրոնէն ներս գումարուեցաւ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը: Նորընտիր վարչութիւնը իրականացուց հետեւեալ գործունէութիւնները.-

- 8 Մարտ 2020-ին, ՀՄԸՄ-ի «Դամասկոս» մասնաճիւղը շքեղ երթով իր երախտագիտութիւնը յայտնեց Սուրիոյ Խորհրդարանին, Հայոց Յեղասպանութեան ճանաչման ու դատապարտման համար: Շեփորախումբին առաջնորդութեամբ տեղի ունեցած տողանցքը



Նուիրուած եր Սուրիոյ յեղափոխութեան 57-ամեակին եւ Սուրիոյ խորհրդարանին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման: Շեփորախումբի ելոյթէն ետք, հինգերորդ վաշտի խմբապետ Միհրան Ղազարեան յանուն ՀՄԸՄ-ի «Դամասկոս» մասնաճիւղին, խորհրդարանի նախագահին յանձնեց սկաուտական փողկապը, ապա Սուրիոյ Խորհրդարանի երեսփոխան տիար Համմուտ Սապպաղ խորհրդարանի դահլիճէն ներս ընդունեց ՀՄԸՄ-ի տարազաւոր սկաուտներն ու պատասխանատուները: Ընդունելութեան ներկայ էին երեսփոխան դոկտ. Նորա Արիսեան եւ «Ահարոնեան» կեդրոնի ներկայացուցիչ Արմէն Ուրֆալեան:

- Պսակածէ Ժահրի համավարակէն նախագգուշանալու կանոններ սփռեց առցանց կերպով:

- Մայրերու օրուան առիթով, ՀՄԸՄ-ի «Դամասկոս» մասնաճիւղի գալլ-արծուիկ միաւորը առցանց շնորհաւորեց բոլոր հայ մայրերուն տօնը: Ինչպէս նաեւ Ծաղկազարդի եւ Ս. Յարութեան տօներու շնորհաւորանք սփռեց դիմատետրի էջէն:

- Հայոց Յեղասպանութեան 105-րդ ամեակին մասնաճիւղի քոյրերն ու եղբայրները առցանց աշխատանքով իրենց յարգանքի տուրքը մատուցեցին մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն:

- 15 Մայիս 2020-ին, ՀՄԸՄ-ի «Դամասկոս» մասնաճիւղի քոյրերն ու եղբայրները, ընկերակցութեամբ սկաուտական 20-րդ եւ 22-րդ վաշտերու սկաուտներուն, բժախնդրութեամբ



եամբ կատարեցին հականեխման աշխատանք, Զորոնա պակասեցին ժահիրին դեմ՝ շուկաներում, եկեղեցիի, մզկիթի եւ դպրոցներում շրջակայքը:

- Մասնակցութիւն բերին ՅՄԸՄ-ի Շրջ. Սկաուտ Խորհուրդին պատրաստած Հայաստանի անկախութեան նուիրուած տեսերիզի ծրագիրին:

- 19 Յուլիս 2020-ին, մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ Սուրիական Հանրապետութեան խորհրդարանի 3-րդ օրէնդրական շրջանի ընտրութիւններուն, քուէարկելով Դամասկոսէն իր թեկնածութիւնը ներկայացուցած դոկտ. Նորա Արիսեանի:



- ՅՄԸՄ-ի «Դամասկոս» մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդին պատրաստած Արցախի զօրակցութեան տեսերիզին:

- Գայլ-արծուիկ միաւորի գայլիկներն ու արծուիկները իրենց գեղեցիկ գծանկարներով զօրակցութիւն յայտնեցին Արցախի հայ գինուորներուն:

- 23 Հոկտեմբեր 2020-ին, պակասեցին ժահիրի համավարակին պատճառով դադարեցուած աշխատանքները, սկաուտներն ու արեւոյշները վերսկսան Արցախի զօրակցութեան նուիրուած գործունեութեամբ:

Մասնաճիւղի փողերախումբը աշխոյժ գործունեութեամբ կը շարունակէ իր փորձերը:

## Հալէպ

17 Յունուար 2020-ին, գումարուեցաւ ՅՄԸՄ-ի Հալէպի մասնաճիւղի 94-րդ տարեկան անդամական ընդհանուր ժողովը: Վարչութիւնը իրագործեց հիմնական հետեւեալ աշխատանքները. -

- 9 Փետրուար 2020-ին, ՅՄԸՄ-ի Հալէպի

մասնաճիւղի սկաուտները միօրեայ գործունեութեամբ նշեցին «Հայ Սկաուտի Օրը», ՅՄԸՄ-ի պարտեզէն ներս, մասնակցութեամբ՝ 135 քոյր-եղբայրներու: Տողանցքի



աւարտին տեղի ունեցաւ աստիճանատուջութիւն եւ վկայականաց բաշխում ձեռամբ մասնաճիւղի խմբապետ՝ եղբ. Յակոբ Ուրիշիկեանի:

- 16 Փետրուար 2020-ին, ՅՄԸՄ-ի Հալէպի մասնաճիւղի սկաուտական գործունեութեան ընթացքին վարչութեան կողմէ 2020 տարեշրջանի Սկաուտ Խորհուրդի նորանշանակ անդամները ներկայացուեցան: Շրջանաւարտ Մասնաճիւղի խմբապետ եղբ. Յակոբ Ուրիշիկեան մասնաճիւղի դրօշակը փոխանցեց նորանշանակ մասնաճիւղի խմբապետ՝ եղբ. Յովիկ Հապէշեանի:

- 21 Փետրուար 2020-ին, ՅՄԸՄ-ի «Հալէպ» մասնաճիւղի վարչութիւնը հաղորդագրութեամբ յայտարարեց ՅՄԸՄ-ական եւ նուիրեալ մարզիկներու կողմէ մարզական խաղերը անվճար կերպով կիրառելու որոշումը, կառչած մնալով միութեան վեհ սկզբունքներուն:

- 23 Փետրուար 2020-ին, հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի, կազմակերպութեամբ ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան եւ ՅՄԸՄ-ի «Հալէպ» Մասնաճիւղի Վարչութեան, տեղի ունեցաւ Հալէպի ազատագրութեան նուիրուած եւ Սուրիոյ խորհրդարանին ուղղուած երախտագիտութեան ժողովրդային երթ, փողերախումբին եւ սկաուտական կազմերու մասնակցութեամբ:

- 29 Փետրուար 2020-ին, սկաուտները տեղւոյն սկաուտական վաշտերուն հետ այցելեցին «Հալէպ ալ ճատիտ»-ի գերեզմանատուն, ուր նահատակներու յուշակոթողին առջեւ ծաղկեպսակ գետեղեցին եւ յարգանքի տուրք մատուցեցին:

- 1 Մարտ 2020-ին, տեղի ունեցաւ գայլ-արծուիկ միաւորի Բարեկենդանի խրախ-

# Գանձասար

ճանքը, ՅՄԸՄ-ի պարտեզին ներս:

- Պսակաձեւ ժահրի համավարակի արգելափակման օրերուն մասնաճիւղը առցանց կերպով իր գործունեութիւնը շարունակեց ազգային-եկեղեցական տօները յիշատակելով, հարց-պատասխանի մրցում կազմակերպելով, գայլ-արծուիկներուն գծագրութիւնները եւ ձեռնային աշխատանքները քաջալերելով եւ դաստիարակչական յայտագիրներ սփռելով:

- 11 Ապրիլ 2020-ին, պսակաձեւ ժահրի արգելափակման օրերուն, ՅՄԸՄ-ական քոյրեր եւ եղբայրներ իրենց մասնակցութիւնը բերին հաց մատակարարելու աշխատանքին եւ երեց ՅՄԸՄ-ականներու տուները հաց բաժնեցին:

- Մասնաճիւղը առցանց սփռումներով իր յարգանքի տուրքը մատուցեց Հայոց Տեղասպանութեան 1.5 միլիոն նահատակներուն յիշատակին: Մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ Հայոց Տեղասպանութեան 105-րդ տարելիցին նուիրուած նախաձեռնութիւններուն:

- Մասնակցութիւն բերին ՅՄԸՄ-ի Շրջ. Սկաուտ Խորհուրդին պատրաստած Հայաստանի անկախութեան նուիրուած տեսերիզի ծրագիրին:

- 31 Մայիս 2020-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնին առիթով, մասնաճիւղի սկաուտները իրենց մասնակցութիւնը բերին հանրապետական մաղթանքին եւ Հայաստանի Հանրապետութեան դրօշի օրհնութեան, որ տեղի ունեցաւ նախագահութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մասիս Սրբ.Եպս. Չօպուեանի: Սոյն արարողութիւնը նոյնպէս տեղի ունեցաւ Ս. Զառանկից Մանկանց եկեղեցւոյ մէջ:

- 7 Յունիս 2020-ին, մասնաճիւղի սկաուտները աշխուժօրէն վերադարձան իրենց կիրակնօրեայ գործունեութեան, որ դադարած էր Մարտ ամիսէն ի վեր պսակաձեւ ժահրի պատճառով: Գործունեութիւնը տեղի ունեցաւ 143 անդամներու ներկայութեամբ: Աւարտին մասնաճիւղի խմբապետ եղբ. Յովիկ Հապէշեան քաջալերական նուերներով զնահատեց հինգ քոյր-եղբայրները, որոնք մասնակցած էին Սկաուտ Խորհուրդին կողմէ կազմակերպուած հարց-պատասխանի

առցանց մրցումին:

- 28 Յունիս 2020-ին հովանաւորութեամբ ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդին, ներկայութեամբ ՅՄԸՄ-ի Հալէպի վարչութեան եւ Սկաուտ Խորհուրդին, տեղի ունեցաւ խմբապետ աստիճանի տուչութիւն ձեռնամբ՝ Շրջ. Խմբապետ եղբ. Յովիկ Փամբալեանի: Մասնաճիւղէն քոյր Նաթալի Թաթոսեան- Հապէշեան եւ եղբ. Կիրո Գարամանեան երդման արարողութիւն կատարեցին, ապա ստացան խմբապետի աստիճան:

- 14 Յուլիս 2020-ին, մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ ժողովրդային նախընտրական հաւաքին, Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանէն ներս, իսկ 19 Յուլիս 2020-ին, մասնաճիւղը իր մասնակցութիւնը բերաւ Սուրիոյ Խորհրդարանի ընտրութիւններուն, ձայն տալով հայազգի թեկնածու տիար Ժիրայր Ռէսսեանի:

- 11 Հոկտեմբեր 2020-ին, ՅՄԸՄ-ի Հալէպի մասնաճիւղը նախագգուչութեամբ վերսկսաւ իր հաւաքական գործունեութիւնները, պսակաձեւ ժահրին պատճառով դադարէ ետք: Առաջին գործունեութիւնը նուիրուած էր Արցախի զօրակցութեան:

- 18 Հոկտ. 2020-ին, տեղի ունեցաւ առաջնորդ եւ փոխառաջնորդ աստիճաններու տուչութիւն, ինչպէս նաեւ փոխանցման արարողութիւն, որուն ընթացքին Արի-Արեւոյշ միաւորէն 30 քոյրեր-եղբայրներ փոխանցուեցան Երեց-Պարման միաւոր: Ինչպէս նաեւ Գայլ-Արծուիկ միաւորի Կարմիր վոհմակ երամէն 28 քոյրեր-եղբայրներ ստացան երկաստղի վկայական ու փոխանցուեցան արիական շարքեր:

- 25 Հոկտեմբեր 2020-ին, մասնաճիւղի փողերախումբը եւ սկաուտները իրենց մասնակցութիւնը բերին Արցախի զօրակցութեան նուիրուած ժողովրդային հաւաքին, Ազիզիէ թաղամասի հրապարակէն ներս:

- Կիսօրեայ եւ գիշերային գործունեութիւններով մասնաճիւղի սկաուտական խումբերը իրենց դաստիարակչական եւ սկաուտական գիտելիքները հարստացուցին:

- 6 Դեկտեմբեր 2020-ին, մասնաճիւղի երեց-պարմաններն ու արի-արեւոյշները իրենց մասնակցութիւնը բերին ՅՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդի Հրատարակչական Յանձնախումբին կազմակերպած



# Բացարդիկ 2021

հարց-պատասխանի մրցումին, «Լեւոն Շանթ» սրահէն ներս:

Մասնաճիւղը ունի մարզական խումբերու եւ փողերախումբի աշխոյժ գործունէութիւն:

## Լաթաքիա

31 Յունուար 2020-ին, գումարուեցաւ ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը: Մասնաճիւղի վարչութիւնը իրագործեց հետեւեալ աշխատանքները.-

- 9 Մարտ 2020-ին վարչութիւնը այցելութիւն տուաւ քոյր Սոնա Տեր Դաւիթեանի եւ բարի ապաքինում մաղթեց անոր:

- 10 Ապրիլ 2020-ին վարչութիւնը կազմակերպեց հարց-պատասխանի մրցում



«ԶՄԸՄ Լաթաքիա» դիմատետրի էջին միջոցով:

- 13 Ապրիլ 2020-ին Վարչութիւնը, Սկ. Խորհուրդը, խմբապետական եւ աստիճանաւորական կազմէն քոյրեր եւ եղբայրներ իրենց կամաւոր մասնակցութիւնը բերին պատկաճ եւ ժահրի նախագգուշացման աշխատանքներուն եւ հականեխեցին «Ամերքան» պողոտայի ինքնաշարժները: Սկաուտները անցորդներուն բաժնեցին թերթիկներ:

- 23 Ապրիլ 2020-ին կազմակերպութեամբ՝ ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ Խորհուրդին, Լաթաքիոյ եւ ծովեզերեայ շրջանի հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վազգէն քննյ. Բեռլինեանի աղօթքներով եւ եկեղեցւոյ զանգերու ղօղանջներով տեղի ունեցաւ «Մոմ մըն ալ ես վառեմ» արարողութիւնը, ի յիշատակ Զայոց Յեղասպանութեան սրբադասուած նահատակներու հոգիներուն: ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի խմբապետական կազմը մասնակցեցաւ եկեղեցւոյ արարողութեան, իսկ մասնաճիւղի գայլիկներն ու սկաուտները՝

տուններէն իրենց յարգանքի տուրքը մատուցեցին նահատակներու յիշատակին:



- 23 Ապրիլ 2020-ին աստիճանաւորական կազմէն քոյր Դուին Նազարեան մասնակցեցաւ ԶՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան գրական յանձնախումբին պատրաստած ասմունք-տեսերիզին «Մի Խառնէք Մեզ» խորագիրով:

- 24 Ապրիլ 2020-ին Լաթաքիոյ հայութիւնը իր յարգանքի տուրքը մատուցեց Զայոց Յեղասպանութեան սրբադասուած նահատակներու յիշատակին: ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութիւնը, շեփորախումբն ու խմբապետական կազմը մասնակցեցան Ապրիլեան ոգեկոչումին, ներկայութեամբ ԶՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ՝ եղբ. տղքթ. Մինաս Պալեանի: Վարչութեան ատենապետ եղբ. Սարգիս Բեչեճեան եւ եղբ. Արշակ Տէյիրմէնճեան իրենց յարգանքի տուրքը մատուցեցին եւ ծաղկեպսակ գետեղեցին Զայոց Յեղասպանութեան նահատակներու յիշատակին:

- 7 Մայիս 2020-ին գլխաւորութեամբ՝ Լաթաքիոյ եւ ծովեզերեայ շրջանի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վազգէն քննյ. Բեռլինեանի, Սուրիոյ նահատակներու տօնին առիթով, ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութիւնը, սկաուտ խորհուրդը, խմբապետութիւնն ու աստիճանաւորական կազմը, ընկերակցութեամբ ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ շեփորախումբին, իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Սուրիոյ նահատակներու յիշատակին՝ այցելելով Լաթաքիոյ նահատակներուն գերեզմանատունը եւ ծաղկեպսակ գետեղեցին նահատակներու յուշարձանին առջեւ:

- 8 Մայիս 2020-ին կազմակերպութեամբ ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ Խորհուրդին, տեղի ունեցաւ հրապարակային գործունէութիւն, որուն իրենց մասնակցութիւնը բերին աստիճանա-

# Գանձասար

Լորական կազմեն քոյրեր եւ եղբայրներ:

- Մասնակցութիւն բերաւ ԶՄԸՄ-ի Սուրիոյ Շրջ. Սկաուտ Խորհուրդին պատրաստած Զայաստանի անկախութեան նուիրուած տեսերիզի ծրագիրին:

- 31 Մայիս 2020-ին Զայաստանի Զանրապետութեան 102-րդ ամեակին եւ Մայիս 28-ի յաղթանակներուն առիթով, ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի սկաուտ միաւորէն կարգ մը քոյրեր եւ եղբայրներ իրենց մասնակցութիւնը բերին Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցած Սուրբ եւ Անմահ Պատարագին եւ Զայաստանի Զանրապետութեան դրօշի օրհնութեան, որմէ ետք մասնակցութիւն բերաւ նաեւ եկեղեցւոյ շրջափակէն ներս կատարուած հոգեհանգստեան պաշտօնին, ի յիշատակ Մայիսեան հերոսամարտերու նահատակներուն:

- 25 Յունիս 2020-ին կազմակերպութեամբ ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան, ՍՕ Խաչի կեդրոնի «Կարպուշեան» սրահէն ներս տեղի ունեցաւ ընթրիք - խրախճանք:

- 15 Յուլիս 2020-ին տեղի ունեցաւ «Տունը մնայ եւ պայքարիր Քորոնա վայրըսի դէմ» ցուցահանդէս, գայլ-արծուիկ եւ արի-արեւնոյշներու կողմէ պատրաստուած: Յուցահանդէսի ընթացքին Վարչութեանս աստեապետ եղբ. Սագօ Զէչէճեան պարգեւատրեց քոյր Դալար Լնդեանը, որ վարչութեանս կազմակերպած հարց-պատասխանին առաջնութիւնը գրաւած էր:

- 6 Նոյեմբեր 2020-ին (9-րդ եւ 12-րդ) շքանաւարտ քոյրերն ու եղբայրները պարգեւատրուեցան գեղեցիկ յուշանուէրներով վարչութեան եւ Սկաուտ Խորհուրդին կողմէ:

- 15 Նոյեմբեր 2020-ին Նախագահութեամբ Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, նախաձեռնութեամբ ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ Խորհուրդին, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ Անուանակոչութեան Տօնի Սուրբ եւ Անմահ Պատարագի աւարտին, միութեան 102-րդ ամեակին առիթով հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ Արցախի նահատակներուն եւ ԶՄԸՄ-ի հին՝ նոր ննջեցեալներու հոգիներուն համար, տարագաւոր սկաուտներու ներկայութեամբ, որմէ ետք հոգեսուրճ տեղի ունեցաւ «Արարատ» սրահէն

ներս:

- 15 Նոյեմբեր 2020-ի երեկոյեան, Բերիոյ Զայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան այցելեց Լաթաքիոյ ՍՕԽաչի կեդրոն, ուր արի-արեւնոյշ եւ գայլ-արծուիկ միաւորները դիմաւորեցին եւ բարի գալուստ մաղթեցին Սրբազան Զօր, ապա Սրբազան Զայոց հանդիպում ունեցաւ ԶՄԸՄ-ի, ՍԵՄ-ի եւ Սուրիոյ Պատանեկան Միութեան երիտասարդներուն հետ:

- 22 Նոյեմբեր 2020-ին Արցախի պատերազմի ընթացքին հայրենիքի պաշտպանութեան համար նահատակուած հերոսներու յիշատակի օրը նշուեցաւ, Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: ԶՄԸՄ-ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութիւնը, Սկաուտ Խորհուրդն ու սկաուտական կազմը ներկայ գտնուեցան պատարագին եւ իրենց մասնակցութիւնը բերին հոգեհանգստեան արարողութեան ի յիշատակ Արցախի պատերազմի ընթացքին նահատակուած հերոսներուն:

Մասնաճիւղը ունի մարզական խումբերու եւ փողերախումբի աշխոյժ գործունէութիւն:

## Գամիշիկ

- 16 Փետրուար 2020-ին, ԶՄԸՄ-ի Գամիշիկի մասնաճիւղը մեծ շուքով նշեց «Զայ Սկաուտի Օր»ը: Ձեռնարկի աւարտին տեղի ունեցան վկայականաց բաշխում եւ աստիճանատուչութիւն, ձեռամբ՝ Սուրիոյ Շրջ. Խըմ-



բապետ եղբ. Յովիկ Փամբալեանի: Շրջ. Խըմբապետը կատարեց խմբապետի փողկապի տուչութիւն քոյր Եւա Մանուկեան-Սելիմեանին:

- 24 Ապրիլ 2020-ին, Գամիշիկի Ազգային Առաջնորդարանի շրջափակէն ներս տեղի



ունեցաւ Սուրբ Եւ Անմահ Պատարագ, նուիրուած՝ Հայոց Յեղասպանութեան սրբադասուած նահատակներու յիշատակին, նախագահութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Ճեզիրէի



Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանի:

ՀՄԸՄ-ի «Գամիշլի» Մասնաճիւղի վարչութեան ատենապետ՝ Եղբ. բժշկ. Անդրանիկ Սարգիսեան, խորհուրդի ատենապետ՝ Եղբ. Յարութ Սարգիսեան, մասնաճիւղի խմբապետուհի՝ Զոյր Եւա Մանուկեան-Սելիմեան եւ երկու աստիճանաւորներ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին ծաղկեպսակներ զետեղելով ապրիլեան սրբադասուած նահատակներու յուշարձանին առջեւ: Արարողութեան իր մասնակցութիւնը բերաւ մասնաճիւղի շեփորախումբը:

- Մասնակցութիւն բերին ՀՄԸՄ-ի Շրջ. Սկաւառ Խորհուրդին պատրաստած Հայաստանի անկախութեան նուիրուած տեսերիկի ծրագիրին:

- 31 Մայիս 2020-ին, Հայաստանի Ա. Հանրապետութեան 102-ամեակին եւ Մայիսեան փառահեղ յաղթանակներուն առիթով Գամիշլիի Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Սուրբ Եւ Անմահ Պատարագ, նախագահութեամբ՝ Բերիոյ Հայոց Թեմի Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանի: Խմբապետական եւ աստիճանաւորական կազմերը իրենց մասնակցութիւնը բերին Հայաստանի Հանրապետութեան դրօշի օրհնութեան, որմէ ետք ՀՄԸՄ-ի սկաւառներն ու շեփորախումբը տողանցեցին ներկաներուն հետ, ուղղուելով դէպի Ազգային Առաջնորդարան, որուն շրջափակէն ներս նահատակներու յուշարձանին դիմաց տեղի ունեցաւ ծաղկեպսակի զետեղում, նուիրուած Մայիսեան նահատակներու յիշատակին:

- 28 Յունիս 2020-ին, վարչութիւնը ՀՄԸՄ-ի ամառնային պարտեզի դռները բացաւ հան-

րութեան առջեւ:

- Հոկտեմբեր 2020-ին, նկատի ունենալով Գամիշլիի քաղաքական իրավիճակը, Շրջ. Վարչութիւնը յառաջացուց «Գամիշլի» մասնաճիւղի նշանակովի վարչութիւնը, գործելու եռամսեայ դրութեամբ, որմէ ետք պիտի գումարուի մասնաճիւղի անդամական ընդհանուր ժողովը:

- 29 Հոկտեմբեր 2020-ին Գամիշլիի մասնաճիւղի Սկաւառ Խորհուրդի կազմին եւ խըմբապետականին կազմակերպութեամբ Արցախի նուիրուած միօրեայ գործունեութիւն տեղի ունեցաւ Ս. Շարպըլ ուխտավայրէն ներս:

- 15 Նոյեմբեր 2020-ին, նախագահութեամբ՝ Ճեզիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանի եւ նախաձեռնութեամբ՝ ՀՄԸՄ-ի «Գամիշլի» մասնաճիւղի վարչութեան եւ Սկաւառ Խորհուրդին,



Գամիշլիի Ս. Յակոբ Եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ ի յիշատակ Արցախի նահատակ հերոսներուն եւ ՀՄԸՄ-ի հին եւ նոր ննջեցեալներուն, ապա տեղի ունեցաւ հոգեսուրճ:

Մասնաճիւղը ունի մարզական խումբերու եւ փողերախումբի աշխույժ գործունեութիւն:

## Քեսապ

1 Փետրուար 2020-ին, գումարուեցաւ ՀՄԸՄ-ի Քեսապի մասնաճիւղի տարեկան անդամական ընդհանուր ժողովը: Նորընտիր Վարչութիւնը իրականացուց հետեւեալ աշ-

# Գանձասար

խատանքները.

- 1 Մարտ 2020-ին, հովանավորությամբ ՀՄԸՄ-ի Քեսապի մասնաճիւղի վարչութեան,



կազմակերպութեամբ մասնաճիւղի Սկաուտ Խորհուրդին, «Սարդարապատ» սրահէն ներս տեղի ունեցաւ «Հայ Սկաուտի Օր»ուան տօնակատարութիւն, ապա տեղի ունեցաւ խոստման արարողութիւն եւ վկայականաց բաշխում:

- Ս. Յարութեան տօնին առիթով, Քեսապի մասնաճիւղի քոյրերն ու եղբայրները շնորհաւորական տեսերիզ պատրաստեցին եւ զայն սփռեցին դիմատետրի միջոցաւ:

- ՀՄԸՄ-ի Քեսապի մասնաճիւղի սկաուտները Հայոց Յեղասպանութեան նուիրուած տեսերիզ մը պատրաստեցին «Կը յիշենք եւ կը պահանջենք» խորագիրով եւ



զայն սփռեցին դիմատետրի ճամբով:

- Մասնակցութիւն բերին ՀՄԸՄ-ի Շրջ. Սկաուտ Խորհուրդին պատրաստած Հայաստանի անկախութեան նուիրուած տեսերիզի ծրագիրին:

- ՀՄԸՄ-ի Քեսապի մասնաճիւղի գայլարծուիկ միաւորը «Մոկլիի Օրուան» առիթով տեսերիզ պատրաստեց եւ զայն սփռեց դիմատետրի միջոցով:

- 15 Նոյեմբեր 2020-ին, Միութեան 102-րդ ամեակին առիթով, նախաձեռնութեամբ՝ ՀՄԸՄ-ի Քեսապի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ Խորհուրդին, հոգեհանգստեան արարողութիւն տեղի ունեցաւ Արցախի նահատակներուն եւ ՀՄԸՄ-ի հին եւ նոր ննջեց-

եալներու հոգիներուն համար, Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, գլխավորութեամբ Արժ. Տ. Սուրեն Քիւնյ. Արսլանեանի, տարագաւոր սկաուտներու ներկայութեան, որմէ ետք տեղի ունեցաւ հոգեսուրճ:

Մասնաճիւղը ունի մարզական խումբերու եւ փողերախումբի աշխոյժ գործունեութիւն:

## ԿՈՐՈՒՍՆԵՐ

Անցնող տարուան ընթացքին Սուրիոյ ՀՄԸՄ-ը կորսնցուց հաւատաւոր քոյրեր եւ եղբայրներ.

- Յունուար ամսուան մէջ ՀՄԸՄ-ի Հալէպի մասնաճիւղի ֆութպոլի խումբի մարզիկ եւ յանձնախումբի պատասխանատու եղբ. Կարօ Տեմիրճեան, որ ճանչցուած էր (փարլախ Կարօ) մակդիրով, իր մահկանացուն կընքեց Մոնթեպելլոյի մէջ (Ա.Մ.Նահանգներ):

- 31 Յուլիս 2020-ին, Դամասկոսի մէջ իր մահկանացուն կընքեց ՀՄԸՄ-ական հաւատաւոր եղբայր, Դամասկոսի մասնաճիւղէն «Արտակարգ» պատուանշանակիր, վաստակաշատ երեց եղբ. Սարգիս Պասմաճեան:

- 11 Օգոստոս 2020-ին Հալէպի մէջ իր մահկանացուն կընքեց եղբ. Վարդան Առաքելեան:

- 15 Օգոստոս 2020-ին Հալէպի մէջ իր մահկանացուն կընքեց երկար տարիներու հաւատաւոր ՀՄԸՄ-ական, «Ծառայութեան» շքանշանակիր քոյր Քնար Ֆուրունճեան-Քեօշկերեան:

- 17 Օգոստոս 2020-ին, Հալէպի մէջ իր մահկանացուն կընքեց ՀՄԸՄ-ի «Ծառայութեան» շքանշանակիր եւ «Արտակարգ» պատուանշանակիր վաստակաշատ երեց ՀՄԸՄ-ական եղբ. Չաւեն Տերվիշեան:

- 19 Օգոստոս 2020-ին, Դամասկոսի մէջ իր մահկանացուն կընքեց մարզական կեանքէն ներս երկար տարիներու ծառայութիւն ունեցող վաստակաշատ ՀՄԸՄ-ական եղբ. Մայք Թոքաթլեան:

- 14 Նոյեմբեր 2020-ին Արցախի վերջին պատերազմին հայրենիքի սուրբ հողը պաշտպանելու գիտակցութեամբ նահատակուեցան Հալէպի մասնաճիւղի ՀՄԸՄ-ականներ՝ եղբ. Յարութ Բանոյեան, եղբ. Մոսիկ Սեքլեմեան եւ եղբ. Յակոբ Ասթարճեան:



## ՆԱԼԷՊԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ՝ 2020-ԻՆ

«Գանձասար» Հալեպի ազգային վարժարաններու դժուարություններուն եւ անցնող տարուան ուսումնակրթական անցուդարձերուն ծանօթանալու համար մտերմիկ զրոյցներ ունեցաւ Ազգ. Միացեալ վարժարանի եւ Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի տնօրէններուն հետ: Դժուար տարի մը անցուցին մեր վարժարանները այս անգամ ոչ պատերազմի, այլ պսակած եւ ժահրի համաճարակին հետեւանքով: Ստորեւ կը ներկայացնենք հարցազրոյցները.

### ՆԱՐՅԱԶՐՈՅՑ ԱԶԳ. ՄԻԱՅԵԱԼ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆՈՒՄԻ ՏԻԿ. ԶԵՓԻՒՌ Է. ԲԷԻՍԵԱՆԻ ՆԵՏ

**«Գանձասար»- Անցնող տարեշրջանին Ազգ. Միացեալ վարժարանը ինչպիսի՞ դժուարություններ ունեցաւ համաճարակին պարտադրած պայմաններուն ներքեւ:**

**Չեփիւր Է. Բէիսեան.** - 2019-2020 Տարեշրջանի մօտաւորապէս վերջաւորութեան էր, երբ համաճարակին գագաթնակէտի հասնելուն հետեւանքով Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը որոշեց փակել դպրոցները, հետեւաբար ոչ անցնող տարեշրջանի ընթացքին, այլ աւարտին միայն, ունեցանք դժուարութիւն դասաւանդական ծրագիրին ամբողջացման գծով:

Սկզբնական շրջանի ժամանակաւոր փակումին յաջորդեց աշակերտները առանց քննութեանց յաջորդ կարգ տեղափոխելու նախարարական որոշումը: Ստեղծուած այս կացութեան ի տես, երբ յարմար պայմաններ ստեղծուեցան հաւաքի, ձեռնարկեցինք կարգ առ կարգ ծնողական հանդիպումներու, ուր ներկայացուցինք ուսումնական ծրագիրին իրագործուած բաժինները, նաեւ չդասաւանդուած դասերը (շուրջ 20% համեմատութեամբ), նիւթ առ նիւթ ներկայացուցան տան մէջ աշխատելու նախատեսուած դասերն ու վարժութիւնները, ինչպէս նաեւ յստակ ներկայացուցան վերամուտին դպրոցին մէջ ուսուցիչներուն հետ աշխատելու համար առանձնացուած դասերը: Նկատի առած որ աշակերտութեան մեծամասնութիւնը չունի արդիական գործիքներու օգտագործման կարելիութիւններ (համակարգիչ կամ tab, երբեմն նոյնիսկ smart phone), ուսուցչուհիներու բժախնդիր աշխատանքով պատրաստուեցան ծնողներ-

րու հսկողութեամբ իրագործուելիք դասերու ամփոփումներն ու վարժութիւնները եւ տպուած պրակները յանձնուեցան ծնողներուն:

Ծնողական հանդիպումին կարեւորութեամբ ընդգծուեցաւ տիրող պայմաններու թոյլատրած չափով, դասապատրաստութեան աշխատանքէն չընդհատուելու եւ օրական յստակ ժամանակացոյցով աշխատելու անհրաժեշտութիւնը: Օգտագործելու թե-



լադրանքով ծնողներուն փոխանցուեցան նաեւ Կրթութեան Նախարարութեան առցանց դասաւանդման համար ստեղծած կայքերուն հասցէները: Ցաւօք, սակայն, վերոյիշեալ աշխատանքները շատերու կողմէ անհրաժեշտ լրջութեամբ չհետապնդուեցան, ուսումնական բացը վերականգնելու աշխատանքները մեր նախատեսումէն աւելի դանդաղ ընթացք ունեցան:

**«Գ.»- Ինչպիսի՞ միջոցներու դիմեցիք եւ պէտք է դիմել նման պարագաներու ուսումնական ծրագիրը լաւապէս կիրարկելու համար:**

**Չ.Է.Ր.** - Վարակի վերստին տարածուելու

# Գանձասար

Եւ առցանց դասաւանդման պարտաւորութիւն ստեղծուելու հաւանականութեան առկայութեամբ, վարժարանի տնօրէնութեան եւ հոգաբարձութեան համար հետապնդելի ծրագիր էր ուսուցչական կազմին համակարգիչի օգտագործման հմտութեանց բարելաւումը կամ կատարելագործումը եւ այժմեական գիտելիքներով օժտումը: Ծրագիր, որ իրագործուեցաւ ամառնային արձակուրդի շրջանին Առաջնորդ Սրբազան Զօր աչալուրջ հսկողութեամբ ու Ազգ. Վարչութեան եւ Ուսումնական Խորհուրդի բժախնդիր կազմակերպումով:

Վերոյիշեալէն անկախ, աշնան, երբ սկըսաւ նոր ուսումնական տարեշրջանը, դպրոցի միջավայրին մէջ վարակի տարածումը կանխելու, աշակերտութեան եւ պաշտօնէութեան առողջապահութեան պահպանման

նախանձախնդրութեամբ, ձեռք առնուեցան բազմապիսի միջոցներ, օրինակ՝ նոր բաժանումներ բացուեցան, որպէսզի իւրաքանչիւր դասասենեակի մէջ ունենանք առաւելագոյնը 15-20 աշակերտ, Ազգ. Վարչութեան թելադրանքով եւ հոգաբարձական կազմին հետեւողական աշխատանքով վարժարանը օժտուեցաւ մուտքին տեղադրուած ախտահանման խցիկով եւ ջերմաչափման ու այլ հականեխման սարքերով, խստապահանջութեամբ կը հետապնդուին դասարաններու եւ ինքնաշարժներու ամէնօրեայ մանրագործումը եւ աշակերտներու կողմէ առողջապահական կանոններու գործադրութիւնը, ...: Կ'ենթադրեմ որ այս բոլորին շնորհիւ, փառք Աստուծոյ, ցարդ ոչ մէկ վարակ կամ կասկածելի պարագայ ունեցած ենք:

## ՆԱՐՑԱԶՐՈՅՑ ՔԱՐԷՆ ԵՓՓԷ ԱԶԳ. ՃԵՄԱՐԱՆԻ ՏՆՕՐԷՆ ՅԱԿՈՒ ՔԻԼԷՃԵԱՆԻ ՆԵՏ

**«Գանձասար»- Յարգելի պրն. Յակոբ, ճեմարանի աշակերտութիւնը համեմատաբար աւելի մեծ է տարիքով, հաւանաբար ալ աւելի դիւրին է անոր համար համաճարակի կանխարգելիչ միջոցներու կիրարկումը: Դո՛ւք ինչ կը պատմէք նախորդ ուսումնական տարուան մասին:**

**Յակոբ Քիլեճեան.** - Շնորհակալութիւն «Գանձասար»ին, որ տեսաբար լուսարձակի տակ կ'առնէ մեր աշխատանքները:

2019-2020 ուսումնական տարեշրջանին թագավարակի համաճարակին հետեւանքով 22 Մարտին դասաւանդութիւնը կասեցուեցաւ Սուրիոյ Կրթական Նախարարութեան կողմէ եւ այս արձակուրդը երկարաձգուեցաւ մինչեւ տարեշրջանի աւարտը ու բոլոր աշակերտները յաջողած համարուեցան ու փոխանցուեցան յաջորդ կարգ, 2020-2021 ուսումնական տարեշրջան:

Մենք լուրջ դժուարութիւն ունեցանք այս ընթացքին մեր դասաւանդութիւնը շարունակելու: Բարեբախտաբար մինչեւ 22 Մարտ պետական քննութիւններ յանձնող կարգերուն՝ 9-րդի եւ 12-րդի, ծրագիրը աւարտած էինք: Անոնց փորձ քննութիւններուն համար

դիմեցինք առցանց դասաւանդութեան, հարցարանները առցանց կը տրամադրէինք աշակերտներուն, որոնք կը պատասխանէին ու նոյնպէս առցանց կը դրկէին ուսուցիչներուն, հարցարանը կը սրբագրուէր ու կրկին կը փոխանցուէր աշակերտին, այսպիսով իւրաքանչիւր կարգ իր բոլոր նիւթերու



փորձ քննութիւնները աւարտին հասցուց: Մինչեւ պետական քննութիւններու աւարտը, համաճարակի տարածումը տակաւին վտանգաւոր չէր համարուէր, ուստի աշակերտները կրցան յանձնել պետական քննութիւնները, սակայն աւելի ուշ, Յուլիսի աւարտին ու Օգոստոսի սկիզբը, համաճարակէս



# Բացարդիկ 2021

լուրջ կորուստներ ունեցանք, դժբախտաբար ճեմարանիս ընտանիքեն հայերենաւանդ ուսուցչուհի Յուշիկ Ղազարեանը կորսնցուցինք թագավարակի համաճարակին հետեւանքով:

Իսկ մնացեալ կարգերու պարագային, Մարտէն Մայիսի մէջ առջանց դասաւանդութեան



եան փորձեր ըրինք, այսպէս օրինակ՝ ուսուցիչները դասերը արձանագրեցին եւ ճեմարանիս դիմատետրի էջին վրայ տեղադրեցին ու աշակերտները հետեւեցան անոնց: Սակայն փորձը ի յայտ բերաւ, որ Սուրիոյ մէջ առջանց դասաւանդութիւնը լուրջ դժուարութիւններ ունի: Նախ երբ ուղիղ եթերով ուսուցիչը ելոյթ պիտի ունենայ եւ աշակերտները տեղւոյն վրայ ներկայ պիտի ըլլան (օրինակ գում-ի միջոցաւ) հիմնական դժուարութիւնը ելեկտրականութեան յաճախակի անջատումն է բոլորին մօտ, երկրորդը՝ բոլորը համապատասխան արագութեամբ համացանցի գիծ չունին, երրորդը՝ բոլորը համապատասխան գործիքներ չունին (համակարգիչ կամ laptop) ասոնք յարթահարելը մեծ նիւթական կ'ենթադրէ, որ ներկայիս դժուար է ապահովել: Հետեւաբար մենք աշխատեցանք մեր ուսուցչական կազմը համապատասխան միջոցներով զինելու համար: Անոնք մասնակցեցան Ուսումնական Խորհուրդին կազմակերպած համակարգչային դասընթացքին եւ ստացան անհրաժեշտ գիտելիքներն ու փորձառութիւնը, առ ի պատրաստութիւն առջանց դասաւանդութեան, փորձելով յարթահարել նման պարագաներու դժուարութիւնները:

**«Գ.»- Այս տարեշրջանին ի՞նչ քայլեր առիք ապահով միջավայր գոյացնելու դպրոցէն ներս:**

**Յ.Բ.**- Սեպտեմբերի կիսուն, երբ վերա-

մուտ յայտարարուեցաւ, աշակերտները ամենայն ուրախութեամբ դպրոց մուտք գործեցին: Կ'իմանայինք, որ կ'ուզէին դպրոց յաճախել, որովհետեւ կարօտցած էին այս մթնոլորտը եւ անպայման կ'ուզէին ստանալ նախորդ շրջանի չիրամցուած գիտելիքները, որոնք արդէն իսկ մեր ուսուցիչները այս տարուան դասաւանդութեան հետ առընթեր տուին աշակերտներուն, մանաւանդ հիմնական նիւթերու բացերը:

2020-2021 ուսումնական տարեշրջանի սկիզբէն կիրարկեցինք համաճարակէն նախագուշանալու շարք մը քայլեր: Իւրաքանչիւր առաւօտ աշակերտներուն ջերմաստիճանը կը չափուէր, որեւէ յատուկ պարագայ երբ նկատէինք որեւէ աշակերտի մօտ ուղղակի տուն կ'ուղարկէինք եւ ան անհրաժեշտ դարմանումին կ'ենթարկուէր: Ամէն օրուան աւարտին, բոլոր դասարաններն ու փոխադրակարգերը կը հականերխիք, ինչպէս նաեւ աշակերտներուն կը տրամադէինք բժշկական դիմակներ, դասապահերուն ուսուցիչները կը թելադրէին աշակերտներուն զանոնք անպայման օգտագործել:

Համեմատելով նախորդ տարուան թիւ՝ այս շրջանին աշակերտներուն թիւը 8% աճ արձանագրեց, որովհետեւ Սուրիոյ այլ նահանգներէն ու այլ երկիրներէ ծնողներ Հալէպ վերադարձան: Թագավարակի համաճարակը պատճառ դարձաւ նաեւ տնտեսական դժուարութիւններու, այս իսկ պատճառով կրթաթոշակներուն մեծ բաժինը Ազգ. Վարչութիւնը հոգաց, մնացած բաժինը ծնողները մեծ գիտակցութեամբ կը փորձեն փակել:

Ուշադրութեան արժանի էր այս տարի Արցախեան պատերազմին հետեւանքով ստեղծուած մթնոլորտը ճեմարանէն ներս: Աշակերտները իրայատուկ ձեւով ներկայացուցին Արցախի պատմութիւնը, աշխարհագրութիւնը եւ պատերազմի օրերուն աջակցութիւն բերին Արցախի իրենց դասընկերներուն՝ իրենց համեստ նիւթական կարողութիւններով կոկիկ գումար մը նուիրելով Արցախ ֆոնտին: Դժբախտաբար պատերազմին աւարտը մեր ակնկալածին պէս չեղաւ, սակայն պայքարը կը շարունակուի:

Ազգովին կը թեւակոխենք նոր տարի մը, նոր յոյսերով:

**Հարցազրոյցները վարեց՝  
Սեւանայ Հալլաճեան**

## ԱՐԱՔԱԿԱՆ ՉԱՐԹՕՆՔԻ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ ԵՒ ՀԱԼԷՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՍԱՏՈՒՆԸ (ԺԶ. - ԺԷ. դդ.)

*Դոկտոր Հուրի Ազեզեան*

Արաքական Չարթօնքը որպէս պատմական Վերագարթօնք կամ Վերածնունդ՝ Նահտա, արաքական ընկերութեան պարագային բացայայտուած էր երկու անբաժանելի տարածքներով.



Առաջին, տիրող յետամնացութիւնը համեմատաբար Արեւմուտքի (Եւրոպայի) հետ, որ խորքին մէջ կը նշանակէր արեւելեան գիւղատնտեսութեան յետամնացութիւնը՝ Արեւմտեան (Եւրոպական) ճարտարարուեստի պարզած յառաջադեմ վիճակէն, այլ խօսքով, արաքական գիւղական ընկերութեան յետամնացութիւնը՝ Արեւմտեան (Եւրոպական) ճարտարարուեստականացած քաղա-

քէն, մանաւանդ երբ յստակացած էր, թէ պատմութեան թատերաբեմը բարձրացած էւ այդտեղ տիրապետող դարձած Արեւմուտեան (Եւրոպական) դրամատիրութիւնը, ճարտարարուեստական-ընկերային յստակ երեւոյթ էր, որ շարժիչ ու մղիչ ուժը հանդիսացած էր Արաքական Չարթօնքի կամ Արաքական Նահտայի պատմական իրադարձութեան:

Երկրորդ, Արեւմուտքի (Եւրոպայի) համահաւասար յառաջդիմութեան մակարդակ նուաճելու ձգտումը էւ որպէս գործօն տարր՝ Արեւմուտքի (Եւրոպայի) հետ պատմութեան բեմահարթակ մուտք գործելու հեռանկարը, այսինքն գործնապէս արտադրութեան էւ կեանքի գիւղական-երկրագործական կերպէն անցնելու ճարտարարուեստականացած էւ մշակութային առումով զարգացած արդի կեանքի ոլորտները, մանաւանդ որ արդի դրամատիրութիւնը որ ծնունդ առած էր Արեւմուտքի (Եւրոպայի) մէջ էւ աստիճանաբար համակած էր ամբողջ աշխարհը, Արեւելքը դիտած էր իբրեւ Արեւմուտքի (Եւրոպայի) կեդրոնական շուկան, յատկապէս (ԺԹ.) դարու վերջը էւ (Ի.) դարու սկիզբը, երբ մինչ այդ, Արաքական Չարթօնքի կամ Արաքական Նահտայի ընկերային-մշակութային փոխանցման պատմական շարժումը գիւղէն դէպի քաղաք՝ զգալիօրէն գործնականի վերածուած էր (ԺԹ.) դարու կէսէն սկսեալ, էւ Արաքական Չարթօնքի կարկառուն գործիչները՝ արաքական երկիրները դէպի արդիականութիւն էւ քաղաքակրթական նոր մակարդակներ առաջնորդող յառաջապահները դարձած էին: Արաքական Չարթօնքի կամ Արաքական Նահտայի գործընթացի զարգացման փուլերուն մասին, հանգամանալից վերլուծումներ կատարած է Մուհամմետ Զամել



ալ հաթիպ<sup>1</sup>:

Արդարեւ պատմա-աշխարհագրական Սուրիա (Նաեւ Օսմանեան Սուրիա) կամ «Պիլատ ալ Շամ» այն երկիրը հանդիսացած էր, ուր շուրջ տասնեակ մը տեղաբնիկ քրիստոնեայ համայնքներու եւ գլխաւորաբար Պաղեստինի սրբավայրերուն պատճառով, խաչակիր նուաճողներու եւ անելի ուշ քարոզչական առաքելութիւններու միջոցաւ, ամբողջ միջնադարուն շարունակականօրէն արեւմտեան (եւրոպական) իրականութեան հետ շփման մէջ մնացած էր, իսկ արդիւնքը հանդիսացած էր արաբերէն լեզուի աննախընթաց զարթոնք մը, ըստ Շամսուտտին ալ Բիֆաիի այդ գրական զարթոնքը պիտի փոխակերպուէր քաղաքական զարթոնքի<sup>2</sup>, ընդդէմ օսմանեան բռնատիրութեան:

Եւ ուրեմն (ժԵ.-ժԸ. դդ.) յիշուած շփումներուն հանգուցակէտը դարձած էր Յալէպ քաղաքը, որ միջին դարերուն վերածուած էր վարչատնտեսական եւ մշակութային կարեւոր կեդրոնի մը, ներառեալ արդի քրիստոնեական Չարթօսըի եւ Լուսաւորական Շարթումի ոստանի իր հանգամանքը: Այդ օրերուն, Յալէպի բնակչութեան հոծ արաբ

բնակչութեան կողքին, 202ափելի թիւ կազմած էին թուրքերը, պարսիկները, հրեաները, Նաեւ հայերը, միաժամանակ իտալացի, ֆրանսացի, սպանացի, հոլանտացի եւ այլ արեւմտա-եւրոպացի առեւտրականներ, հոգեւորականներ, դիւանագետներ եւ ուրիշներ: Յայր Մըթրի Յաճի Ասնասիոյի վկայութեամբ, «Կարեւոր է յիշել քրիստոնեայ Յալէպի ունեցած դերը (ժԵ.) դարու Միջին Արեւելքի բեմահարթակին վրայ: Շնորհիւ Յալէպի տաղանդաւոր գաւակներուն եւ Չարթօսըի յառաջապահներուն, գրական-իմացական Չարթօսըը ծլարձակած էր եւ ապա անցած էր Լիբանան, մինչեւ Եգիպտոս եւ այլուր...: Արդարօրէն, Յալէպը նկատուած է արաբական Չարթօսըի բնօրրանը, այդտեղ ցայտած էին անոր կայծերը, եւ այդտեղէն բիրեղացած էին անոր գործօնները: Յալէպի դերը խիստ մեծ եղած է յատկապէս Լիբանանի պարագային, կրօնական, եկեղեցական, ընկերային, քաղաքակրթական եւ մշակութային առումներով»<sup>3</sup>:

Ուստի սուրիահայութեան կեդրոնը հանդիսացած էր Յալէպ քաղաքը<sup>4</sup>, եւ ծաղկուն եղած էր տեղւոյն հայ համայնքը:

<sup>1</sup>Արաբական Չարթօսըի այս եւ (Ի.) դարու զարգացման հանգրուաններուն մասին բաւական հանգամանակից վերլուծումներու մասին, տե՛ս,

<sup>2</sup> الرفاعي. د. شمس الدين. تاريخ الصحافة السورية. الجزء الأول. ص 29-31. دار المعارف بمصر. 1969.

<sup>3</sup> هاجي أثناسيو. الأب متري. موسوعة بطريركية أنطاكية التاريخية والأثرية. الجزء الثاني. لبنان المسيحي في تألقه الحضاري عبر العصور المجلد التاسع. مدن النهضة العربية الكبرى: بيروت. دمشق. حلب. 2: 936. دمشق. 2002.

<sup>4</sup>1)Յայկական տուեալներով, (ժԵ.) դարու Յալէպի հայկական գաղթօճախի բարուը վիճակին խօսուն ապացոյցներէն նկատուած է այն իրողութիւնը թե՛ (1499-1500թթ.) Յալէպի երեւելի դէմքերէն Ըռայիս Պարոն Եսայիի բարերարութեամբ ընդարձակուած էր Սրբոց Զառնասից Մանկանց Եկեղեցին:

- Սիւրմէան, Արտաւազդ Արք., «Պատմութիւն Յալէպի Յայոց» (1355-1909), Գ. Յատոր, էջ 31-32, Փարիզ, 1950: Ազեգեան, Յուրի, «Բերիոյ Թեմը եւ իր Եկեղեցիները», էջ 375-417, «Յասկ» Յայագիտական Տարեգիրք, Նոր Շրջան, Թ. Տարի, 1997-2001:

2)Նոյն թուականին, ջուղայեցի Մովսէս Վարդապետ հաւանաբար դէպի Երուսաղէմ ուխտագնացութեան ճամբուն վրայ հանդիպած էր Յալէպ, որուն ընկերակցող ուխտաւորը, գնահատական տողեր արձանագրած էր ձեռագիր «Գանձարան»-ի մը չափածոյ յիշատակարանին մէջ:

- Սիւրմէան, Արտաւազդ Արք., «Տուցակ Յայերէն Ձեռագրաց Յալէպի Ս. Զառնասուն Մանկունք Եկեղեցւոյ եւ Մասնաւորաց», Ա. Յատոր, Երուսաղէմ, 1935, էջ 151:

3)Աւելի ուշ, Յալէպի բարգաւաճ հայ համայնքի գաւակներէն՝ իշխաններ Սանոս եւ Պետիկ Չէլէպի եղբայրներուն կողմէ, (1616)-ին Սրբոց Զառնասից Մանկանց Եկեղեցին երկրորդ անգամ ընդարձակուած էր, Առաջնորդ Խաչատուր Կարկառեցիի օրօք (1603-1620թթ.):

- Ալիսեան, Յ. Ներսէս, «Յայ Կեանքը Յալէպի Մէջ, 1605-1635», էջ 321-322, «Յանդէս Ամսօրեայ», ԽԵ. Տարի, թիւ 3-6 (Մարտ-Յունիս), 1933: Conybeare, Frederick Carnwallis, A Catalogue Of The Armenian Manuscripts In British Museum, London, 1913, p. 40.

# Գանձասար

Մինչեւ (ԺԷ.) դարու կեսերը, Հալեպ քաղաքը ընդհանրապես դարձած էր ամբողջ Մերձավոր Արեւելքի առեւտրական հիմնական շուկան<sup>5</sup>: Յատկանշական է թէ նախապես (ԺԶ.) դարու Հալեպի մետաքսի շուկային զարգացումը իր նախընթացը ունեցած էր, երբ հայ վաճառականները արդէն (ԺԵ.) դարուն պարսկական մետաքսը ներածած էին՝ զայն վերստին արտածելու համար դեպի Արեւմուտք, այդ շրջանի Հալեպի հայ խոճաններուն, մասնաւորաբար ջուղայեցի առեւտրականներուն մենաշնորհը հանդիսացած էր հում մետաքսի առեւտուրը միջազգային շուկայի վրայ, մեծ տարողութեամբ օգտագործելով արեւելեան կարաւանային ճանապարհները<sup>6</sup>: Յատկանշական է թէ՛ Հալեպի հայ համայնքի ազգային-եկեղեցական կեանքէն ներս, (ԺԶ.-ԺԸ.դդ.) ջուղայեցիք իրենց մեծատուն վաճառականներով եւ ազդեցիկ խոճաներով խիստ որոշադրիչ, նոյնիսկ առաջնորդող դեր ունեցած էին: Հալեպահայ հնագէտ Նուպար Փարթամեանի համաձայն, 13 Մայիս 1965-ին, Տեր Չօրէն ութսուն քիլոմէթր դէպի հարաւ հանդիպած եւ յայտնաբերած էին քսան հայկական արձանագրութիւններ, որոնք կը կարծուին թէ՛ կը պատկանէին Ջուղայէն Հալեպ եկած ջուղայեցի հայերուն<sup>7</sup>: Ջուղայեցիներու մասին Համբարձում Առաքելեան կարելոր տեղեկութիւններ փոխանցած է, նաեւ մեկնաբանութիւններ կատարած է<sup>8</sup>:

Ճանապարհորդ Սիմէն Լեհացի երբ (1616)-ին Հալեպ այցելած էր, յատուկ հիացումով պատմած էր հայ առեւտրականներուն, անոնց մեծամեծ շէնքերուն, անբաւ

հարստութեան եւ ազդեցիկ դիրքին մասին. «Եւ այս քաղաքս մեծ պէնտեր է եւ շահրիստան. եւ յինքն կայ Հնու-Հնդուստան ու մարդ, ամէն տեղաց վաճառական. եւ ինչ կու մաշ կամիս, անդ գտանես...»<sup>9</sup>:

Այդ ժամանակաշրջանի Հալեպի հայ համայնքի յիշեալ բարգաւաճ վիճակը ունեցած էր իր մշակութային տարածքը, մարմնաւորուած Հալեպի նշանաւոր Հայկական Դասատան գոյութեամբ, որ մանաւանդ իբրեւ զըրջութեան մեծ կեդրոն՝ իր ներդրումը ունեցած է քաղաքին ապրած քրիստոնեական Չարթօնքի շրջագիծէն ներս:

Հաստատապես Հայկական Դասատունը որպէս գիտութեան եւ արուեստի առանձնաշատուկ երեւոյթ՝ գոյութիւն ունեցած էր տակաւին (ԺԵ.) դարու երկրորդ կիսուն, երբ, (1476) թուականին «Մելքիսեդ կրօնաւոր», Պարոն Ֆարաճի համար գրչագրած էր թըղթեայ եւ նկարագարդ Աւետարան մը, Հալեպի Սրբոց Քառասնից Մանկանց եւ Ս. Աստուածածին Եկեղեցիներու հովանիին ներքեւ<sup>10</sup>: Այդ օրերուն վաճառաշահ Հալեպի մէջ առատօրէն գտնուած էին՝ թուղթ, մելան, օսլայ, ներկեր, լազուարտ, կաշի, իսկ Հայկական Դասատունը հովանաւորած էին Հալեպի հայազգի իշխանները, խոճաները, երեւելիները, «տանուտեր»ները:

Արդէն (ԺԶ.) դարուն Հայկական Դասատան նշանաւոր դէմքերէն հանդիսացած էր Կարապետ Վարդապետ, որ «անձանձիր» կերպով ուսուցանած էր իր աշակերտներուն, նոյնիսկ կը կարծուի թէ՛ Դասատունը կազմակերպուած էր նոյնինքն Կարապետ Վարդապետի կողմէ, եւ թռիչք առած էր երբ այդ-

5- حتى. د. فيليب. تاريخ سورية ولبنان وفلسطين. الجزء الثاني. ص 18. بيروت. 1959.

<sup>6</sup>Հասարթեան, Մ. Ա., Օրծեկովա, Ս. Ֆ., Պետրոսեան, Յու. Ա., «Թուրքիայի Պատմութեան Ուրուագծեր», Երեւան, 1986, էջ 75:

<sup>7</sup>Փարթամեան, Նուպար, «Ակնարկ Մը Սուրիոյ Հնագիտութեան Վրայ», «Գեղարդ» Սուրիահայ Տարեգիրք, Ա. Տարի, 1975, էջ 370:

<sup>8</sup>Առաքելեան, Համբարձում, «Պարսկաստանի Հայերը», Ա. Մաս, էջ 37, Վիեննա, 1911:

<sup>9</sup>Սիմէն Դարի Լեհացոյ, «Ուղեգրութիւն», էջ 318, Վիեննա, 1936:

<sup>10</sup>Նոյնը, 3: 27-28: Սիւրմեան, Արտաւազդ Արք., «Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հալեպի Ս. Քառասուն Մանկունք Եկեղեցոյ Եւ Մասնաւորաց», 1:94-95:



տեղ հրավիրուած էր Առաջնորդ Յովհաննէս Ուռուհայեցի (1595-1603թթ., 1620թ. յետոյ): Նոյն օրերուն Յալէպի մէջ գործած էին Խաչատուր Չէյթունցի՝ իբրեւ երաժիշտ, Յակոբ Բահանայ՝ իբրեւ «քաջ քարտուղար», Վասիլ Վարդապետ եւ Իսրայէլ Ամթեցի՝ որպէս վարպետ մանրանկարիչներ, Ղազար Բահանայ՝ իբրեւ ուսուցիչ գրչութեան արուեստի, որ գործած էր մինչեւ (1634թ.): Յայկական Դասատան շնորհալի արուեստագետներէն հանդիսացած էին՝ Մուրատ Գրիչ, Նաեւ Մկրտիչ Բահանայ Յալէպցի, վերջինը անուանի դարձած էր որպէս նկարիչ, անոր «Տիրամայր Ս. Աստուածածին» սրբանկարը (1663թ.) երկար տարիներ զարդարած էր պատմական Ս. Աստուածածին Եկեղեցւոյ Ս. Սեղանը<sup>11</sup>: Նոյնքան նշանաւոր եղած էր Տէր Մկրտիչ Բահանայի՝ Սրբոց Զառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ՝ «Ս. Մինաս Չօրավար»ի սրբանկարը (հաւանաբար նկարուած՝ 1664-ին), առ այսօր պահպանուած է<sup>12</sup>: Անմոռանալի դէմք հանդիսացած էր Մուրատ Յալէպցի (1592-1662թթ.), հետագային Սարգիս Բահանայ (սիիզանցի), ծանօթ սիգազան եւ ակնագործ, հմուտ աստուածաբանական ուսմանց, բժշկութեան, տոմարագիտութեան, միաժամանակ բանաստեղծ եւ տաղասաց, հեղինակ թանկարժէք քարերու մասին գիտական աշխատութեան մը, կը կարծուի թէ՛ եղած է Յալէպի Կուսակալութեան հաշուակալ<sup>13</sup>: Նոյնքան անուանի եղած էր ջուղայեցի Մինաս Նկարիչ, եւ ուղղակի մեր նիւթի շըր-

ջագիծէն ներս Աստուածատուր Բահանայ Ուրֆացի (1600-1683թթ.)<sup>14</sup>:

Յալէպի մէջ (ԺԷ.) դարու սկիզբը վերոյիշեալ քարոզչական առաքելութիւններու ներկայութիւնը երբ արդէն ստուարացած էր, առաւելաբար (1660-1730) տարիներուն, անոնք իրենց ոսկեդարը ապրելով Յալէպի Լուսաւորական Շարժումի Նախադրեալներու շրջագիծէն ներս՝ կտակած էին պատմական կարեւոր թարգմանութիւններ եւ հեղինակութիւններ: Յայր Ճըպրայիլ Ապու Սաստիի համաձայն, Յալէպի մէջ (ԺԷ.) դարու քարոզչական առաքելութիւններու շնորհիւ է որ Յալէպի մէջ ծլարձակած էին Արաբական Չարթօսքի առաջին Նախանշանները<sup>15</sup>, այլ խօսքով Յալէպի քրիստոնեայ համայնքները, ներառեալ հայերը, դիւրաւ ծաւալած էին գրական-կրօնական իրենց բազմաբնոյթ գործունեութիւնները:

Արդ, (ԺԷ.) դարուն սկսած խմորումները իրենց արդիւնքը տուած էին՝ (ԺԸ.) դարուն հրահրելով Արաբական Չարթօսքի կամ Արաբական Նահտայի կայծերը, որոնք տակաւ առ տակաւ ճառագայթելով համակած էին ամբողջ արաբական աշխարհը: Այստեղ հիմնական դեր ունեցած էին Նաեւ յունական մշակոյթի տարածումն ու քրիստոնեայ Արեւմուտքի հետ մշակուած կապերը, երբ զարգացած էին դպրոցներն ու թարգմանութիւնները եւ փայլած էին շարք մը հոգեւորականներ իրենց կրօնական, լեզուաբանական եւ քերթողական հեղինակութիւններով: Մեծ

<sup>11</sup>Սիւրմէեան, Արտաւազդ, Արք. «Պատմութիւն Յալէպի Յայոց» (1355-1908), Գ. Յատոր, էջ 189, Փարիզ, 1950:

<sup>12</sup>Նոյն, 3: 190:

<sup>13</sup>Նոյն, 3: 161-165:

<sup>14</sup>Յալէպի Յայկական Դասատան մասին մանրամասնութեանց համար, տե՛ս, - Սիւրմէեան, Արտաւազդ Արք. 1) «Պատմութիւն Յալէպի Յայոց» (1355-1908), 3: 146-160, 165-178, 182-183, 425-463, 2) «Յայաստանի Կոչնակ», ԼԷ. Տարի, թիւ 11, 1937, «Յալէպի Արքայական Պալատները», էջ 253-254: Գրիգոր Վարդապետի Կամախեցւոյ, նշուած աշ., էջ 409: Առաքել Դարիժեցի, Պատմութիւն, էջ 321, 462: Ակիւնեան, Յ. Ներսէս, «Յայ Կեանքը Յալէպի Մէջ, 1605-1635», էջ 314, «Յանդէս Ամսօրեայ», ԽԷ. Տարի, թիւ 3-6, 1933:

توتل اليسوعي. الأب فردينان. وثائق تاريخية عن حلب-أخبار الموارنة وما إليهم من 1606 إلى يومنا هذا (1837) (1) ص ص 46-47. بيروت. 1958.

<sup>15</sup>

أبو سعدي. الأب جيرائيل. النهضة الأدبية في لبنان. صيدا. 1944. ص 10.

# Գանձասար

Նշանակություն բացայայտած էր (ԺԶ.-ԺԷ.) դարերուն Յալթայի քրիստոնեաներուն մօտ զարգացած գրչութեան արուեստը:

Ահաւասիկ այս շրջագիծէն ներս, իւրա-յատուկ դէմք երեւոյթ հանիսացած էր Յալթայի Յայկական Դասատունը, ուր շնորհաշատ



գրիչներու կողմէ այդտեղ գրչագրուած ու ծաղկուած աւելի քան (200) ընտիր ձեռագիր-ները, ի միջի այլոց պահպանած են Յալթայի հայ համայնքի պատմութենէն թանկագին էջեր<sup>16</sup>, իսկ (ԺԷ.) դարու գրչութեան Յալթայի տիրական դէմքերէն հանդիսացած էր վերո-յիշեալ Աստուածատուր Բահանայ Ուրֆացին (1600-1683թթ.), ծնունդով ու գործունե-ութեամբ հալթայցի, Արտաւազդ Արք. Սիւր-մէտանի հաստատումով աւելի քան յիսուն տարի անընդմեջ գրչագրած ու մասամբ ծաղ-կած էր բազմաթիւ ձեռագիր մատենաներ<sup>17</sup>:

Նախ դպիր ու սարկաւազ, յետոյ Բահանայ, S. Աստուածատուր Բահանայ ամուսնացած էր հալթայցի քրիստոնեայ բարեպաշտ ընտա-նիքի մը աղջկան հետ՝ Սըրթալումամ, եւ զըր-չագրած էր արաբերէն ձեռագիրներ եւս, այս մասին վկայած է Յիսուսեան հայր Ֆերտի-նան Թաութէլ<sup>18</sup>:

Նոյնպէս ակնառու գրիչ հանդիսացած էր Ասորի (Սըրիան) համայնքի Պատրիարք Ախիճան ալ Սըրիանի<sup>19</sup>, մինչ (ԺԷ.) դարու վեր-ջաւորութեան սկսած գրական շարժումի արաբագիր գրողներու յառաջապահը հան-դիսացած էր Նոյնիքն՝ հայազգի Աստուա-ծատուր Բահանայ Ուրֆացին<sup>20</sup>:

Արաբական Չարթոսքի Նախանշաննե-րու եւ Յալթայի Լուսաւորական Շարժումի բո-լորակէն ներս՝ դպրոցներու հիմնադրութեան գծով կարելոր հանգամանք է թէ՛ Առաջնորդ Մալաթիոս Բարմէ ճակատագրական դեր ու-նեցած էր Յալթայի մշակութային եւ հոգե-մտաւոր զարթոնքի պարագային, երբ մեծա-պէս քաջալերած էր յատկապէս դպրոցներու հիմնադրութիւնը, իր համայնքի Առաջնորդա-րանէն ներս (1629-ին) հիմնած էր դպրոց մը, բոլոր քրիստոնեայ համայնքներու զաւակնե-րուն համար, հանդիսացած էր Յալթայի առա-ջին քրիստոնեայ դպրոցը<sup>21</sup>:

Յետաքրքրական է թէ՛ Յալթայի մեջ տասնհինգ տարի (1637-1652թթ.) աշխոյժ գոծունեութիւն ունեցած Յիսուսեան հայր Էյ-մէ Շեգօ (1604-1664թթ.), (1641-ին) քաջալե-րած էր՝ «Յայոց Առաջնորդը՝ համայնքի զա-

<sup>16</sup>Սիւրմէտան, Արտաւազդ, «Պատմութիւն Յալթայի Յայոց» (1355-1908), 3:146-257:

<sup>17</sup>Նոյն, 3:165-178:

<sup>18</sup> - 1606 - 1606 إلى يومنا هذا وما إليهم من حلب-أخبار الموارنة وما إليهم من 1606. وثائق تاريخية عن حلب-أخبار الموارنة وما إليهم من 1606. 1837 (1). ص 10, 34, 37.

<sup>19</sup>Նոյն, 1:35:

<sup>20</sup> كحالة. د. جوزيف الياس. عبد الله زاخر - مبتكر المطبعة العربية. ص 23. حلب. 2002.

<sup>21</sup> ادلبي. المطران ناويفطوس. أساقفة الروم الملكيين في العصر الحديث. ص 37, 30 - 55. حلب. 1983.



լակներուն համար դպրոցներ հիմնելու գծով»<sup>22</sup>: Այս գծով առ ի պարզաբանում, Հալեպի հայ համայնքին մեջ թեև կաթոլիկութեան սերմերը այդ օրերուն նշմարելի էին երուսաղէմէն սկսած եւ դեպի հիւսիս տարածուող Ուկրաինական Շարժումի հետեւանքով, բայց միակ կազմակերպուած համայնքը հանդիսացած էր Հայ Առաքելական Համայնքը: Ըստ հայկական տուեալներու այդ շրջանի Հայ Առաքելական Համայնքի իբրեւ Առաջնորդ յիշուած է Յակոբ Արք. Կարկառեցի (1633-1640թթ., 1654-1657թթ.), եւ շատ հաւանաբար այստեղ ակնարկուած է անոր, մանաւանդ որ, Դասատան կից միշտ գոյութիւն ունեցած եւ գործած էր Դպրատուն մը, որ «ուսումնարան»ի վերածուած էր (Ի.) դարու երկրորդ կիսուն<sup>23</sup>, իսկ (1710-ին) է որ Հայ Կաթողիկէ Համայնքի որպէս առաջին Առաջնորդ յիշատակուած է՝ Աբրահամ Արք. Արծիւեան (1710-1740թթ.): Ուրեմն վերոյիշեալ յորդորը մեծ հաւանականութեամբ տրուած էր Հայ Առաքելական Համայնքի Առաջնորդ Յակոբ Արք. Կարկառեցիի:

Այդ նոյն շրջանին, (ԺԷ.) դարու երկրորդ կիսուն, (1662-ին) Յոյն-Օրթոտոքսները արդէն ունէին երեք դպրոցներ, աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան բաժինով մը: Նախախնամական եղած էր Հալեպի մէջ

(1663-ին) մարոնիթ հայր Իսթէֆանոս ալ Տուէյիի ներկայութիւնը, իր կարգին (1666-ին) հիմնած էր համայնքին վարժարանը<sup>24</sup>, որ տուած էր մեծ թիւով վկայեալներ եւ Արաբական Չարթօսքի սկզբնական շրջանի գործիչներէն ինչպէս՝ Ճըրմանոս Ֆարհաթ, Ճըպրայիլ Հաուուա, Նիքոլա ալ Սայեղ Բահանայ, հայագգի Մկրտիչ ալ Բասիհ ալ Արմանի (Հաշմ Մկրտիչ) եւ ուրիշներ: Միաժամանակ, Ասորի (Սըրիան) Կաթոլիկ համայնքի առաջնորդներէն՝ Կրէկորիոս Եաշուհ Իպն Ապտուլ Ահատ Մըսըրըշահ եւ Դեռնիսիոս Ռըզգալլահ Իպն Ամին Խան (1701թ.) հետամուտ եղած էին դպրոցներու հիմնադրութեան, որոնք հանդիսացած էին Հալեպի կըրթա-լուսաւորական կեանքի առաջին նախածեռնութիւններէն<sup>25</sup>: Ապա, (ԺԸ.) դարուն դարձեալ Յոյն-Մելքիթներու Անտիոքի Պատրիարք Աթանասիոս Գ. ալ Անթաքի ալ Հալապի Իպն ալ Տապպաս ալ Տիմաշքի (1720-1724թթ.) (մինչ այդ՝ 1685-1694թթ. Առաջնորդ), արդէն (1706-ին) Հալեպի մէջ հիմնած էր Սուրիոյ առաջին արաբատառ տպարանը, օգնականը եղած էր Յոյն-Կաթոլիկ նշանաւոր մտաւորական՝ սարկաւազ Ապտուլլահ Չախեր (1684-1748թթ.), որ որպէս հմուտ ոսկերիչ ձեւաւորած էր արաբերէն տառերը<sup>26</sup>:

22- ديك. الأرشمنديت أغناطيوس. الحضور المسيحي في حلب خلال الألفين المنصرمين. الجزء الثاني (من الفتح العثماني إلى مطلع الألفية الثالثة). المجلد الأول (العهد العثماني الأول). ص 58. حلب. 2003.

23-Սիւրմէան, Արտաւազդ Արք., «Պատմութիւն Հալեպի Հայոց» (1355-1908), 3:390, 397, 838:

24- الغزي. الشيخ كامل. نهر الذهب في تاريخ حلب. الجزء (2). ص 481. توتل اليسوعي. الأب فردينان. وثائق تاريخية عن حلب-أخبار الموارنة وما إليهم من 1606 إلى يومنا هذا (1606 - 1837) (1). ص 35.

25- كتاب عناية الرحمان في هداية السريان. لديونوسيوس أفرام نقاشة. ص 76. بيروت. 1910. دي طرازي. الفيكونت فيليب. السلاسل التاريخية في أساقفة الأبرشيات السريانية. ص 79. 202. بيروت 1910.

26- توتل اليسوعي. الأب فردينان. وثائق تاريخية عن حلب-1 الحوادث والأخبار أخذاً عن يومية نعوم بخاش. ص 40. بيروت. 1940. 2 أخبار الموارنة وما إليهم من 1606 إلى يومنا هذا (1606 - 1837) (1). ص 46. ديك. الأرشمنديت أغناطيوس. الحضور المسيحي في حلب خلال الألفين المنصرمين. الجزء الثاني (من الفتح العثماني إلى مطلع الألفية الثالثة). المجلد الأول. ص 88.

# Գանձասար

Համայնքային-քրիստոնեական տեսակետեն, (ԺԸ.) դարու Հալեպի մշակութային-իմացական մարզի ջահակիրներեն դարձած էր նաեւ Եուսուֆ ալ Մուսաուուէր Բահանայ, եղած էր տաղանդաւոր նկարիչ, այս ընտանիքը հիմը դրած էր Հալեպի նկարչական մեղքիթ արուեստի դպրոցին, որ գագաթնակետին հասած էր զաւկին՝ Նիհմէթուլլահ ալ Մուսաուուէր Բահանայի կողմէ (1686-1722թթ.), վերջնոյն կը պատկանի Հալեպի Սրբոց Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցին զարդարող՝ «Վերջին Դատաստանը» (1708թ.) բարձրարժէք սրբապատկերը: Այս առումով, Յիսուսեան հայր Ֆերտինան Թաուրէլ որ բազմաթիւ վաւերաթուղթեր ուսումնասիրած էր Հալեպի մասին - ներառեալ քրիստոնեայ համայնքները -, ալ Մուսաուուէր ընտանիքի ծագումով հայ ըլլալու մասին յիշած է հետեւեալը.

«Թէեւ անոնք արաբախօս էին, սակայն շատ հաւանաբար Հալեպի հայ համայնքէն էին եւ անոնցմէ էր որ կազմուեցաւ Հալեպի Հայ Կաթողիկէ Համայնքը»<sup>27</sup>:

Սակայն, ըստ Առաջնորդ Նաուֆիթոս Իտլիպիի, Առաջնորդ Մալաթիոս Բարմէ իր

հետ Հալեպ բերած էր Պաղեստինի «Մար Սապա» Վանքի միաբաններէն՝ հայր Մալաթիոս ալ Սաքիզի, հմուտ նկարիչ մը յատկապէս սրբապատկերներու պարագային, որ այդ արուեստը սորվեցուցած էր հալեպցի երիտասարդներու, ներառեալ Եուսուֆ ալ Մուսաուուէր Բահանայի: Ապա, Եուսուֆ ալ Մուսաուուէր Բահանայ զայն փոխանցած էր իր զաւկին՝ Ճըրճոսի, եւ Սուրիոյ ու Լիբանանի տարածքին շատ շատերու, «Հիմը ղնելով յոյն-մելքիթներու արուեստի զարթօնքին», ակնարկելով ալ Մուսաուուէր ընտանիքի Յոյն-Մելքիթ համայնքի պատկանելիութեան<sup>28</sup>:

Աւելի ուշ, (ԺԸ.) դարու երկրորդ կէսէն սկսեալ, տիրող տնտեսական եւ քաղաքական աննպաստ պայմաններուն բերումով, զգալիօրէն անշքացած էր Հալեպի առեւտրական կարեւոր դիրքը, տեղոյն հայ համայնքը իր կարգին ազդուած եւ շօշափելի կերպով նօսրացած էր, վերականգնելու համար աւելի ուշ (ԺԹ.) դարուն, ուր դարձեալ քաղաքին Լուսաւորական Շարժումի բոլորակէն ներս պիտի փայլէին հայազգի գործիչներ<sup>29</sup>:

27- توتل اليسوعي. الأب فردينان. وثائق تاريخية عن حلب- أخبار الموارنة وما إليهم من 1606 إلى يومنا هذا (1606 - 1837) (1). ص ص 46-47.

28- ادلبي. المطران ناويفيطوس. المصدر المذكور. ص 36.

29- Տե՛ս, Ազգեան Հոլրի, «Արաբական Չարթօնքը Եւ Հայ Գործիչները», Հալեպ-Սուրիա, 2008:



# 27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020-ԻՆ ԾԱՅՐ ԱՌԱԾ ԱՐՑԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

*Համադրեց*


*Լուսին Ապաճեան-ՉիլԱբոջեան*

Սոյն ժամանակագրութեամբ պիտի ամփոփենք Ատրպէյճանի եւ Թուրքիոյ կողմէ Արցախի վրայ սանձազերծուած պատերազմին առնչուող կարեւոր իրադարձութիւնները.

## 27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020

-Ատրպէյճան, Թուրքիոյ աջակցութեամբ, լայնածաւալ պատերազմական գործողութիւններ կը սանձազերծէ Արցախի դէմ:

-Արցախի սահմանի ողջ երկայնքով 27 Սեպտեմբերի վաղ առաւօտեան սկսած ատրպէյճանական յարձակումէն անմիջապէս ետք ԶՅԴ-ն զօրաշարժի կ'ենթարկէ կամաւորական ուժերը: Նոյն օրը երեկոյեան Ար-



ցախ կը մեկնի ԶՅԴ կամաւորական առաջին վաշտը:

-ԶՅԴ Գերագոյն Մարմինը յայտարարութիւն կը տարածէ յայտնելով, որ այս պահուն բոլորս հայոց բանակի զինուոր ենք:

-ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը կապ կը հաստատէ Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ եւ իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ Հայոց Բանակին:

-Հայաստանի Հանրապետութիւնը

կը յայտարարէ զինուորական դրութիւն եւ ընդհանուր զօրահաւաք:

-ՀՅԴ ԳՄ-ի նախաձեռնութեամբ Հայաստանի խորհրդարանական եւ արտախորհրդարանական կուսակցութիւնները կը հաւաքուին:

14 կուսակցութիւններ յայտարարութիւն կը տարածեն, թէ ողջ ներուժով կը սատարեն հայոց բանակին եւ կ'աջակցին Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն:

-Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրօն կը դատապարտէ Ատրպէյճանի կողմէ սանձազերծուած պատերազմը Արցախի շփման գիծի երկայնքով եւ խաղաղ բնակավայրերուն վրայ:

-ՀՀ ԱԳՆ-ը իր յայտարարութեան մէջ կը յիշէ, որ առաւօտեան, շփման գիծի ողջ սահմանին ատրպէյճանական կողմը աշխուժ հրետակոծութիւն սկսած է՝ թիրախաւորելով նաեւ խաղաղ բնակավայրերը, ներառեալ մայրաքաղաք Ստեփանակերտը:

## 28 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020

-Ալիեւի հրամանագիրով՝ 28 Սեպտեմբերէն սկսեալ Ատրպէյճանի ամբողջ տարածքին զինուորական դրութիւն կը հաստատուի:

-ՆԱԹՕ-ն կոչ կ'ուղղէ անյապաղօրէն դադրեցնելու զինուորական գործողութիւնները Լեռնային Ղարաբաղի ուղղութեամբ:

-Չօհրապ Մնացականեան հեռաձայնային գրոյց կ'ունենայ ԱՄՆ-ի, Քանադայի, Իրանի եւ Յունաստանի գործընկերներուն հետ:

-Սուրիահայ երեք կազմակերպութիւնները՝ Հայ Երիտասարդաց Միութիւնը, Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը, Թեքէեան Մշակութային Միութիւնը յայտարարութիւն՝ կը տարածեն՝ դատապարտելով ատըր-

# Գանձասար

պեյճանաթրքական յարձակումը:

-ՀՀ 13 կուսակցություններ՝ ներառելով ՀՀԴ-ն, կոչ կ'ուղղեն Հայաստանի եւ Արցախի միջեւ ռազմավարական դաշինք կնքելու:

-Արցախի Պաշտպանության Բանակը յաջողութեամբ կը դիմակայէ թշնամիին բոլոր յարձակումները:

## 29 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020

-The guardian թերթը կը գրէ. *«Թուրքիան Ատրպեյճանի մէջ տեղակայման համար կը գիտէ սուրիացի վարձկանները»:*

-Փաշինեան Մերքելին կոչ կ'ուղղէ ամեն ջանք գործադրելու Թուրքիոյ ապակառուցողական կեցուածքը սանձելու համար:

-Քանատայի խորհրդարանի անդամներ կը դատապարտեն ատրպեյճանական յարձակողապաշտութիւնը եւ կը զօրակցին Հայաստանին ու Արցախին:

-Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուրթ Չաուշօղլուն 29 Սեպտեմբերին կ'այցելէ Անգարայի Ատրպեյճանի դեսպանատուն, ապա կը յայտարարէ, թէ Թուրքիա պատրաստ է աջակցելու Պաքուին ոչ միայն բանակցային սեղանին շուրջ, այլեւ մարտի դաշտին վրայ:

## 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020

-ԵԱՀԿ մշտական խորհուրդը յատուկ նիստով կը վերահաստատէ կրակի անյապադօրէն դադրեցման կարելուութիւնը:

-Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան բրիտանական «Պի.Պի.Սի.» կայանէն միջազգային հանրութեան կոչ կ'ուղղէ դատապարտելու Արցախի եւ Հայաստանի նկատմամբ Թուրքիոյ եւ Ատրպեյճանի յարձակումները:

-Եւրոպական խորհրդարանի փոխնախագահը Արցախի վրայ յարձակումին համար կը դատապարտէ Պաքուն եւ Անգարան:

-Գերմանիոյ վարչապետ Անժելա Մերքել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանի եւ Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ կ'ունենայ հեռաձայնային հաղորդակցութիւններ:

-Չանազան երկիրներու խորհրդարաններ կոչ կ'ուղղեն անյապադօրէն դադրեցնելու պատերազմը:

## 1 Յոկտեմբեր 2020

-Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդրոնական Եւրոպայի Շրջանը (Աւստրիա-Գերմանիա-Իտալիա) խստօրէն կը դատապարտէ վերջին օրերուն թրքական անմիջական ներգրաւուածութեամբ Ատրպեյճանի շղթայագերծած յարձակումները Արցախի ու Հայաստանի վրայ:

-Ատրպեյճանական ռմբակոծութեան հետեւանքով Մարտակերտի մէջ հասարակական վայրեր կը քանդուին:

-ՀՀԴ գումարտակի 2-րդ վաշտը



կը պատրաստուի Արցախ մեկնելու:

-Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրով Հայաստանի եւ Ատրպեյճանի արտաքին գործոց նախարարներուն հետ առանձին հեռաձայնային հաղորդակցութիւններու ընթացքին կը հաստատէ իր պատրաստակամութիւնը՝ Մոսկուան համարելու Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման հարթակ եւ եռակողմանի հանդիպման վայր:

-ՀՀ Սուրիոյ դեսպան Սուհամմետ Հաճ Իպրահիմ մամլոյ ասուլիսի մը ընթացքին կը յայտնէ, որ Սուրիան եւ անոր ժողովուրդը խստիւ կը դատապարտեն Ղարաբաղի Հայկական հողերուն ուղղութեամբ սանձագերծուած յարձակումները:

## 2 Հոկտեմբեր 2020

-Կիպրահայ համայնքը բազմամարդ ցոյց կը կազմակերպէ Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ դեսպանատուներուն առջեւ:

-Բազմահազարնոց ցոյց կը կատարուի Լոս Անճելըսի մէջ՝ ընդդէմ ատրպեյճանական յարձակումներուն:

-Բողոքի հաւաքներ տեղի կ'ունենան



Աթենքի, Ալեքսանտրապոլսոյ եւ Զալամաթայի



մէջ:

-Թուրքիոյ պաշտպանութեան եւ արտաքին գործոց նախարարները պաշտօնապէս կը յայտարարեն, թէ Անգարա պիտի շարունակէ աջակցիլ Ատրպէյճանին:

-Մաքրոն եւ Թրամփ կոչ կ'ուղղեն անյապաղ դադրեցնելու Լեռնային Ղարաբաղի մէջ զինուորական գործողութիւնները, ինչպէս նաեւ Յայաստանին ու Ատրպէյճանին կոչ կ'ուղղեն առանց նախապայմաններու վերսկսելու դարաբաղեան տագնապին շուրջ բանակցութիւնները:

-Փութին եւ Մաքրոն կոչ կ'ուղղեն Լեռնային Ղարաբաղի մէջ անմիջապէս զինադադար հաստատելու:

-Ֆրանսայի նախագահ Էմմանուէլ Մաքրոն լրագրողներու հետ զրոյցի ընթացքին կը յայտնէ, որ փաստեր ունի Թուրքիոյ կողմէ Ատրպէյճան ուղարկուած սուրիացի ահաբեկիչներու մասին: Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութեան բանբերը «Սքայ Նիւզ ալ Արապիա»ին կը յայտնէ. *«Թուրքիոյ եւ Ատրպէյճանի միջեւ հարիւրաւոր սուրիացի վարձկաններ փոխադրող տասնեակներով թռիչքներուն մասին տեղեկութիւնները հաստատուած են»:*

### 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-ՀՀԴ Յայաստանի Գերագոյն Մարմինը կը գուժէ դաշնակցական նուիրեալ ընկեր, ազատամարտիկ, ՀՀԴ Երեսանի Զաղաքային Կոմիտէի նախագահ Գեղամ Մուշեղեանի մահը:

-Էրտողան կը յայտարարէ, թէ զինադադարի հաստատման միակ ուղին «հայ բռն-

նագրաւիչ ուժերու» վիճելի շրջանէն հեռացումն է:

-Եւրոպական Միութիւնը կը պատրաստուի անմիջական մարդասիրական օգնութիւն յատկացնել Լեռնային Ղարաբաղի տագնապին հետեւանքով շփման գիծի երկու կողմի վնասուած բնակչութեան:

-Ֆրանսայի նախագահ Էմմանուէլ Մաքրոն Եւրոպական Միութեան վեհաժողովի ընթացքին կը դատապարտէ Լեռնային Ղարաբաղի տագնապի գոտիին մէջ ընթացող զինուորական գործողութիւններուն մէջ Թուրքիոյ ներգրաւուածութիւնը:

-Թշնամին հեռահար հրթիռներով կը ռմբակոծէ մայրաքաղաք Ստեփանակերտը:

### 4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Մերքել կը զօրակցի Լեռնային Ղարաբաղի Հարցով Թրամփի, Փութինի եւ Մաքրոնի միացեալ յայտարարութեան:

-Թիֆլիս կը հերքէ Վրաստանի տարածքով Ատրպէյճան սպառնազինութիւն տեղափոխելու մասին լուրը:

-Նախագահ Արայիկ Յարութիւնեան կը զգուշացնէ Ատրպէյճանի բանակը Ստեփանակերտի քաղաքացիները հրթիռակոծելէ:

-Ի պատասխան Ստեփանակերտի անգէն ժողովուրդը հրթիռակոծելու ատրպէյճանական բանակին ոտնձգութիւններուն, հայկական ուժերը կը հրթիռակոծեն Գանձակի օդակայանը, ուրկէ կը հրթիռակոծուէր խաղաղ բնակչութիւնը:

### 5 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Բանատայի արտաքին գործոց նախարար ֆրանսուա-Ֆիլիպ Շամփայն կը յայտարարէ, որ Բանատա կը կասեցնէ Թուրքիոյ գէնքի մատակարարումը:

-Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան ու անվտանգութեան բարձրագոյն յանձնակատար ժոզեֆ Դորել հեռաձայնային հաղորդակցութիւն կ'ունենայ Յայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարներուն հետ՝ կոչ ուղղելով անյապաղ դադրեցնելու զինուորական գործողութիւնները:

-ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տերեազատուրեանի ուղերձով կը յայտնէ, որ աշխարհասփիւռ հայութիւնը աներեր կը կանգնի իր գոյգ պետութիւններուն ու բա-

# Գանձասար

Նակին կողքին:



-Արցախը եւ Հայաստանը կը հերքեն Մինգեչաուրին հարուածելու մասին ատըրպէյճանական ապատեղեկատուութիւնը:

-Արցախի նախագահը կոչ կ'ուղղէ միջազգային հանրութեան դատապարտելու Թուրքիոյ աջակցութեամբ իրականացուող յանցագործութիւնները:

## 6 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Արցախի ԱԳ նախարար Մասիս Մայիլեան նամակ կը յղէ Եւրոպայի Խորհուրդի գլխաւոր քարտուղարին:

-RT կայքը կը հաղորդէ, որ Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ «Նովոսթի» լրատու գործակալութեան հետ հարցազրոյցի ընթացքին կը յայտնէ, որ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայիպ Էրտողան կը հրահրէ դարաբաղեան տագնապը, Սուրիոյ եւ Լիպիոյ զինեալ ահաբեկիչներուն զօրավիգ կանգնելով եւ արցախեան տագնապը զինեալ բախումներու առաջնորդելով:

-ՀՅԴ կամաւորական վաշտը մարզումներէն վերջ կը մեկնի Արցախ:

-Միւնիխի հայ համայնքը գործակցութեամբ Գերմանիոյ Հայ Դատի Յանձնախումբին հետ իր պարտքը կը մատուցէ հայոց բանակին՝ խաղաղ ցոյց կազմակերպելով Միւնիխի կեդրոնական հրապարկներէն Օթօսուբլացի մէջ դատապարտելու համար Ատրպէյճանի անմարդկային յարձակումները եւ միջազգային հանրութեան ուշադրութեան յանձնելու ճշմարտութիւնը:

-Թեսաղոնիկահայութիւնը միասնական ու վճռական ոգիով կը դատապարտէ թուրքատրպէյճանական յարձակումը:

-Թուրքիա կը քննադատէ իրեն գէնջ մա-

տակարարելու քանատայի որոշումը:

## 7 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Ալիեւ դարաբաղեան տագնապի հարցով կը հեռաձայնէ Փութինին:

-Պաքու Թեհրանէն ներում կը հայցէ Իրանի տարածքին մէջ ինկած ռումբերուն եւ հրթիռներուն համար:

-Ռուսիա կը յայտարարէ, որ կատարելով Հաւաքական Անվտանգութեան Պայմանագիրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) պարտաւորութիւնները, կրնայ պաշտպանել Հայաստանը, սակայն այդ պարտաւորութիւնները չեն տարածուիր Լեռնային Ղարաբաղի վրայ:

-Հոլանտայի խորհրդարանը Պաքուի եւ Անգարայի դէմ քայլեր ձեռնարկելու կոչով կը դիմէ կառավարութեան:

-Յունաստան տուն կը կանչէ Պաքուի իր դեսպանը:

-ԻՒՆԻՍԵՖ-ը յայտարարութիւն կը տարածէ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան մասին:

-ՀՅԴ Գերագոյն Մարմինը յայտարարութիւն կը տարածէ յայտնելով, որ ՆԱԹՕ-ի անդամ Թուրքիան 27 Սեպտեմբերի 2020-ին Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն նկատմամբ Ատրպէյճանի սանձազերծած պատերազմի համահեղինակն է, անմիջական հրահրողն ու մասնակիցը:

-Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան կոչ կ'ուղղէ միջազգային հակաահաբեկչական նոր միութիւն ձեւաւորելու:

## 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Եւրոպական Խորհրդարանի պատգամաւորներուն ճնշող մեծամասնութիւնը կը դատապարտէ Թուրքիան եւ Ատրպէյճանը:

-Վրաստանի Ներքին Գործոց Նախարարութիւնը կը յայտնէ Ատրպէյճանի հետ սահմանի շրջակայքին երկու ԱԹՍ-ը իյնալու մասին:

-Ալիեւ կը խոստովանի, որ իր ժողովուրդէն կը պահէ զինուորական կորուստներու տուեալները:

-Քանատայի Զեպէք Նահանգի խորհրդարանը կը դատապարտէ Ատրպէյճանի բռնարարքները եւ իր ամբողջական զօրակցութիւնը կը յայտնէ հայ ժողովուրդին:

-Ռազմավարական նշանակութիւն ունե-



ցող Վարանգաթաղ բարձունքը՝ կ'ազատագրուի:

-Թշնամին կը հարուածէ Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին:

-Սուրիոյ էորհրդարանի երեսփոխաններ՝ Ժիրայր Ռէսսեան, Նորա Արիսեան, Լուսի Իսկէնեան եւ Նեայիլ Թաամէ Արցախի ու Հայաստանի ժողովուրդին զօրակցութեան խօսքեր կ'արտասանեն խորհրդարանի նիստին ընթացքին:

-ՀՀ Զայաստանի Գերագոյն Մարմինը խոր ցաւով կը գուծէ դաշնակցական ընկերներ, ՀՀ Կամաւորական 2-րդ վաշտի հրամանատար Միտր Յարութիւնեանի, Նոյն վաշտի ազատամարտիկներ Գեորգ Հաճեանի եւ Զրիստափոր Արթինի մահը:



-Ռուսիոյ Նախագահը Մոսկուա կը հրաւիրէ Հայաստանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարները:

-Պաքերու երկրի խորհրդարանը՝ Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքին սատարող հռչակագիր կ'ընդունի:

-Ռուսիոյ ընդհանուր դատախազը կոչ կ'ուղղէ կանխարգիլելու վարձկաններու եւ ահաբեկիչներու ներթափանցումը Լեռնային Ղարաբաղի տագնապի գօտի:

-Ատրպէյճան տուն կը կանչէ Յունաստանի մէջ իր դեսպանը:

### 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-ՀՀ ԱԳՆ-ն Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցւոյ հրթիռակոծութեան մասին դատապարտագիր կը հրատարակէ:

-Հայ Դատի գրասենեակներու եւ յանձնախումբերու կողմէն պարբերաբար կը հրապարակուին Զանաւայի, Եւրոպայի, Աւստրալիոյ, Միջին Արեւելքի եւ այլ շրջաններու

մէջ կատարուած աշխատանքներուն մասին ամփոփագիրներ:



-ՀՀ Լիբանանի Հայ Դատի Մարմինը միջազգային ընտանիքին կոչ կ'ուղղէ ճանջնալու Արցախի անկախութիւնը:

-Հօր Լիբանան Համախմբումը կը դատապարտէ Արցախի պատերազմը:

-Ատրպէյճան հարուածային ԱԹՍ կը կիրառէ Հայաստանի Սիւնիքի մարզի բնակավայրերուն ուղղութեամբ:

-Ատրպէյճանի Նախագահ Իլհամ Ալիեւ պատկերասփռուած ուղերձի մը ընթացքին կը յայտարարէ, թէ Երեւանին «վերջին առիթ» մը կու տայ վերադառնալու բանակցութիւններու սեղան եւ իր ուժերը հեռացնելու Լեռնային Ղարաբաղէն:

-Էլիզէի Պալատէն ԱՖՓ-ին հասած տեղեկութիւններուն համաձայն, Լեռնային Ղարաբաղի մէջ 9 Հոկտեմբերի գիշերը Կամ 10 Նոյեմբերի առաւօտեան զինադադար հաստատուելու հաւանականութիւնը առկայ կը դառնայ:

-Մաքրոն Եւ Ալիեւ կը քննարկեն Լեռնային Ղարաբաղի հարցը:

-Ալիեւ կը խոստովանի Ատրպէյճանի մէջ թրջական «ԷՖ-16»երու գոյութիւնը:

-Մոսկուայի մէջ բանակցութիւններ տեղի կ'ունենան՝ մարդասիրական զինադադար հաստատելու հարցով. թշնամին կը շարունակէ թիրախաւորել Արցախի մայրաքաղաքը:

-Ֆրանսայի Ալֆորվիլ քաղաքը կը ճանջնայ Արցախի անկախութիւնը:

-Կազմակերպութեամբ ՀՀ Լիբանանի Երիտասարդական Միութեան, տեղի կ'ունենայ բողոքի ցոյց՝ Լիբանանի մէջ Ատրպէյճանի դեսպանատան դիմաց:

# Գանձասար

## 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-10 Հոկտեմբեր 2020-ին, ժամը 12:00-էն սկսեալ Արցախի մէջ զինադադար կը յայտարարուի:

-Կիպրոսի խորհրդարանը Ատրպէյճանի ռազմատենէք քաղաքականութիւնը դատապարտող բանաձեւ կը քուէարկէ:

-Ալիէ կը յայտարարէ Երեւանի հետ բանակցելու Պաքոյի պատրաստակամութիւնը:

-Մինսքի խմբակի համանախագահները կողմերուն հետ կրակոցի դադրեցման յստակ շրջագիծերով համաձայնութիւն գոյացնելու շուրջ կ'աշխատին:

-Ֆրանսան կ'որոշունէ Ղարաբաղի մէջ մարդասիրական զինադադար յայտարարելու որոշումը:

-Գերմանիա կ'որոշունէ Մոսկուայի մէջ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ գոյացած մարդասիրական զինադադարի համաձայնութիւնը:

-Սփիւռքի զանազան շրջաններու մէջ Հայ Դատի գրասենեակներուն առաջնորդութեամբ կը կազմակերպուին ցոյցեր եւ բողոքի հաւաքներ ընդդէմ ատրպէյճանաթրքական յար-



ձակումներուն:

## 13 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Թուրքիոյ մէջ կ'արգելափակուին ՀՀ շարք մը պետական կառոյցներու պաշտօնական կայքեր:

-Ստեփանակերտի մէջ կը յայտնաբերուի թրքական եւ իսրայէլական արտադրութեան մօտաւորապէս 673 ռումբ:

-ԵտևՎ-ի մէջ Ֆրանսայի եւ Գերմանիոյ խորհրդարանականները Լեռնային Ղարաբաղի տագնապին միջամտելու առումով Թուրքիոյ կատարածը ահաւոր կը նկատեն:

-Վրաստան կը հերքէ քաղաքային թռիչքներու անուան տակ զինուորական բեռնափոխադրումներու իրականացումը դէպի Հայաստան եւ Ատրպէյճան:

-ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահները կողմերուն կոչ կ'ուղղեն անյապաղ մարդասիրական զինադադար հաստատելու եւ զինադադարի ստուգման ձեւաչափին շուրջ համաձայնութիւն գոյացնելու:

## 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Աւստրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ



Եամբ կ'որոշեգրէ Լեռնային Ղարաբաղի հարցին նկատմամբ միջնորդութիւնը:

-Սպանիոյ քոնկրեսի 21 երեսփոխան եւ 15 ծերակուտական միջազգային ընտանիքին կոչ կ'ուղղեն ճանչնալու Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը:

-Պելճիքայի ֆլամանական խորհրդարանը կ'որոշեգրէ Արցախի դէմ պատերազմական գործողութիւնները դատապարտող բանաձեւ մը:

-Միշիկընի Օրէնսդիր Մարմինը Ատրպէյճանը եւ Թուրքիան դատապարտող բանաձեւ կ'ընդունի:

-Թուրքիոյ խորհրդարանէն ներս «Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ բախումներու ընթացքին արձանագրուած մարդու իրաւունքներու խախտումները» քննելու նպատակով եւթայանձնաժողով կը հիմնուի:

## 16 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-ՀՀ Բիւրոյի անդամները կը հանդիպին ՀՀ-ի Ռուսիոյ դեսպանին հետ:

-Իտալական Միլանը կը ճանչնայ Արցախի անկախութիւնը:

-Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան



ժիրայր Ռեխեան խորհրդարանի հերթական նիստին խօսք առնելով Արցախի դեմ



Ատրպեյճանի եւ Թուրքիոյ մղած պատերազմը կը դատապարտէ:

- Շոցի երկիրներուն մէջ թրքական արտադրութիւններու պոլլոթը կը սաստկանայ:
- Բրիտանիան կը դատապարտէ քաղաքային բնակավայրերու թիրախաւորումը:
- Աւստրիոյ խորհրդարանը միաձայնութեամբ կը դատապարտէ Արցախի մէջ թրքական միջամտութիւնն ու Ատրպեյճանին զինամթերքի հայթայթումը:

### 17 ՅՈՎՏԵՄԲԵՐ 2020

- Հայաստանն ու Ատրպեյճանը կ'որոշեն 18 Յոկտեմբերէն սկսեալ մարդասիրական զինադադար հաստատել:
- Ատրպեյճան անգամ մը եւս չի յարգեր 18 Յոկտեմբերին նախատեսուած հրադադարը եւ կը շարունակէ իր յարձակումները:
- Լիւքսեմպուրկի խորհրդարանը կ'ընդունի Ատրպեյճանի սանձազերծած ռազմական գործողութիւնները դատապարտող բանաձեւ:
- Սպանիոյ քոնկրետի 21 պատգամաւորներ եւ 15 ծերակուտականներ թուրք-ատրպեյճանական արարքը դատապարտող միատեղ յայտարարութիւն կը տարածեն:

### 18 ՅՈՎՏԵՄԲԵՐ 2020

- Պատերազմէն ընկճուած Ատրպեյճանի քաղաքացիները կը պահանջեն Ալիեւի հրաժարականը:
- Իրանի սահմանին մօտ կը խոցուի մէկ ռազմական ինքնաթիռ եւ երկու ԱԹՍ:
- ՍԵՄ-ի կազմակերպութեամբ տեղի կ'ունենայ Արցախեան պատերազմին նուիրուած զօրակցական երգահանդէս մը, Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի շրջափակէն մէջ:

րուած զօրակցական երգահանդէս մը, Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի շրջափակէն մէջ:

### 19 ՅՈՎՏԵՄԲԵՐ 2020

- Ատրպեյճան անգամ մը եւս կը խախտէ 18 Յոկտեմբերին նախատեսուած հրադադարը եւ կը շարունակէ իր յարձակումները:
- Ֆրանսական Լիմոն քաղաքը կը ճանչնայ Արցախի անկախութիւնը:
- Հայ Դատի Յանձնախումբը ԱՄՆ-ին կոչ կ'ուղղէ դադրեցնելու ռազմական սարքաւորումներու վաճառքը Թուրքիոյ:
- Աւստրալիոյ հայ համայնքը թուրք-ատրպեյճանական արարքին դատապարտումին պահանջով կը փակէ Հարբոր կամուրջը:
- ԱՅ ԱԺ ՀՅԴ խմբակցութիւնը հանդիպում կ'ունենայ Արարատ Միրզոյեանի հետ:
- Հագարաւոր հայեր փարիզի մէջ բողոքի ցոյցով կը պահանջեն ճանչնալ Արցախի անկախութիւնը:
- ՀՅԴ Արցախի ԿԿ-ի անդամները կը հանդիպին Արայիկ Յարութիւնեանի հետ:

### 20 ՅՈՎՏԵՄԲԵՐ 2020

- Ֆրանսայի Վիէն քաղաքի համայնքային խորհուրդը միաձայնութեամբ կ'ընդունի Արցախի ճանաչման բանաձեւը:
- Իրանի տարածքին դարձեալ անօդաչու թռչող սարք կ'իյնայ:

### 21 ՅՈՎՏԵՄԲԵՐ 2020

- Լաւրով առանձին հանդիպումներ կ'ունենայ Մնացականեանի եւ Պայրամովի հետ:
- Նիկոլ Փաշինեան յայտարարեց, որ այս փուլին Ղարաբաղի հարցը: դիւանագիտական լուծում չունի:
- Քոնկրետականներ Միացեալ Նահանգներուն կոչ կ'ուղղեն ճանչնալու Արցախի Հանրապետութիւնը եւ ճնշում բանեցնելու Թուրքիոյ եւ Ատրպեյճանի վրայ:
- ՄԱԿ Հայաստանի եւ Ատրպեյճանի կոչ կ'ուղղէ յարգելու զինադադարին որոշումը, առանց Ատրպեյճանի նախայարձակ ըլլալը հաստատելու:

### 22 ՅՈՎՏԵՄԲԵՐ 2020

- ԱՄՆ-ի Ֆաուլըր քաղաքը կը ճանչնայ Արցախի անկախութիւնը:
- ԱՄՆ Ներկայացուցիչներու Պալատը կը ներկայացնէ Արցախի անկախութեան մա-

# Գանձասար

սին բանաձեւ:

-Աւստրալիոյ Ռայտ քաղաքը կը դատապարտէ Արցախի վրայ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ յարձակումները:

-Ալիէլ չի բացառեր Մոսկուայի մէջ Փաշինեանի հետ հանդիպումին կարելիութիւնը:

-Օլթաթիոյի խորհրդարանը միաձայնութեամբ կը դատապարտէ թուրք-ատրպէյճանական ռազմական յարձակումները:

## 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Ուաշինկթընի մէջ տեղի կ'ունենայ ԵԱՀԿ ՄԻ համանախագահներուն հանդիպումը ԼՂ հակամարտութեան հարցով:

-Նոր հարաւային Ուելս նահանգի Օրէնդսդիր ժողովը կը ճանչնայ Արցախի անկախութիւնը:

-ԱՄՆ Ֆորտ Լի քաղաքը կը ճանչնայ Արցախի անկախութիւնը:

-Թուրքիոյ մէջ հայերու նկատմամբ ատելութեան խօսքեր եւ սպառնալիքներ կ'արտասանուին, նաեւ՝ Կարօ Փայլանի հասցէին:

-Միացեալ Նահանգներու մէջ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գծով դիւսազիտական աշխուժութիւն տեղի կ'ունենայ:

## 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած իրավիճակին շուրջ ԱՄՆ մայրաքաղաք Ուաշինկթընի Atlantic Council-ի տեղի կ'ունենան հանդիպումներ, որոնց կը մասնակցի ՀՀ արտաքին գործոց նախարար Չօհրապ Մնացականեան:

## 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Արցախի զօրակցութեան նուիրուած ժողովրդային հաւաք մը տեղի կ'ունենայ, Հա-



լէպի Ազիզիէ շրջանի հրապարակին մէջ,

մասնակցութեամբ հազարաւոր հայորդիներու, պետական եւ կուսակցական մարմիններու, կրօնապետներու եւ Սուրիոյ խորհրդարանի անդամներու:

## 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-26 Հոկտեմբերի ժամը 8:00-ին, մարդասիրական հրադադարի դրութիւնը գործադրութեան կը դրուի:

-Ատրպէյճան երրորդ մարդասիրական հրադադարը կը խախտէ:

## 27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Քանատա կը շարունակէ արտաքին կողմերուն կոչ ուղղել չմիջամտելու Լեռնային Ղարաբաղի տագնապին:

-ԱՄՆ քննկրեսականներ Արցախին կը զօրակցին:

## 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-ՄԱԿ-ը խստօրէն կը դատապարտէ տագնապի ընթացքին բնակավայրերուն վրայ կատարուած յարձակումները:

-Միացեալ Նահանգներու Ծերակոյտի անդամ Ռապըթ Մենենտես Թուրքիոյ եւ Ատրպէյճանի գէնքի վաճառքը արգիլելու մասին բանաձեւեր կը ներկայացնէ Ծերակոյտին:

-Խախտելով մարդասիրական բոլոր կանոնները, Ատրպէյճան կը ռմբակոծէ Ստեփանակերտի «Մօր Ու Մանկան Առողջապահական Կեդրոն»ը:



-ՀՀԴ Կամաւորներու Նոր խումբեր կը մեկնին առաջնագիծ:

## 29 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

-Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը



կոչ կ'ուղղե Պայտընին ճանջնալու Արցախի  
Յանրապետութիւնը:

-Իտալիոյ Չերքիարա Տի Բալապրիա քա-  
ղաքը կը ճանջնայ Արցախի անկախութիւնը:

### 30 Հոկտեմբեր 2020

-Իտալիոյ Պալերմո քաղաքը միաձայնութեամբ կը ճանջնայ Արցախի Յանրապետութեան անկախութիւնը:

-ՄԱԿ-ը խստօրէն կը դատապարտէ ԼՂ հակամարտութեան ընթացքին բնակավայրերու վրայ յարձակումները:

### 31 Հոկտեմբեր 2020

-Քանադայի խորհրդարանի արտաքին հարցերու յանձնաժողովը թուրքիոյ զինուորական սարքերու վաճառքի վերահսկողութեան առնչութեամբ բանաձեւ կը վաւերացնէ:

-Ժընեւի մէջ կ'աւարտի Հայաստանի արտաքին գործոց նախարար Չօհրապ Մաքականեանի եւ Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար Ճէյիուն Պայրամովի հանդիպումը:

### 2 Նոյեմբեր 2020

-ՀՅԴ ԳՄ-ը կը գումբէ կամաւորականներ Կիմ Խաչատրեանի ու Մայիս Նազարեանի մահը:

-Արցախի Մարտունի քաղաքը Ատրպէյճանի կողմէն կ'ենթարկուի ռմբակոծութեան:

-Արցախի ԱԳՆ-ը խստիւ կը դատապարտէ Ատրպէյճանի կողմէն ֆոսֆորային զինատեսակներու կիրառումը:

-Օհայօ Նահանգի օրէնսդիր ժողովին կը ներկայացուի Արցախի ինքնորոշումը ճանչցող բանաձեւ:

### 3 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2020

-ՀՅԴ Արցախի կեդրոնական կոմիտէն կը գումբէ՝ հայրենիքի պաշտպանութեան համար մարտերուն ընթացքին կուսակցական հաւատարիմ ընկերներ Մաւրիկ Գրիգորեանի եւ Արտակ Իշխանեանի նահատակութիւնը:

-Փալերմոյի քաղաքային խորհուրդը միաձայնութեամբ կը ճանջնայ Արցախի անկախութիւնը:

-Հայ Դատի Յանձնախումբը ՕՊրայընէն կը պահանջէ աւելի հաստատ քայլեր որդեգրել՝ Պաքուի ոճիրները կասեցնելու համար:

### 4 Նոյեմբեր 2020

-Շուշիի ուղղութեամբ կ'իրականացուին ատրպէյճանական խումբի շրջափակման եւ ոչնչացման գործողութիւններ:

-Հայ Դատի Յանձնախումբը ԱՄՆ իշխանութիւններուն կը տրամադրէ թրքական bayraktar-ի համար պահեստամասեր մատակարարող ընկերութիւններուն ցուցակը:

-Իտալիոյ Լոմպարտիա տարածաշրջանը կը ճանջնայ Արցախի անկախութիւնը:

-Սլովաքիոյ խորհրդարանը Լեռնային Ղարաբաղի տագնապին մասին բանաձեւ կ'որդեգրէ:

### 5 ՆՈՅՏԵՄԵՐ 2020

-adidas-ը ատրպէյճանական «քարաբաղ» ֆութպոլային ակումբին հետ կը դադրեցնէ գործակցութիւնը:

-Քանադայի Լաւալ քաղաքը կը ճանջնայ Արցախի անկախութիւնը:

### 6 ՆՈՅՏԵՄԵՐ 2020

-ԱՄՆ-ի Էնկլուուտ-Քլիֆս քաղաքը կը ճանջնայ Արցախի անկախութիւնը:

-Քորսիքայի Ազգային ժողովը Արցախի Յանրապետութեան ճանաչման մասին բանաձեւ կ'ընդունի:

### 7 Նոյեմբեր 2020

-Հայկական զինեալ ուժերը բուռն եւ յամառ դիմադրական պայքար կը մղեն Շուշիի եւ անոր մերձակայքին մէջ:

### 9 ՆՈՅՏԵՄԵՐ 2020

-ՀՅԴ ԳՄ-ը կը գումբէ բժիշկ-ազատամարտիկ Նորայր Շահպազեանի մահը:

-Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան Ատրպէյճանի հետ կը ստորագրէ յանձնուողական համաձայնագիրը:

### 10 Նոյեմբեր 2020

-Ատրպէյճանի տարածքին կրակի դադրեցման վերահսկողութեան ռուս-թրքական կեդրոն կը ստեղծուի:

-Նախագահ Արմէն Սարգսեան հանդիպում կ'ունենայ ՀՅԴ Բիւրոյի նախագահ Արմէն Ռուստամեանի եւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամ Արծուիկ Մինասեանին հետ:

-Արամ Ա. կաթողիկոս հայ ժողովուրդին

# Գանձասար

կոչ կ'ուղղե հեռու մնալու ներքին միասնականությունը ջլատող արտայայտություններ եւ քայլեր:

-ANCA-ն համաձայնագիրի վերանայման կոչ կ'ուղղե ԱՄՆ-ին

## 11 Նոյեմբեր 2020

-Ռուսիա եւ Թուրքիա Լեռնային Ղարաբաղի մեջ զինադադարի վերահսկումի կեդրոնի ստեղծումին մասին յուշագիր կը ստորագրեն:

-Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտիին կրակի եւ ռազմական գործողություններու դադարեցման վերահսկողության համար կը տեղակայուի Ռուսիոյ Դաշնության խաղաղապահ զորակազմ:

Ռազմական գործողություններու դադարեցման մասին համաձայնություններու պահպանման վերահսկողության համար ռուսական դիտակետերը կը տեղակայուին Լեռնային Ղարաբաղի շփման գիծի երկայնքով եւ Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը միացնող Լաչինի միջանցքի երկայնքով: Խաղաղապահ գործողության հրամանատարությունը կը տեղակայուի Ստեփանակերտ քաղաքի շրջանը:

-Ատրպեյճան կ'իւրացնե Դադիվանքը:

## 12 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

-Արցախի զինադադարի հսկողության ռուս-թրքական կեդրոն կը հիմնուի Ատրպեյճանի մեջ:

## 13 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

-Գերիներու փոխանակման եւ դիակներու որոնման աշխատանքը կը սկսի:

## 14 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

-Ատրպեյճանցիները կը պղծեն Շուշիի Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց մայր տաճարը:

-Ատրպեյճան կ'երկարաձգե յանձնումի համար յատկացուած ժամկետը:

-Մոսկուա ԻՆՏԵՍԵՕ-ն կը յորդորե մասնակցելու Արցախի մեջ մշակութային արժեքներու պահպանումին:

-Ռուսիոյ Պաշտպանության Նախարարությունը Ստեփանակերտի մեջ մարդասիրական հարցերու միջնախարարական կեդրոն կը ձեւաւորե:

-Սուրիոյ Երիտասարդական Միությունը

կը գումե՛ նահատակությունը դաշնակցական ընկերներ՝ Յարութ Բանոյեանի (1976-ի ծնունդ, հայրենիքին մատուցած ծառայություններուն համար Հայաստանի Հանրապետության 2-րդ աստիճանի մետալակիր, Հալեպի հայաշատ թաղերու ինքնապաշտպանության հրամանատար ՀՀ «Մարտական Խաչ» Ա. աստիճանի, ԱՀ «Մարտական Խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր), Յակոբ Ա-



թարճեանի (1991-ի ծնունդ, Հալեպի հայաշատ թաղերու ինքնապաշտպանության մարտիկ, ՀՀ արիության մետալակիր) եւ Մոսիկ Սեքլեմեանի (1992-ի ծնունդ, Հալեպի հայաշատ թաղերու ինքնապաշտպանության մարտիկ, ՀՀ արիության մետալակիր), որոնք հերոսաբար նահատակուեցան 5 Նոյեմբեր 2020-ին, Շուշիի պաշտպանության մարտերուն ընթացքին, Արցախ:

## 15 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

-Լեռնային Ղարաբաղի մեջ կը տեղակայուի ռուս խաղաղապահներու 18 դիտակետ:

## 17 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

-Հոլանտայի խորհրդարանը կ'ընդունի Ատրպեյճանի եւ Թուրքիոյ նախագահներուն նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու բանաձեւերը:

-ԱՄՆ Նեատա նահանգի Զլարք շրջանը ներկայացուցած է Արցախը պաշտօնապես ճանչցող հռչակագիր:

## 18 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

-Ֆրանսայի ծերակոյտը ԼՂՀ-ը ճանչնալու անհրաժեշտության մասին բանաձեւի նախագիծը կ'որոշե քուէարկության ներկայացնել:

-Հայաստանի եւ Արցախի կառավարություններու միատեղ աշխատանքային խումբ կը ստեղծուի:



## 19 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

-Յալէպահայ նահատակներու հոգեհանգստեան արարողութիւն տեղի կ'ունենայ Յալէպի, Զեսապի, Լաթաքիոյ, Գամիշլիի եւ Վիեննայի մէջ:

-Յալէպահայ երեք նահատակներուն յուղարկաւորութիւնը տեղի կ'ունենայ Եռաբլուր Պանթեոնին մէջ կազմակերպութեամբ ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան:

-Աղտամը կը յանձնուի Ատրպէյճանին:

## 20 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

-Չանագան բնագաւառներու մէջ նախարարներու հրաժարականներ եւ նոր նշանակումներ տեղի կ'ունենան:

## 24 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

-Ֆրանսայի ծերակոյտը Լեռնային Ղարաբաղի անկախութիւնը ճանչնալու բանաձեւ կ'ընդունի:

## 25 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

-Զարվաճառը ամբողջութեամբ կը յանձնուի Ատրպէյճանին:

## 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

-Հին Թաղեր եւ Խծաբերդ գիւղերը եւս կը յանձնուին Ատրպէյճանին:

-Ատրպէյճանէն Հայաստան կը տեղափոխուին 44 գերիներ:

-Կը վտանգուին Հայաստանի սահմանները, յատկապէս Սիւնիքի մարզը, որ ենթակայ կը դառնայ թշնամիին թափանցման փորձերուն:

## 17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

-Կապակի եւ 13 գիւղերու բարձունքները կը յանձնուին Ատրպէյճանին:

## 19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

-19 Դեկտեմբերին Հայաստանի մէջ եռօրեայ սուգ կը յայտարարուի:

## 20 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020

-Յալէպահայ նահատակներու քառասորեայ հոգեհանգստեան արարողութիւն տեղի կ'ունենայ:

\*\*\*

-9 Նոյեմբեր 2020-ին ՀՀ վարչապետ Նի-

կոլ Փաշինեանին կնքած յանձնուողական պայմանագիրէն վերջ, 10 Նոյեմբերէն սկսեալ Հայաստանի մէջ սկիզբ կ'առնեն վարչապետին հրաժարականը պահանջող բազմապիսի ցոյցեր, հացադուլներ: Այս իրավիճակէն մեկնած կը կազմուի Հայրենիքի Փըրկութեան Շարժումը, որ արդիւնք էր 16 կուսակցութիւններու համաձայնութեան: Ան ժամանակաւոր կառավարութեան վարչապետի թեկնածու կ'առաջադրէ Վազգէն Մանուկեան: ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. կաթողիկոսը, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա. կաթողիկոսը, Հայ Աւանդական



երեք կուսակցութիւնները, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնն ու Սփիւռքի անելի քան 200 կազմակերպութիւններ, կեդրոններ եւ մտաւորականներ կը պահանջեն վարչապետին հրաժարականը:

Պաշտպանութեան Նախարարութեան կողմէն 9 Նոյեմբերին հրապարակուած տուեալներուն համաձայն, 27 Սեպտեմբերին Արցախի հանդէպ սանձազերծուած պատերազմին ատրպէյճանական կողմը կորսնցուցած է ընդհանուր առումով 264 ԱԹՍ, 16 ուղղաթիռ, 25 ինքնաթիռ, 784 զրահամթերք, 6 SOU եւ ունեցած է մարդուժի 7630 կորուստ:

Արցախի Պաշտպանութեան Բանակը 25 Դեկտեմբերի տուեալներուն համաձայն յայտարարեց, որ հայ նահատակներուն թիւը հասած է 5108-ի: 20 Դեկտեմբերի դրութեամբ դատաբժշկական փորձաքննութեան ենթարկուած է 3248 մարմին:



## ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՆՔՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԹԸ՝ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՅՐՈՒՂԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ս. Մահսերեճեան

*«Երևելք թէ այս նոր տարին  
Վերջ տար հայի ցաւերին...»  
«Երևելք թէ այս նոր տարին  
Հայ ազգ ի մի գումարուեր...»*

**Գամառ Բարթիպա**

### ՔԱՆԻ ՄԸ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԻՒՆ

Նոր տարին դիմաւորող աշխարհն ու բոլոր ժողովուրդները հասարակաց մէկ մաղթանք ունին անկասկած. *«Թող 2020 տարին երթայ անվերադարձ, իրեն հետ տանի իր բոլոր պատուհասները, աղետները եւ մահ ու ւաւեր սփռող արհաւիրքները...»*:

Մարդկութիւնը սպառող տարուան ընթացքին դիմագրաւեց հասարակաց պատուհասներ, որոնք հարուածեցին քիչ թէ շատ բոլորը. ուրիշներ ունէին տեղական բնոյթ, նոր իմաստ տուին «կրակը ինկած տեղը կ'այրէ» խօսքին:

Բնականաբար Պսակածել ժահրը եղաւ ողջ մարդկութիւնը պատուհասող համայնակուլ աղետը, միաձայն անեծքներ բարձրացընելով բոլոր ցամաքամասերուն վրայ. անոր դէմ պատուաստին գիւտը, տարեվերջի օրերուն, յոյսի ալիք մը տարածեց, սակայն անկէ լիովին ձերբազատելու համար դեռ բաւական պէտք է սպասենք:

Համատարած այս պատուհասէն անդին, տարբեր երկիրներ ու ժողովուրդներ ապրեցան առանձին դժբախտութիւններ. Լիբանան ահաւոր ցնցումներ ապրեցաւ մէկ կողմէ՝ նաւահանգիստի պայթումին, միւս կողմէ՝ տնտեսական-դրամատնային տագնապներուն հետեւանքով, երկար սպասեց, որ քաղաքական կողմեր համախոհութիւն գոյացնեն եւ գայն մարմաւորեն համաձայնական կառավարութեան մը կազմութեամբ: Միացեալ Նահանգներ չորրորդ տարին բոլորեց

Տանըլտ Թրամի կոչուած բազմերես աղետին հովանիին տակ, հիմա, կը յուսայ, որ ընտըրեալ նախագահը՝ Ըօ Պայտըն, գոնէ մասամբ յաջողի վերականգնել քիչ մը ամէն կալուածի մէջ քանդուածը (եթէ անշուշտ վարագոյրին ետին գործող «չաստուածները» կամենան): Եւրոպական երկիրներ շարունակեցին կքիլ գաղթականներու ալիքներուն տագնապին տակ, որուն դիմաց նոր թափ ստացան տարօրինակ մրցակիցներ՝ ոճրային ահաբեկչական գործողութիւններ: Բազմաթիւ



քաղաքներու մէջ անմարդկային ոճիրներ տեղի ունեցան օր-ցերեկով, ահազանգերը բազմաձայն երգչախումբ կազմեցին, բացայայտ դարձաւ, թէ թրքական գործօնը ինչպիսի՛ բաժին ունի այդ ոճիրներուն մէջ, Գերմանիա, Ֆրանսա եւ այլք սկսած են կտրուկ քայլերու դիմել՝ երտողանական «Գորշ գայլեր»ը չէզոքացնելու եւ ժանիքները արմատախիլ ընելու համար: Ոճրային ահաբեկչական արարքները տագնապեցուցին նաեւ ասիական երկիրներ, հասնելով մինչեւ Ծայրագոյն Արեւելք: Մարդկութիւնը այլապէս կրեց բնական աղետներու ծանր հետեւանքները, քիչ մը աւելի իրագեկ դարձաւ, որ կենսոլորտի «ողջակիզման» ըն-



թացքը պետք է վերջ գտնե, իսկ խտրակա-  
նութիւն կոչուած հին-նոր պատուհասը եւս  
ազնիւ մարտահրաւերներու դիմաց դրաւ աշ-  
խարհը:

Աշխարհի այս կամ այն գօտին պատու-  
հասող բնական ու մարդակերտ աղէտներու  
ցանկը աւելի՛ երկար է, քան 2020 տարուան  
ամիսներուն, շաբաթներուն ու օրերուն թիւը:  
Յելքոտ թափով գիրար հալածող պատու-  
հասները պատճառ դարձան, որ մարդիկ, եր-  
կիրներ ու ժողովուրդներ օրը օրին շնչասպա-  
ռութեամբ հետեւին իրադարձութիւններուն,  
մոռնալով, որ շատ մը պատուհասներ նո-  
րաստեղծ չեն, այլ շարունակութիւնն ու նո-  
րագոյն զարգացումներն են անցեալ տարի-  
ներուն, տասնամեակներուն՝ մարդկութիւնը  
«գերեզարած» ահաւոր իրադարձութիւննե-  
րուն: Փաստօրէն, այսօր ո՛վ կը յիշէ, թէ ճիշդ  
10 տարի առաջ, Թունուզէն ծայր տուաւ  
«Արաբական գարուն» կոչուած սեւ ու կար-  
միր «սառնամանիքը», մահ ու աւեր տարա-  
ծեց մօտակայ եւ հեռաւոր երկիրներու մէջ,  
կարգ մը հրդեհներ մարեցան, ուրիշներ  
կը շարունակէն փոշիացնել աշխատող զան-  
գուածներու կարողականութիւններն ու մար-  
դոց վաստակը, որպէսզի զէնքի եւ այլ ճար-  
տարարուեստներ... «գարուններ» ապրին:  
Այս եղելոյթին մէջ եւս, հիմա շա՛տ աւելի  
յստակ է, որ Թուրքիա ինչպիսի՛ վատ դերա-  
կատարութիւն ունեցած է եւ կը շարունակէ  
ունենալ, արաբական եւ այլ երկիրներու աչ-  
քերը կը սկսին աւելի յստակ տեսնել ոճրա-  
ծին եւ ոճրագործ պետութեան «նոր-կայսե-  
րական նուաճումներ»ը:

2020 տարին այլապէս աղետալի վիճակ  
ստեղծեց պաղեստինցիներուն համար (չենք  
մոռնար Եմէնը եւ ուրիշներ...), որովհետեւ  
Թրամփի եւ իր խմբակին կնքահայրութե-  
ամբ, արաբական կարգ մը երկիրներ  
սկսան սիրաբանիլ Իսրայէլի հետ, մոռնալով  
կամ հարկադրաբար անտեսելով, որ իրենց  
երկարատեւ տագնապներուն կերտիչներէն  
մէկն ալ՝ Նոյնիսքն Իսրայէլն է, այն երկիրը՝  
որուն դէմ արաբական աշխարհը անցեալ  
դարու կեսերէն սկսեալ բարձրաճակատ եւ  
միակամ կը կանգներ ազգային դատերու  
խրամատին մէջ, յետոյ, այդ ճակատին քայլ  
առ քայլ խորտակումը շատ բան չձգեց արաբ  
ազգայնականութենէն. Փաստօրէն, նիւթը,  
առեւտուրի եւ տնտեսական վերելքի սին

իրապոյրները նոր տեսակի նահանջներու եւ  
անկումներու հորիզոններ բացին արաբա-  
կան թէ այլ աշխարհներուն դիմաց, կը փոր-  
ձեն կլանել նաեւ մեր հայրենիքն ու հայու-  
թիւնը...: «Ազատական» մտածողութիւնը  
կը փորձէ մարդկութիւնը համոզել, թէ ազգային  
շահերը, նկատումները, մինչեւ իսկ հայրենի  
հողն ու ինքնութիւնը ժամանակավրէպ ար-  
ժեքներ են, հիմա ամէն բան կը սկսի, պետք է  
սկսի նիւթական շահով, նիւթը հետապնդե-  
լով եւ... նիւթով տիրապետութիւն տարածե-  
լով: «Որտեղ հաց՝ այնտեղ կաց» խօսքը նոր  
իմաստ եւ մեկնաբանութիւն կը գտնե, տխրե-  
ծութեան կը տանի աշխարհը:

## ՄԵՐ «ՓՈՔՐ ԱԾՈՒՆ ՊԱՏՈՒՅԱՍՈՂ ԱՂԵՏԸ

Մենք՝ Հայ ժողովուրդի զաւակներս ալ,  
ուղղակի կամ անուղղակի կերպով կրեցինք  
յիշեալ (եւ այլ) բազում պատուհասներու  
ծանր հետեւանքները: Սակայն կասկած  
չկայ, որ մեզ ցաւցնող՝ իւրայատուկ պատ-  
ճառներ ունինք մաղթելու, որ 2020 տարին  
անհետ կորսուի պատմութեան աղբանոցին  
մէջ, որովհետեւ անիկա մեզի բերաւ ՊԱՏՄԱ-  
ԿԱՆ ՀԱՉՈՒԱՂԵՊ ԱՂԵՏ մը. 27 Սեպտեմբե-  
րին, Արցախի դէմ շղթայազերծուած թուրք-  
ազերիական-ահաբեկչական պատերազմը  
մեր նորագոյն պատմութեան մէջ արձանագ-  
րեց ամէնէն սեւ էջերը, ամէնէն մութ էջերը՝  
Յեղասպանութենէն եւ Արեւմտեան Հայաս-  
տանի կորուստէն ասդին (Մուսա Լեւրան 40  
օրերու հերոսամարտէն 105 տարի ետք՝ հա-  
կաբեւեռ 44 օրեր), աղէտ, որուն տարողու-  
թիւնը կարծեք թէ տակաւին կը մնայ շատե-  
րու ըմբռնողութեան սահմաններէն դուրս,  
աղէտ՝ որուն «յաւելուածները» կ'արձա-  
նագրուին պատերազմին կասեցումէն աւե-  
լի քան 40 օր ետք, աղէտ, որ մեր հայրենիքն  
ու ժողովուրդը դրած է այնպիսի՛ ծանր բեռ-  
ներու եւ ահաւոր մարտահրաւերներու ճնշու-  
մին տակ, որոնք բառերով անբացատրելի  
կը մնան: 10 Նոյեմբերին հրապարակ եկած եւ  
ամբողջ հայութիւնը ափ ի բերան թողած, յու-  
սախաբութեան մատնած համաձայնագիրը  
ո՛չ միայն դիմակազերծեց իշխանաւորներու  
ստապատիր ու կեղծ վարմունքը, այլ ահա  
օր ըստ օրէ յստակ կը դառնայ, թէ մեր կո-  
րուստներուն եւ վնասներուն ցանկը չէ սահ-  
մանափակուած համաձայնագիրին պայ-  
մաններով, այլ Արցախէն մնացած տարածք-

# Գանձասար

ներ, նոյնիսկն Զայաստանէն տարածքներ կը գտնուին կորուստի մատնուելու ընթացքի մէջ: Թիկունքը Թուրքիոյ տուած Ատրպէյճանը անսասնձ կամայականութեամբ, կամակորութեամբ կը վերադասաւորէ սահմանները, իսկ հայկական կողմը կը մնայ գլուխն ու ձեռքերը վար կախած հանդիսական, կը շարունակուին ուրիշներու մէջ յանցաւորներ փընտռելու վրան-բաց ճիգերը: Իշխանութիւնը ունի կոտորած ձեռքեր, սակայն կ'ուշանայ առողջ ձեռքեր ապահովելու իր կողքին: Արտերկիրը եւս մատնուած է շմամբ կացութեան, կ'ուշանայ կենսաւորելու իր կարողականութիւնները, որոնք թէ՛ պատերազմի օրերուն եւ թէ՛ անկէ առաջ, գործնական նեցուկ կը տրամադրէին հայրենիքին՝ Զայաստան-Արցախ ամբողջութեան: Ողբերգութեան մէկ այլ երեսն ալ հոն է, որ շատեր կը թուին կուլ տուած ըլլալ ազգային աղետը, զգայագիր կրաւորականութեամբ տրամադիր են «եօլա գնալու» ամօթալի պարտութեան հետեւանքներուն հետ, «ի՞նչ կրնանք ընել», կամ՝ «աղետը դեռ մեր դուռը չէ բախած» (ան)տրամաբանութեամբ:

Եթէ փորձենք քանի մը նախադասութեան մէջ ամփոփել Զայաստանի ու հայութեան վիճակը, կրնանք արձանագրել հետեւեալ անառարկելի իրականութիւնները:

Կորսնցուցած ենք Արցախի մեծագոյն տարածքը (կորուստին մեծ բաժինը՝ զինեալ ուժով չգրաւուած հողեր), սկսած ենք կորուստներ ունենալ նաեւ Զայաստանէն (հիւսիս եւ հարաւ), մեր զինուժը մատնուած է (ամենամեղմ բառերով) ոչ-նախանձելի անգործութեան, կորսնցուցած է մարդուժ, զինական կազմածներ, պաշտպանական դիրքեր, զինաթափ կ'ընէ մեզի պատկանող հողամասեր, իրողապէս մատնուած է բարոյալքումի՝ որ արձանագրուած մարդկային կորուստներուն չափ ողբերգական է: Ունինք շուրջ 100 հազար գաղթական, որոնք Արցախի եւ Զայաստանի մէջ անորոշ ապագայի դէմ յանդիման են, ամիսներ շարունակ (եթէ ոչ տարիներ) պիտի չկարենան վերականգնիլ (ամօթ է Գիւմրիի երկրաշարժի տնակորոյսներուն վիճակին հետ բաղդատական մը ընելը...): Արձանագրուած քանդումներն ու վնասները (պարտէզներու, մշակուած հողերու կորուստ՝ սկսելու համար) պետական մեքենան կը դնեն հսկայական ճնշումի եւ ան-

յաղթահարելի թուացող մարտահրաւերներու դիմաց: Զաղաքական-դիւանագիտական կալուածին մէջ եւս ունինք մեծ կորուստ եւ նահանջ: Զետզիտէ աւելի պարզ կը դառնայ, որ մեր արտաքին յարաբերութեանց վիճակը եթէ աւելի բարերար դասաւորում ստացած ըլլար, այս տարողութեամբ կորուստներ պիտի չունենայինք:

Յիշեալ կալուածներուն մասին տեղեկութիւններու կուտակումը կը լեռնանայ օր ըստ օրէ, անհաշիւ մեկնաբանութիւններ, մեղադրանքներ եւ տեսութիւններ մրցումի ելած են իրարու հետ: (Մինչեւ իսկ նահատակներուն յարգանքի տուրքերը անասելի մրցակցութեան առիթ դարձան): Իշխանութիւնը կը փորձէ պաշտպանել իր դիրքորոշումները, չքմեղանքներ որոնել, իսկ ընդդիմադիրները լիաթք կը հակաճամեն, փաստացի տեղեկութիւններով եւ տուեալներով կը ցուցադրեն, թէ իշխանութիւնը ինչպիսի՛ սխալներ գործած է, անտեսած է չոր իրականութիւններ եւ աջակցութեան ձեռքեր, փորձառու զինուորականներու եւ հմուտ դիւանագետներու յորդորները: Մատնուած ենք վիճակին այն կռիւմարտիկին, որ քաջաբար կռուելէ ետք, անակնկալ հարուած մը ստացած է գլուխէն եւ տապալած է գետին, իրաւարարը 10 համրելէ ետք, բարձրացուցած է հակառակորդին բազուկը, իսկ գետին տապալած մարզիկը, ոտքի կանգնելու փորձի պահուն, զինովի պէս կը տատանի եւ չի գիտեր թէ ի՞նչ կ'անցնի-կը դառնայ իր շուրջը, օգնութեան փութացողներն ալ հակասական եւ ապաշնորհ դարմաններ կը փորձեն՝ աւելի ծանրացնելով «զինովութիւնը»: (Սա կ'արձանագրենք իբրեւ օրինակ, ընդունելով, որ Արցախի մէջ եղածը մարզական բնոյթով մեկնամարտի չէր նմաներ, գալիքին մէջ ալ մարզական ոգի պէտք չէ փնտռենք):

Որքան ալ ճիշդ ու տեղին ըլլան մեկնաբանութիւնները, խոցելի կէտերուն թումը, իրականութենէն բան չի փոխուիր: Կարճ՝ մենք այս հանգրուանին պարտուած ենք (զոնէ այս ճշմարտութիւնը կ'ընդունին բոլորը), պէտք ունինք վերականգնումի, անցեալը յենակետ ընելով՝ նայելու դէպի անմիջական եւ հեռաւոր ապագային, յաջորդ փուլերուն, դէպի վերականգնում եւ նոր նուաճումներ. այսօր, «նոր նուաճումներ» բառը կրնայ երագային ու անիրականանալի թուիլ, մինչդեռ



այդպես չէ՝ եթե սթափումը չուշացնենք, այլ մեր ուրբերը դնենք գետնի վրայ, որքան ալ որ լարծուն եւ անկայուն դարձած ըլլայ մեր ենթահողը: Հայութեան ու հայրենիքին շահերուն գերադասումը եւ անոր հիմամբ՝ ամբողջական հեռապատկերի մը մշակումը հրամայական է եւ մեկնակետ, հիմ պիտի ծառայէ նոր փուլի բազմաճիւղ աշխատանքներուն, ձեռքերը միացնող աշխատանքին:

## ՆԵՐՔԻՆ ԵՒ ԱՐԳԱՔԻՆ ԴԱՇՏԵՐ

Արցախի մէջ սկսած հողակորուստը, որ կը սպառնայ նոյնիսկ Յայաստանին, ունի արտաքին եւ ներքին պատճառներ: Անոնց ցանկագրումը կը կատարուի ամէն օր, սակայն դարման չի բերեր կացութեան: Աւելին, ներքին բեմին վրայ ստեղծուած հակադրութիւնները, արդար քննարկումներն ու յանցաւորներուն ուղղուած քննադատութիւնները, բացայայտումները, քիչեր կ'անդրադառնան որ՝ ինչպիսի վնասներ կը հասցնեն մեր դատին: «Կլասթոսթ»-ին հաւատարիմ մնալու նախանձախնդրութեամբ, կը հրապարակուին որոշ գաղտնիքներ, կը ցուցադրուին ադտոտ լաթեր, որոնց քուլիսներու մէջ դարմանումը շատ աւելի օգտակար եւ արդիւնաբեր կրնայ ըլլալ. եւ թող ո՛չ ոք ըսէ, թէ մեր հակառակորդները արդէն ծանօթ են ամէն ծալքի, այլ՝ հարց տայ, թէ աշխարհը մեզ ի՞նչ աչքով եւ դատողութեամբ կը դիտէ: Ի վերջոյ, դուրսէն դիտողը չունի հինի-նորի, սելի-սպիտակի հայեցակետ, այլ մեզ կը դիտէ իբրեւ Յայաստան-Արցախ եւ հայ ժողովուրդ:

Նոյնքան կարեւոր է որ իրարմէ գատորոշենք ներքին ու շրջանային-արտաքին գործօնները, թէեւ ո՛չ ոք կ'անգիտանայ, թէ ինչպիսի՛ սերտ աղերս կայ անոնց միջեւ: Իսկ եթէ որոշենք, թէ ճակատէն պիտի դիմագրաւենք աղետը եւ պիտի վճռենք յաղթահարել գայն, ամէն բանէ առաջ, պարտաւոր ենք յըստակացնել մեր ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՔԱԳԻԾԸ՝ քաղաքականութիւն-մարտավարութիւն-նազմավարութիւն, եւ այդ «աստղ»-ին շուրջ թաւալող մեծ ու փոքր «մոլորակներ»ը: Առանց հայակերպի, Յայաստան-Արցախակերպի ուղեգիծի բիրտղացման, մեր բոլոր ճիգերն ու առաջադրանքները, որքան ալ ըլլան անկեղծ ու հայրենասիրական, պիտի չարդիւնաւորուին ցանկալի չափով:

Աւելին, ներքին ու արտաքին բեմերուն

գատորոշումը եւ իւրաքանչիւրին վրայ մեր դիմաց բարձրացող մարտահրաւերները ըստ կարելոյն՝ իրարմէ անկախաբար հետապնդելն ու փոխազդեցութիւններէ առաւելագոյն չափով հեռու պահելը պիտի նպաստէ մեր գործին: Պատերազմին յաջորդած օրերուն ու շաբաթներուն, ահաւասիկ մօտաւորապէս երկու ամիսէ ի վեր, օր աւուր ծագող «մանր» բայց երբեք արհամարիելի տագնապները, դաժան իրականութիւններու բացայայտումը բնականաբար իշխանութիւն եւ ընդդիմադիրներ ընկղմած են անոնց քայլ առ քայլ հետեւելու, զանոնք արծարծելու տրդմուտ ջրափոսին մէջ, կը կլանէ գրեթէ մեր ամբողջ ներուժը, անորոշ պահելով ընդհանուր պատկերը, գոնէ անոր մեծ մասը, ինչ որ սակայն տեսանելի պիտի ըլլայ՝ վեր բարձրանալով առօրեայ (կրկնենք՝ ո՛չ արհամարիելի) տաղտուկներու մակարդակէն:

## ՆԵՐՔԻՆ ԲԵՄ

Ներքին բեմին վրայ, կը կանգնինք մեր գլխուն տեղացած՝ բազում մարտահրաւերներու դիմաց, որոնցմէ իւրաքանչիւրը նոյնքան ԱՌԱՋՆԱՅՐԹ է, որքան մնացեալներէն որեւէ մէկը: Հետեւաբար, որեւէ իշխանութեան համար, կենսական նշանակութիւն ունի բազում ախտերու դարմանումը, ո՛վ որ ալ գտնուի իշխանութեան ղեկին վրայ: Հայաստանի իշխանութեան ղեկը գրաւողը իրաւունք եւ լիազօրութիւն չունի արհամարիելու իր թերութիւնները, դիմացինին գործակցութեան պատրաստակամութիւնը, երկրին ու ժողովուրդին զլանալու կացութեան բարուքումը: Արձանագրենք մէկ քաւին:

Առանց երկար մանրամասնութիւններու եւ մեկնաբանութիւններու, այսօր կանգնած ենք դէմ յանդիման «տրամաբանութեան» մը, որ անմիջական պտուղն է 44 օրուան պատերազմին եւ կը թելադրէ (Արցախի եւ Հայաստանի իշխանութիւններն ալ ջուր կը լեցնեն այս շաղացքին), որ Արցախի շուրջ 75 առ հարիւրին կորուստը վերջնական հարց է, պէտք է վերջնականապէս համոզուինք ստեղծուած նոր «աշխարհագրութեան» եւ փորձենք փրկել, վերականգնել ինչ որ մնացած է մեզի (ուրիշներ հաճած են շնորհ ընել պատառիկ մը): Այս իրողական մտածելաւերպը ընդունող-տարածողները չեն անդրա-

# Գանձասար

դառնար, թե այս իրավիճակը ընդունելով, մարսելով եւ մարսել տալով՝ փաստօրէն կը հաստատեն թուրք-ազերիական խեղաթիւրումը, ըստ որուն, Արցախը Ատրպէյճանին պատկանած է միշտ (Ստալինն իսկ այդպէս չէր ըսած), կը նուիրագործեն այն մեղադրանքը, թէ հայեր բռնագրաւած էին ազերիական հողեր եւ ահա, ամէն մարդ իր իրաւունքը կը վերստանայ (մինչեւ իսկ չեն տեսներ, կամ չեն լսեր, թէ թուրքն ու ազերին պարզապէս կը պատրաստուին ամբողջ Արցախն ու Յայաստանի մեծագոյն բաժինն ալ մարսելու): Մինչդեռ, ներքին ճակատի վրայ, պետք է վերականգնել պատմական ճշմարտութիւնն ու անոր հայութեան՝ Յայաստանի, Արցախի եւ աշխարհասփիւռ հայութեան հաւատարմութիւնը, յանձնառութիւնը, տիրութիւն ընելու, վերատիրանալու քաղաքական կամքը: Եւ սա կարելոր մեկնակէտ է ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ, ՇԱՅԵՐՈՒ ՎԵՐԱԿԱՆՁՆՈՒՄԻՆ, անոր հիմամբ նոր հորիզոններու մշակման:



(Ազգային շահ հետապնդելը բնականաբար չի նշանակեր ուրիշինը ոտնակոխել, ինչպէս կ'ընեն թուրքն ու ազերին):

Յիշեալ կէտէն մեկնելով, իշխանաւորներէն մինչեւ ընդդիմադիրներ եւ հասարակական կեանքի մէն մի մասնիկ՝ պարտաւոր է վերականգնելու ներքին միասնականութիւնը, ընդհանրական վտանգներուն դիմաց միացնելու ձեռքերը: Միասնականութիւն չի նշանակեր համայնավարական ոճով միատեսակ մտածելակերպ, այլ տարիներէ ի վեր ժողովուրդը բաժանումներու մատնող ալիքներուն զսպումը, անոնց դէպի սփիւռքեան ասփեր տարածման կանխարգիլումը, ՄԵԿ ԱԶԳ-ՄԵԿ ՅԱՅՐԵՆԻԻԷ մտածումին գործնականացումը: Փաստօրէն, միայն վերջին 2.5 տարիներուն չէր, որ բաժանուածութիւնն ու փոխադարձ ատելութիւնը խաւ առ խաւ խո-

րացան: Սեւ-սպիտակի, յեղափոխական-հակայեղափոխականի, հին-նորի եւ այլ պիտակաւորումները, անկէ բխած անհանդուրժողութիւնը պարզապէս նոր անուն ստացան վերջին տարիներուն եւ մտրակահարուեցան իշխանութեան ամենէն բարձր դիրքերէն, ներգրաւելով ընդդիմադիրները: Միասնականութիւն, ժողովրդավարական համակարգի մէջ միասնականութիւն՝ կը նշանակէ ունենալ գաղափարական եւ մտածելակերպի տարբերութիւն, սակայն իբրեւ առանցքային կիզակէտ՝ ընդունիլ երկրին ու ժողովուրդին կացութեան բարելաւումը, անվտանգութեան նախապայմաններուն ապահովումը, տեսնել, որ բուրգին գագաթը բոլորը միացնող կէտն է, իսկ այդ բոլորը իրականացնելու համար՝ պետք է վարել ազնիւ մրցակցութիւն, առանց անտեսելու եւ արհամարհելու դիմացիները, նախորդներն ու անոնց դրական քայլերը, չունենալ այն սնափառութիւնը, թէ ինձմէ առաջ ջրհեղեղ էր, ես նոր Նոյ Նահապետն եմ, եկած եմ ամէն բան հիմնայտակ կործանելու եւ միայն իմ պատկերացումովս գործ տեսնելու: Մեր այսօրուան դառն կացութեան մէջ գտնուող ինքզինք պարտաւորուած կը զգայ մեկդի դնելու մեծ ու փոքր տարակարծութիւն եւ ստեղծել ԶԱՂԱԶԱԿԱՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹԻՒՆ: Եւ թող յստակ ըլլայ բոլորին, որ անկարելի, երագային բաներու մասին չէ մեր խօսքը: Անցեալին, նաեւ՝ երէկ, պատերազմի օրերուն, ազգը յաճախ դարձաւ միացեալ բռունցք, կամք դրսեւորեց տարակարծութիւնները մեկդի ձգելու եւ ձեռքերը միացնելու պետական իշխանութեան շուրջ:

Մեր հայրենիքի ապահովութեան եւ պահպանումին մէջ, ո՛չ ոք կրնայ վիճիլ, թէ ինչպիսի կարելոր ու առանցքային դեր ունին բանակը, ոստիկանական ուժերն ու ապահովութեան սպասարկութիւնները: Ո՛չ ոք ինքն իրեն պետք է իրաւունքը տայ կոտորելու ուժական բազուկներուն կարողականութիւնը, քաղաքական հաշիւներու խաղալիք դարձնելու զանոնք: 44 օրուան պատերազմը ահաւոր եւ անհամաչափ վնաս պատճառեց մեր գինուժին (թուարկումը արելորդ է): Անյետաձգելի կարեւորութիւն ունի բանակին եւ ուժական կառոյցներուն ամբողջական վերականգնումը, սկսելով ղեկավարութենէն ու գինական կարողութիւններէն, այն մօտեցու-



մով եւ տրամաբանութեամբ, որ մեր գիւտումս ու ֆետայական յենարանները կը տիրեր անցեալ տասնամեակներուն եւ որուն իբրեւ արդիւնք՝ անոնք 90-ականներէն սկսեալ ու մինչեւ 2016-ի ճակատումներէն յաղթական դուրս եկան (անմիջապէս արձանագրեցք, որ սա նաեւ կ'ենթադրէ քաղաքական-դիւանագիտական յենարաններուն լիարժէք վերականգնումը: Այս մասին նաեւ ւեւիլ ուշ):

Պատերազմական գերիներու եւ ռազմական գործողութիւններու ընթացքին կորսուածներու հարցը այլ դառն տագնապ մըն է, որ դժբախտաբար, ստեղծուած ծանօթ կացութեան մէջ, առաւելաբար կը ներգրաւէ բոլոր կողմերը, որքան ալ որ ուժգին հնչեն «այս հարցը պէտք է քաղաքականացնենք» կղեւը եւ տեսնել, որ մեր վնասներուն եւ կրած պարտութեան իսկական արմատը՝ թուրքն ու ազերին են: Իշխանութիւն(ներ)ը մէկ կողմէ կ'աշխատին վերադարձնել գերիներ, անդին, ազերիական կողմը «ճարպիկօրէն» նոր գերիներ կ'որսայ (մեր փշրուած «աթոռներուն» հետեւանքով), զանոնք վերածելու սակարկութեան նոր խաղաթուղթի: Այս ծիրին մէջ, չենք կրնար անտեսել իշխանութեան «ստեղծած» այն իրավիճակը, որուն մէջ, ծնողներ պահանջ կը դնեն (զգացականօրէն՝ իրաւացի) ո՛չ միայն իրենց զաւակներուն հետքը գտնելու եւ գերութենէ, անթաղ գերեզմաններէ վերադարձնելու, այլ նաեւ կը բարձրանան՝ «թող մեր զաւակները Յայաստանի մէջ ծառայեն» տրամաբանութեամբ կոչեր: Իրողապէս, Յայաստանը այս գետնի վրայ ալ կարծէք թէ կը հետեւի իշխանութեան տրամաբանութեան եւ ձեռքերը կը լուայ Արցախի պաշտպանութենէն, մտնելով այն «մաշկին» մէջ, որ իրեն կը թելադրէ մտածել, թէ Արցախը թուրք-ազերիին կը պատկանի եւ Յայաստան բնակողը ստիպուած չէ զայն պաշտպանելու...: Նման նշում, այս փուլին, հաւանաբար լեղի թուի ծառայող զաւակներ ունեցողներուն, որոնց այս մօտեցումը արդարացնող միակ կէտը այն է, որ կը տեսնենք թէ իշխանութիւն(ներ)ը ինչպիսի պատուհասի բերանը նետեցին մեր բանակն ու անոր խիզախ ծառայողները, եւ մարդիկ առայժմ կորսնցուցած են ՅԱՅՐԵՆԻԶ ունեւալու եւ անոր պաշտպանութեան հաւաքականօրէն պատասխանատու ըլլալու զգացողութիւնը: Յարցը հիմա հասած է հոն, որ լո-

ռեցին կամ գեղարքունիքցին իրաւունք ունի մտածելու, որ իր զաւակները ինչո՞ւ պէտք է պաշտպանեն Սիւնիքն ու Վայոց Ձորը, մինչեւ իսկ... քանի մը քիւլմէթր անդին գտնուող գիւղն ու քաղաքը: Փաստօրէն, երբ բանակի հրամանատարութիւնը սահմանապահ ուժերուն կը յանձնարարէր Ղափանի դիմացի բարձունքները ազերիներուն զիջիլ, պաշտօնական լրատու միջոցներ շրջանի կարգ մը գիւղերէն անուղղակի քարոզչութիւն կ'ընէին, թէ 500 կամ հազար մէթր անդին հաստատուող ազերիական ուժերը խուճապային վիճակ չեն առթեր, այսինքն՝ *«ի՛նչ կայ որ, կրնանք ազերի քիթվաներուն հետ կենակցիլ, մոռնալ, որ անոնք Արցախի մէջ ամէն օր նոր գիւղ մը կամ պարտեզներ կը խլեն հայերէ, փոկրոմներ կազմակերպեցին, մեզմէ հայրենի հողեր խլեցին, կ'ուզեն նորեր ալ խլել...»*:

Վերոյիշեալ կէտերուն անմիջականօրէն կը կապուի պատերազմին ծալքերուն բացայայտումը եւ յանցաւորներուն հաշուետուութիւնը, արդար պատիժներու ենթարկումը: Անհրաժեշտ է եւ անյետաձգելի՝ դատաիրական ի՛սկապէս անկախ եւ արդար համակարգի մը բիւրեղացումը, Դատական իշխանութեան անկախ գործունեութեան երաշխաւորումը: Աւելորդ է երկար անդրադառնալ, թէ անցեալի եւ «յեղափոխական» իշխանութիւններուն օրով, այս համակարգը ինչպիսի վիճակներու մատուցեցաւ, մինչդեռ ժողովրդավարութեան ամենէն հիմնական կիրարկումներէն մէկը այն է, որ երկրի ԳՈՐԾԱԴԻՐ, ՕՐԵՆՍԴԻՐ եւ ԴԱՏԱԿԱՆ իշխանութիւնները պէտք է իրարմէ անկախ հեղինակութիւններ ըլլան, վերածուին զիրար հակակշռող, մէկմէկ հսկող եւ ինքզինք միւսներէն գերադաս սեպելու ընթացքը խափանող-դարմանող իշխանութիւններու: Պատերազմէն առաջ, անոր ընթացքին թէ անկէ ետք (տարիները չենք սահմաներ կամ սահմանափակեր), արձանագրուած են թերութիւններ, անփութութիւններ, ապիկարութիւն, սխալ դատողութիւն, իրականութիւններու հանդէպ արհամարհանք, անհարկի եւ սխալ դասաւորումներ եւ այլն: Պատերազմի օրերուն, այս մասին բերանները կը մնային լուռ, եւ ատիկա ճիշդ էր: Պատերազմի ավարտէն ետք, «բացուեց լեզուն իմ մանկիկին» ի տրամաբանութիւնը տիրական դարձաւ, երբեմն յարութիւն առին նաեւ... փան-

# Գանձասար

ջունիներ: Առաջնահերթ եւ անյետաձգելի հրամայական է, որ եղածին ու չեղածին քըն-նութիւնը կատարուի անաչառ մօտեցումով, մէկը անարդարօրէն վար գարնելու, ուրիշ մը փրկելու տրամաբանութենէն հեռու, այլ բա-նակին, հայրենիքին ու ազգին բարիքին հե-տամտութեամբ: Քննութեան համար պետք է նկատի ունենալ դատական երկու գլխա-ւոր մարզ՝ զինուորական եւ քաղաքային: Նպատակը՝ գտնել, թէ ո՞վ դաւաճանած է կամ ապիկար գործ տեսած է, իսկապէս կա-րող զինուորականներ ու քաղաքական մար-դիկ հեռու պահուած են պատերազմէն, ար-տաքին ի՞նչ ուժեր, գործօններ, շահեր դեր ունեցած են, փտածութեան ի՞նչ նոր տար-բերակներ ծնունդ առած են... Այբէն մինչեւ Օ-Ֆէ: Սա պետք է կատարել լուսարձակնե-րէ հեռու, մինչդեռ հիմա որդեգրուած է «բաց-պատարագ»-ի ոճը, իրականն ու շինծուն-քա-րոզչականը իրարու հետ մրցումի ելած են, եւ բարձրացած աղմուկին, փոշիին մէջ կոր-սուած է ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, առանց առարկա-յական քննութեան՝ վճիռներ կ'արձակուին հրապարակաւ ու պատկերասփիւռներէն, համացանցի էջերէն, երբեմն արդարօրէն, երբեմն չափազանցութեան հասնելով: Այս գետնի վրայ քննութիւնները պետք է տանիլ որոշ խորհրդապահութեամբ (եւ թող ո՛չ ոք հրապարակ գայ «մարդիկ ամէն բան պետք է գիտնան»-ի գիտով, որովհետեւ «մար-դիկ»ը կ'ընդգրկէ նաեւ թշնամին ու խեղա-թիրելու մոլուցքով տարուողը): Պատերազ-մին պատճառներուն եւ հետեւանքներուն քըն-նութիւնը պետք է գերծ մնան ամբոխավա-րութենէ եւ քաղաքական սակարանի «տրա-մաբանութենէն»:

Պատերազմը ահաւոր հարուած տուաւ նաեւ երկրի տնտեսութեան, որ այլապէս ին-կած էր աշխարհը վարակած՝ Պսակածէ ժահրի ազդեցութեան տակ: Արցախի հողե-րուն մեծ մասին կորուստը, երկրագործա-կան (նաեւ՝ այլ) մարզին կրած ծանր վնաս-ներն ու սահմանափակումները, ուժանիւթի աղբիւներու կորուստը եւ նման «գաճաճ» պատուհասներ իրենց կողքին ունին ոտքը տեսանելի, սակայն գազաթը ամպերու մէջ կորսուած «հսկայ» մը, որ կը կոչուի բնակա-վայրեւու քանդում եւ շուրջ 100 հազար գաղ-թական: Ճիշդ է, որ արցախցի գաղթական-ներէն մաս մը կը վերադառնայ այն փոքր

տարածքը, որ մեզի մնացած է Արցախէն, սակայն չենք կրնար մեր աչքերը փակել այն դաժան իրականութեան վրայ, թէ բազմա-տասնեակ հազարաւորներ ցնոր տնօրինու-թիւն պիտի մնան պետական եւ մարդասի-րական նպաստներէ կախեալ ըլլալու վիճա-կին մէջ: Արցախէն մինչեւ Յայաստան՝ գոր-ծազրկութիւնը (ո՛չ միայն պատերազմին հե-տեւանքով), արտադրողականութեան նա-հանջը եւ անոնց «յաւելուածները» իսկապէս դժուար յաղթահարելի (չըսելու համար՝ ան-կարելի) կացութիւն ստեղծած են: Սա կ'են-թադրէ ո՛չ միայն պետական համակարգի նե-րուժին ամբողջական լարումը, այլ նաեւ աշ-խարհասփիւռ հայութեան աջակցութեան բազմապատկումը, միջազգային նպաստնե-րու ապահովում: Պատերազմին սանձումէն նուազ քան ամիս մը ետք, դրամին արժեզը-կումը, սղութեան ալիքներու երեւումը եւ այլ ցուցանիշներ երկար մեկնաբանութիւններու եւ ահագանգի պետք չունին: Այս գետնի վրայ, իշխանութիւնը իրաւունք չունի «լաւ պիտի ըլլանք»-ի խաբկանքը տարածելու երկրին մէջ, այլ պարտաւոր է չոր իրակա-նութիւնները ցոյց տալով՝ բոլորին հետ միացնելու ձեռքերն ու ներքին եւ արտաքին կարողականութիւնները:

Վերի կետին կը հետեւի ներդրումներու ապահովումն ու Յայաստանը գրաւիչ դարձ-նելը: Գաղտնիք չէ, որ աշխարհի մէջ կան հըս-կաներ, որոնք իրենց սեփականութիւնը կը համարեն որեւէ երկրի մէջ բնական հարըս-տութեանց եւ շուկաներու յանձանձումը: Որեւէ երկրի իշխանութեան եւ տեղւոյն գոր-ծարարներուն իրաւունքն է գործակցութեան (եւ ո՛չ միայն նեղ-շահակցութեան) տարագ-ներ գտնել այդ անհայրենիքներուն հետ, անոնց նիւթական կարողութիւններէն օգ-տուելով եւ անոնց տրամաբանական շահ ապահովելով՝ պաշտպանել նաեւ սեփական երկրին ու ժողովուրդին շահը, ակնկալիքնե-րը (այս կետը սերտօրէն կ'առնչուի արտա-քին գործօններու, կը կարօտի մասնագիտա-կան եւ առանձին քննարկումի): Կը հետեւի նաեւ, որ Յայաստանի բնական հարստութե-անց վերաբերող քաղաքականութեան վե-րատեսութիւնն ալ անյետաձգելի հրամայա-կան է:

Կրթական-ուսումնական մարզի հիմնա-կան վերանայում եւ ազգային արժէքներու



հիմամբ վերածրագրաւորում (սա վերը յիշուածէն որոշ տարբերութիւն ունի): Բացայայտ է, որ Հայաստանի մէջ, մինչեւ իսկ երկրորդական ուսման մակարդակին վրայ, հայերէնն ու պատմութիւնը, մեր մշակութային արժէքներու իմացութիւնը հարուածներ կրեցին վերջին տարիներուն, կը սպառնան մեր պատմութենէն որոշ խզումի տանիլ Նոր սերունդները: Յիշենք միայն բարձրագոյն ուսման կրթարաններէն որոշ նիւթերու պարտադիր ջնլալու որոշումը՝ աւելի քան տարի մը առաջ, իսկ տակաւին վերջերս հրապարակ եկած այն Նորութիւնը, թէ համալսարան մուտքի քննութիւններէն պիտի զեղջուին հայագիտութեան որոշ նիւթեր, եւ սա՛ տխրահրոջակ նախարարին փոխարինումէն ետք ալ, ինչ որ ցոյց կու տայ ՊԵՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ մէջ նահանջն ու անկումը, ապագային-ազգաթափումի մտայնութեան տիրապետութիւնը ա՛յն օրերուն, երբ Արցախի մէջ ԱԶԳԱՅԻՆ-ՊԱՏՄԱԿԱՆ աղետներ կը դիմագրաւենք (տարրական գիտելիքի մասին է խօսքը). նախարարութենէն նման «ներշնչում» ստացող միջնակարգի եւ երկրորդականի աշակերտը ինչո՞ւ պարտք պիտի զգայ նախանձախնդրութիւն ցուցաբերելու այս նիւթերուն իմացութեան, ազգային պատկանելիութեան գիտակցութեան խորացման...: Ըսինք, չէ՞. աշխարհը կը տարուի դէպի... աշխարհաքաղաքացիներ պատրաստելու, իբրեւ Ալֆա եւ Օմեգա ճանչնալով նիւթը:

Լրատութեան ու քարոզչական ցանցերը նմանապէս հիմնական վերականգնումի եւ վերատեսութեան կը կարօտին: Այս մասին երկար խօսիլ չ'արժեր: Կը բաւէ միայն արձանագրել, թէ պատերազմի օրերուն միաձայնութեամբ գործող լրատու աղբիւրները Նոյեմբերի 10-էն ետք վերադարձան բաբելոնեան խառնիճաղանճի վիճակին: Պատկերասփիւռ-թերթի կալուածէն անդին, կայ անշուշտ համացանցային «բաբելոնը», ուր տիրապետողը... հայհոյանքն է ու վատաբանումը, սեփական աչքի գերանը չտեսնելու եւ դիմացինի աչքին մէջ երբեմն չեղած շիւղը իբրեւ կոթողական գերան ցոյց տալու «հնարամտութիւնը» (սա Նորութիւն չէ, տարիներու չար աւանդութիւն դարձած է, ո՛չ միայն հայկական աշխարհին մէջ, մոռցուած է Յ. Պարոնեանի այն իմաստուն խօսքը, թէ «հայհոյանքը փաստի սով է»): Նոր փուլին, եւ հայ-

րենիքի ու ազգի շահերուն սիրոյն, պէտք է ազդու հսկողութեան տակ առնել տեղեկատուական-քարոզչական մեքենաները, կեղծ աղբիւրները: Պէտք է արհամարհել ներա-



ծուած այն «իմաստութիւնը», որ նման սանձումով՝ կ'ոտնակոխուի խօսքի, արտայայտութեան ազատութիւնը: Երբ անհիմն խօսքն ու հայհոյանքի հասնող ազատ արտայայտութիւնը երկիրն ու ազգը կը հասցնեն կործանման եզրին, նման ձեռքեր ու լեզուներ կտրելը առաքինութիւն պիտի սեպուի:

Իշխանութեան համար Նոյնքան առաջնահերթ է բազում այլ հարցերու դիմագրաւումն ու վերադասաւորումները: Այս կետին մէջ արագօրէն թուենք հետեւեալները, որոնց համար, ինչպէս սկիզբը շէշտեցինք, ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ վերականգնումն ու ՀԱՅԱԿԵԴՐՈՆ մարտավարութեան յստակացումը անյետաձգելի են (ՀԱՅԱԿԵԴՐՈՆը օտարամերժութիւն չի նշանակեր, այլ կը նշանակէ ի հարկին օգտուիլ այլոց դրական իրագործումներէն, ներդաշնակութիւն ստեղծել ուրիշի բարիքին հետ, սակայն նաեւ մերժել ազգային դիմագիծին եւ աւաղներուն հակադրուողը):

Ա) Ազգային արժէքներու ամբողջական վերականգնումը եւ այլասեռող գործօններու մերժումը, չէզոքացումը: Այս կալուածին մաս կը կազմեն մեր Եկեղեցւոյ պահպանումը (անհատներէն անդին. մանաւանդ՝ աղանդաւորականներու մերժումը) եւ անոր ազգային դերակատարութեան գիտակցումը, լեզուի ու պատմութեան ուղեցոյցները, գլխագիր մշակոյթի տարբեր մարզերուն մաքրագտումն ու արժէքային հունի վերադարձը (երգ-երաժշտութիւն, գրականութիւն, կերպարուեստ եւ այլն):

# Գանձասար

Բ) Կենսոլորտի տազնաային յարթահարումը (Սեւան, ջրային հարստութիւն, հանքեր՝ ոչ միայն տնտեսական առումով: Չմոռնանք նաեւ Ջերմուկի նման հարստութեան մը ուղղուած ֆիզիքական նորաստեղծ վտանգը, որ միայն կենսոլորտային չէ, դրացի հանքին պատճառով):

Գ) Առողջապահութեան մարզ. պատերազմը, անկէ առաջ՝ համաճարակը ցոյց տուին, որ այս գետնի վրայ եթէ գոհ ըլլալու պատճառներ ունինք, մարզը հեռու է անթերի ըլլալէ:

Դ) Չբօսաշրջութիւն եւ յարակից կալուածներ, ինչպէս՝ պատմական վայրերու հոգածութիւնը եւ զբօսաշրջութեան քարտեզին հարստացումը (մեզմէ խլուած հողերուն վրայ մնացած կոթողներու հարցը այլ կարելոր կետ է): Հաւանաբար մտածողներ ըլլան, թէ այս պայմաններուն մէջ՝ ինչ խօսք զբօսաշրջութեան մասին, սակայն երբ կը խօսինք տնտեսական վերականգնումի մասին, եւ Հայաստանի պէս երկրի մը համար, պէտք չունինք երկար-բարակ ընելու, թէ այս մարզը ինչպիսի՝ կենսական նշանակութիւն ունի:

Ե) Գիտական-արհեստագիտական ոլորտներու զարգացումը, բարելաւումը: Որեւէ հայ անցեալ տարիներուն հպարտութեամբ կը լսէր, որ մինչեւ իսկ մեր պատանի աշակերտները կը տիրանան արդի արհեստագիտութեան գաղտնիքներուն, դարձած են հնարողներ, մրցանակներ կ'ապահովեն տեղական եւ միջազգային ողիմպիականներու: Պատերազմը եկաւ ցոյց տալու, որ այդ բոլորը գործնական գետին չեն հասած: Վերջերս, անվերապահ գոհունակութիւն առթող տեղեկութիւն մը հրապարակ եկաւ, թէ՛ արդի արհեստագիտութիւնը պիտի կիրարկուի պաշտպանական ճարտարարուեստի զարգացման մէջ: Վերջին պատերազմին դիտանկիւնէն՝ ուշացած քայլ, ապագայի հեռանկարով՝ անվիճելիօրէն ողջունելի:

Այս եւ նման հրամայականներէ մեկնելով է, որ պէտք է դիտենք ԱԶԳԱՅԻՆ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ մը կազմութեան առաջադրանքը, որ սոսկական իշխանափոխութիւն մը պիտի ջլլայ, անկախ, որ անկա բացարձակապէս պէտք չէ դիտուի-ըլլայ աթոռակոխ՝ ինչպէս կը վատաբանեն իշխանութեան մարդիկն ու անոնց շեփորահար-

ները: Հայաստանի իշխանութեան ղեկը յանձն առնողը, ո՛վ որ ալ ըլլայ ան, չի կրնար տուրք տալ սեփական կամ մասնակի հաշիւներու, հետապնդել այդպիսի շահեր, այլ անոր մեկնակէտն ու վախճանակէտը պիտի ըլլայ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՄԲՈՂԱԿԱՆ ԱՐՅԱԿԻ վերականգնումը՝ իր բոլոր մարզերով, կալուածներով եւ ստորոգելիներով: Մասնաւորաբար ներքին գետիններու վրայ, պէտք է վերջ տալ «անցեացիներ»ը մեղադրելու անվաղորդայն վարքագիծին, «քաղաքականութեան» (մինչեւ իսկ եթէ անոր մէջ կայ նուազագոյն կամ անելի մեծ ճշմարտութիւն), որովհետեւ անցեալի տուեալներով զիրար խարազանելը գործնապէս շահ պիտի չբերէ, անելի՛ն, պիտի տկարացնէ այն ենթահողը, որ պիտի գործածենք մեր արտաքին յարաբերութիւնները եւ աշխատանքները ամուր հիմքու վրայ դնելու համար:

Եւ, ինչպէս կ'ընենք, արտաքին կալուածը առանձին աշխարհ մըն է, առանց բոլորովին անջատ ըլլալու ներքինէն:

## ԱՐՏԱՔԻՆ ԿԱԼՈՒԾՆԵՐ

Շատ խօսուեցաւ եւ կը խօսուի Հայաստանի (հետեւաբար նաեւ Արցախի) արտաքին յարաբերական շարժումներուն մէջ արձանագրուած նահանջերուն, մինչեւ իսկ որոշ գիծերու բոլորովին չէզոքացման մասին: Իրականութիւնները մեծ չափով կը հաստատեն այս նշումները, թէեւ պէտք չէ արհամարհել, որ հոս ալ ի զօրու է քաղաքական խաղի օրէնքը:

Արտաքին կեանքի մասին խօսելու համար, պէտք է նկատի ունենալ առ նուազս երկու օղակ. Ա) Երեւոյ՝ միջ-պետական յարաբերութիւնները, գործակցութիւնները, հակադրութիւնները, եւ Բ) Միջ-պետականէն անդին տարածուող՝ սահման եւ երկիր-հայրենիք չճանչցող ուժերուն տիրակալութեան դաշտերը, հորիզոնները (անելորդ չ'ըլլար անգամ մը եւս արձանագրել, թէ երկիրներ եւ պետութիւններ, մեծ կամ փոքր, առանել կամ նուազ չափով ենթակայ են նման ուժերու հաշիւներուն, քմահաճոյքներուն, որքան ալ որ անընդունելի ըլլան անոնք, նկատուին վնասաբեր. այսօրուան աշխարհի դառն իրականութիւններուն մաս կը կազմեն անոնք եւ կը հարկադրեն, որ իտեալականութիւնը հետապնդուի... ոտքերը գետին դն-



[ով]:

Հայաստան մօտաւորապէս 30 տարի է ի վեր անկախ պետութիւն է (շեշտենք, որ պետութիւն եւ իշխանութիւն տարբեր հասկացութիւններ են): Անկախ Հայաստանը ունի միջազգային ճանաչում, դժբխատաբար աւելի քան 25 տարի առաջ իրողական անկախութիւն շահած Արցախը չհասաւ նման ճանաչումի: Հայութեան համար, Արցախեան Պայքարի առաջին օրերէն իսկ, Արցախն ու Հայաստանի ՄԻԱՏԵԱԼ էին, եւ այս իրականութիւնը արտայայտութիւն գտաւ արցախեան շարժումի այն ցոյցերուն, երբ ամբողջ ժողովուրդը կը բացագանչէր «ՄԻԱՏՈՒՄ»: Պատերազմէն առաջ, նաեւ անկէ ետք, բարեկամ թէ հակադրեալ, վերապահ թէ կարեկից, կը մնայ այն ճամբուն մէջ, որ Արցախը կը ճանչնայ իբրեւ ազերիական հող, մինչդէռ հայկական քաղաքական միտքին ու դիւանագիտութեան համար տարրական յաջողութիւն պիտի ըլլայ պատմական ճշմարտութիւնները տեղ հասցնելու, Արցախի հայութեան պատկանելիութիւնը ամրագրելու թէ՛ պետական ու միջազգային միաւորներու մակարդակին, եւ թէ մանաւանդ մամուլին եւ մտաւորականներու, գիտնականներու, պատմագետներու եւ արուեստագետներու լծակցութեամբ (չմոռնանք նաեւ մարզիկներն ու արուեստագետները): Եւ ահա հոս է որ կը շեշտուի դիւանագիտութեան կենսական ուժն ու դերը, իբրեւ յենարան՝ հողը պաշտպանող բանակին ու պետական այլ մեքենաներու:

Հայաստան անդամ է ՄԱԿին, միջազգային բազմաթիւ խմբաւորումներու, եւրոպական դաշինքներու, մասնաւորաբար Ռուսիոյ նախաձեռնութեամբ կազմաւորուած պաշտպանական-ապահովութեան ու տնտեսական «կաճառներու»: Նախկին Խորհրդային Միութեան դաշտէն դուրս եկած Հայաստանը բնականաբար պիտի փորձէր - եւ իրեն իրաւունք վերապահէր - բացուելու աշխարհին, ստեղծելու բարեկամական աւելի լայն յարաբերութիւններ: Այս տարրական իրաւունքը կիրարկելու համար, իշխանութեան ղեկին գտնուողը պէտք է զգայուն ըլլայ շրջանային եւ միջազգային նրբութիւններու հանդէպ, ուշադիր ըլլայ, որ նոր բարեկամութիւններու ստեղծումը վնաս չբերէ գրպանիդ մէջ եղող բարեկամներուդ (պայ-

ման չէ որ դուն ըլլաս ուրիշին գրպանին մէջ), մանաւանդ զգայուն ըլլաս, որ դրացիդ, դաշնակիցդ եւ վաղեմի բարեկամդ ինչպէ՞ս կը դիտեն քու քայլերդ (սա նաեւ չի նշանակեր ենթակայ ըլլալ դրսեցիներուն բոլոր նկատումներուն):

Հայաստան միշտ չէ յաջողած դրական հաւասարակշռութիւն պահպանել մօտակայ եւ հեռակայ գործակիցներու, դաշնակիցներու եւ գործակիցներու հետ: Պատերազմի օրերը ցոյց տուին, թէ դիւանագիտական-քարոզչական մեքենաները որքա՞ն ետ ինկած են աշխարհի քայլերէն: (Պարզ օրինակի մը համար. Երբ Ֆրանսայի մէջ հայ երիտասարդներ արդարօրէն ճամբաներ կը փակէին, ազերիական յարձակումին վրայ ուշադրութիւն կեդրոնացնելու համար, որեւէ մէկը չմտածեց, թէ կարելի էր նոյն օրերուն միանալ նոյնինքն ֆրանսացիները հարուածող՝ թրքատիպ ահաբեկիչներու դէմ ֆրանսացիներու ցոյցերուն: Նոյնը՝ այլուր):

Միւս կողմէ, յարաբերութեանց գետնի վրայ, ձախորդութիւններու յաջողած բարեշրջումներ բարիք եւ յաղթանակներ բերած են Հայաստանին ու Արցախին: Վերջին պատերազմէն ետք, բաւական հիմնաւորեալ կերպով (հոս ալ ստուգելի եւ անաչառ քննարկումի ենթարկելի շատ բան կայ) կը խօսուի այն մասին, թէ Հայաստան չէ կրցած լիարժեքօրէն պահպանել իր աւանդական կապերն ու գործակցութիւնը՝ Ռուսիոյ եւ Իրանի հետ, «հակիրթները տարբեր կողովներու մէջ դնելու» բարեմիտ մօտեցումով, պատճառ դարձած է, որ ունեցած հակիրթներէն շատեր ջարդուին ու փճանան: Մանաւանդ կորսուին արցախեան հակիրթներ, վտանգուին մայր Հայաստանի կարգ մը ձուերն ալ: Հետեւաբար, դաշնակիցներու, պետութիւններու եւ միջազգային խմբաւորումներու հետ յարաբերութեանց վերանայումը կը հարկադրէ ճիշդ գնահատել անմիջական շրջապատի եւ աշխարհի ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ, նպաստաբեր եւ վնասաբեր կողմերուն ինքնութիւնը ճշդել առարկայական կերպով, հեռու՝ այսինչին կամ այնինչին հանդէպ «սիրելի է, ատելի է»ի զգացականութենէ: Բնականաբար այս մօտեցումը չի կրնար տարածուիլ թուրքիոյ եւ Ատրայեճանի վրայ, որոնք պէ՛տք է տեսնենք, թէ ճամբայ ելած են, եւ՝ աւելի քան մէկ դարէ ի վեր, Հայաստանը

# Գանձասար

ի սպառ վերցնելու ծրագիրներով, հետեւաբար, անոնց հետ բարի դրացնութեան, առեւտրական-տնտեսական յարաբերութիւններու պատրասեցնելը չեն կրնար անցնիլ ինքնախաբեութենէ անդին (պետք է դժկանգնիլ նաեւ նման պատրասեցնելու դուրսէ սնուցանողներուն, ինչպէս որ ըրինք փորձագուներուն դէմ):

Կրկնենք: Նոր բարեկամներու որոնումն ու ապահովումը չի կրնար ըլլալ ու պետք չէ ըլլայ ի հեճուկս անցեալի բարեկամներու (նոյն աղբիւրէն կը բխի, ներքին գետիկներու վրայ, անցեալի բոլոր իրագործումներն ու ազգօգուտ գործ ընողները արհամարհելու, անտեսելու եւ անգործութեան մատնելու վարքագիծը): Եթէ մէկ կողմէ կարելոր է անսալ Խրիմեան Յայրիկի՝ Երկաթ Շերեփի անժամանցելի պատգամին, միւս հողմէ պետք չէ մոռնալ, որ Սան Սթեֆանոյի դաշնագիրով որոշ երաշխիքներու խոստումը ջրիկ դարձաւ Պերլինի մէջ, երբ բազմաթիւ խոհարարներու վստահուեցաւ մեր Դատին պաշտպանութիւնը: Այս ըսելով՝ չենք ուզեր ամբողջական կասկածի տակ դնել կամ աղբանոց նետել Արցախի անկախութեան ճանաչման ուղղութեամբ (հոգ չէ թէ ուշացած եւ, ստեղծուած պայմաններուն մէջ քիչ մը երեւակայական հնչող) քայլերը, այլ անհրաժեշտ է յառաջդիմութիւն արձանագրել համաշխարհային քաղաքականութեան համալսարանին մէջ, տեսնելու՝ թէ հայկական նաւը ինչպէ՞ս կրնայ նպաստաւորուիլ այս կամ այն հովերէն, այնպէս մը՝ որ այդ հովերը գիրար չխաչածուեն, առագաստ մը ուռեցնելու պահուն, չպատռեն այլ առագաստներ:

Ինչպէս հպանցիկ ակնարկութիւն մը ըրինք նախապէս, պետք է տեսնենք եւ ըմբռնենք, որ այսօրուան աշխարհի դէպքերուն վրայ ինչպիսի՞ ազդեցութիւն ունին այն քիչ երեւցող ուժերը, որոնք խորքին մէջ կը կառավարեն պետական իշխանութիւնները: Այլ խօսքով, պետք է ունակութիւնը ձեռք բերել՝ թափանցելու պետական իշխանութիւններու վարագոյրներու ետին, ձեւերը գտնել հասնելու այդ իրողական ուժերը շարժող լծակներուն: Սա կը հարկադրէ լուռ դիւանագիտութիւն, լուսարձակներէ հեռու աշխատանք: Խորքին մէջ, մեր դիմաց կայ հերքիլեան գործ, որովհետեւ վարագոյրներու յետին բեմին տիրապետողը... Նիւթական շահն

Է, անոր կու տան «ռազմավարական շահեր» անունը, եւ կը գործածուին այս կամ այն երկիրը ստրկացնելու: Մենք մեր մորթին վրայ կրեցինք նման շահերու ազդեցութեան տարողութիւնը, նաեւ պատերազմէն առաջ, եւ



գիտենք, որ, օրինակի համար, Պաքուէն դէպի արեւմտեան աշխարհ երկարող խողովակներէն հոսող քարիւղը շատ աւելի արժէք ունի, քան թրքական ու իսրայէլեան անօդաչուներու, արգիլեալ գէնքերու գոհ գացող ազատամարտիկին ու քաղաքային բնակչութեան կեանքը, ստացուածքը, արիւնը: Նման կացութեան մէջ, հայկական պետութեան դէպին ստողին դերը կրնայ թուիլ «անկարելի առաքելութիւն», սակայն ահա հոն է որ կը շեշտուի «համալսարանական քաղաքականութիւն» վարողի արժանիքը: Չմոռնանք, որ մեր վիճակը, կացութիւնը, առանձնայատուկ ըլլալով հանդերձ, եզակի չէ:

## ԹՈՒՐՔԻԱՆ ՉԼԵԱՎՈՐ ԹԻՐԱՆ

Միջազգային բեմին արտաքին ու ներքին ծալքերուն իմացութիւնը ծնունդ կու տայ նոր հորիզոններու, որոնք յաճախ կը տեսնենք, եւ սակայն, այդ ուղղութեամբ բաւարար գործ չենք տեսած, չենք տեսներ ցարդ: (Մեզի համար շատ աւելի գերակշիռ կարելորութիւն ստացած են ներքին հակաճառութիւններն ու հակամարտութիւնները, քան թէ ԱՇԽԱՐՀԻՆ ՀԵՏ ԶԱՅԼ ՊԱՅԵԼՈՒ Իրաւերը): Ամենէն պարզ եւ անմիջական իրականութիւնը հետեւեալն է. Թուրքիա (եւ իր դաշնակից-կամակատարները) այսօր գործադրութեան ճամբու մէջ դրած են նոր-օսմանականութեան ծրագիրները, որուն հարուածներէն մէկն ալ իջաւ Արցախի վրայ, կը սպառնայ Յայաստանին՝ սկսելով հարաւել:

Եթէ հայութեան քաղաքական միտքը անսայ ժամանակակից աշխարհի թելադ-



րանքներուն, մեր ընթացքը կրնայ բարեփոխութիւն ապրիլ: Ներքին հակամարտութիւնները, խաղաղութան թէ պատերազմի օրերուն, այլապէս կրնան «բնական» նկատուիլ, սակայն կայ արտաքին որլորտի մէջ աշխատանքի գիծ մը, գիծեր, որոնց շուրջ վեճ ու հակադրութիւն աններելի են: Նշեցինք արդէն. ունինք հիմնական թշնամի մը, որուն դէմ պետք է ուղղուած ըլլան մեր քաղաքական ու դիւանագիտական բոլոր ճիգերը, անոնց շուրջ պետք է միանան (միացած ըլլային) բոլոր ձեռքերը, հիմա՝ երբ ուժական բազուկը որոշ տեղատուութիւն արձանագրած է: Այս աշխատանքին թիրախները պիտի ըլլան ո՛չ միայն նոյեմբերեան համաձայնագիրին շրջումը (եւ մեր միտքէն պետք է հանենք այն՝ որ եղածը վերջնական է, անյեղի: Պատմութեան մէջ չկայ համաձայնագիր, որ մասամբ կամ հիմնովին վերատեսութեան ենթարկուած չըլլայ, պայմանաւ, որ անարդարութիւնը յեղաշրջելու կամք եւ ներուժ պետք է ունենալ, եթէ չկայ, անյապաղ կուտակել): Արցախի մէջ եւ Հայաստանի սահմաններուն վրայ տեղի ունեցող անընդունելի զարգացումները հալած իւրի պէս պետք է կլլել եւ գլուխ ծռել անարդար տնօրինումերու դիմաց: Կարելի չէ մոռնալ ու անտեսել այն՝ որ Արցախի հարցին ԽԱՂԱՂ ԼՈՒԾՈՒՄ հետապնդող ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԸ յստակ դարձուցած են, որ Ատրպէյճանի կողմէ ուժի գործածութեամբ պարտադրուած «լուծումը» չի գո-



հացներ որեւէ կողմ, եւ ո՛չ միայն մեզ՝ հայերս, հետեւաբար, պետք է փնտռել ու գըտնել այն լարերը, որոնց վրայ պիտի յօրինուի մեզ արդարութեան հասցնող համախառնագր:

Աւելին: Պետք է մեր ռատարները նախկինէն շատ աւելի զգայուն դարձնենք եւ շատ աւելի լայն բանանք, տեսնելու՝ թէ թուրքիոյ ինքնագլուխ քայլերուն եւ տնօրինումներուն,

ոճրային քաղաքականութեան դէմ ինչպիսի ալիքներ սկսած են բարձրանալ թէ՛ Ռուսիոյ, թէ՛ Եւրոպայի, թէ՛ Միացեալ Նահանգներու եւ ամերիկեան այլ երկիրներու, եւ թէ մեր անմիջական դրացիին՝ Իրանի եւ քիչ մը աւելի արեւելք ինկող հսկային՝ Չինաստանի մէջ (նաեւ այլուր): Գիտենք, որ Ռուսիա իր պատճառները ունի թուրքիան (ու Ատրպէյճանը) դարպասելու, Միացեալ Նահանգներն ու Արեւմուտքը, նաեւ արեւելքցիները որոշ շահակցութիւններ ունին թուրքիոյ հետ, սակայն պետք է տեսնել նաեւ միւս իրականութիւնները, այն՝ որ նոյն այդ ուժերն ու շրջանակները միանուագօրէն հաշտ աչքով չեն դիտեր Նոր-օսմանականութեան արտայայտութիւնները: Սա երազ կամ ցնորածին հաշիւ չէ, այլ մաս կը կազմէ ժամանակակից աշխարհի քաղաքական աշխարհագրութեան: Երտողանի եւ այլոց կայսերականութիւնը թուրքիան ուշ կամ կանուխ պիտի տանի պայթումի, ինչպէս որ եղաւ 100 տարի առաջ...: Հետեւաբար, մեր կիսովին խորտակուած նաւուն վերականգնումը եւ մեր առագաստներուն ըստ այս հովերուն պարզումը հրամայական է եւ յետաձգում չճանչցող մարտահրաւեր: Այդ ընելու համար, չի բաւեր «հիմա ասկէ աւելին չենք կրնար ընել»ները, բողոքի ցոյցերն ու արդար ընդվզումի արտայայտութիւնները, այլ կենսական է որ մեր դիւանագիտութիւնը, իր հայրենի եւ համասփիւռքեան թելերով, Հայ Դատին նման ցանցերով, վերստին թռիչք առնէ եւ հետամտի մեր թշնամին նահանջի մատնելու: Դարձեալ նշենք. այսօրուան վիճակով եւ իշխանութեան ցուցաբերած տրամադրութիւններով, սա կը թուի ցնորական, անկարելի, սակայն հարց տանք. ե՞րբ է եղած, որ մենք չենք նաւարկած ուժգին հոսանքներու դէմ, ունեցած ենք ընկրկումներ, սակայն նաեւ յաջողած ենք անկարելին կարելի դարձնել, մասամբ կամ այլապէս: Ուրիշներ ալ ըրած են նոյնը. արձանագրենք Եգիպտոսի, Լիբանանի, Վիետնամի եւ այլոց նախընթացները (միշտ ալ ի մտի ունենալով իւրաքանչիւր իւրայատկութիւնը):

Արտաքին գիծերու վրայ մեր տանելիք աշխատանքը, ինչպէս նշեցինք արդէն, պետք է դուրս բերուի ներքին հակադրութիւններու եւ հակամարտութիւններու ոլորապտոյտէն, մանաւանդ պետք է եկուութեամբ

# Գանձասար

Եամբ վերջ դնել բացայայտ կամ քողարկուած այն կամակատարութեան, որոնք մեր իշխանութեան կը պարտադրուին «դուրսեր»էն (շեշտենք. «Դուրս»ը մէկ չէ):

## ԵՉՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Կարելի է երկար խօսիլ այն կալուածներուն եւ ուղիներուն մասին, որոնք իբրեւ մարտահրաւեր՝ կը տարածուին յետ-Նոյեմբեր 10-ի Յայաստանին, Արցախին եւ համայն հայութեան դիմաց:

Վիթխարի աշխատանք կայ կատարելիք, եւ առաջին քայլը պիտի ըլլայ մեր այժմու վիճակին ամբողջական իրազեկումը, գիտակցումը՝ մեր կրած կորուստին, նաեւ հաւատքը (ո՛չ զգացական մօտեցումով), թէ հակառակ մեր սահմանափակ ուժերուն, կըրնանք ՇԱՏ ԲԱՆ ընել, բացասական «երթը» կասեցնել եւ մեր շոգեկառքը վերադարձնել ազգային շահերու եւ իրաւունքներու հետապնդման ուղիին:

Յայաստան ու համայն հայութիւնը կը գտնուին դառն, բայց նաեւ յուսատու նշոյլներով իրականութիւնները, կարելիութիւնները տեսնելու հրամայականին դիմաց: Բարեշրջում իրականացնելու համար, պէտք է իրարու դիմաց բանալ ականջները, կամք ցուցաբերել զիրար հասկնալու, զիրար համոզելու՝ ազգային շահերու բիւրեղացման եւ հետապնդման միջոցներուն շուրջ: Որեւէ խորտակուած շէնք կամ ոլորտ վերականգնելու համար, կը դիմուի պատերը քար առ քար վերստին շարելու աշխատանքին, առանց որ կողմերէն մէկը կամ միւսը, գիտակցաբար կամ անգիտակցաբար, քանդէ ուրիշին շարածը, անտեսէ կամ արհամարհէ ուրիշին կարողութիւնը:

Ու երբ այսօր կը խօսուի ազգային միասնականութեան եւ փրկութեան կառավարութեան մը մասին, ամէն բանէ առաջ, կենսական է, որ պատասխանատուութեան վրայ բերուին մասնագետներ, ներքին ու արտաքին յարաբերութիւններու մէջ փորձառուներ, կապեր ունեցողներ, որպէսզի վերջ տրուին իրերամերժութեան եւ անձնակերպութեան այն մրցավազքերուն, որոնք կարծէք թէ անուղղակի ժառանգ հասած են խորհրդային տարիներէն: Բնականաբար կարելի չէ երեւակայել, որ երկիրը այս վիճակին մատնողն ու այս կացութեամբ բաւարարող-հա-

մոզուողը տալիք չունի նորին: Թող ո՛չ ոք ունենայ այն պատրանքը, թէ կրնայ առանձինս, միանձնեայ ձեւով երկիրը դուրս բերել այս խորխորատէն, այլ ձեռքբերու միացումը պէտք է ճամբայ ելլէ այն գիտակցութեամբ եւ համոզումով, որ միացեալ ճիգերը անմիջական ապագային կրնան սպասուած արդիւնքներուն չհասցնել մեզ, սակայն մեր ընտելիքին եւ իրագործելիքին պատասխանատուութեան բաժնեկից պիտի ըլլանք բոլորս, իշխանութիւն թէ անոր դէմ դիրք բռնած կողմեր, ճամբայ պիտի ելլենք երկար շունչ քաշելով եւ աննահանջ կորովով:

Անմիջական թիրախը պիտի ըլլայ Արցախի մէջ մեր ունեցած կորուստներուն վերականգնումը, որովհետեւ գաղտնիք չէ, որ Արցախը կարելոր հիմնաքար է Յայաստանի պահպանումին համար, նաեւ մեկնակէտ՝ վերատիրանալու մեր այն իրաւունքներուն, որոնք ահաւասիկ հարկադրաբար եւ դաւադիր կերպով կը լուսանցքայնանան վերջին պատերազմին եւ զայն կանխող դէպքերու հետեւանքներուն ազդեցութեան տակ:

Մենք իրաւունք չունինք ընկրկելու մեր Դատին, արդար իրաւունքներուն իրականացման ճամբուն վրայ, միայն պարտութիւն եւ սուգ ժառանգելու վաղուան սերունդներուն: Արցախը 25-30 տարի առաջ ազատագրողները, իսկ անոնցմէ առաջ՝ Սարդարապատ եւ այլ յաղթանակներ կերտողները ընդմիշտ չեն կրնար քնացուիլ: Ինչ որ պիտի իրականացնենք՝ պիտի ընենք մեր բազուկներով, առանց մոռնալու, որ մեզի օգնութեան կը հասնին միայն այն ատեն, երբ մեր բազուկները վերջնականապէս վար չենք կախած եւ վճռած ենք երթը շարունակել Պատմութեան ու Աշխարհագրութեան մայրուղիին վրայ:

Այս կամքը ժամանակով չէ սահմանափակուած, այլ պայմանաւորուած է մեր արթնութեամբ, հանճարին թելադրած ինքնավրստահութեամբ եւ ճիշդ տեսլականներու բիրեղացումով, նաեւ՝ այն ըմբռնողութեամբ, որ կ'ապրինք յարափոփոխ աշխարհի մը մէջ, ուր մեզի ի նպաստ փոփոխութիւնները կըրնան տեղի ունենալ մօտիկ կամ քիչ մը հեռու ապագային, իսկ մեզի կը մնայ չմնալ հլու հանդիստեսի աթոռին, այլ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ բերել բարենպաստ պայմաններու կերտումին:



## Ինքնանախում

# ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԱՓԻ ՄԷՉ

*Յակոբ Միրայելեան*

Չեմ կրնար դիտել ազերիական ու թրքական «յաղթանակի» խենեշ ցուցադրութիւնները, որոնք աւելի կը նմանին գիշատիչներու խնճոյքին:

Պարտութիւնը ահաւոր բան է, նոյնիսկ նարտի, կամ թղթախաղի պարագային, ալ ուր մնաց, երբ «պարտուողը» երկիրդ է: Բառը կը չակերտեմ, որովհետեւ դեռ չեմ կրնար մարսել գայն: Չեմ կրնար մարսել, որովհետեւ տարուած «յաղթանակը» թշնամիին զինուժէն աւելի, մեր ինքնախաբերութեան, պոռոտախօսութեան, անկազմակերպութեան ու անտեղի ինքնավստահութեան արդիւնքն էր: Եւ ինչո՞ւ պահել՝ նաեւ արդիւնքն էր որոմներու, որոնք մեր արդար ցորեանին մէջ վարակներ տարածեցին ու բերքը փճացուցին:

Երկու կարճ ընդհարումներուն, երբ մեր կեցուածքը գերակշիռ էր, պէտք չէ հաւատայինք եւ պէտք չէ թոյլ տայինք, որ ժողովուրդն ալ հաւատայ թէ մենք անպարտելի ենք, քաւի անսման հոգեկանով զինուած զինուորներ



ունինք: Սակայն, մեր երկրին նման գիտութեան եւ ճարտարագիտութեան նուաճումներ արձանագրող երկիր մը, աւելի զուսպ ու խելացի ըլլալու էր, փոքր յաղթանակներէն

չզինովնալու համար եւ հետեւելու էր թըշնամիին, որ անընդմէջ իր սպառնալիքներով, ամենաարդիական զէնքերով, զինամթերքներով ու ռազմափորձերով կը պատրաստուէր մեծ հարուած մը տալու Արցախին:

Մեր ունեցած դասական զէնքերով, առանց օդուծի, առանց անօդաչու թռչող սարքերու, մէկ ու կէս ամիս դիմադրեցինք, բան մը, որուն համար կարելի է միայն հպարտանալ, այդ յաղթանակը վերագրելով մեր զինուորներուն: Սակայն, որքան ալ ոգին իշխէ, Իսրայելի կողմէ մատակարարուած արդիական զէնքերն ու յատկապէս ԱԹՍ-ները, առաւել թրքական սատարը ազերիական բանակին ու վարձկաններու մասնակցութիւնը պատճառ դարձան, որ օրէ-օր մաշումի գացող մեր բանակը ակամայ հասնի անդունդի եզրին:

Պատերազմի ամբողջ ընթացքին, պաշտօնական տեղեկատուութիւնները անընդհատ յաջողութիւններու եւ յաղթանակներու մասին կը խօսէին, անընդհատ յարձակողները «ետ շարտելու» մասին կը խօսէին, իբր ժողովուրդին հոգեկանը բարձր պահելու համար, սակայն, կը խաբէին ժողովուրդը, թաքցնելով իրականութիւնը, եւ երբ պատահեցաւ բնաւ չնախատեսուած անձնատուական, ամօթալի համաձայնութիւնը, անակընկալէն շշմած, արիւնը սառեցաւ մեր երակներուն մէջ: Եւ ինչ համաձայնութիւն... այսքան ամօթալի անձնատուութիւն չէինք պատկերացներ: Կանխորոշուած էր, նախօրօք գաղտնի համաձայնութիւն գոյացած էր, հաւատացողներ կան, չհաւատացողներ ալ կան:

Հիմա յանցաւոր կը փնտռուի ու կողմեր մէջտեղ եկած, զիրար կ'ամբաստանեն: Այսպիսի պարագաներու առաջին առթիւ երկ-

# Գանձասար

րի ղեկավարը ազնուօրէն հրաժարելու է, իր վրայ վերցնելով պարտութեան բոլոր պատասխանատուութիւնը, որովհետեւ իրեն կապուած են եւ իր հրահանգով կը շարժին երկրի բոլոր լծակները:

1967-ի արաբ-իսրայելեան վեցօրեայ պատերազմէն ետք, երբ Եգիպտոսի բանակը ահաւոր կերպով խորտակուած էր ու երկիրն ալ տարածքներ կորսնցուցած, Նախագահ Ճամալ Ապտըլ Նասեր իր վրայ վերցուց պարտութեան ամբողջ պատասխանատուութիւնը եւ հրաժարեցաւ, սակայն Եգիպտացի ժողովուրդը միլիոններով փողոցները իջաւ Նախագահէն պահանջելով, որ ետ քաշէ իր հրաժարականը, սիրուած ու պաշտուած ղեկավար էր, տեղի տուաւ եւ մնաց իր պաշտօնին վրայ, սակայն մեր մօտ, չհրաժարեցաւ վարչապետը եւ ականջ չկախեց իր հրաժարականը պահանջող ցուցարարներուն, հայկական աւանդական կուսակցութիւններուն, մեր երկու կաթողիկոսներուն ու շարունակեց մնալ իր աթոռին վրայ ու բաւականացաւ պաշտօնէ ազատելու շարք մը Նախարարներ:

Այսօր երկիրը անփառունակ վիճակի մէջ է, պարտութեան լեղի բաժակը դեռ չէ քամուած, հազարաւոր Նահատակներ, հարիւրաւոր գերիներ, անհետ կորածներ, անտուն արցախցիներ, քանդուած քաղաքներ եւ գիւղեր, տնտեսական ոչ բաղձալի վիճակ, սղած, Դրամի արժեզրկում ու այս բոլորին վրայ Ալի-եւ կոչուած անասունին բարբառանքները, թէ Չանգեզուրը, Սեւանն ու Երեւանն ալ իրն են...

Ու աղետին մշուշը փարատելէ ետք, յայտնի կ'ըլլայ, որ այս պատերազմը Նախաբանն էր մեծ ծրագրի մը գործադրութեան, որուն զոհ գացին Արցախն ու Հայաստանը: Ծրագրին ետեւ կանգնած են Իսրայելը, ԱՄՆ, Ռուսիան եւ Թուրքիան: Նպատակը՝ Իրանին սահմանակից ուժեր կուտակել է, գայն հարուածելու համար, առաւել՝ Սուրիացի վարձկաններն ու անոնց ընտանիքները Արցախի գրաւուած շրջաններուն մէջ բնակեցնելով Թուրքիոյ վրայէն բեռ մը պակսեցնելը, զանոնք հոս ու հոն ուղարկելով: Իսկ Ռուսիան ալ իր շահերը ունի, շատ պարզ է, դէպքերուն հետեւորդ տեսաւ թէ ինչ հսկայ բանակով ու զինատեսակներով որպէս խաղաղապահ ուժ, եկաւ ան: Փութիւնը պատժեց Նի-

կոլիս, որ իր մարզանքները շրջապատի երամեն դուրս կը կատարէր: Ռուսիան շատոնց կը փափաքէր զգալի ներկայութիւն մը ունենալ Հարաւային Կովկասի մէջ եւ ահա՛ առիթը:

Ե՞րբ ինքնաճանաչումի պիտի դիմենք, ե՞րբ պիտի գիտնանք ինչն ու ինչոցը: Ե՞րբ քաղաքագիտութիւն պիտի սորվինք, դիւանագետ ըլլանք, ճանչնանք բարեկամն ու թշնամին, հայրենիքի շահերը ամեն ինչէ վեր դասենք ու գործենք խելացիօրէն: Քաղաքականութիւնը Նաեւ առեւտուր է, ի՞նչ ունինք տալիք օտարին, որ շահինք անոր նեցուկը, քրիստոնեութի՞ւն, հանքային ջուր եւ քունեա՞ք...

Ատրպէյճանը Նաֆթ ունի, ծով ունի, հարուստ երկիր է, ամեն մարդ շահ ունի այդ երկրէն, անո՞ր կողքին կը կանգնին, թէ՞ մեր: Զաղաքականութիւնը բարոյականութեան հետ կապ չունի, ոչ ալ արդարութեան: Շա՛հ, միայն շա՛հ: Առեւտուր. բան մը պիտի տաս, որ փոխարէնը բան մը առնես: Տեսէ՛ք, Մարոքը ճանչցաւ Իսրայելը, Թրամփն ալ ճանչցաւ հարաւային անապատի Մարոքի մաս կազմելը, բան մը, որ տասնամեակներու անլուծելի թնճուկ դարձած էր:

Փոքր երկիր ենք, փոքր կարողութիւններով, սակայն մեծ-մեծ խօսելու վարպետ: Ատրպէյճանի բանակին յատկացուած տարեկան պիւտճէն 26 միլիարտ տոլար է, իսկ Հայաստանինը՝ միայն 4 միլիարտ: Վերջապէս թիւերը կը խօսին չէ՞: Ճիշդ ասոր համար ալ խելացի գտնուելու էր մեր պետութիւնն ու Նախապատրաստուէր:

Հայերուս համար կ'ըսեն տաղանդաւոր, բայց ոչ խելացի. Կը կարծեմ բաւական ճիշդ բնորոշում է. տաղանդը ուրիշ բան է, խելացութիւնը՝ ուրիշ: Արդ, ներքին երկպառակութենէ հեռու, խելք գործածելու է այս վիճակէն դուրս գալու ելք որոնելով: Ամեն ինչ չէ կորսուած, կարելի է սիւալները ուղղել, փրկութեան նոր քարտէզ մը գծել ու վերականգնիլ: Ասոր համար համերաշխութիւն պէտք է, համագործակցութիւն: Մեր ամբողջ պատմութեան ընթացքին յաճախ ինկած ենք, սակայն կրկին ոտքի կանգնած ենք: Ո՞ր է այն փնտռուած «փրկիչը», որ պիտի յաջողի մեր սայլը ցեխէն դուրս բերել: Միայն ուշադիր, յանկարծ անձրեւէն փախելով, կարկուտի չբռնուինք:



# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ ԱՐՑԱԽԵՆԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐՈՒՆ

*Խաչիկ Շահինեան*

«Տեղեկատուական առճակատում» եզրոյթը կը բնութագրէ մարդկային հանրութեանց միջեւ ծաւալող դիմակայութեան գործընթաց, որ կը ձգտի ռազմավարական մակարդակի գիտական, քաղաքական, տնտեսական, ռազմական կամ այլ նպատակներու իրագործման եւ յաջողութեան:

Տեղեկատուական առճակատման առաջին վաւերագրուած արտայայտութիւնը արձանագրուած է,- այսպէս կոչուած,- Արեւելեան պատերազմի կամ Խրիմի պատերազմի ընթացքին (1853-1856), երբ Սինոքի ճակատամարտին անմիջապէս յետոյ անգլիական մամուլը այդ ճակատամարտի մասին հաշուետուութիւն ներկայացնելով կը գրէր. «Ռուսերը կը գնդակահարէին ու վերջ կու տային ծովուն մէջ լողացող վիրաւոր թուրքերու կեանքերուն...»:

կան համակարգեր, կը բովանդակեն տարբեր, երբեմն նոյնիսկ զիրար մերժող, փոխ բացառող եւ հակասող արժեհամակարգեր՝ գաղափարախօսութիւն եւ իշխանութեան վարչադրոյթ ներփակող: Նման հանրոյթներ կը հանդիսանան ճանչցուած եւ չճանչցուած պետութիւնները, պետութեանց դաշինքներն ու միութիւնները, քաղաքացիական պատերազմի կողմերը, ծայրայեղական եւ ահաբեկչական կազմակերպութիւնները, որոնք կը ձգտին բռնի ուժով զաւթել երկրի իշխանութիւնը, անջատողական եւ ազատագրական շարժումները:

Տեղեկատուական ենթահողի վրայ ընթացող հակամարտութիւնը կ'ուղեկցի կեանքի եւ գործունեութեան հիմնարար ոլորտներէն (քաղաքական, տնտեսական, ռազմական եւ այլ...) ներս իրականացող առճակատումներուն ու կ'ապահովէ անոնց բարեյաջող ելքը:

Տեղեկատուական պատերազմի ղեկավարման եւ ծաւալման գլխաւոր միջոցներ կը հանդիսանան զանգուածային լրատուամիջոցները, ընկերային ցանցերը, փոստային ծառայութիւններն ու մինչեւ անգամ ներծողովրդային բամբասանքները:

Տեղեկատուական պատերազմին կրնան մասնակցիլ թէ՛ իշխանութիւններու կողմէ ստեղծուած կառոյցները, եւ թէ՛ առանձին հանրոյթներ, խմբաւորումներ ու անհատներ:

Տեղեկատուական առճակատումը շարունակական է, անընդմեջ: Կը ծաւալի ոչ միայն պատերազմական գործողութիւններու ընթացքին, այլ նաեւ խաղաղ



Տեղեկատուական պատերազմը կը սանձագերծուի մարդկային հանրութեանց միջեւ, որոնք ստեղծած են իշխանութեան սեփա-

# Գանձասար

պայմաններու տակ:

Միջազգային նորոգեայ յարաբերութեանց մէջ շատ մը պետութիւններ մեծ կարելութիւն կ'ընծայեն տեղեկատուական պատերազմներ ղեկավարող դրոյթներու արդիականացման եւ տեղեկատուական անվտանգութեան պահպանման հիմնախնդիրներուն: Տեղեկատուական արհեստագիտութեան, մեթոտներու եւ հնարքներու առաջընթացն ու հեռահաղորդակցութեան միջոցներու ժամանակակից նուաճումները միջպետական իրադարձութիւններու հարթութեան վրայ սեփական շահերն ու նպատակները յառաջ մղող էական գործօններ կը համարուին: Զետեւաբար՝ պետութիւններ անսպառ ջանք, եռանդ եւ նիւթական հսկայ յատկացումներ ի սպաս կը դնեն՝ տիրանալու համար արհեստավարժ «տեղեկատուական բանակ»ի եւ պաշտպանուած տեղեկատուական ենթակառոյցներու: Վերջին տարիներու համաշխարհային փորձը կը վկայէ, որ տեղեկատուական հոսքերու ներգործութիւնը որքան պետութեան համար կրնայ հզօր գէնքի վերածուիլ եւ հակառակորդի նկատմամբ առաւելութիւն շնորհել անոր: Իսկ նման գէնք դիմակայելու համար անհրաժեշտ ներուժ եւ հնարաւորութիւնները զուրկ պետութիւնները, ամենայն հաւանականութեամբ, պիտի յայտնուին պարտուածներու եւ արհամարհուածներու շարքին:

Անցնող երեսուն ամեակին հայկական գոյգ հանրապետութիւնները՝ Զայաստանն ու Արցախը, պարտադրաբար ներքաշուած են տեղեկատուական անողոք եւ մաշեցնող մարտերու մէջ: Ազերիական տեղեկատուական քաղաքականութեան դէմ իր անդուլ պայքարին շնորհիւ, հայկական կողմը բաւական փորձ եւ գիտելիք կուտակած է արդէն: Սակայն աստիճանաբար վերափոխուող եւ զարգացող հաղորդամիջոցները, ինչպէս նաեւ թշնամիի կողմէ տակաւ սաստկացող քարոզչութիւնը մեր գոյգ պետութիւններուն համար, անհրաժեշտութիւն կը դարձնեն ժամանակի փոփոխութեանց համահունչ քայլեր որդեգրել, ինչու չէ նաեւ՝ հարկաւորութեան պարագային համարժեք հակահարուածներով հակառակորդի գործողութիւնները հակակշռելը:

Վերոյիշեալ տեսակետի լաւագոյն ապացոյցն ու արժանահաւատ հաստատումը պի-

տի հանդիսանար, ընթացիկ 2020 տարեթիւի Սեպտեմբերին, ազերիներու կողմէ արցախահայութեան դէմ շղթայազերծուած մէկուկէսամեայ լայնածաւալ եւ ողբերգական պատերազմը, որ ահաւոր եւ կործանարար հետեւանքներ ունեցաւ պատերազմող հայ եւ ազերի ժողովուրդներուն համար, պատճառելով անոնց՝ մարդկային եւ տնտեսական անդարմանելի ու անհաշիւ կորուստներ: Այդ օրհասական պատերազմի ռազմական գործողութիւններուն կը զուգակցէին տեղեկատուական ոչ-պակաս սարսափելի առճակատումներ, որոնց հանգամանօրէն կ'անդրադառնանք հետագայ տողերով:

\* \* \*

Թուրքիոյ բացայայտ օժանդակութեամբ, 27 Սեպտեմբեր 2020-ին, Ատրպէյճանի կողմէ Արցախի դէմ սանձազերծուած 44-օրեայ մարտական լայնածաւալ գործողութիւններու զուգահեռ, հակամարտող կողմերու միջեւ տեղեկատուական թե՛ պատերազմ մէկնարկած էր:

Առճակատող գոյգ կողմերն ալ սեփական հասարակութիւնները կ'իրագրէին իրենց արձանագրած «հպարտառիթ» յաջողութիւններու եւ յառաջընթացի, ինչպէս նաեւ հակառակորդի «անփառունակ» ճախողութեանց, թուլութեանց, նահանջի եւ ընկրկումներու մասին:

Նոյն ընթացքին անոնք չէին վարանիր հակառակորդի հասցէին վիրաւորանքներ, վարկաբեկումներ, գայթակղեցուցիչ տեսանիւթեր եւ լուսանկարներ հրամցնելու հանրութեան՝ ոգեւորելու համար սեփական ժողովուրդը, միաժամանակ ահ ու սարսափի մատնելու թշնամին:

Իսկ հակադիր կողմերու ներկայացուցած մարտական գործողութիւններու առընչուած պատկերները մեծ տարողութեամբ կը տարբերէին իրարմէ:

Այսպէս, Զայաստանի թե՛ Ատրպէյճանի մէջ յայտարարուած ռազմական դրութեան արդիւնքով խօսքի ազատութիւնը զգալիօրէն սահմանափակուած էր:

Զայաստանի մէջ, ուր անկախ մետիայի հետ աղերսուած իրավիճակը աւանդաբար եւ առհասարակ աւելի բարենպաստ պատկեր կը պարզէ, քան Ատրպէյճանի պարագային, 8 Յոկտեմբեր 2020-էն սկսեալ կը գործը յատուկ օրէնք, որով կ'արգիլուէր ռազ-



մաճակատի կացութիւնը բացասաբար ներկայացնել:

Որպէս գլխաւոր հաղորդումներ, կողմերը պարբերաբար հանրութիւնը կը տեղեկացնէին ծաւալող ռազմական գործողութիւններու ընթացքին մասին, առաւել եւս հերթականօրէն կը զեկուցէին սեփական թէ թըշնամիի կորուստներու առնչութեամբ:

Հայկական կողմը պարբերաբար կը հրապարակէր նահատակուած հայ զինծառայողներու անուանացուցակները, ինչպէս նաեւ տեղեկութիւններ կը հաղորդէր հրետակոծութիւններու պատճառով զոհուած կամ վիրաւոր խաղաղ եւ անզէն բնակիչներու մասին:

Ատրպէյճան կը բաւականանար պարբերաբար անդրադառնալով սեփական խաղաղ բնակիչներու մահուան պարագաներուն, մինչ՝ ռազմաճակատներու վրայ կորսնցուցած իր զինծառայողներու թիւը չէր հրապարակէր՝ խոստանալով այդ մասին հաղորդել պատերազմի ավարտէն ետք միայն:

Պատերազմի մեկնարկէն ի վեր, ատրպէյճանական կողմէն գլխաւոր եւ պաշտօնական «խօսափող» ի պարտականութիւնները կը կատարէին երկրի նախագահ Իլհամ Ալիեւի twitter-եան գրառումները, որոնց մէջ պարբերաբար կը հաղորդուէին ատրպէյճանական բանակի կողմէ գրանցուած յաղթանակներու եւ գրաւուած տարածքներու կամ բնակավայրերու մասին:

Որոշ ժամանակ ետք, սովորաբար, այդ տեղեկութիւններուն կը հետեւէր Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան տեսահաստատումը YouTube-եան եւ telegram-եան ալիքներով:

Նոյն կերպով յայտարարուեցան Թալիշու Մատաղիս գիւղերու, ճապրայիլ եւ Ֆիզուլի քաղաքներու գրաւման լուրերը: 2020-ի Հոկտեմբեր 9-ին Ատրպէյճանի նախագահը շտապեց յայտարարելու Հատրուսի շրջկէդրոնի գրաւման լուրը, մինչդեռ՝ ատրպէյճանական հաւաստի աղբիւրներու համաձայն, այդ գրաւումը իրականացած էր տուեալ թուականէն քանի մը օր ետք միայն:

Բնականաբար, որպէս կանոն, հայկական կողմը կը մերժէր ընդունիլ իրեն վերագրուած դիրքերու եւ բնակավայրերու կորուստը, լռելեայն հերքելով Իլհամ Ալիեւի լայիրճ յոխորտանքով կատարած հերթական

հաղորդումները՝ ատրպէյճանի վերահսկողութեան տակ յայտնուած նորանուած գիւղերու կամ տարածքներու մասին:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան գլխաւոր խօսանակ Արծրուն Յովհաննիսեան 24 Հոկտեմբեր 2020-ի իր պաշտօնական հաղորդման ընթացքին, հայկական բնակավայրերու մէջ ատրպէյճանական դրօշներու տեղադրման առնչուած հակառակորդի յայտարարութիւնները հետեւեալ ձեւով կը բացատրէր. «*Ատրպէյճանական խմբերը սկսել են հայկական գիւղեր ներթափանցել, դրօշներ տնկել՝ յաղթանակ ցուցադրելու եւ խուճապ սերմանելու համար...*»:

Հայկական կողմը յաճախ յայտարարած է արցախեան բանակի տարբեր զօրամիւտներու բարեյաջող հակագրոհներու եւ ատրպէյճանական զօրքի հերթական ընկըկումներու, ինչպէս եւ հսկայական կորուստներու մասին: Սակայն Պաքուն միշտ ալ հերքած է այդ յայտարարութիւնները:

Երեւանը, իր հերթին, մինչեւ պատերազմի վերջնութիւնը օրը հետեւողականօրէն կը դրօշէր ատրպէյճանական բանակի յառաջխաղացքի եւ ռազմական յաջողութիւններու կապակցութեամբ շրջանառուող հրատարակումները:

Իւրօրինակ նախադէպ կը հանդիսանար հայկական կողմէն Կուպաթի շրջկէդրոնի կորուստը:

Երեւան, 25 Հոկտեմբերին, առաջին անգամ ըլլալով հրապարակեց ռազմական գործողութիւններու իր քարտէզը, որ բնականաբար, հիմնովին կը տարբերէր Պաքուի կողմէ քանիցս հրապարակուող քարտէզներէն:

Անշուշտ, մարտական գործողութիւններու գօտիէն ներս անկողմնակալ դիտորդներ դժուար էր գտնել, այնտեղ հազուագիւտ եղած են նաեւ չէզոք լրագրողներն ու զանազան լրատուամիջոցներու անկաշառ թղթակիցները: Այդ պատճառով ալ՝ ռազմաճակատի իրադարձութիւններու զարգացման մասին ճշգրիտ եզրակացութիւններ կատարելը ընդհանրապէս անկարելի կը թուէր: Նման եզրայանգումներ հնարաւոր կը դառնան միայն մասնագիտական աչալուրջ եւ բարեխիղճ քննութեամբ, անաչառօրէն ուսումնասիրելով եւ բաղդատելով հակամարտող կողմերու նիւթերը, բացայայտուող կողմնակի

# Գանձասար

Եզաններն ու անոնց մանրամասները:

Թշնամիի գիևամթերքի, ռազմասարքերու եւ բանակայիններու ոչնչացման, ինչպէս նաեւ քաղաքացիական (մարդակային թէ տնտեսական) ահաւոր կորուստներու վերաբերեալ այլազան տեսանկիւներ հրապարակելու որեւէ առիթ հակադիր զոյգ կողմերու պաշտօնական ալիքները ջանացած են առաւելագոյնս օգտագործել:

Այդ հրապարակումները, Ատրպէյճանի պարագային, կը բովանդակէին տրոշներով յարձակումներու բազում տեսագրութիւններ, իսկ հայկական կողմի պարագային՝ հրետանիի, հետեւակի եւ հակահրասայլերու արդիւնարար աշխատանքը: Յիշեալ տեսանկիւներու ընդմէջէն հնարաւոր դարձած է ստուգել, եւ յայտնաբերել անհետ կորած բազում մարդոց մահը:

Չմոռնանք սակայն, որ առաւել հիասթափեցնող ու սահմուկեցուցիչ նկիւները առհասարակ կը ներկայացուին ընկերային ցանցերով կամ առանձին սեփականատերերու պատկանող մասնաւոր մարզի մետիայով, գլխաւորաբար՝ telegram ալիքներով: Այս ալիքները կ'օգտագործուին թէ՛ ընթացող իրադարձութիւններու նկատմամբ պաշտօնական տեսակետի վերարտադրման, թէ՛ ռազմաճակատի վրայ տիրող իրավիճակի մասին պաշտօնական հաղորդագրութիւններու ընդհանրացման, եւ թէ այնպիսի նկիւներու տարածման համար, որոնց մասին լրատուական պաշտօնական եթերակայանները չեն ցանկար անդրադառնալ՝ ցեղային-էթնիք նկատառումներով:

Այդ ալիքներու միջոցով կարելի է ծանօթանալ առճակատող երկու կողմերէն քաղուած բազմաթիւ տեսանկիւներու՝ որոնց մէջ կը պատկերուին թշնամի գիևուորներու անկէսդան մարմիններ, երբեմն՝ որոշակի նպատակով ցուցադրուած մանրամասներով, մինչեւ անգամ անմարդկայնօրէն պղծուած մարմնաւիտերով:

Յիշենք թէ՛ երկու հայ գիևուորներու կամ աշխարհագորայիններու (որոնցմէ մէկը՝ տարեց) գերեզարման եւ գնդակահարման վերաբերող տեսանկիւնը աշխարհով մէկ առանձնայատուկ արձագանգ յառաջացուցած է եւ դատապարտումներու լայնածաւալ ալիք բարձրացուցած: Ատրպէյճանցիք, անմիջապէս, այս նկիւնը «Ֆէյք» (յերիւրածոյ) որակած են: Սակայն Պի-Պի-Սի պատկերասփիւռի ու Bellingcat միջազգային հետազօտախումբը կը պնդեն, որ ատրպէյճանական զօրքին կողմէ վերջերս գրաւուած Արցախեան Յատրութ քաղաքին մէջ տեղացի երկու



հայորդի իրօք գնդակահարուած են ազերի գրոհայիններու կողմէ:

Տեղեկատուական պատերազմի գլխաւոր թեմաներէն կը հանդիսանար ատրպէյճանական թէ հայկական բանակներու կողքին կռուող վարձկան գիևեալներու կամ ահաբեկիչներու հարցը:

Սեպտեմբեր 2020-ի հայ-ատրպէյճանական վերջին պատերազմի առաջին օրէն իսկ Երեւանի մէջ կը պնդէին, թէ Ատրպէյճանի կողքին հայկական բանակին դէմ կը կռուին սուրիական թրքամետ խմբաւորումներու վարձկան գիևեալներ, որոնք սուրիական պաշտօնական իշխանութիւններու հակառակորդներն են, եւ որոնք Թուրքիոյ նախածնուութեամբ եւ օժանդակութեամբ տեղափոխուած են Ատրպէյճան հայոց զօրքին դէմ առճակատելու:

Յրապարակուած են զանազան տեսա-



նիւթեր, որոնց մէջ մարտերու ընթացքին կամ Ատրպէյճանի կողմէ արդէն իսկ գրաւուած դիրքերու վրայ ի յայտ կու գան արաբերէն խօսող զինեալներ:

Արեւմտեան որոշ պարբերականներ, ինչպէս Պի-Պի-Սի-ն եւ Ռոյթըրզը, կը հաստատեն վարձկան զինեալներու Ատրպէյճան տեղափոխութեան իրողութիւնը: Երեւանը զանոնք «ահաբեկիչներ» կ'անուանէր եւ կը փորձէր համոզել Ռուսաստանը՝ հակահաբեկչական հաւաքական պայքար ձեռնարկելու անոնց դէմ: Մինչ արեւմտեան մետիան՝ պարզապէս «վարձկաններ» կամ «սուրիացի ապստամբներ» որակումներով կ'անդրադառնար այդ զինեալներուն:

Ինչպէս կանխանշեցինք, Պաքուն յամառօրէն կը հերքէր օտար զինեալներու առգոյութիւնը սեփական զինեալ ուժերու շարքերուն մէջ, ամենայն պոռոտախօսութեամբ միշտ կրկնելով ու պնդելով՝ որ աւելի քան հարիւր հազար զինուոր հաշուող բարձր մարզուածութեան տէր եւ ժամանակակից արդիագոյն զինամթերքով օժտուած իր բանակը ինքնաբաւ է ու ի վիճակի՝ հայկական «զաւթիչ» ուժերէն ազատագրելու Ղարաբաղը եւ Ատրպէյճանական վերահսկողութեան վերադարձնելու զայն:

Նոյն ընթացքին, Ատրպէյճանական մամուլի եւ զանգուածային լրատուամիջոցներու հաղորդումներուն մէջ կը հանդիպինք այնպիսի ստապատիր տեղեկութեանց, որոնք կը փորձեն հաւաստիացնել՝ թէ հայկական բանակի կողքին Ատրպէյճանի դէմ կը կռուէին հակաթուրք թեքումով ահաբեկչական կազմակերպութիւններու անդամ քիւրտ զինեալներ:

Ինչպէս զոյգ կողմերու պետական-պաշտօնական յայտարարութեանց, այնպէս ալ անոնց հետեւորդ անկախ մետիայի հրապարակումներուն մէջ հակառակորդի հասցէին անխնայօրէն շռայլուած վարկաբեկիչ եւ ստորնացուցիչ արտայայտութիւնները սովորական երեւոյթներ դարձած են:

Օրինակ՝ Ատրպէյճանի նախագահը, իր ուղերձներէն մէկուն մէջ, երկրի մը ղեկավարին անյարիր վարքագիծ դրսեւորելով հանդէս կու գար հայկական բանակին հասցեագրուած հետեւեալ անարգական յայտարարութեամբ. «Մենք ցոյց տուինք անոնց՝ ով

*ով է, մենք վերջնականօրէն քշեցինք զանոնք մեր տարածքներէն, շուներու նման...»:*

Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը, իր հերթին, Ատրպէյճանական զօրքի հայ զինուորականներու պարբերական հաղորդագրութիւնը պարզապէս «ցնորք» կամ «երագ» կ'որակէր:

Միւս կողմէ՝ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան ներկայացուցիչները եւս պիտի չուշանային ներգրաւուելու այդ զազրախօսութեանց եւ փոխադարձ ցեխարձակումներու տիղմին մէջ հայկական կողմէն Ատրպէյճանական քաղաքները հրետակոծելու անհիմն եւ սարքովի լուրերը բնութագրելով «բացարձակ յիմարութիւն եւ ցինիկ սուտ»:

Չոյգ երկիրներու լրատուամիջոցները (իրենց պաշտօնական թէ անկախ թելերով) սովորաբար հանրութեան կը ներկայանային թշնամի կամ հակառակորդ կողմին հասցեագրուած իրենց բուռն, կծու, նուաստացուցիչ եւ վարկազրկիչ արտայայտութիւններով, ծանրագոյն ու եպերելի ամբաստութիւններով, մինչեւ անգամ ամօթալի եւ անհանդուրժելի վատաբանումներով:

44-օրեայ պատերազմի գրեթէ ողջ տեւողութեան հայկական մետիայի վերլուծաբանները անտեղիտալիօրէն կը պնդէին, որ Ատրպէյճանի հսկայական կորուստներ կ'արձանագրէ, իսկ հայկական կողմը յաջողութեամբ ետ կը մղէ Ատրպէյճանական բոլոր յարձակումները, տեւաբար զրահուած այն հաստատ համոզումով՝ որ հայ մարտիկը ուշ կամ կանուխ անպայման պիտի ջախջախէ անագորոյն թշնամին:

Գաղտնիք չէ՝ որ հակամարտող զոյգ կողմերու լրատուամիջոցներն ալ կը ջանային իրենց լսարանի համար բարենպաստ մթնոլորտ ստեղծել եւ արժանահաւատ, համոզիչ տեղեկանք հաղորդել: Անոնք պատրաստ էին որեւէ միջոցառումի ձեռնարկելով սեփական ժողովուրդի հայրենասիրական ոգին բարձրացնելու, անոր կորովն ու մարտունակութիւնը ջրդեղելու: Միաժամանակ՝ հետեւողականօրէն սադրիչ եւ գրգռիչ յայտարարութիւններ հրապարակելով անոնք կը հետամըտէին հակադիր կողմի նկատմամբ համաժողովրդային բուռն ընդվզում, համատարած խորշանք, ատելութիւն եւ անհաշտ թշնամանք սերմանել:

## ՊԱՔՐՈՒԷՆ ՅՆՉԱԾ ՅՍՏԱԿ ԿՈՉԵՐԸ

*Գեորգ Յակոբճեան*

44 օրեր պատերազմ շղթայագերծած, ժամանակակից զենքերու եւ գերպատրաստուած բանակի գրեթէ բոլոր կարելիութիւնները օգտագործած, ահաբեկիչ վարձկաններ ներգրաւած, ապատեղեկատուութիւն տարածած, միջազգային օրէնքի եւ միջազգային մարդասիրական օրէնքի կոպիտ



խախտումներ կատարած, պատերազմական ոճիրներ գործած, կրթամշակութային, կրօնական ու քաղաքացիական կալուածներ հարուածած, քաղաքացիներ սպանած, առեւանգած ու խոշտանգած ու կրցախի ժողովուրդին ֆիզիքական գոյութիւնն ու ինքնորոշման իրաւունքը կոպտօրէն խախտած Ատրպէյճանն ու Թուրքիան 10 Դեկտեմբեր 2020-ին լկտիաբար ու համայն աշխարհին

լուռ ու անտարբեր պահուածքին դիմաց «յաղթանակի շքերթ» կազմակերպեցին Պաքուի մէջ: Շքերթի ընթացքին Ատրպէյճանի եւ Թուրքիոյ Նախագահներուն ելոյթները միջազգային ընտանիքին ու յատկապէս հայկական շրջանակներուն մօտ լրջօրէն անհանգստանալու, անոնց քննարկումները դժրժելու, դատապարտելու եւ ապագայի ընելիքները ըստայնմ ծրագրելու անհրաժեշտութիւն կը ստեղծեն:

Ատրպէյճանի Նախագահի մեծամտական, հռետորաբանական, միջազգային օրէնքն ու համաշխարհային կարգը (global order) անտեսող, ուժն ու պատերազմը արդարացնելու ձգտող, ինչպէս Նաեւ պատմական իրողութիւնները խեղաթիւրող ու նենգափոխող ելոյթին մէջ ուշագրաւ էին հետեւեալ կէտերը.-

Ա. Ալիեւ բարձր գնահատեց Թուրքիոյ անմիջական ներգրաւուածութիւնն ու իրեն նեցուկ եղած ըլլալը վերջին պատերազմին: Ան Թուրքիոյ ցուցաբերած զինուորական, քաղաքական ու դիւանագիտական աջակցութիւնն ու պատերազմի մասնակցութիւնը թուրք եւ ազերի ժողովուրդներու միասնութեան եւ եղբայրութեան պարունակին մէջ դրաւ:

Բ. Չանգեզուրը, Երեւանը եւ Գեղարգունիքը ազերիական պատմական հողեր նկատեց, որոնց վրայ, ըստ իրեն, դարեր շարունակ ազերիներ ապրած են:

Գ. Բարձր գնահատեց Ատրպէյճանի վերջին տարիներու զարգացումը, բանակաշինութիւնը եւ դիւանագիտութեան մէջ արձանագրած ձեռքբերումները: Ան մէջբերեց ՄԱԿ-ի եւ միջազգային այլ կազմակերպութիւններու կողմէ որդեգրուած Ատրպէյճանի տարածքային ամբողջականութիւնը չխախ-



տելու միտող ազերիանպաստ կեցուածքներն ու որոշումները:

Դ. Մեղադրեց վերջին երկու տարիներու ԶՅ իշխանութիւնները՝ բանակցութիւնները տապալելու, սադրիչ յայտարարութիւններ ընելու եւ կեցուածքներ որդեգրելու յանցանքով, ինչպէս նաեւ հայութեան կողմէ Արցախի վերաբնակեցման աշխատանքները պատերազմական ոճիւր սկստեց:

Ե. Ատրպէյճանական ռազմական գործողութիւններուն շնորհիւ, ընդամենը 44 օրուան մէջ հայոց բանակը տկարացաւ ու կազմալուծ դարձաւ ու հայոց բանակի անպարտելութեան թեզը դրժուեցաւ:

Զ. Զակառակ Արցախեան հարցի առնչակից կողմերու պնդումներուն, որ զինուորական լուծում չկայ այս հակամարտութեան ակարտին, Ատրպէյճան փաստեց, որ կարելի է զինուորական միջոցներով լուծումի հասնիլ:

Է. Պատմական իրողութիւն է այս յարթանակը Ատրպէյճանի համար, որուն ան կը պատրաստուէր անցնող երեսուն տարիներուն ընթացքին:

Յետաքրքրական է, որ Ալիեւ իր ելոյթին մէջ ո՛չ մէկ ձեւով կ'անդրադարձայ ռուսական խաղաղապահ զօրքերու ներկայութեան,



կործանարար յայտարարութեան մնացեալ կետերուն, Մինսքի համանախագահող խումբին նոր կացութեան լոյսին տակ ստանձնելիք դերակատարութեան, ինչպէս նաեւ Արցախի կարգավիճակին:

Գալով Երտողանին, ան իր խօսքին մէջ զօրակցութիւն յայտնեց Ատրպէյճանին եւ հաստատեց, որ թուրք-ազերիական յարաբերութիւնները Ալիեւի հօր յայտարարած «Երկու պետութիւն, մէկ ազգ» կարգախօսով կ'առաջնորդուին, եւ այնքան ատեն որ երկու երկիրները իրարու թիկունք կու տան, բո-

լոր մարտահրաւերները յաջողութեամբ կը դիմագրաւեն: Երտողանի պնդումով՝ «պայքարը, որ քաղաքական եւ զինուորական միջոցներով կը ծաւալէր, չէ աւարտած եւ պիտի շարունակուի տարբեր ճակատներու վրայ»: Ան մեղադրեց ու այպանեց Մինսքի համանախագահներու խաղաղութեան գործընթացը, դատապարտեց Ֆրանսայի սենատին կողմէ վերջերս ընդունուած Արցախի ի նպաստ բանաձեւը եւ կոչ ուղղեց Յայաստանին ու Ատրպէյճանին վերանայելու իրենց յարաբերութիւններուն, որովհետեւ «կայսերապաշտ արեւմուտքի զառանցանքէն» բան կարելի չէ քաղել եւ որ կարելի է նոր ժամանակաշրջան սկսիլ, եթէ «Յայաստան դասեր քաղէ Արցախի մէջ պատահածէն»:

Աւելին, Երտողան սադրիչ մէկ արտայայտութեամբ ըսաւ. «Մենք յոյս ունինք, որ Յայաստան կը ձերբազատի Սփիւռքի կապանքներէն, որոնք զինք աղքատութեան մատնեցին՝ մխիթարելով անցեալի սուտերով»: Ան շարունակելով իր խօսքը ըսաւ. «Եթէ Յայաստան հրաժարի իր անիրատեսական յաւակնութիւններէն, ան կրնայ օր մը մաս կազմել մեր տարածաշրջանային դաշինքներուն: Մենք ոչնչացուցինք անոնց (հայկական) բանակը եւ ապա կոչ ուղղեցինք Յայաստանին համագործակցելու մեզի հետ»: Տարածաշրջանային խաղաղութիւն հաստատելու ձգտող վեց երկիրներէ կազմուած հարթակ մը ստեղծելու առաջարկի մը եւս անդրադարձաւ Երտողան եւ ակեցուց որ եթէ Յայաստանի կողմէ «դրական քայլեր» առնուին, Թուրքիա կրնայ սահմանը բանալ Յայաստանի հետ: Դժուար չէ ենթադրել, թէ «անիրատեսական յաւակնութիւններ» եւ «դրական քայլեր» ըսելով Երտողան ի՞նչ պայմաններու, յաւակնութիւններու եւ քայլերու կ'ակնարկէ: Երտողանի համար Յայաստանի կողմէ Յայոց Տեղասպանութեան ճանաչման եւ հետեւանքներու վերացման գործընթացէն հրաժարիլը (ներառեալ հողային պահանջատիրութիւնն ու Սեւրի դաշնագիրին տրամադրութիւնները), Արցախն ու Արցախի ժողովուրդի գոյութիւնը ազերիներուն քմահաճոյքին յանձնելը, Թուրքիան պատմական պատասխանատուութեան ենթարկելէ հրաժարիլը ու նաեւ հայութեան եւ հայոց պետականութեան գոյութեան հաշուոյն փանթուրանական ծրագիրին իրակա-

# Գանձասար

Նացումը «դրական քայլեր» կը նկատուին Էրտողանին ու թրքական քաղաքական վերնախաւին համար:

Ալիեւի եւ Էրտողանի վերոնշեալ յայտարարութիւնները խոր վերլուծութեան կարիք չունին հասկնալու համար անոնց հայատեաց քաղաքականութիւնը, ներկայի ու ապագայի ծրագիրները: Այս կեցուածքները անգամ մը եւս յստակօրէն կը հաստատեն, որ հայ ժողովուրդն ու հայոց պետականութիւնը գործ ունին իրենց արեւելեան եւ արեւմտեան սահմանները զբաղեցնող այնպիսի իշխանութիւններու հետ, որոնք պատմական, շարունակական ու համակարգուած (systematic) ձեւով թշնամակը, ատելութիւն կը քարոզեն ու կը գործադրեն, պատրաստ չեն իրենց միջ-ազգային պարտաւորութիւնները կատարելու եւ տարածաշրջան-ային խաղաղութեան նպաստելու:

Ալիեւն ու Էրտողանը ժառանգորդներն ու աշխոյժ սպասարկուներն են փանթուրանական ծրագիրին իրագործման, ծաւալապաշտական թրքացեղ կայսրութիւն ստեղծելու եւ հայկական տարրը տարածաշրջանէն վերացնելու գործին: Անոնք ո՛չ միայն հետաքրքրուած չեն կայուն ու մնայուն խաղաղութեամբ ու հաշտութեամբ, այլեւ բացայայտ նկրտումներ ու ծրագիրներ ունին Արցախի կողքին, ներկայ Հայաստանը գրաւելու եւ Նոր պատուհասներ պարտադրելու հայ ժողովուրդին: Հետեւաբար, անոնք որոնք կը հաւատան, թէ այս ծանր փուլին կարելի է Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ բարի դրացիական ու արդար յարաբերութիւններ հիմնել, անկեղծ ըսենք՝ ինքնախաբէութեամբ կը զբաղին ու նաեւ կը վնասեն մեր ազգային անվտանգութեան: Բնական ու հրամայական է, որ բոլորս ձգտինք խաղաղութեան ու բարի դրացիութեան, բայց երբ կողմերուն միջեւ ուժերու կտրուկ անհամաչափութիւն կայ, երբ յաղթող ու պարտուող կողմեր կան, երբ Հայոց Տեղասպանութեան ուրացման քաղաքականութիւնը կը շարունակուի, երբ պատմական անարդարութիւններուն վրայ նո՛ր ու ողբերգական անարդարութիւններ կ'աւելնան, երբ մէկ կողմը հարցերու լուծման ձգտելու փոխարէն, ուժի եւ ապօրինի

միջոցներով աւելի կործանարար ու թշնամական ծրագիրներ կը գործադրէ, երբ այդ կողմը պատրաստ չէ երկխօսութեան ճամբով սխալները ընդունելու, փոխհատուցելու, վնասները վերացնելու, նորերը կանխարգիլելու եւ հաշտութեան գործընթացէ անցնելու:



լու, այդ ձգտումը կը մնայ լոկ իտեալական երագ եւ անիրատեսական մօտեցում:

Առ այդ, սթափ եւ իրատեսական մտածողութեան ու մանաւանդ առանց ժամանակ վատնելու գործի անցնելու, միասնականօրէն ու մեր ազգային-պետական շահերէն բխած ռազմավարութեամբ յառաջ ընթանալու մարտահրաւերին առջեւ կանգնած է ամբողջ հայ ժողովուրդը: 9 Նոյեմբերի խայտառակ ու կործանարար յայտարարութենէն ետք, հայ քաղաքական-դիւանագիտական շրջանակները կոչուած են անկարելին կարելի դարձնել ու բազմաբեւեռ արտաքին քաղաքականութեամբ թուրք-ազերիական ախորժակները զսպելու եւ յայտարարութեան կետերը համաձայնագիրներու վերածելու գործընթացին մէջ հայանպաստ կետեր արձանագրել: Իսկ հայոց բանակը, որպէս հայ ժողովուրդի եւ հայոց պետականութեան հիմնական եւ առաջնային երաշխաւոր, դարձեալ առանց ժամանակի կորուստի, պարտաւոր է վերականգնիլ եւ ուժեղանալ, դիմադրելու համար ապագայի թուրք-ազերիական յարձակումները, կանխարգիլելու համար Նոր պարտութիւնները, ինչու չէ նաեւ մեր վերջին կորուստները վերազատագրելու, վերականգնելու եւ հայոց սահմանները անառիկ պահելու:



# ԱՐՑԱԽԻ ՀԻՄՆԱՅԱՐՅԸ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## Յակոբ Նալպանտ-Տյոլեան

Երբ 1988-ին սկիզբ առաւ Արցախի պատերազմը, միջազգային դերակատարները միշտ կը փորձէին փխրուն զինադադարներով կասեցնել զայն: 1992-ի Մարտին յառաջացաւ Մինսքի խումբը, որուն պատասխանատուութեան ծիրին մէջ էր Լեռնային Ղարաբաղի հարցի քաղաքական լուծման ապահովումը: Մինսքի խումբը կը բաղկանար 17 երկիրներէ, սակայն հիմնական որոշումները եւ բանակցութիւնները յանձնուած էին հիմնական երեք երկիրներու պատասխանատուութեան, անոնք են՝ ԱՄՆ, Ֆրանսա եւ Ռուսիա:

Պատմական, ցեղային, կրօնական եւ քաղաքական պայմաններն ու միջավայրը իրենց խոր հետքերը ձգած են Արցախի հիմնահարցի ակունքներուն վրայ՝ սկսած 1918-էն եւ Նոյնիսկ ԽՍՀՄ-ի հիմնադրումէն առաջ. միջազգային ուժեր, յատկապէս Մեծն Բրիտանիա, լրջօրէն հետաքրքրուած են Հարաւային Կովկասով: Իսկ Ռուսական կայսրութեան համար Հարաւային Կովկասը կենսական աշխարհաքաղաքական տարածք էր, որ դարերու խորքէն փոխանցուած է այսօրուան Ռուսաստանի վերահսկողութեան եւս:

Վերջին պատերազմը դադրեցաւ ռուսական միջամտութեամբ: Այս զինադադարով Ռուսաստան ուզեց փոխանցել աշխարհին, որ Հարաւային Կովկասը կը մնայ ռուսական շահերու կենսական տարածք: Չինադադարի պայմաններու հաստատումով, Ռուսիա թուրքիոյ նկատմամբ ունեցաւ բաւական շահեկան դիրք, սակայն այս զինադադարը վերջնական չէ եւ կը պարունակէ ոչ յստակ եւ չճշդուած կէտեր, որոնք յղի են լարուածութեան սրման նախադրեալներով եւ վերջ չեն կրնար տալ 30 տարի երկարած գուրդ այս արիւնալի պատերազմին, միւս կողմէ, ռուս

խաղաղապահ ուժերուն ծախսը մեծ է ռուսական զինուորական պիւտճէին վրայ:

## Աշխարհաքաղաքական մրցակցութիւններ

Որքան ալ Ղարաբաղի հարցը ընկալուի իբրեւ ցեղային, ազգային եւ կրօնական պատերազմ, անոր թաքուն շերտերուն մէջ կը գտնենք հզօր մրցակցութիւն, որ կը հասնի մինչեւ աշխարհաքաղաքական մարտերու, որոնք կը մղուին Հարաւային Կովկասի մէջ, իսկ անոր դերակատարները տարբեր են, իրենց տարբեր քաղաքական, տնտեսական եւ ապահովական շահերով: Այդ շահերը յաճախ կը խաչաձեւուին՝ աշխարհի այս կարեւոր հանգույցին վրայ:

ԱՄՆ 1992-էն սկսած էր սատարել Հայաստանի Հանրապետութեան ընդդէմ Ատրայէճանի: Ամերիկեան քոնկրետը դրամական մեծ օգնութիւն կը ցուցաբերէր Հայաստանին եւ Արցախին եւ կը նախատեսէր, որ անոնք տընտեսապէս համալրուին եւ միաձուլման հասնին, սակայն 2001-ի Սեպտեմբեր 11-ին ԱՄՆ-ի մէջ տեղի ունեցած Նշանաւոր ահաբեկչական գործողութիւններէն վերջ ԱՄՆ սկսաւ Նոյնքան օգնութիւն ցուցաբերել Ատրայէճանին, որ հաւասարակշռէ միակողմանի քաղաքականութիւն մը՝ խուսափելու համար իսլամիստներու սուր հակազդեցութենէն եւ խաբանելու չինական «Մետաքսէ ճանապարհ» ծրագիրը, միաժամանակ ցանկալով հիմք դնել ժողովրդավար եւ թափանցիկ երկիրներ հիմնելու ծրագիրին, միշտ զգուշանալով Հարաւային Կովկասի տարածքին ռուսական ազդեցութեան հզօրացումէն: ԱՄՆ միշտ կողմնակից եղած է հարցի խաղաղ հանգուցալուծման: Եւրոպական Միութիւնը եւ ամերիկեան քաղաքականութիւնը շարու-

# Գանձասար

Նակողի դերին մեջ եղած է՝ միշտ ցանկալով Միևսքի խումբին միջոցով հաստատել առանց պատերազմի խաղաղություն այս տարածաշրջանին մեջ:

1994-ին հաստատուած գինադադարի հիմնական դերակատարը Ռուսիան էր եւ այդ գինադադարէն վերջ բոլոր փոքր պատերազմները վերջ կը գտնէին ռուսական միջամտութեամբ:

Հայաստան Ռուսիոյ համար շատ կարեւոր ռազմավարական դաշնակից է, ուր նոյնպէս հաստատուած են ռուսական ուժեր: Հայաստան մաս կը կազմէ Նաեւ ՀԱՊԿ-ի եւ ԵԱՏՄ-ի, որոնք կը գտնուին ռուսական գերակշիռին տակ: Ատրպէյճան յաճախ կը մեղադ-

թենէն, որ Ռուսիա մեծ կայսրութիւն է, ան չունի յատուկ քաղաքական գիծ Հարաւային Կովկասի մեջ, ոչ ալ գաղափարաբանական յատուկ ուղղուածութիւն:

Ատրպէյճան միշտ դրական գնահատած է Ռուսիոյ միջամտութիւնը Ղարաբաղի հարցին եւ լայն կարելիութիւններ ստեղծած է ռուս-ազերիական գործակցութեան՝ տարբեր բնագաւառներու մեջ. Օրինակ՝ սահմանի երկկողմանի ապահովութիւն, Կասպից ծովու մեջ գտնուող ուժանիւթի օգտագործում: Ռուսիա, իր կարգին, միշտ խուսափած է այն միտքէն, որ Ատրպէյճան վերածուի երկրորդ Վրաստանի, որ խստօրէն կը վտանգէ Ռուսիոյ շահերն ու ապահովութիւնը: Ատըր-



րեր Ռուսիան Հայաստանը ընդդէմ Ատըրպէյճանին գինելու յանցանքով, սակայն Ռուսիա հաշուի առնելով Թուրքիոյ կոշտ հակազդեցութիւնը, աստիճանաբար սկսաւ զէնք մատակարարել Ատրպէյճանին եւս, ինչ որ խիստ մտահոգութեան ալիք բարձրացուց հայկական միջավայրի մեջ: Ռուս փորձագետ Սերկէյ Մարտկետտնովի կարծիքով, Ռուսիան դաշնակիցի իր պարտականութիւնները չկատարեց, ըստ հայկական կառավարութեան, ինչպէս որ տեղի ունեցաւ Հարաւային Օսեթիոյ եւ Ղրիմի թերակղզիներու պատերազմներուն ընթացքին: Մարտկետտնով կը նշէ, որ մեկնելով այն պարզ իրականու-

պէյճան լաւ գիտէ, որ եթէ վերածուի երկրորդ Վրաստանի՝ շատ ծանր կրնայ վճարել Ռուսիոյ:

Թրքական քաղաքականութիւնը՝ ըստ Հայաստանի Արտաքին Գործոց Նախարարութեան, միշտ եղած է կողմնակալ եւ դէպի պատերազմ մղող տրամաբանութեամբ, հակահայ կեցուածքներով եւ քայլերով լեցուն: Ան ունի դարաւոր ատելութիւն հայերու եւ Հայաստանի նկատմամբ: Այս պատճառով Ատրպէյճան թրքական արտաքին քաղաքական հոլովոյթներու մեջ կը գրաւէ իւրայատուկ տեղ՝ նոյնիսկ երբեմն կը հնչէ «Մէկ ազգ, երկու երկիր» լոզունքը, որովհետեւ զիրենք կը միաւորեն պատմական, լեզուական



եւ ցեղային կապերը: Շրջանցուած է այն փաստը, որ Թուրքիա սուննիական երկիր է, իսկ Ատրպէյճան 70%-ով շիա դաւանանքին կը պատկանի:

ԽՍՀՄ-ի անկումէն ետք, Թուրքիա փորձեց վերամիացնել թրքալեզու երկիրները, հասնելով իր վաղեմի փանթուրքիստական երազին, իսկ Ատրպէյճան անոր անկիւնաքարը կը կազմէր: Ըստ թուրք փորձագետ Պայրամ Պալսի, երկբեւեռ աշխարհի անկումէն ետք, երբ ԱՄՆ դարձաւ աշխարհի հսկայ ուժը, Թուրքիան մղեց իրականացնելու իր վաղեմի երազը, որ յստակօրէն կը վտանգէր Ռուսիոյ, Իրանի եւ Յայաստանի ազգային անվտանգութիւնը: Սա դրական կը դիտուէր հայր Պուշին վարչակազմին կողմէ:

Սակայն երբ 1994-ի պատերազմը աւարտ ունեցաւ ի շահ հայերուն՝ Ռուսիոյ շատ աշխոյժ միջամտութենէն մեկնելով Ամերիկան իր այս ծրագիրը սառեցուց: Այս պատճառով Թուրքիոյ ազդեցութիւնը Յարաւային Կովկասի մէջ խիստ նուազեցաւ, սակայն Թուրքիա իր քաղաքական եւ տնտեսական շահը կառուցեց նոր հաստատուող նաւթահորերու միջոցով: Ռուսական ազդեցութենէն ազատիլ փորձելով եւ լրիւ շրջանցելով Յայաստանը՝ Թուրքիա փորձեց Յայաստանը շրջափակել եւ մեկուսացնել տարածաշրջանային տնտեսական մեծ շահերէն: Ան մասամբ յաջողեցաւ: Թուրքիա տարիներու ընթացքին ամէն ճիգ ի գործ դրաւ դառնալու Միսսքի խումբի լիարժէք անդամ, իր խօսքը ըսելու եւ իր շահերը պաշտպանելու նկատառումներով՝ սակայն բոլոր փորձերը ապարդիւն մնացին:

Իրանի Իսլամական Յանրապետութիւնը սոյն հարցին կապակցութեամբ որքան ալ հակահայկական յայտարարութիւններ հընչեցնէ, Իրան կը մնայ Յայաստանի Յանրապետութեան բարեկամ երկիր: Իսկ այդ յայտարարութիւնները ունին գուտ ներքին, իրանական ազգերի ազգաբնակչութիւնը հանգստացնելու բնոյթ, որովհետեւ Իրանի հիւսիսային շրջաններու մէջ կը բնակին մօտաւորապէս 15 միլիոն ազերիներ: Իրանի համար տկար Ատրպէյճան մը շատ ձեռնտու է, որովհետեւ Իրան այդպէս կը մնայ այդ տարածաշրջանի ամենաուժեղ քարիւղ եւ կազարտադրող երկիրը, տնտեսական ուժը եւ կը նախընտրէ ուժեղ Յայաստան, որ չի վտան-

գեր Իրանի տնտեսական եւ քաղաքական վերելքը:

Այս պատճառով Իրանի մէջ ապրող հայկական գաղութը ունի բացառիկ արտօնութիւններ, խորհրդարանի մէջ իր ներկայացուցիչները եւ նոյնիսկ Իրանի պետական գանձարանէն գումար կը յատկացուի Իրանի մէջ գտնուող հայկական կոթողներու, վանքերու եւ այլ վայրերու վերանորոգման համար:

Իսրայէլն ալ այս տարածքի վրայ ունի իր մշտական, աշխարհաքաղաքական եւ ապահովական շահերը, որոնց պատճառով ան հաստատած է սերտ եւ զինուորական, տընտեսական ու ապահովական համապարփակ յարաբերութիւններ Ատրպէյճանի հետ: Ըստ Իսրայէլի, ուժեղ Ատրպէյճանը չափազանց կարելոր բազուկ կը համարուի հակաիրանական քաղաքականութիւն վարող Իսրայէլին: Ան Իրանը ճնշելու եւ անոր լրտեսելու լաւ միջոց է: Ըստ Իսրայէլի վարչապետ Նեթանիահուի, Ատրպէյճան վերջին տասը տարիներու ընթացքին գնած է 10 միլիարտ տոլարի հասնող տարբեր տեսակի զէնքեր ու հրթիռներ: Ըստ արեւմտեան մամուլի, Ատրպէյճան Իսրայէլեան գաղտնի սպասարկութիւններուն ծառայած է՝ արժէքաւոր տեղեկութիւններ տալով անոնց: Ան Իսրայէլին ներկայացուցած է իր միջոցներով ձեռք ձգուած Իրանի կորիզային ծրագիրին թանկարժէք թղթածրարը: Իսրայէլ իր ուժանիւթի 40%-ը կը ստանայ Ատրպէյճանէն՝ թրքական խողովակներու միջոցով, որոնք կը հասնին թրքական նաւահանգիստներ եւ կը տեղափոխուին դէպի Իսրայէլ:

Իսրայէլ Ատրպէյճանի բանակի յատուկ ստորաբաժանումներ մարզած է նորագոյն ճարտարագիտութեան օգտագործման համար եւ լարած ու զարգացուցած է լրտեսական ռատարներ՝ ուրկէ կը լրտեսէ Իրանն ու տարածաշրջանի այլ երկիրներ:

Քաղաքական, տնտեսական, ապահովական եւ մշակութային այսպիսի դժուար, խճճուած եւ գերզգայուն աշխարհագրական դիրքի վրայ՝ Յայաստանի Յանրապետութիւնը պիտի շարունակէ իր յաւերժի ճամբորդի դերը, որուն միակ եւ ամենակարեւոր երաշխիքը միասնութիւնն է, քաղաքական ուժերու շահեկան գործակցութիւնն ու տարածաշրջանային ռազմավարութեան ուրուագծումը:

## ՉՈՒԳԱՅԵՌԻ ՄԸ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ...

*Միհրան Քիրտոզյան*

Այնքան շատ բան ըսուեցաւ ու գրուեցաւ, այնքան վերլուծումներ կը շարունակուին տակաւին Ղարաբաղեան երկրորդ պատերազմին մեր կրած խայտառակ պարտութեան մասին, որ մարդ կը դժուարանայ ինքն ալ կարծիքներ յայտնելու, չմատնուելու համար ըսուած-գրուածները կրկնողի անբաղձալի վիճակին: Կը դժուարանայ նաեւ ազգային նուաստացումի ու խորունկ յուսախաբութեան պատճառած ցասումն ու զայրոյթը զսպելու եւ ազգային մեծ սուգի, յուզումի ու խառնա-շփոթութեան այս տխուր օրերուն հանդարտ հոգեվիճակով համակարգիչի վրայ կարգ մը մտածումներ մատնագրելու:

Սակայն կեանքը պիտի շարունակուի եւ մենք պարտաւոր ենք ընելու կարելին, որպէսզի վաղուան՝ գալիքին հոլովոյթը կարենանք հակակշռել ու զայն ենթարկել մեզի, այսինքն ազգի ու հայրենիքի շահերուն:

Առաջին մտածումը, զոր կ'ունենանք, մեզի դէմ պատերազմողներու մասին է: Կասկած չկայ, որ համաթրքութեան ծրագիրին հետամուտ թուրք-ազերի տանդէմին գործնապէս օժանդակած էր Իսրայելը իր որակեալ զինատեսակներու տրամադրումով: Անոնց վրայ գումար ենք նաեւ արհեստով մարդասպան-ոճրագործ վարձկանները եւ ըսենք որ.

Հակառակ Հայաստանի ներկայ իշխանութիւններու ապիկարութեան ու ապաշնորհ կառավարման, հակառակ հայկական բանակի վերնախաւի կամակորութեան, հակառակ նաեւ թշնամիներուն՝ որակով ու քա-

նակով մերինին հետ չհամեմատուող ակերիչ զինատեսակներու պաշարին ու անոնց անխնայ գործածութեան, ինչպէս նաեւ կրուողներու թուային անհամեմատօրէն իր-



կայ տարբերութեան, մեր զինուորները մեկուկէս ամիս դիմադրեցին թշնամիին անակնկալ ու անհաւոր յարձակումին ու տուկացին...: Պատերազմներու հմուտ մեկնաբան ըլլալը պայման չէ կռահելու համար, թէ որեւէ այլ պարագայի, անհաւասարութեամբ չհամեմատուող ուժերու միջեւ այդպիսի ծաւալով ու տարողութեամբ եւ մահասփիռ զինատեսակներու անսպառ պաշարով օժտուած նախայարձակ կողմը քանի մը օրերու մէջ ընդհանրապէս կը հասնի իր նպատակին, ինչ որ Ատրպէյճան չյաջողեցաւ իրականացնել, որովհետեւ թշնամին ապաւէն ուներ իր զինական ուժը եւ կը կռուէր հողատարածք գրաւելու միտումով, իսկ հայ զինուորը կը վըստահէր իր քաջութեան եւ կեանքի գնով կը կռուէր հայրենի հողը պաշտպանելու համար: Ահա թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս տուկացիք մեկ-



ուկես ամիս: Փա՛ռք՝ ճակատներուն վրայ հերոսաբար կռուած ու նահատակուած, ինչպէս նաեւ պատերազմի արհաւիրքէն վերապրած բոլոր հայորդիներուն, որոնց քաջութիւնը բազմիմաստ ու նուիրական ուղերձ մըն է՝ ուղղուած հայրենի քաղաքական ու գիւնտարական ղեկավարութեան, որ երկուսն զանցառութիւնները չկրկնուին այսուհետ: Ուղերձ մըն է նոյնպէս մեր մեծ դաշնակիցին, որ վստահութեամբ իր գրաւը կրնայ դնել հայր քաջութեան եւ նուիրութեան՝ իր հայրենիքին: Ուղերձը ուղղուած է նաեւ մեր թըշնամիին, որ մահու-կենաց կռիւին մէջ մահէն չխուսափող հայ բանակայինը աւելի սարսափելի է քան անոր սպառնալիքն ու մահասփիւռ զէնքերը:

Յարցումը սակայն, որ ամիսէ մը կը մըրճահարէ մեզ՝ այն է, թէ կրնայի՞նք արդէոք անցնող տարիներուն այնպիսի ներուժ ամբարել, որ այս անգամ եւս աւարտը մեր յաղթանակովը պսակուէր, ինչպիսին Ղարաբաղեան ազատագրական առաջին պատերազմին էր: Թերեւս այո՛, կրնայինք, եթէ...

Գիտենք, որ «Եթէ»ի վրայ հիմնուած ամէն հետեւութիւն կամ պատկերացում ենթադրական է, մտացածին է, անիրական եւ անարժէք: Բայց կայ նախընթացի մը փաստը, որ դրական կը դարձնէ հարցումին պատասխանը:

Յոս, կարգ մը վերապահումներով, փորձութեան կը մատնուիմ ականայ զուգահեռ մը կատարելու: Ազգային նկարագրի յատկանիշներով թէեւ հիմնովին տարբեր, բայց պատմական ճակատագրի տեսակետէն մեզի հետ որոշ հանգիստութիւններ ունեցող օրինակը բերելու հրեաներու, որոնք աւելի քան երկու հազար տարի աստանդական ու պետականագուրկ կեանքէ ետք, միայն եօթ հարիւր հազար բնակչութեամբ եւ Յայաստանէն աւելի փոքր պաղեստինեան փոքր տարածքի մը մէջ անկախութիւն հռչակեցին 1947-ին, ինչ որ ճանաչում գտաւ տարի մը ետք: Զգիտցող չկայ, որ այդ պետութիւնը Արեւմուտքի ձկնածն էր, կախեալ էր Արեւմուտքէն, կը վայելէր անոր նեցուկն ու պաշտպանութիւնը: Այսուհանդերձ կարելի չէ չընդունիլ, որ երկրի կառուցման բուն ճարտարապետները անկախութեան հիմնադիր սերունդը եղաւ, որ գիտցաւ պատմութեան հետ ժամադրուիլ եւ որ միաժամանակ ներ-

գաղթի բարենպաստ պայմաններ ստեղծելով ազգաբնակչութիւնը շուտով հասցուց մէկ ուկես միլիոնի: Այսօր արդէն կը հաշուէ շուրջ ութ-ինն միլիոն եւ այլեւս կախեալ չէ Արեւմուտքէն, քանի այնքան ալ կարիքը չունի արտաքին նեցուկի: Ներկայիս, ան դարձած է փնտռուած գիւնտեսակներու մեծ վաճառող, որով եւ այնքան ինքնավստահ է ան իր ուժին, որ ինքզինքին իրաւունք կուտայ լըկտիաբար արհամարհելու միջազգային օրէնքներն ու կառոյցներու որոշումները եւ իր ռազմավարական պայմանները կը փորձէ պարտադրել շրջապատին...:

Նախապէս պետական փորձ ու կառոյցներ չունենալով հանդերձ եւ միայն 20 տարուան ընթացքին հրեաները հզօր պետութիւն ու բանակ կազմեցին եւ աշխարհը վկայեց այդ հզօրութիւնը 1967-ին...:

Վերի զուգահեռով տեսնենք մե՛րը: Մենք ալ ունինք գոյութեանական վտանգ ու հայահաւաքի անհրաժեշտութիւն: Յրեաներէն նուազ հայրենասեր չենք: Մենք ալ ունինք սփիւռք, որուն գործունէութիւնը (աշխուժութիւնը) փաստ է, Յայրենիքին կապուածութիւնը կասկածելի չէ եւ որուն ներուժն ու կարողականութիւնը բնաւ արհամարհելի չեն: Շատերու, նոյնիսկ հրեաներու վկայութեամբն իսկ հայու խելքն ու ձեռներեցութիւնը ոչինչով կը զիջին հրեաներու խելքէն ու ձեռներեցութենէն: Իսկ իբրեւ մարտունակ ազգ, ցոյց տուած ենք մեր մարտունակութիւնը թիւով ու զէնքով մեզմէ բազմապատիկ աւելի թշնամիի դէմ կռիւներու ընթացքին՝ Սարդարապատի մէջ, Չանգեզուրի մէջ, Ղարաբաղի ազատագրական պատերազմի մէջ՝ յաղթանակներու ելքով: Նաեւ այս վերջինին պարտութեան մէջ: Ունինք նաեւ հուժկու դաշնակից:

Այս այսպէս ըլլալով մէկտեղ մերը առաւ հակառակ ընթացք: Վերանկախացումէն ետք հայրենի ազգաբնակչութիւնը փոխանակ աւելնալու՝ պակսեցաւ, ազգային գաղափարախօսութիւնը տժգունեցաւ, պետութիւն եւ քաղաքացիութիւն իրարմէ խորթացան, հակառակ խաբուսիկ հռետորաբանութեան՝ սփիւռք-հայրենիք վստահութիւն չկայացաւ եւ... Արցախի ազատագրական փառաւոր յաղթանակէն 30 տարի վերջ՝ անփառունակ պարտութիւն կրեցինք եւ այլն, եւ այլն: Ինչո՞ւ այս ձախաւերութիւնները: Խոս-

# Գանձասար

տովանիք, որ անցնող 30 տարիներուն մեր իշխանաւորները արդէն իսկ գոյութիւն ունեցող կառոյցները առողջացնելու եւ պետականութեան հիմերը ամրացնելու փոխարէն, հետամուտ եղան այդ կառոյցներով կազմակերպելու վարչակարգ մը, որ պիտի ապահովեր սեփական իշխանութիւնը եւ պիտի երաշխաւորեր անոր վերարտադրութիւնը:

Չկրցանք, Նոյնի՛սկ չփորձեցինք պետականութիւն կառուցել ու ամրացնել այնպէս, որ ան կարենար տեր կանգնիլ արցախեան յարթանակին եւ պատուար դառնալ համաթրքութեան սպառնալիքին դիմաց: Մեր ապահովութիւնը վստահեցանք մեր մեծ դաշնակիցին եւ անկէ կախեալ մնալու հոգեբանութիւնը աճեցուցինք այն աստիճան, որ Նոյնիսկ ներքաղաքական այս կամ այն ուժին ու գործիչին յաջողութեան յուսալիութիւնը չափեցինք ըստ այդ կախեալութեան:



եան...: Չհասկցանք, որ ամէն ինչով մեր կախեալութիւնը բեռ մըն է մեծ դաշնակիցի մը համար, որուն ռազմավարական հաշիւները եթէ պահանջեն, ան ի հարկին պիտի չտատամսի գործարքի մէջ մտնելու իր ու մեր թշնամիին հետ՝ ի վնաս մեզի:

Չմտածեցինք, որ մեծ պետութիւնները նպաստաբաշխ կամ բարեսիրական հաստատութիւններ չեն, որ ամէն ատեն ու ամէն ինչի մէջ օգնեն մեզի: Անոնք ունին ռազմավարական նպատակներ եւ ըստ այդ նպատակներուն կ'ընտրեն իրենց փոքր դաշնակիցները՝ որոշ սպասումներով:

Աւելորդ է ըսել, որ Կովկասի մէջ ռազմավարական կարելոր դիրք ունի Յայաստանը: Ցարական շրջանին աշխարհագրական անարդար դասաւորումները եթէ ազգամիջ-

եան տարակարծութիւններ միշտ արծարծ պահելու նպատակ կը հետապնդէին, ուրեմն համայնավարութեան օրերուն, Զեմալը սիրաշահելու համար կատարուած զիջումներով մէկտեղ, այդ նպատակին վրայ կ'աւելնար Պարսկաստանի ազերի գանգուածը եւ Թուրքիան Ատրպեյճանէն կտրելու նպատակը: Ասիկա կը նշանակէ, թէ համաթրքութեան կամ համաթուրանականութեան սպառնալիքը միայն մեր մղձաւանջը չէր, այլ չբարձրաձայնուած լրջագոյն մտահոգութիւնն էր նաեւ ռուսին ու պարսիկին եւ բնականաբար՝ այլոց:

Համաթրքութեան սպառնալիքի մղձաւանջը, - եւ ոչ միայն ան, - եւ մեր իսկ գոյատեւումն ու բարգաւաճումը ապահովելու հրամայականը նուիրական ու անյետաձգելի պարտք կը դնէին մեր ուսերուն՝ կազմակերպելու այնպիսի ամրապինդ պետութիւն, որ պիտի դառնար արթուն եւ անպարտելի պահակը գէթ գոյութիւն ունեցող սթաթուսի-ին, ինչ որ մեր դաշնակիցին պիտի ներշնչէր յարգանք ու վստահութիւն մեզի հանդէպ, միաժամանակ որոշապէս պիտի թեթեւցներ անոր բեռը: Բայց այդպէս չեղաւ, չըրինք, հակառակ որ 30 տարի ժամանակ ունէինք ասիկա ընելու:

Մեր պարտութիւնը շատ մեծ ու կործանարար պատիժ էր պատմութեան բազմիցս կրկնած դասը սորված չըլլալնուս առ այն, որ որքան շատ յոյսեր կապես ուրիշին, այնքան ու աւելի՛ խոր կ'ըլլայ յուսախաբութիւնդ ու ցաւդ:

Յամենայնդէպս. ինչ որ պատահեցաւ, որբերգական ու նուաստացուցի՛չ, արդէն անցեալ է: Վերջին երկու տարիներու ՀՀ-ի քաղաքական իշխանութեան եւ զինուորական վերնախաւի ապաշնորհութեան ու ապիկարութեան տխուր փակագիծը պատճառ պիտի չդառնայ, որ կորսնցնենք ազգային ինքնավստահութիւնը:

Պիտի կառչինք ժողովրդային ասոյթին, թէ՛ «Վաղը նոր օր է», որ պիտի ըլլայ նոր սկիզբ՝ սթափութեան, նոր դեկավարութեամբ ազգային պետականութեան նորովի կառուցումին: Այլապէս պատմութեան առջեւ յանցաւորի խարանը պիտի կրենք բոլորս, ազգովի՛ն:



# ԽՈՐԵՐ

## Պերճուհի Աւետեան

Շլմորած կը կարդամ հեռատեսիլի պաստառի ներքեւ կարմիր ժապաւենի վրայէն վազող գիրերը.

«Շուշին ամբողջութեամբ վերահսկողութենէ դուրս է»:

Արդեօ՞ք չեմ հասկնար... Չէ՞ որ տակա-

րէին մեզ, պաստառին վրայ երեւցող ու ամէն օր թարմացուող պատերազմի ընթացքին իջեցուած ԱԹՍ-ներու, գրահաթեխնիկայի, թշնամիի կորուստներու պատկերին հետ:

Ամբողջ 44 օր անհամբեր սպասեցիք Արծրունին, որ անդադար հնչեցուց.



ւին երէկ մեզ ոգեւորող պաշտպանութեան նախարարութեան պաշտօնական խօսնակ Արծրունը հաւաստիացուց, որ վաղը պիտի լսենք Շուշիի «դժոխքի ձոր»ում տարած մեր գօրքի ու կամաւորներու ջախջախիչ յաղթանակը, որ թշնամին «գորբակոռ...» (նոր յայտնուած ռազմական բառարանի հարուստ բառամթերք):

Խրախուսիչ խօսքերը, որոնք ամէն օր թմրեցուցիչի նման ներարկուելով կ'ոգեւո-

«Յաղթելու ենք»...

Մինչ հեռատեսիլի վազող գիրերը կրկին կը գուժեն. Շուշի՛ն...

Կը դիմեմ վստահելի աղբիւրի:

- Մենք էլ չգիտենք... խառն ենք... - կ'ըլլայ պատասխանը:

Զանի մը վայրկեան ետք, նոյն աղբիւրը.

- Ոնց որ ճիշդ է...

Արծրունը չկայ, ըսին որ ճնշման տատանումներ ունեցած է:

# Գանձասար

Ֆեյսայուք, հեռատեսիլի այլ կայաններ:  
Լռութիւն խորունկ, խորհրդաւոր:

Կրկին վազող գիրեր, վարչապետի ֆեյս-  
պուքեան էջէն կը տեղեկանանք թէ.. (մամուլի  
տեղեկատուութեան փոխարէն ֆեյսպուք-  
եան էջերը դարձած են հաւաստիութեան աղ-  
բիւր):

«Շուշիում մարտերը կը շարունակուեն»  
կարճ ու կտրուկ այս գրառումը մասամբ  
կը հանգստացներ, բայց...

Որո՞ւ հաւատալ, այլ աղբիւրներ կը հա-  
ղորդեն, թէ թշնամին կտտրած է Արցախի նա-  
խագահի մամուլի խօսնակ Վահրամ Պօղոս-  
եանի պաշտօնական էջը եւ սուտ լուր տե-  
ղադրած:

Իսկ կարմիր ժապաւենին վրայ բօթը կըր-  
կին ու կրկին կ'ահագանգէ...

Շուշին...

Այա նոյն ինքն խօսնակն է, կլորիկ դէմ-  
քին վրայ շուարած նայուածքը չռած.

- Մեր պաշտօնական էջը չի խափանուել,  
ինչ տեղեկացրել ենք դա էլ ճիշդ է...

Սահմուկեցուցիչ.

Յաջորդ գոյժը՝ Նոյեմբեր 9-ի ուշ գիշերին  
գաղտագողի, սուսիկ- փուսիկ, երկիրը ներ-  
կայացնող, ժողովուրդին բացարձակ վստա-  
հութիւնը վայելող վարչապետի ստորագրած  
չարաբաստիկ համաձայնագրի մասին է:

Սուտ ու խաբկանք, պարտութիւն ու  
ամենէն-ահաւորը վտանգուած հայրենիք,  
յանձնուած հողեր:

«Ստախօսին հայրը սատանան է» կ'ըսէր  
կրօնաւորը:

\*\*\*

1920 Յոկտեմբեր 30-ին տեղի ունեցաւ  
Կարսի ամօթալի յանձնումը.

*«Զօրավար Բէկ-Փիրումեանը կենդանի  
մեռած մարդ էր՝ զուրկ պահի արժէքը ըմբռ-  
նելու կարողութիւնից, զուրկ զինուորակա-  
նին յատուկ անսպասելի եւ անսպառ նախա-  
ձեռնութիւնից ու վճռականութիւնից»:*

Վարչապետ Օհանջանեանը՝ յիշեցնելով  
1918-ի հերոսական օրերը Սարդարապա-  
տում, կոչ է անում.-

*«Թշնամին արշաւանք է սկսել դէպի մեր  
հայրենիքի սիրտը. մեր գօրքերը հերոսական  
դիմադրութիւն են ցոյց տալիս եւ կանոնաւոր-  
րապէս նահանջում դէպի անելի ամուր դիր-  
քեր: Զաղաքացիներ, օրերը պատմական են:  
Ես յիշեցնում եմ ձեր պարտքը եւ հրաւիրում*

*տրբազան կռիւի»*

Այա

«Կարսում թուրքական բանակին անգամ  
պատշաճ դիմադրութիւն ցոյց չի տրուում»:

Վաւերագրական այս տողերը կը հաս-  
տատեն, որ հարիւր տարի ետք պատմու-  
թիւնը կը կրկնուէր:

\*\*\*

Երկու տարի առաջ Շուշիի Նարեկացի  
մշակութային կեդրոնի հրաւերով, գրողներու  
խմբակով կ'ուղղուէինք Շուշի:

Շուշին.. առաւօտեան մառախուղի  
շղարշով ծածկուած ամէկուտ նորահարսն է,  
որ գիշերը ձիւնի փաթիլներու խելագար  
թրթռացումին տրուած կը մատուցէ իր գե-  
ղեցկութիւնը ու վերանորոգուելով կը մնայ  
պատմութեան խորերէն եկող գեղեցկագոյն,  
ամուր բերդաքաղաքը (ինչպէս կարելի է Շու-  
շին դժգոյն ու տխուր քաղաք անուանել):

Շուշին... Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ  
Եկեղեցիի խոյանքով ու մուտքը հսկող հրեշ-  
տակներով. անոր ներքեւի սենեակին մէջ իըն-  
չող «Տեր-Ողորմեա»ն կը գնգայ ականջնե-  
րուս մէջ, մինչ պաստառին վրայ յանձնուած  
Շուշիին պղծուած սպիտակ պատերն են ու  
ջարդուած հրեշտակները...

Վա՛յ քեզ ժողովուրդ, երկրի գլխաւորը  
կը յայտարարէ թէ.-

*«Երկրի պաշտպանութեան թիւ մէկ պա-  
տասխանատու է, բայց ինքզինք թիւ մէկ մե-  
ղաւորը չի համարեր»:*

\*\*\*

Ամբոխի կողմէ խորհրդարանի դռները  
ջարդելու, ներսը խառնաշփոթ ստեղծելու  
պատկերները կը տողանցեն սփռուելով հե-  
ռատեսիլի բոլոր կայաններէն.

Պարտութիւն, քառս, յուսալքուած մթնո-  
լորտ.

Ֆեյսպուքի էջերու վրայ մեկնաբանու-  
թիւններ, ցեխարձակումներ...

Ամերիկայէն բարեկամուհի մը ֆեյս-  
պուքի վրայ վարչապետը գովաբանող նկար ու  
գրութիւն մը դրած էր, հպանցիկ ակնարկ մը  
գրեցի եւ յանկարծ անձնական մեսենճըրիս  
տեղատարափ տեսանիւթեր ու կուսակցութե-  
ան մը պատկանելութեան ակնարկող  
խօսքեր.

Ես կուսակցական չեմ եղած ոչ ալ ինչ որ  
(այլ ...ական), կը յարգեմ սկզբունքները, բայց  
կ'ուզեմ որոշ պարտաւորութիւններէ ազատ



ըլլալ, ազատ մտածել. անձնական մօտեցումս է... պարզեցի բարեկամուհիիս, թելադրեցի նայիլ ներկայ քարտեզին, թշնամիին տրուած հողերուն, անհասկնալի գիշումներուն ու հայրենիքի անվտանգութիւնը նկատի ունենալ.

Ըստ երեւոյթին չհամոզուեցաւ, ինչ ընեմ թող ուզածը ընէ, փակեցի էջը: Սակայն չեմ կրնար փակել հեռատեսիլի լուրերու բաժինը, որքան ալ սուտեր, անճշտութիւններ ըլլան: Շատեր ներկայիս իրենց ջղային համակարգը խնայելու համար կը դիտեն ընտանեկան խրախճանքներու տեսերիզներ, անկապ ֆիլմեր ու գիս ալ կը խրատեն նոյնը ընել: Մօտեցում է, թէ՞ անտարբերութիւն ձեռնպահ եմ, բայց ակնարկներ գրելէ կը խուսափիմ:

Կը վերցնեմ շիւղերը կէս մնացած հերթական բուրդէ գլխարկը ամբողջացնելու, պատերազմի օրերուն թիկունքէն բան մը ընելու ցանկութեամբ բուրդէ գլխարկ կը գործէինք... կը հաւատայի, որ այդ գլխարկը պիտի տաքցնէր արկերու տակ մարտնչող գիտուորի մը գլուխը... հիմա այն տղան կա՞յ.

Երկրի ապահովութեան պատասխանատուն յանձնեց հողերը, իր մեկնաբանութեամբ խնայելու 25000 թէ՞ 35000 հոգիի կեանքը (թիւերը կրնան իւրաքանչիւր նոր ելոյթին բազմանալ), իսկ 44 օրեր մարտերու ընթացքին, երբ հազարաւորներ կը կոտորուէին, գերի կը տարուէին անոնց մասին գէթ պահ մը ժամանակ չ'ունե՞ր մտածելու...

Հարցականներ, հարցականներ, ուղեղս տրամաբանելու եւ եզրակացնելու կարողութիւնը սկսած է կորսնցնել: Տիվերսիոն (հրոսակային «Գ.») խումբերը (օտար բառերու գործածութիւնը արդէն սպրդած է մեր բառամթերքը աղաւաղելով) ինչպէ՞ս հասած են Շուշի, մինչ մենք «Յաղթելու ենք» լոզունգը տեղի-անտեղի խանդավառութեամբ կը շռայլէինք:

Համաձայնագիր, յայտարարութիւն թէ՞ դաւադրութիւն եր.. ի՞նչ անուանել. «Հպարտ քաղաքացի»ի ներկայացուցիչը նուիրեց ինչ որ պահաջեցին, չհարցուց իր սիրելի ժողովուրդին կարծիքը:

Ռազմագերիներու թիւը անյայտ է:

Եռաբլուր՝ կողք-կողքի տասնեակ թարմ հողաթումբեր, ծաղիկներով ծածկուած... Որդեկորոյս ծնողները խելագարուած կը փընտ-

նեն իրենց զաւակները, յաճախ հողաթումբ ունեցող գոհուածներուն երանի՛ տալով:

Համատարած եռօրեայ սուգ ալ յայտարարուեցաւ վերջապէս ու հող յանձնողը, գոհերուն համար անպատասխանատու թիւ մէկ պաշտպանութեան պատասխանատուն քալեց դէպի եռաբլուր ոստիկաններու, հրսկողներու թաւշեայ ստուար խումբով պատսպարուած.

«Դէ եկ վարդապետ ու մի խենթանայ».

\*\*\*

Թուրքի երազանքը կ'իրականանայ...

Ներքին ընդվզում, քաոս, իրարանցում, բողոք:

Մատուռ կը մտնեմ գէթ սրբատաշ քարերու ներքեւ մխիթարութիւն գտնելու.

Խորանի Յիսուս մանուկը գրկած Աստուածածինը նայուածքը անորոշ ուղղութեան յառած կը տեսնէի միշտ, իսկ այսօր Ան նայուածք չունի, աչքերը խոնարհած է.. կը ցընցուիմ, այնքան օրեր ես փնտռած եմ Անոր նայուածքին ուղղութիւնը ու մտովի հարց տուած, թէ սրբանկարի գեղանկարիչը ինչո՞ւ անոր նայուածքը անորոշ ուղղութեան յղած է:

Այդ գազանները քանի-քանի սուրբ վանքեր, համալիրներ պիտի պղծեն, նոյնիսկ բարբաջեն, թէ այդ սրբավայրերը իրենց նախնիներուն կը պատկանին, հազիւ հարիւր տարուան պատմութիւն ունեցող այս թխուած պետութիւնը ե՞րբ քրիստոնեայ նախնիներ ունեցաւ:

Թաղիվանքի համալիրը՝ խորանը ներկայացնող սենեակին մէջ տարիներ, նախքան մեր հերոսներուն կողմէն ազատագրումը, ապրած էր քիւրտ ընտանիք մը. Վերանորոգման հանգրուանին անոր սրբատաշ պատերը մաքրուելով ի յայտ եկած էր Ստեփանոս նախավկայի որմնանկարը, այս հրաշալի վանքը հիմա կը յանձնուի ուտիներուն:

Անկարելի է անջատուիլ:

Մատուռի պարիսպի դրան մօտ տարեց մուրացիկը կը մօտենայ:

- Ղարաբաղից եմ, հացի փող, խնդրում եմ..

«Աջ ձեռքիդ տուածը ձախը չիմանայ», գրպանիս մանրուքը կը դնեմ մեկնած ափին մէջ:

- Մի ժամից խմելու փողը կը հաւաքի.- կը մրմրթայ կողքես անցնող մարդուկը, շուտով կը նայիմ:

- Հա՛ գարմանալու բան չի, Ղարաբաղ ասելով խմելու փող է վերցնում:

# Գանձասար

«Չամատարած սուտ».

\*\*\*

Երկուքուկես տարի առաջ երբ համատարած թաւիշ էր ու ոգեւորութիւն, երբ մարդիկ խոր ատելութեամբ լեցուած էին նախորդ իշխանութիւններուն եւ մեծ հաւատքով ամենափրկիչին հանդէպ, փողոցները կը յորդէին «դուխով» վանկարկող, ճամբաները փակող հպարտ քաղաքացիներով: Փոխադրամիջոցը անդամալուծուած էր: Կեդրոնէն հազիւ թաքսի մը գտայ, վարորդը խոստացաւ կողմնակի ճամբաներով հասցնել զիս Մասիւ: Ծամբու ընթացքին օրուան դէպքերու մասին հարցուցի:

- Ընտանիքս հրապարակում է, ես էլ օրուայ ուտեստի համար փող շահեմ ու գնամ էնտեղ:

Ծննդավայրիս մէջ տեղի ունեցող պատերազմը, մեր ապրած ու չապրած օրերը վերապահ ըլլալու, աշխարհի բոլոր մեծաւորներուն չհաւատալու անմոռանալի դասեր տուած էր, գէթ ինծի:

- Իսկ եթէ աս մարդն ալ միւսներուն նման դուրս գայ, ի՞նչ էք անելու:

- Նրան էլ վար կ'առնենք.- պատասխանեց ան ինքնավստահ:

Մեքենայէն իջնելով շնորհակալութիւն յայտնեցի վարորդին, որ կրցաւ դժուար, կողմնակի ճամբաներով զիս տուն հասցնել ու մաղթեցի որ «Մեր երկրի» թաւշեայ ծածկոյթին տակ բոլորս ապրինք խաղաղ ու երջանիկ:

Յիմա չեմ գիտեր ինչ կը մտածէ այդ վարորդը ու չեմ գարմանար թէ ինքն ալ մեր թաղեցի մրգավաճառին նման համամիտ է թուրքի հետ խաղաղ դրացութեամբ ապրելու, կամ մեր հարեւանուհիին նման «սա աթուռի խաղ է նախկին թալանճիներու կողմից» ըսելով փակէ դուռը:

Մինչ իւրաքանչիւր բացուող օրուան հետ նոր դիրքեր, նոր գիւղեր կը յանձնուին թըշնամիին, սահմանին բանակցութիւնները կը վարեն գիւղապետները, թշնամին (Ճի-Փի-Էս) ով քարտեզ կը գծէ հիմնուելով Սովետական Չայաստանի սահմաններուն վրայ ու մեծ պատահներ խլելով...

Նոր գերիներ, Կապանի դիրքերու յանձման բոթ:

Բուռ մը Չայաստանի հողը պտղունցի կը վերածուի.

«Յանձնուող գիւղերու պատասխանատուն ոչ թէ իշխանութիւնն է, այլ խաղաղապահ ուժերը»:

\*\*\*

«Նիկոլ հեռացիր»

«Առանց Նիկոլ Չայաստան»

Արձագանգը կը թնդթացնէ Ազատութեան հրապարակը:

Սեւ- սպիտակ, կուսակցութիւններ ու նախկիններ, վերապահներ ու մասնակիցներ.

Ազգին ընտրեալը զինք ընտրողներուն համաձայնութեամբ է միայն, որ կը ձգէ աթոռը: Արդէն բացայայտ է, տակաւին ընելիք ունի: Իսկ համաձայնագրի գաղտնի ծալքերը իւրաքանչիւր բացուող օրուան հետ ի գործ կը դրուին:

Բողոքի, արժանապատուութեան երթեր, կոչեր...

«Ձայն բարբառոյ յանապատի»

Աշխարհը անտարբեր դիտեց թուրքիոյ բացայայտ մասնակցութիւնը պատերազմին, ներգրաւուած ահաբեկիչները, գործածուած թունաւոր ու արգիլուած գէները, գերիներու խոշտանգումը: Յետոյ հիւսիսի բարեկամը ընդառաջեց, խաղապահները մէկ գիշերուան մէջ հասան օգնութեան՝ տարածելու ցանկալի խաղաղութիւն:

Երեւանի փողոցներուն մէջ ցոյցեր, խորհրդարանի մէջ ընդդիմադրութեան հրաժարականի պահանջը մերժող մաշած՝ բայց մեծամասնութիւն կազմող քայլականներ (թաւշեայ աթոռ գրաւողներ, որոնց պարզեւազարները անխափան կը տրուին Նոյնիսկ երբ պետական արկղը դատարկ է, զինուորներուն նուիրաբերուած գումարներուն ձեռք երկարելու ի գին): Սահմանին թուրքը, հրապարակին վրայ վահանով պաշտպանուած ոստիկաններ...

Թրքական երազանքի գործադրումը:

Քարտեզին նայելով սիրտս պիտի պայթի:

Ժամանակը թանկ է, երկիրը ՎՏԱՆ-ԳՈՒԱԾ:

Մենք մեզ աշխարհի խելացի ազգը կը համարենք, միթէ՞ հայու ուղեղը պիտի ծառայէ միայն այլոց:

Գիտնականներ, պատմաբաններ, օրէնսգէտներ, աշխարհասփիւռ իմաստուն, ազդեցիկ այրեր, օրհասական ժամն է.

Չայեր Միացէ՛ք, Չայեր ուշքի եկէ՛ք:



## ՅԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՄՏԱՅՈՒԳՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

Կարո Վ. Մանճիկեան

Արցախի 44-օրեայ պատերազմը, անոր յաջորդած անձնատուութեան (capitulation) համաձայնագիրը եւ անոր ետին թաքնուած իրողութիւնները ակերիչ երկրաշարժի նման ցնցում պատճառեցին իւրաքանչիւր հայրենասէր ու ազգասէր հայու (ի բացառեալ բարոյաթափ եղած «իմ քայլական»ի, իշխանութեան ետեւէն կուրօրէն «քալող» հօտէն:



Իշխանութեան կողմէ, ամէն տեսակի ստապատիր լուրերով յագեցած իշխանամետ լրատուական հայախօս աշխարհը, մանաւանդ «յաղթելու եկք» լոգունքով շարուած, (որուն պահ մը նուաստս ալ հաւատաց), Արարատի թէ Արագածի ձիւնհալէն առաջացած սառն ջուրի նման լեցուեցաւ մեր գլուխներուն, ու սառնապատեց մեր մարմինները, հոգիներն ու սրտերը: Գլխուն իջած լախտի հարուած մը նուազ զօրաւոր էր քան

եղածը: 5000-է ակելի նահատակ, տասը հազարէ ակելի վիրաւորներ ու հաշմանդամներ, անհետ կորածներու փաղանգ մը: Արցախ հայաշխարհի, 1990-1994-ի նահատակներու արեամբ ազատագրուած հայաշխարհի ութսուն առ հարիւր տարածքի, հոգեմշակութային թէ տնտեսաեկամտաբեր հարստութեամբ, կորուստ, տեղահանութիւն բնակչութեան 75 առ հարիւրին, որուն մեծ մասը ետ վերադառնալու յոյսը կորսնցուցած ու իր ճակատագրին լքուած է... եւ շարքը երկար է...: Այս բոլորը «քայլ» առածի շնչին մէկ ստորագրութեամբ:

Մէկ խօսքով Արցախ հայրենիքի պղծում:

Խուսափելով անցնող ամիսներուն բացայայտուած թէ թաքուն իրողութիւններէն, եղած ու չեղածներուն մասին գրելու յաւակնութենէն, պիտի փորձեմ ինչ որ չափով թուել ու ընդգծել կարգ մը եղելութիւններ ու մտահոգութիւններ, որոնք Դամոկլէան Սուրի մը նման կախուած կը մնան հայութեան գլուխէն: Այս թւումներն ու մատնանշումները որքան ալ առարկայական ըլլան հեռու պիտի ըլլան ամբողջական ըլլալէ:

Այսօր Արցախի 12500 քառ. քմ-ի մեծագոյն մասը՝ 10 հազար քառ. քմ-ը կորսուած է անձնատուութեամբ, դաւադրութեամբ, կամ... կամ... օրերն ու ժամանակը պիտի բացայայտեն...:

Արցախ աշխարհի այս կորուստին առընթեր կորսուած են եւ թշնամիին ձեռքը անցած են այդ աշխարհի բոլոր հարստութիւնները:

Լեռները, հովիտները, դաշտերը, արգասաբեր տարածքները, գետերը... եւ... եւ... եւ... Յայաստանը գրկուած է ներածումէ հացահատիկներու, պտուղներու եւ գիւղատընտեսական մթերքներու նկատառելի տոկո-

# Գանձասար

սեն, որուն կարգ մը տեսակները ռազմավարական արժեք կը ներկայացնէին, մեզմէ խլուած են նաեւ Արցախի աշխարհի ստորերկրեայ՝ ընդերքի հարստութիւնները (ոսկի, մետաղներ...): Մեզմէ խլուած են Հայաստանի թէ Արցախի ջուրի պաշարները, ակունքները, Սեւանը ջուրով մատակարարող շատ կարելոր ակունքներ, անցնելով թշնամիին ձեռքը:

Վերոյիշեալ կորուստները մեծապէս պիտի վնասեն անշուշտ, արդէն կաղացող, Հայաստանի տնտեսութեան, յատկապէս Հայաստանի թէ այնտեղ ապաստանեալ ժողովուրդին իրավիճակին: Մինչ այդ, աւարը պիտի երթայ թշնամիին, եւ անոր ետին կանգնած մութ ուժերուն շտեմարանները պիտի հարստացնէ:

2020 թուականի սկիզբը, ծայր առած թագածահրի՝ Covid-19, վարակի անսանձ տարածումը արդէն ծանրօրէն հարուածած էր Հայաստանի տնտեսութեան կարելոր բնագաւառներէն՝ զբօսաշրջութեան մարզը, մեծ թիւով աշխատող ձեռքեր անգործ եւ առանց եկամուտի ձգելով:

Տնտեսական վերոյիշեալ հարուածները պիտի անդրադառնան բնակչութեան ընկերային իրավիճակին վրայ, անշուշտ ժխտականօրէն:

Ստեղծուած ամենամտահոգիչ իրավիճակը ռազմաապահովական նորաստեղծ իրավիճակն է:

Հայաստանի, Արցախի եւ հայութեան գըլխուն վերեւ Դամոկլեան Սուրի նման կախուած է պատերազմի վերսկսման հաւանականութիւնը:

Թշնամին հերթականօրէն, բարձրաձայն, շնաբար ու լկտիաբար կը յայտարարէ թէ իր թիրախը Չանգեզուրն է, Սեւանն է, Երեւանն է, իմա՛ Հայաստանն է: Ազերիին բերանով նեօ-օսմանցին է խօսողը, ի լուր աշխարհին՝ պապանձումի մատնուած աշխարհին:

Տարածաշրջանին մէջ տեղի ունեցող պատերազմներն ու «գունաւոր յեղափոխութիւնները», ազատ արձակած են մեր դարաւոր ոսոխին ձեռքերը, եւ ան ոգի ի բռին կը փորձէ սելճուքեան-թաթարական-օսմանական կայսրութիւնը վերականգնել. անոր գըլխաւոր պատուարը Հայաստանն է, գոր պիտի փորձէ վերացնել քարտեզէն: Թուրք գայ-

լին կզակը թաթխուած է նոր արեամբ, ու սրած անոր արիւնաթաթախ դունչը, սրած ախորժակը:

Հակառակ պատերազմի դադարին, ամենօրեայ հետեւողութեամբ լուրերէն իրագեկ կը դառնանք որ թշնամին բռնագրաւած է նոր բնակավայր մը Արցախի ծայրամասերուն վրայ, մինչ մեր անձնատուր իշխանութիւնները, որոնք ինքնագինաթափման գացած ըլլալով (ռազմական, թէ բարոյական իմաստով) անզօր են դիմակայելու թշնամին, նամանաւանդ երբ գինաթափ ու անզօր դարձուցած են տակաւին մօտիկ անցեալի մեր արի բանակը:

Ռազմագինուորական իմաստով ստեղծուած նոր իրավիճակը, ճակատներուն մօտիկութիւնը Հայաստանին համար ստեղծած են նոր կացութիւններ: Նախապէս Հայաստանն ու քաղաքամայր Երեւանը աշխարհագրականօրէն բաւական հեռու էին թշնամիին հասողութենէն: Սակայն այսօր ոչ միայն Երեւանը ազերիի սպառնալիքին տակն է, այլեւ Չանգեզուրի եւ Սիւնիքի շրջանները ուղղակի վտանգուած գօտիներ դարձած են, թշնամիին Լաչինի եւ Քառվաճարի շրջաններուն մէջ տեղաւորուելով, իսկ աւելի հարաւ՝ Ֆիզուլիի, Չանգեւանի, Ճիպրայիլի եւ Ղուբաթլիի շրջաններու բռնագրաւումով:

Նորաստեղծ միւս մտահոգիչ իրավիճակը Արցախի զանազան բռնագրաւեալ շրջաններէն տեղահանեալ ժողովուրդին պարագան է: Ան ստիպողաբար եկած տեղաւորուած է Երեւան, կամ այլ բնակավայրեր ու մատնուած տեղահանեալներու առնչուած բազմազան դժուարութեանց, բնակարանային, կենցաղային ու բազմատեսակ դժուարութիւններով:

Այս իրավիճակով Հայաստանի բնակչութեան ոչ նախանձելի իրավիճակը աւելի վատթարացած է:

Տեղահանեալներուն օժանդակութեանց եւ անոնց կենսական կարիքներու ապահովման գործը կը պարզէ անմխիթար իրավիճակ, պետական-կազմակերպական տեսանկիւնէն դիտուած: Միջազգային կազմակերպութիւններ թէ կառոյցներ հազիւ կը հաստատեն իրենց ներկայութիւնը:

Այս պատերազմի պարտութեան-անձնատուութեան գլխաւոր գոհերն են տեղահանեալները: Անոնց բազմապիսի կարիքներ-



րուն հասնելու, հայկական կառույցներուն թէ հայ անհատներուն (թէկուզ ժողովրդային մասնակցութեամբ), անկարող պիտի ըլլան անոնց վերքերուն սպեղանի իսկ դառնալու:

Անոնց տնտեսական, բնակարանային, առողջապահական, ընկերային, կրթական թէ հոգեվիճակի ցաւերը տողերուս հեղինակին անձանօթ չեն, որովհետեւ ան «վայելած է» 21 Մարտ 2014-ին, Թուրքիոյ ենթակայ ահաբեկչական խմբակներուն, Զեսապի (Սուրիա), բռնագրաւումին եւ անոր յաջորդած «բարիքները» (բարեբախտաբար կարճ տեւեց, եւ 84 օր ետք քեսապահայութիւնը վերադարձաւ իր գիւղը, ու ստացաւ պետական, բարեսիրական, հայկական ամէն տեսակի խնամք ու կը շարունակէ, - թէեւ դժուարութիւններով, - պահել հայրենի գիւղը):

Այս պատերազմը աւելի ցցուն դարձուց 2,5 տարի առաջ, ցասումի բողոքներու ալիքին վրան նստած, իշխանութեան հասած, վարչախմբակին իսկական դէմքը:

Չուրկ բարոյական, ազգային եւ նոյնիսկ մարդկային դիմագիծէ, իշխանութիւնները նուազագոյն ճիգ չեն թափեր ստեղծուած իրավիճակը գէթ մարդկային առումով բարելաւելու: Իշխանական խմբակը իր գրաւած աթոռներուն ճորտը դարձած է: Արդէն անարարկելի է այն իրողութիւնը, որ անոնց համար արժէք չեն այն բաները, որոնք հայրենիքը ու ազգը կը պահեն: Անոնց համար անկերաւոր են հայ եկեղեցին, հայ վարժարանը, հայկական բարձրագոյն կրթօճախներն ու կառույցները...: Անոնց համար ապագային արժէքներ, օրինակ թրքասիրութիւն, ԼԿԹՓ-ի զգուելի հարցեր... եւ այլն, աւելի կարեւոր են քան ազգն ու հայրենիքը:

Իշխանութեան մէկ ուրիշ բարոյական գորշ դիմագիծը երեւաց, երբ ի յայտ եկաւ որ իր «վարձակալութեան» դաշտին մէջ պատնէշի վրայ կը պահէ ընկերային յարաբերութեանց ցանցերուն համար գինուած բանակ մը, որ կը հաշուէ հարիւրաւորներ. այդ վարձկանները բազմած համակարգիչներուն ետին՝ տեղեկատուութեան հայկական աշխարհը կ'ողողեն շինծու ու սուտ լուրերով, գովքը հիւսելով վարչապետին, նգովելով պատերազմի նահատակները, հայիոյելով ընդդիմադիրներուն, թոյն ու ժահր թափելով աջ ու ձախ. անոնց մէկ գրասենեակի բացայայտումը դիտեցինք անկախ ու անկաշառ

լրատուական միջոցի մը սփռած տեսերիզով... նոյնիսկն պրն. Վարչապետին շուրթերէն արձակուած գրպարտանքներուն ականջալուր եղանք իր ընդդիմախօսներուն արձակուած, թէեւ քիչ մը «տիփլումաթիք» լեզուով, սակայն իր մտածումներն ու ապրումները արտացոլացնող... Իր դաւաճանական պարտութիւնը կը փորձէ յաղթութեան վերածել, ու եղած-չեղած մեղքը բարդել իր գինաթափած քաջարի բանակին ու նահատակներու վիզին...:

Այսպիսով հայութիւնը ի Հայաստան, ի Արցախ եւ ի Սփիւռք կը գտնուին շատ վտանգաւոր անորոշութեան դէմ յանդիման, ստեղծուած խարխափող «իր քայլի» վարչախումբին կողմէ:

Փաշինեանական «գորշ յեղափոխութեան» իբրեւ թէ լուսաւոր յոյսեր կապած, սուտ խոստումներով յագեցած եւ պատերազմէն պարտութեամբ դուրս եկած համայն հայութիւնը եւ ի մասնաւորի հայրենի բնակչութիւնը եւ մանաւանդ երիտասարդութիւնը այսօր կ'ապրի յուսախաբութեան եւ յուսահատութեան մէջ: Համատարած դարձած է պարտողական հոգեվիճակը:

Հայութիւնը չի տեսներ, չի գտներ իր ապահովութեան (ֆիզիքական թէ հոգեմշակութային իմաստով) նուազագոյն գրաւակաւը:

Չինուորական, ապահովական, տնտեսական, կրթական, ընկերային, քաղաքական անապահովութեան անորոշութիւնը սպառնական դարձած է: Ըլլալու թէ չըլլալու հարցը ու հարցադրումը առկայ են:

Սփիւռքը հայկական «անապատին» մէջ հայրենիքները կը տեսնէր որպէս «ովախիս», որ մէկ ստորագրութեամբ անապատի պատրանքի մը նման չքացաւ: Սփիւռքը, իր ամէն ինչը կը կապէր Հայաստանի եւ Արցախի, անոնց հետ կը գոյատուէր: Նոյնիսկ օտարախօս հայեր, կիսաօտարացած հայ հաւաքականութիւնը սրտով ու հոգուով կապուած էր հայրենիքներուն: Քիչ մը անդին անցնելով, հայութեան մեծ մասը, արեւմտահայաստանի բռնագրաւեալ հողերը վերադարձնելու յոյսեր կը փայփայէր, եւ կը պայքարէր այդ երազը իրականացնելու ճամբուն վրայ: Ասոր փաստն է տասնեակ տարիներէ ի վեր կազմակերպուած «Համահայկական Հիմնադրամի» թելեթոններուն գործնական

# Գանձասար

մասնակցությունը, բան մը որ որոշիչ դերակատարություն ունեցաւ հայրենիքներուն տնտեսական աճին վրայ:

Աւելին. աշխարհասփիւռ հայութեան համար քաղաքական-տնտեսական պայքարին ճամբուն վրայ որքա՞ն մեծ եղաւ ԶՅԴ-եան Զայ-Դատի գրասենակներուն դերը: Անոնք կը պատկանին հայութեան հոգեմտաւոր աշխարհին, որուն եւս հարուած հասցուցած է պարտուողական համաձայնագիրը:

Իսկ այժմ ինչ...: Զայաստանի թէ Արցախի հայութիւնը ո՞ր պիտի փնտռէ իր ապահով գոյութիւնը. արտագաղթողի ցուպը

մը: Մեր փոքրիկ հայրենիքին («միջրո հայրենիքին») ռազմաքաղաքական բարեկամ գերպետութիւնները (Ռուսաստան եւ Պարսկաստան), մեր ապիկար իշխանաւորներու քաղաքական խարխափումներուն որպէս արդիւնք երես դարձուցած են մեզմէ. զմեզ մեր բախտին ու թշնամիին քմայքին լքելով. փաստօրէն ամէնօրեայ նկրտումներ ու ոտնձգութիւններ տեղի կ'ունենան ոչ միայն Արցախի մնացած տարածքին, այլեւ Զայաստանի սահմանային շրջաններուն վրայ. մինչ անոնք անցած են մեր թշնամիին հետ «սիրաբանելու» գործընթացի մը: Փաստօրէն մենք նմանած ենք փոսը ինկած անձի մը, որ



վերստի՞ն ձեռք պիտի առնէ: Սփիւռքահայութիւնը ո՞ր պիտի փնտռէ իր հոգեկան հայրենիքը... Սփիւռքահայութիւնը ի՞նչ հոգեվիճակով պիտի սատար կանգնի հայրենիքին երբ անոր «անքայլ» կամ «վատաքայլ» իշխանաւորները հողը յանձնեցին, եւ սփիւռքի ներդրած (այս պատերազմի ընթացքին) մեծագումար հանգանակութեան գումարները կը վերածեն պարզեւավճարներու՝ իրենց արբանեակներուն տրամադրելու, փոխանակ Արցախի ու արցախցիներու միացող վերքերը դարմանելու:

Ստեղծուած է շրջանային նոր իրավիճակ

իրեն օգնութեան հասնող եւ զինք փոսէն դուրս բերող բարեկամին երկարած ձեռքը խածնելու ելած էր:

Վառելանիւթի եւ ջուրի պաշարները գաւտնը մղած են, (մերոնց ապիկարութեան պատճառաւ), Զայաստան-Արցախ ռազմաաշխարհագրական արժեքը անտեսելու: Զիւսիսի մեր բարեկամը որպէս խաղաղապահ եկած բազմած է Արցախի վերջին պատառիկին վրայ. հարցական է թէ ի՞նչ ընելու: Իսկ հարաւի բարեկամը նոր մեղրամիս կը սարքէ թշնամիին հետ: Չարմանալու՞ է արդեօք, թէ ան ինչո՞ւ կը համակերպի իր քիթին տակ



բունտող նոր-օսմանական-սելճուքեան աճող կայսրութեան հետ, մանաւանդ երբ Ատրաբէյ-ճան փաստօրէն դարձած է Թուրքիոյ մէկ նահանգը:

Այս խաղին մէջ մենք 2,5 տարիէ ի վեր ո՞ր էինք, ո՞ր ենք հիմա:

\* \* \*

Յեռու մնալով քաղաքական-առարկայական եւ ամբողջական վերլուծումի մը յաւակնութենէն ու մեծամտութենէն, Զեսապի մեր փոքրիկ պատուհանէն մեզի ակնբախ են հայկական տեսադաշտին վրայ փռուած իրավիճակները: Մենք, անցնող բազմատասնեակ տարիներուն չենք սորված գլուխ դարձնել հայկական թէ հայրենական հարցերուն ու տագնապներուն:

Բարեկամ մը երբ հեռաւոր Ամերիկայէն, յետ այս պատերազմին, զանգեց, ու հարցուց մեր որպիսութիւնը, անոր պատասխանս կը պարունակէր ցաւ, տառապանք ու ցասում: Վեց տարի առաջ (Զեսապ) եւ վեց շաբաթ առաջ (Արցախ), նոյն թշնամիին ձեռքով տրորուելէ ետք, գիւղական բառերով ու ոճով պատասխանեցի. «*Կը նմանիկը ծեծ կերած շան, որ կը սպասէ թէ ե՞րբ պիտի ստանայ յաջորդ հարուածը*» (թող ընթերցողները ներողամիտ ըլլան գիւղական ոճիս համար):

Այսուհանդերձ, հեռու մնալով պարտուողական հոգեվիճակէ ու մտածումէ, տակաւին կան յոյսեր: Եւ այդ յոյսերը կը տեսնենք պարտութիւնը եւ անձնատուութիւնը մերժող, Երեւանի հրապարակները իջած, օր ըստ օրէ աճող բազմահազար ժողովուրդին մէջ, որ իր ոճով կը մերժէ անձնատուութիւնը ու պարտութիւնը՝ պահանջելով իշխանութեան խաղաղօրէն մեկնումը:

Յայկական շատ մը կուսակցութիւններ ու կազմակերպութիւններ (հայրենիք թէ Սփիւռք) եւ Յայ Առաքելական Եկեղեցւոյ նուիրապետական Ս. Աթոռներու գահակալները հեռացման կոչ ուղղած են:

Այս տողադարձը կը սկսի վերջակետով: Պետք է որ այս վարչախումբը եւ վարչաձեւը տուն երթան եւ ասպարեզը տրուի ազգասէր ու ազգաշէն նոր հաւաքական ուժին: Միացեալ ուժին, որ անկիւնադարձի մը յոյսը պիտի ներշնչէ՝ նոր քայլերով, նոր ճիգերով, կորսուածը ոչ միայն վերագտնելու, այլեւ պահելու ու փրկելու մնացածը:

Կ'ապաւինինք յոյսին ու կը փայփայենք զայն, հայրենիքները ամրապնդելու ռազմական ապահովութեամբ, քաղաքականօրէն, տնտեսական հզօրանքի, կրթամշակութային ծաղկումի ճամբով... Եւ այլև: Մարտահրաւեր է հայրենի բնակչութիւնը պահելը այնտեղ: Մարտահրաւեր է Արցախի տեղահանեալ բնակչութիւնը վերադարձնելը, իսկ գրաւուած տարածքներուն բնակչութեան մօտ վերադարձի յոյսը վառ պահելը անհրաժեշտ է (գործնական քայլերով):

Մարտահրաւեր է Յայաստանին քաղաքական վստահելի գործընկերոջ հանգամանքը վերադարձնելը, ռազմավարական բարեկամներուն թէ միջազգային քաղաքական բեմին վրայ:

Մարտահրաւեր է սփիւռքահայութեան կորսուած վստահութիւնը վերագտնելը: Մարտահրաւեր է միջազգային ընտանիքէն շարունակել Յայոց Տեղասպանութեան դատապարտումն ու անոր հատուցման գործընթացը պահանջելը:

Տասնապատկուած մարտահրաւերներ...:

Կը հաւատանք որ արիւնաթաթախ այս իշխանութիւնները պիտի մեկնին:

Պիտի մեկնին ու եկողներուն պիտի ձգեն շատ ծանր ժառանգ, ի հայրենիք եւ ի սփիւռս աշխարհի: Իսկ այդ ժառանգը կը թելադրէ շատ բան զերոյէն սկսիլ: Սկսիլ հաւատքով: Սկսիլ նուիրումով: Սկսիլ երկարաշունչ հայրենապահպանման, հայրենաշինութեան, անցեալին թէ մօտերս կորսնցուցածները վերագտնելու պայքարին: Երկարատեւ երկարաշունչ պայքար մը:

Սկսիլ մեղուի նման: Վստահութիւնը վերագտնելու, վստահութիւնը շահելու. թափանցիկօրէն:

Այո, կը յաջողիկք վերագտնել կորսուածը. իւրաքանչիւրս իր մարզին մէջ պայքարելով, յանուն հայութեան ու հայրենիքին, հայրենիքի թէ սփիւռքի մէջ, առանց ականջալուր ըլլալու այսօրուան իշխանութեան, իշխանապաշտ, ժանգոտած ու գօսացած գորշ շրջանակներու ըսի-ըսաւներուն (յաճախ նաեւ հայիոյախառն), ելոյթներուն, առանց արժեք տալու կամ կքելու ներքին դաւերուն ծանրութեան տակ...:

«Օ՛ն, սլացիր երիվար, նպատակս տկարութիւն չի ճանչնար...»:

## ԱՐՅԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԱՊՐՈՒԻՆԵՐՈՎ... ԲԱԾ ԱՉՔԵՐՈՎ

*Նայիրի Սկրտիչեան*

Ինչո՞ւ սկսաւ Արցախեան պատերազմը, ինչպէ՞ս կարելի էր խուսափիլ այդ պատերազմէն եւ չհասնիլ այսօրուան ողբալի վիճակին: Այս հարցերուն յստակ բացատրութիւն տուած է Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինը՝ Չորի Բալայեանին ուղղուած իր «Ինչո՞ւ եղաւ այդպէս» բացատրական նամակով, ուր մասնաւորապէս կ'ըսէ՝ *«Ձեր ժողովուրդը, Ձեր զինուորն ու սպան պայքարած են առիծաբար, ես կը խոնարհիմ անոնց բոլորին առջեւ՝ անկախ ամէն ինչէ, բայց պայքարողներուն միւս հատուածը՝ իշխանութիւն կամ առաջնորդ կոչուածը, ցաւօք, արեւմուտքի իրենց սուվերէններու թելադրանքով կը կրռուէր ընդդէմ մեր շահերուն: Այստեղ «կռուիլ» բառը պէտք է առնել չակերտներու մէջ, քանի որ այդ առաջնորդները ոչ թէ կը կրռուէին Ձեր պատկերացուցածով, այլ կ'իրագործէին խոշորագոյն ծրագիր մը»<sup>1</sup>:*

Նոյն հարցումներուն պատասխանը տուած է նաեւ Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Զոհարեանը, վերջերս տուած իր հարցազրոյցին ընթացքին շեշտելով, որ պատերազմի երրորդ օրն անգամ, երբ դեռ քանի մը քմ կորսնցուցած էինք եւ տուած 500 զոհ, կարելի էր պատերազմը կանգնեցնել եւ կանխել այսօրուան հետեւանքները:

Այն, որ նախկին իշխանութիւնները սուրբ չեն եղած՝ (իմ կարծիքով աշխարհի մէջ արդար իշխանութիւն գոյութիւն չունի) անհերքելի փաստ է: Փաստ է նաեւ այն, որ այս պատերազմը ողբալի ընթացք ու հետեւանք ունեցաւ՝ ներկայ իշխանութեան ոչ ռուսամետ եւ ապիկար կառավարման՝ ձախող եւ այլ նպատակներ հետապնդող գործելաոճին պատճառով: Այս մասին կը վկայեն բազում քաղաքական գործիչներ, ռազմագետներ, պատերազմի մասնակից զինուորականներ

ու բանիմաց այլ մասնագետներ: Զետեւաբար, պէտք է բաց աչքերով նայիլ իրականութեան եւ կողոպուտը տարբերել կողոպուտին հետ զուգահեռ ընթացող դաւաճանութենէն...

Իսկ ի՞նչ իրավիճակ կը տիրէր Հայաստանի մէջ՝ պատերազմի 44 օրերուն ընթացքին...

Մօտ 20 տարի է Հայաստանի մէկ մասնիկն եմ, սակայն անցնող երկու տասնամեակներուն ընթացքին, Հայաստանի հասարակութիւնը այսքան միասնական չէի տեսած, որքան պատերազմի օրերուն:



2016-ի քառօրեային ալ միաւորուեցանք, սակայն, բարեբախտաբար պատերազմը շատ կարճ տեւեց եւ չհասցուցինք զգալ ու ապրիլ այն՝ ինչ տեսանք այս պատերազմի 44 օրերուն ընթացքին: Զաւանաբար պատերազմը երկար տեւելէն բացի, անոր նախորդող երկու տարիներուն այնքա՛ն պառակտում սերմանուեցաւ, որ պատերազմական օրերու միասնութիւնը առաւել ցայտուն դարձաւ եւ մի քանի օրուան ընթացքին պառակտուած ամբոխը վերածուեցաւ ազգի:

Այդ օրերուն իշխանութիւնը գրեթէ լուռ էր, պառակտող լայկերը դադրած էին եւ ողջ հայկական աշխարհը պարուրուած էր «յաղթանակ»ի մթնոլորտով: Սփիւռքի զարթօնքն ու մշտական աջակցութիւնը բոլորիս յայտնի էր,

<sup>1</sup><http://yerkir.am/news/view/221467.html>



սակայն, պետք էր տեսնել եւ հոգեպէս փառաւորուիլ՝ տեսնելով Հայաստանի հասարակութեան ինքնակազմակերպումը, նուիրումը, հայրենասիրական ոգին... ընկոյզ վաճառող վեցամեայ Սիերէն մինչեւ իրենց ունեցած միակ կովը վաճառած ու դրամը հիմնադրամին նուիրած թռչակառու գոյգը, հակառակ կեանքի դժուար պայմաններուն իրենց ներդրումը ունեցան յաղթանակ կերտելու գործին մէջ: Չինուորի կարիքները ապահովելը, ոգի ու ջերմութիւն փոխանցելը դարձած էր առաքելութիւն: Հայ գինուորին սիրագործութիւնները, հերոսական համբաւը իրաւացիօրէն տարածուեցաւ աշխարհով մէկ: Ողջ Հայաստանը ողողուած էր Հայոց եռագոյնի եւ Արցախի դրօշներու սփռած մաքուր ու հայեցի շունչով: Հասարակական ցանցերու մէջ միայն բարութիւն եւ իրարու աջակցելու մթնոլորտ կը տիրէր, կ'ապրէինք մեր երազած Հայաստանին մէջ՝ ամուր կառչած մեր հողին եւ առաւել քան վստահ, որ պիտի յաղթենք...

Վրայ հասաւ սեւ թուղթը ստորագրելու չարափաստիկ օրը, տխրահռչակ յայտարարութիւնը արտասանեց Արցախի նախագահի մամուլ խօսնակը: Առաջին պահերուն, բոլորը համոզուած էին, որ տուեալ պաշտօնեայի էջը ազերիներու կողմէ յարձակման ենթարկուած է... որովհետեւ ստեղծուած «յաղթական» մթնոլորտին մէջ, միայն ազերի կրնար նման լուր հաղորդել: Աւելի ուշ, նոյն պաշտօնեան հաստատեց լուրին ճշմարտութիւնը, անոր յաջորդեց Հայաստանի վարչապետին յաղթանակածի ժպիտով եւ առանց նուազագոյն ցաւ անգամ զգալու հաստատումը... դարձեալ պառակտող լայկեր, մոլորեցնող «արդարացումներ»... եւ քանի մը օրուան ընթացքին ցաւալիօրէն դարձանք այնպէս, ինչպէս մեզ բնութագրեց Ռուսիոյ նախագահը՝ «Ձեր ժողովուրդը այլեւս հաւաքական իմաստով չունի գերխնդիրներէն կարելորագոյնը, այդ հզօր ազգը բարոյապէս ոչնչացուած է իր իսկ ղեկավարութեան կողմէն, եւ այժմ աչքիս առջեւ է ֆիզիքական գոյութիւնը քարշ տալու ելած թափառական ամբոխ մը»:

Պատերազմի աւարտը յայտարարելէն ետք, դիրքերէն վերադարձած գնդապետներէն մինչեւ կամաւորական ու ժամկետային զինուորներ, պատմեցին իրենց տեսածին եւ գիտցածին մէկ մասը, անոնք կը վստահեցնեն, որ պատերազմի ընթացքին եղած են այն-

պիսի դաւաճանական իրադարձութիւններ, գորս լսելով ապրելու ուժ պիտի չունենանք...

Պատերազմի մասնակից մը կը վկայէ. «Մենք հրամանատար չենք ունեցած, սարի ետեւ ունեցած ենք սպայ մը, որ պատերազմի ժամանակ գօրքը կռուի մէջ չէ մտցուցած, օգնութիւն ուզած ենք, բայց չէ հասած...»:

«Հայոց Ազգային Գվարտիա» ՀԿ հիմնադիր Արշակ Չաքարեան կ'ըսէ. «Ես փաստեր ունիմ եւ պիտի ապացուցեմ, որ պատերազմէն մէկ օր առաջ, 30 մարտական սպայ՝ մայրո, փոխգնդապետ եւ գնդապետ, կանչած եւ ըսած են, որ դիմում գրեն ու գինուորական ուժերէն հեռանան»: Անոր խօսքով հեռացուած մարտական սպաները անոնք էին, որոնք երբեք նահանջի հրաման պիտի չկատարէին, այսինքն՝ մեկուսացուած են ամենավստահելիները...

ՀՀ պետական եւ քաղաքական գործիչ, «Ազգային անվտանգութիւն» կուսակցութեան նախագահ Գառնիկ Իսակուլեանի վկայութեամբ 1400 անցագիր տրուած է հայերէն գիտցող ազերիներու, որոնք Հայաստանի կողմէն մտած են Արցախ ու յարձակում գործած...

Բոլոր վկայութիւններն ու փաստերը հիմք կը հանդիսանան մտածելու, որ Հայաստանի իշխանութիւնը ամէն ինչ ըրած է երկիրը պարտութեան մատնելու եւ զայն թուրքին յանձնելու ծրագիր իրականացնելու համար: Բոլոր ականատեսները որեւէ կասկած վեր կը դասեն, յատկապէս Շուշին ու Հադրութը թշնամիին «նուիրելու» իրողութիւնը:

Շուշին յանձնելու յաջորդ օրը, նոյն Նիկոլ Փաշինեանը, որ 1 Մարտի դէպքերուն իր ուրախութիւնը յայտնեց ըսելով. «Հոգիս փառաւորուում ա, երբ տեսնում եմ, թէ ոնց էք դուք ինկաները խլում միլիցիայից», ապա կոչ ըրաւ «Մենք պետք է այսօր վերջնականապէս մաքրենք մեր քաղաքը դարաբաղդի տականքներից», նոյն արարածը, Ազգային ժողովէն ներս նախ Շուշին անուանեց գորշ քաղաք, ապա՝ Շուշիի փոխարէն օգտագործեց «Շուշա» թրքական անուանումը...

10 Նոյեմբերէն ի վեր, Հայաստանի եւ Արցախի մէջ անորոշութիւն է յատկապէս սահմանամերձ շրջաններու գծով. բնակիչները չեն գիտեր, թէ ինչպէ՛ս պիտի անցնին սահմանը, թշնամին որքա՛ն պիտի մօտենայ իրենց գիւղին կամ քաղաքին, ինչպէ՛ս պիտի պաշտպանուի սահմանի եւ այնտեղ ապրող բնակ-

# Գանձասար

չութեան անվտանգութիւնը:

Հայաստանի իշխանութիւնները այնպէս ալ յստակ չյայտնեցին Հայաստանի եւ Արցախի սահմանները ուրկէ կը սկսին եւ ուր կը վերջանան: Ամէն օր, Արցախի շրջանի մը բնակիչները ժամեր առաջ կը տեղեկանան, որ իրենց օրրանը յանձնուած է թշնամիին, որեւէ յարմարութիւն չի ստեղծուիր գիրենք տեղափոխելու համար, իւրաքանչիւրը կը պարտաւորուի հաշուած ժամերու ընթացքին որոշել իր ընելիքը եւ ազերիներու ծաղրով ու նուաստացումով իր բնակարանէն հեռանալ՝ դէպի անորոշութիւն... շատեր հեռանալէն առաջ կը հրկիզեն իրենց տուները՝ թշնամիին չձգելու համար:

Արցախի եւ Հայաստանի շրջաններու պաշտպանութիւնը հիմա յանձն առած են կամաւորական խումբերը, որոշ համայնքապետներ ու գիւղապետներ: Արցախի Քաշաթաղի շրջանի Աղաւնոյ գիւղի հայրենադարձ գիւղապետ Անդրանիկ Չաւուշեան կը վկայէ, որ իրենց գիւղը կը պաշտպանեն գիւղի տղամարդիկ, որոնք որոշած են չհեռանալ գիւղէն: Գիւղին մէջի ճանապարհը կ'ապահովեն ռուսերը, քանի մը մեթր հեռաւորութեան վրայ կը տեսնեն ազերիները: Պետական մարմիններէն յստակ պատասխան չեն ստացած գիւղի կարգավիճակին մասին, սակայն ան համոզուած է, որ հայկական դրօշը պետք է ծածանի համայնքապետարանին վրայ եւ իրենք պետք է մնան այնտեղ, որովհետեւ իրենց մնալով կ'երաշխաւորուի նաեւ Ստեփանակերտի ժողովուրդին գոյատեւման հարցը: Աղաւնոյի գիւղապետը կը յայտնէ նաեւ, որ իրենց գիւղի տարհանումը եղած է կազմակերպուած, իշխանութիւնները խրախուսած են գիւղացիներուն հեռանալը՝ անոնց վառելանիւթ եւ փոխադրամիջոց տրամադրելով: Այստեղ պետք է յիշեցնենք, որ նոյն կարելիութիւնը չէ ստեղծուած ազերիներուն յանձնուած գիւղերու հայերուն համար:

Հայաստան երբեք այսքան անտեր չէ եղած, Հայաստանի մէջ այսօր չկայ իշխանութիւն, հազարաւոր նահատակուած, անյայտ ճակատագրի արժանացած, գերեվարուած զինուորներու ծնողներ անորոշութեան մէջ են, մէկ գերատեսչութենէն միւսը կ'երթան, բայց իրենց զաւակներուն մասին որեւէ տեղեկութիւն չեն ստանար: Պատերազմը դադրեցնելու յայտարարութենէն ետք անգամ մէկ

տասնեակէ աւելի հայեր գերեվարուեցան... Բոլորիս յայտնի է թէ ինչ չարչարանքներու կ'ենթարկուին մեր գերիները, բայց ՀՀ ԱԺ թրքամետ պատգամաւորը կը յայտարարէ, որ ազերիները լաւ կը վարուին հայ գերիներու հետ:

Հայաստանէն տարածք կը կորսնցնենք եւ ամէն օր նոր տարածք կորսնցնելու սպառնալիք կայ: Այսօր չկայ ոսկիի հանքը, Սիւնիքի Արաւուս շրջանի, Գորիս-Կապան ճանապարհի մէկ հատուածը, որ ըստ քարտեզի, կ'անցնի Ատրպէյճանի Ղուպաթլուի շրջանով, կը խօսուի այլ շրջաններ յանձնելու մասին եւս... Մինչ 9 Դեկտեմբերին ՀՀ փոխվարչապետ Տիգրան Աւինեան կը յայտնէ, որ ՀՀ-ի ու Ատրպէյճանի միջեւ իրաւական սահման վերջնականապէս արձանագրուած չէ, միաժամանակ աւելցնելով. «ՀՀ սահմանէն այս կողմ որեւէ բան գիշուած չէ եւ չի կրնար ըլլալ»:

Այսօր այնքան անտեր ենք, որ Հայաստանի մտաւոր հասարակութիւնը Ռուսիոյ դեսպանութեան կը դիմէ գերիներու եւ անյայտ զինուորներու հարցով զբաղելու խնդրանքով, իսկ ՀՀ նախագահ Արմէն Սարգսեան Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ սահմանագրծման աջակցելու հարցով նամակ կը յղէ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինին:

Իսկ Փութինը, մինչ այդ, Հայաստանի ներկայ իրավիճակին մասին վերոյիշեալ նամակին մէջ ըսած է հետեւեալը. «Այժմ ստիպուած եմ զգուշացնելու. ռուսական դրօշի առկայութիւնը ՀՀ-ի մէջ՝ ձեր դրօշին փոխարէն, շատ բան պիտի փոխէ ձեր հոգիներուն մէջ: Մտածեցէք այս մասին եւ մի՛ կործանէք ձեր հաւաքական գոյութեան վերջին հիմնաքարը»:

Այս պատերազմին իշխանութիւնը պարտուեցաւ, կամ ամէն ինչ ըրաւ որ պարտուի, կորուստներ կրեց հայ ժողովուրդը, վտանգուեցաւ մեր գոյութիւնը եւ վիրաւորուեցաւ մեր արժանապատուութիւնը, իսկ միակը, որ յաղթեց հայ զինուորն է, այդ նոյն յաղթող զինուորները այսօր հրապարակի մէջ կը կազմեն այն կորիզը, որ կը պահանջէ Նիկոլ Փաշինեանի հրաժարականը՝ հայրենիքի մնացորդը փրկելու եւ Արցախը ետ բերելու վճռակամութեամբ... Այդ երիտասարդութիւնը մերօրեայ հերոսներն են, վաղուան յոյսն ու լոյսն են, հայու արժանաւոր տեսակը, Հայկի իսկական ժառանգորդները, որոնք անպայման պիտի յաղթեն...



# ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌԷՆ ԿԱԽՈՒԱԾ՝ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ «ԶԱՐԴԵՐ»

*Չեղրգ Պետիկեան*

Այս անգամ պապիկ-թոռնիկի «Ֆէյս թայմ»ը շատ կարճ տեւած էր, հագիւ հինգ վայրկեան:



Չարմանալի, բայց իրաւ: Պատճառը ես չէի, ինքն էր: Այսպէս, *քրիսմըս*էն քանի մը օր առաջ, առաւօտ կանուխ, տասը տարեկան մեր թոռնիկը՝ Յայկը, անակնկալօրէն գիս *Ֆէյս թայմ*ի հրաւիրած էր: Մտովի «խեր ըլլայ» մը ըսելով հնազանդ անցած էի հեռաձայնիս դիմաց: Ան իր լայն ժպիտով, նախ յարգանքով «հելլօ պապիկ» ըսելէ ետք, անելցուցած էր, թէ իրենց տան կաղանդի ծա-

ռը ոչ միայն շտկած եւ զարդարած էր, այլեւ անոր տակն ալ նուէրները շարած էր: Կը պակսէին մեր նուէրները: Ի՛նչ յանդգնութիւն եւ համարձակութիւն: Ահա՛ քեզի մանկութիւն. Նախանձելի եւ մանաւանդ՝ երանելի:

Իբրեւ մեծ հայր, գնահատանքի, գովասանքի եւ ուրախութեան խօսքերով եւ «*ապրիս*»ներով պատասխանած էի, սակայն, դժբախտաբար, մեր այս խօսակցութիւն-զրոյցէն հայերէնը բացակայ էր: Ե՛հ, հո՛ս Ամերիկա է: Նորութիւն մը չէ: Արդէն այս «օրհնեալ» երկիրը, օրին իր կաթսային մէջ ձուլած էր մարդկային մեծ ու փոքր բոլոր հոսանքները եւ կազմած՝ նոր մտայնութիւն: Ու թոռնիկս ալ բացառութիւն մը չէր կրնար կազմել: Հաւատացէ՛ք, սեւը միշտ ճերմակին ետեւը պահուըտած կ'ըլլայ: Տաւալի է, բայց իրական: Սակայն այս ուրիշ հարց է:

Նաեւ յիշեցնեմ, որ նոյն այս թոռնիկս էր, որ անցեալ Հոկտեմբերի կիսուն, Արցախեան մեծ պատերազմի այդ «տաք» օրերուն, իր մօրը հետ, երեք-չորս օր շարունակ, քիթ-բերան գոցած, մէկ վաճառատունէն միւսը անցած-գացած էր, հայրենի գինուորին եւ Արցախի մանուկներուն տասնեակներով գազակ եւ երկար ու հաստ գուլպաներ գնելու եւ զանոնք մեծ եւ բարի գործ մը աւարտողի գոհունակութեամբ հասցուցած, մարդասիրական ծրագիր-աշխատանքի մը յատուկ կեդրոնը: Ծիշո՞ր էր, որ ան մայրենի իր լեզուին ծանօթ չէր, լեզուն չէր գիտեր, բայց միտքը իր այս տարիքին իսկ «գբաղած էր» իր ազգին «հարցերով»:

Ինչպէ՛ս բացատրել այս դաշտանկարը: Դո՛ւք ըսէք:

Ու մեր այս խօսակցութեան սկիզբը, թեւ տրամադրութիւնս լաւ էր եւ բարձր, բայց մեր տղուն «*պապիկ, կաղանդի ծառը շտկե-*

# Գանձասար

ցի՞ր, նուէրներդ շարեցի՞ր» անմեղ հարցումը եկած ու փոխած էր անոր ընթացքը: Հայկի աչքերուն մէջ այդ թերթել կարծուած հարցականը խառնած էր ամէն «բան»:

Կաղանդի ծառ: Տօնածառ:

Բայց համեստօրէն ըսեմ, որ մենք, էրիկ-կնիկ, այս տարի որոշած էինք ո՛չ տօնածառ ունենալ, եւ ոչ ալ կաղանդ տօնել: Մենք մեզի սգաւոր համարած էինք: Իրապէս սիրտ չունէինք: Արցախեան ահաւոր պատերազմը մեզ հոգեպէս ցնցած էր, նոյնիսկ զգեստնած ու մեր օրերը անտրամադիր դարձուցած: Ու այս մէկը չէինք կրնար թաքցնել: Յայտնի էր եւ երեւելի: Անոր համար էր, որ Հայկին անակնկալ այս հարցումին առջեւ, վայրկեանի մը համար շուարեցայ: Բայց ինչո՞ւ եւ այսպէս իրար անցայ, չեմ գիտեր: Ի՞նչ պետք էր, որ ըսէի այս փոքր տղուն, մեր այդ վիրաւոր հայրենիքի մասին, չէի գիտեր: Այս մէկն ալ ինձի համար հանելուկ մըն էր: Ուրկէ՞ սկսէի, եւ ի՞նչ կամ ինչպէ՞ս բացատրէի, որպէսզի մեր այս փոքրիկը, որ իր այս տարիքին տակաւին կը հաւատար «սանթա»ին՝ կաղանդ պապուկին, մեզի նման հայութեան բարոյոյթով չտառապէր: Արդեօք այս առթիւ իմ ըսելիքներս, կամ ինձի համար արդար պատճառաբանութիւններս պիտի կրնայի՞ն զինք համոզել: Արդարացումներս պիտի հասկնա՞ր: Պիտի բաւարարուէ՞ր: Չեմ գիտեր: Շուարումը պատած էր միտքս: Նախ քիչ մը կմկմացի: Փորձեցի ամփոփել մտածումներս առանց բացայայտելու մտահոգութիւնս եւ անկէ ծնունդ առած յուզումս:

Ու վերջ ի վերջոյ որոշումս յայտնեցի: Ըսի, որ այս տարի ծառ-մառ չկայ... չունինք... չդրինք...: Բայց հազիւ այս քանի մը բառերը արտասանած էի, յանկարծ եւ անմիջապէս դեմքին վրայ անօրինակ զարմանք մը բռնեց: Անկանոն կացութիւն: Իսկապէս, որ շատ դժուար էր այդ պահուն պատմել, բացատրել, ներկայացնել հայրենի կեանքի իրողութիւնը: Ահա թէ ինչո՞ւ մեր խօսակցութիւնը իր կշռոյթը կորսնցուցած էր եւ իր դիմանկարն ալ տրամադրութիւնս քանդած: Միւս կողմէ կը զգայի, որ իր հոգին ալ դժուար պայքարի մէջ էր եւ անհաշտ: Ինք տակաւին շատ փոքր էր նման բաներ հասկնալու համար: Գիտեմ, որ իրեն համար էակաւոր եւ առաջնայինը ուրիշ բան էր՝ մեզմէ ստանալիք իր նուէրները, որոնք «ես պետք էր, որ

մինչեւ հիմա մեր տան ծառին տակ շարած ըլլայի»:

Պարզ իրականութիւնը. Երբ այդ անանդական կաղանդի ծառը իմ որոշումովս մեր տան մէջ գոյութիւն պիտի չունենար, ուրեմն նաեւ իր իսկ մանկական տրամաբանութեամբ պիտի չըլլային նուէրներ ալ: Անշուշտ նման եզրակացութիւն անճիշդ էր, բայց... ինչպէ՞ս համոզելի: Այս որոշումս իրեն համար ... «*Իթ իզ նաթ ֆեր*», արդար չէր...: Ու այս նախադասութիւնը, քիչ մը յուզական ձայնով, քանի մը անգամ կրկնելէ ետք հեռացած էր յուսախաբ եւ շատ նեղուած:

Բայց իրականութիւնը այն էր, որ այս օրերուն, իբրեւ հայեր, մեր մօտ խոր տխրութիւն մը կայ: Սուգ. Յաւալի իրավիճակ: Որովհետեւ այդ պատերազմը, խաղալիք չէր եւ ո՛չ ալ անկէ մեզի բաժին ինկած մարդկային եւ պապենական հողերու ծանր կորուստները: Արդեօք այս բոլորը ինք պիտի կարենա՞ր հասկնալ: Կը կարծեմ, որ նման բաներ հասկնալու համար, նախ մարդ պետք էր «անով» ապրէր: Էական է նաեւ, որոնք հայ կեանքն ու անոր պատմութիւնը, հայ կեանքի գաղտնիքը եւ հայ կամքի խորհուրդն ու ժամանակի գիտակցութիւնը:

Կը զգայի, որ մէջս անհանգիստ ջիղ մը կար, որ տակաւին կը թրթռար: Ահա թէ ինչո՞ւ նեղուած էր եւ կարծես քիչ մըն ալ շատ յուսահատ իր պապիկէն: Մեր խօսակցութեան կապը անոր համար, կիսատ ձգած վայրկեանին կտրած էր եւ հեռացած, զիս առանձին ձգելով հեռաձայնիս պարզ եւ փայլուն ապակիին դիմաց: Ուրախութիւնս շատոնց կորսնցուցած էր իր թարմութիւնն ու փայլքը: Եւ եթէ յանցաւոր մը կար կամ կը փնտռուէր, ան ալ ես էի: Բայց... ինչպէ՞ս պետք էր բացատրել, թէ մենք թէեւ խաղաղասեր եւ ստեղծագործ ժողովուրդ մը եղած ենք եւ տակաւին ենք, սակայն նաեւ եղած ենք վշտահար ու մեր պատմութեան երկաթէ հարուածներուն տակ ճգմուած: Ամենէն վատը, այս կացութեան հետ հաշտ ապրիլն էր:

Կասկած չկար, որ փոխուած էին ժամանակները: Յայտնի էր, թէ ես երկ մըն էի իրեն համար:

Փոխուած էր նաեւ սերունդը եւ իր հետ ապրելու մտածելու եւ գոյատեւելու պայմանները: Մտովի ինքզինքս կը համոզէի: Կ'ապրե-




ինք այնպիսի երկրի մը մեջ, ուր ձեւականութիւնը կը խառնէինք ավանդութեան հետ: Նաեւ ճիշդ էր, որ Սփիւռք կ'ապրէինք, եւ չեմ գիտեր մինչեւ երբ, բայց գիտեմ որ ամէնօրեայ մեր մաշումին, երբեմն անտարբեր ակաւատեսներ ալ կը դառնայինք: Հաւանաբար պետք էր կեանքը դիտել իր անկիւնէն, որպէսզի իր սիրտը ինքնազսպումի ալիք չունենար: Չեմ գիտեր:

Ինծի համար այս օրերուն հայոց աշխարհը ավերի եւ ողբերգութեան երկիր մը դարձած կը թուեր. Յաւ, մահ, կորուստ եւ խոր դառնութիւն: Մէկ կողմէ՝ հերոս գինուորի սիրագործութիւն առանց սակարկութեան հայրենիքի համար զոհել եւ զոհուիլ, իսկ միւս կողմէ ալ՝ համայնական հողի կորուստ եւ վիշտ: Աւելին՝ սերունդի մը կորուստը: Արդ՝ ինչպէ՞ս իրագործել մեր պատմական այս ճակատագիրը: Հայրենի դէպքերը ամէն օր տակաւին կը մրճահարեն մեր միտքերն ու հոգիները: Երբ որ ալ ըլլար կաղանդի տակ շարելիք այդ «խերը անծած» նուերներս, կըրնայի այլ առիթով տալ, յանձնել: Բայց այս մէկը հասկնալ պէտք էր:

Քորոնայով սկսող տարին, Արցախեան պատերազմի ծանր հետքերով ավարտեցինք:

Ըսի «Քորոնա», որուն ներկայութեան



նոյնիսկ ստուերդ կը սարսափի:

Արցախեան պատերազմ յիշեցի, կեանքի եւ հողի ու մահուան համար մղուած անհաւասար եւ պարտադիր կռիւ, որուն դէպքերը ցնցած են մեր գիտակցութիւնը: Անկասկած ունեցանք հերոսներ, որոնք հայրենիքի ծառայութեան եւ անոր հողերու պաշտպանութեան

կեանք զոհած եւ նուիրած են:

Յիշեմ, որ մենք հայերս, ազգովին մեր հերոս նահատակները մեզի հետ ապրեցնող ազգ ենք: Միշտ կը յիշենք եւ կը յիշեցնենք, որովհետեւ հաւատացած ենք, որ մեր նահատակ հերոսներուն սուգը մեր կեանքի արեւն ալ է: Բոլորին յիշատակը մերն է, եւ մենք պարտաւոր ենք հսկել եւ պահել: Ահա թէ ինչո՞ւ այս տարի, կաղանդի ծառի ներկայութեան մենք մեզ կամաւոր գրկեցինք: Համարձակ եւ յստակ իրականութիւն:

Իսկ հիմա, ճիշդ է, որ աշխարհը անորոշ վիճակ մը ունի եւ հիւանդ ալ է: Ու նաեւ ճիշդ է, որ ամէն տեղ կան բարութեան եւ չարութեան մրցումներ, որոնց պատճառով անմեղներ կը զոհուին: Բայց եւ այնպէս գիտակցիլ պէտք է: Հայրենիքին նոր շունչ տալ պէտք է, որպէսզի հասարակականութիւնը ամբոխի չվերածուի: Հաւատք եւ վստահութիւն դնել պէտք է ժողովուրդին վրայ: Նաեւ յիշենք, որ միշտ յանցանքը ուրիշին բեռնակալ, կարելի չէ կեանքը շարունակել: Կեանքը կ'ենթադրէ նաեւ պատասխանատուութիւն: Արդեօ՞ք ամէն անգամ ողբերգութիւն մը պէտք է մեզի, որպէսզի մենք ինքնագիտակցինք:

Դուք ձեզի հարցուցէ՛ք:

Թեւ մեզի հրամցուեցաւ խաբկանքն ու մխիթարութիւնը, սակայն ազգովին կը հաւատանք, որ շուտով պիտի գայ ժամանակը, եւ հայու այս աղմուկին մեջէն, պիտի շարժին շինարար ձեռքեր, միտքեր եւ բազուկներ՝ նորակերտելու մեր սգաւոր հայրենիքը:

Ահա նոր տարուան առթիւ երազներուս, տենչերուս ու յոյսերուս գունաւոր զարդերը:

Բայց անմեղօրէն յայտնեմ, որ մինչեւ հիմա տակաւին Հայկին «իթ իզ Նաթ Ֆեր»ը մտքիս մեջ է: Արդեօք ան ե՞րբ պիտի կարենայ հասկնալ, որ աշխարհի վրայ Ֆեր կամ արդարութիւն ըսուածը

գոյութիւն չունի:

Արդ, մինչեւ անոր գիտնալը, Շնորհաւոր Նոր տարի եւ Բարի կաղանդ բոլորիս ու նաեւ աշխարհի այս օրերու ցուրտին դեմ, հայու մաքուր հոգիէն «տաքուկ» արեւ մը ունենալու երջանկութիւն բոլորիդ:

## ՅՈՒՇԻԿ ՂԱԶԱՐԵԱՆԸ, ՄԵՐ ՄԻՐԵԼԻ ՅՈՒՇՕՆ

Յուշիկ Ղազարեան, դուստրը Յովսէփ Ղազարեանի եւ Սօսի Եագուպեանի: Ծնած է Զալէպ, 18 Սեպտեմբեր 1984-ին:

Յաճախած է Ազգ. Զայկազեան մանկապարտեզ եւ նախակրթարան, միջնակարգ եւ երկրորդական ուսումը ստացած է Ազգ. Զարէն



Եփփէ Ճեմարանէն ներս, իսկ Զալէպի Զամալսարանին մէջ հետեւած է ուսողութեան ճիւղին:

Շատ փոքր տարիքէն կը սիրէր դպրոցը, մանկապարտեզի առաջին տարին Կիրակի օրերը կու լար, որովհետեւ կ'ուզէր միւս օրերուն նման դպրոց յաճախել:

Զայերէնը եւ արաբերէնը դպրոցէն ներս սորվելով, Ծաղիկ դասարանէն սկսաւ ինքնաշխատութեամբ անգլերէն սորվիլ, իրմէ մէկ տարի փոքր եղբայրը՝ Յովիկը, խանդավառուած ինքն ալ սկսաւ հետեւիլ եւ սորվիլ: Անոնք լեզուին բաւական տիրապետելնէն ետք, ես եւ Յովսէփը իրենց տարիքին համապատասխան պատմութեան անգլերէն գիրքեր հայթայթեցինք, հայերէնի եւ արաբերէնի կողքին: Անոնք նոյն թափով շարունակեցին երեք լեզուներուն հետեւիլ մինչեւ իրենց մեծնալը, իսկ մենք, որպէս ծնողք, կարելի եղածին չափ փորձեցինք պահել ըն-

թերցանութեան այդ մթնոլորտը տան մէջ:

Յուշիկին բանաստեղծական տաղանդը սկսաւ երեւան գալ նախակրթարանի երկրորդ, երրորդ դասարանէն եւ շարունակուեցաւ մինչեւ իր մահը:

Արուեստը երկու գաւակներուս համար նախասիրութիւն էր: Անոնք միասին յաճախեցին Զամազգայինի «Արշիլ Կողքի» կերպարուեստի կեդրոն, միաժամանակ հետեւելով «Ս. Մեսրոպ Մաշտոց» երգչախումբին:

Երկրորդականի տասերորդ դասարանին, Ճեմարանի Շրջանաւարտից Միութիւնը, թատերգութեան մրցում յայտարարեց 10-րդ եւ 11-րդ կարգերուն. խմբային աշխատանք էր, Յուշիկին գրութեամբ եւ դասարանի խումբ մը աշակերտներու ճիգերով ներկայացուեցաւ «Պըն Լատեն» թատերգութեամբ, 25 վայրկեան տևողութեամբ: Որպէս լաւագոյն բեմագրութիւն Յուշիկին գործը առաջին հանդիսացաւ: Կարծես այս եղաւ առաջին կայծը, որ բռնկեցուց իր թաքուն գրական շնորհքը եւ սերը թատերգութեան հանդէպ, բանաստեղծականի կողքին:

Յետոյ շրջիկ թատերախումբի գաղափարը յղացաւ, աշակերտներէ կազմուած խումբով սկսան այցելել դպրոցներ, ներկայացնելով հայոց պատմութենէն քաղուած պատմական դէպքեր, ինչպէս «Արշակ երկրորդ»ը, իր գրութեամբ եւ բեմադրութեամբ, որ շատ մեծ ընդունելութիւն գտաւ աշակերտներուն մօտ:

2003-ին Զայաստանի մէջ տեղի ունեցաւ հայոյ լեզուի եւ գրականութեան առաջին ողոմպիական մրցաշարքը: Սփիւռքի երկրորդական կարգի աշակերտներուն յատուկ: Յուշիկը վերադարձաւ առաջնակարգ մետալներով եւ վկայականներով:

Զամալսարանական շրջանին «Կելկեա-



միջ» առասպելը ներկայ ժամանակներուն հետ կապելով, արաբերէն գրական լեզուով թատերգութիւն մը գրեց, հայ աշակերտներու խաղարկութեամբ եւ իր բեմադրութեամբ, որ ներկայացուեցաւ համալսարանի «Պասել» թատերասրահին մէջ, «հայկական մշակութային շաբաթ»ին առիթով, մեծ ընդունելութիւն գտնելով հայ եւ արաբ հանդիսատեսներու մօտ:

Յետագային, Նոյն թատերգութեամբ 2014-ին մասնակցեցաւ Տուպէի մէջ տեղի ունեցած թատերգութեան մրցումին՝ չորրորդ հանդիսանալով արաբական աշխարհէն բոլոր մասնակիցներուն մէջ:

Յայ լեզուի հանդէպ իր ունեցած սերը գինք մղեց կատարելագործելու իր լեզուն, 2012-ին հետեւելով Յալէպի Յամազգայինի Յայագիտականի դասընթացքներուն՝ մեծ գոհունակութեամբ եւ խանդավառութեամբ:

Քանիցս մասնակցած է ճեմարանի Շըրջանաւարտից Միութեան կազմակերպած «Զիրքերու Մրցոյթ»ին, որպէս ժիւրիի անդամ:

2013-ին Յայաստանի Յամազգայինը թատերագրութեան մրցում յայտարարեց բոլոր հայ գրողներուն համար՝ Յայաստանի եւ Սփիւռքի:

Տարբեր երկիրներէ ազգային նիւթերով 52 թատերագիրներ մասնակցած էին: Յուշիկը դարձեալ չորրորդ հանդիսացաւ «Վաճառականը» վերնագրով թատերգութեամբ, որ արժանացաւ տպագրութեան «13 փիես» խորագրով գիրքին մէջ, որ կ'ընդգրկէր մըրցումին ներկայացուած 13 լաւագոյն թատերգութիւնները:

2016-էն մտաւ իր ուսուցչական ասպարէզը՝ հայկական դպրոցներուն ապա ճեմարանի մէջ, դասաւանդելով հայերէն լեզու զանազան կարգերու, նաեւ կազմակերպելով ներկայացումներ՝ թէ՛ ամավերջի հանդէսներուն, թէ՛ ազգային եւ տօնական առիթներուն, յարմար յայտագիրներով, պզտիկ փիես-ասմունքներով, ըլլան անոնք համադրումներ հայ բանաստեղծներու գրութիւններէն կամ իր ստեղծագործութենէն:

Կ'արժէ յիշել որ իր «Ոգեկոչում» բանաստեղծութիւնը ներկայացուեցաւ 2013-ին կազմակերպուած Յամազգայինի Թատերական Միաւորի Գրական Յանձնախումբի «Տաղ Յալէպին» ասմունքի փառատօնին, որուն ընթացքին ներկայացուեցան հալէպահայ եւ

ոչ-հալէպահայ բանաստեղծներու գործեր՝ պատանի աշակերտներու ասմունքով, Յալէպի պատերազմի ամենէն ծանր օրերուն:

Ուսուցչական ասպարէզին կողքին, վարեց միութենական աշխատանք, եղաւ «Ռատօ Երագ»ի յանձնախումբի անդամ՝ որպէս խօսնակ, հաղորդավար, յատուկ առիթներու խօսնակ, ուղիղ եթերներ կազմակերպող, տեսակցութիւններ եւ հարցազրոյցներ վա-



րելով Յալէպ այցելող նշանաւոր անձնաւորութիւններու հետ:

Յալէպի Յամազգայինի Թատերական միաւորի անդամ եղաւ կազմակերպելով զանազան ձեռնարկներ, ինչպէս «Ճաշարանը Փակ Է» թատերգութիւնը՝ իր հեղինակութեամբ եւ բեմադրութեամբ, «Ռ՞ով Կ'ապրի Ձեր Տունը» դարձեալ իր հեղինակութեամբ եւ ԱԼՕ Գաբրիէլեանի բեմադրութեամբ, Յովհաննէս Թումանեանի «Սուտասանը»՝ իր բեմադրութեամբ, Ժիծաղի երեկոներ, թատերասերներու գրութեամբ եւ աշակերտներու խաղարկութեամբ:

Առասպելը եղած էր գինք հետաքրքրող նիւթերէն մէկը, ուսումնասիրելով զայն շատ մը ազգերու մօտ, յօդուածներու շարք մը գրեց, որ տպուեցաւ Յալէպի «Գանձասար» շաբաթաթերթին մէջ, որուն խմբագրակազմին մաս կը կազմէր որպէս սրբագրիչ:

Բազմազբաղ ըլլալով մէկտեղ, 2019-ի Նոյեմբերին Լեւոն Շանթի «Եսի Մարդը» թատերգութիւնը ներկայացուց «Լեւոն Շանթ» թատերախումբի կազմակերպութեամբ եւ իր բեմադրութեամբ:

2017-էն ի վեր անդամ էր Յամազգայինի «Չուարթնոց» երգչախումբին:

2020-ի Մայիս 28-ի բանախօսութիւնը իրեն յանձնուած էր: Նիւթը հմտութեամբ ներ-

# Գանձասար

կայացուց, արժանանալով հանդիսատեսներուն, ֆէյսպուքի հետեւորդներուն գնահատանքին:

Վաղահաս մահէն առաջ գրած էր թատերգութիւն մը, ազգային նիւթով, որ փորձի շրջանի մէջ է հիմա, եւ կրկին պիտի ներկայացուի Համազգայինի «Լեւոն Շանթ» թատերական Միաւորի ջանքով եւ Շանթ Ուրիշիկեանի բեմադրութեամբ, 2021-ին, իսկ թատերական անտիպ գործերը՝ հետագային:

Տակաւին շատ ու շատ գրական գործեր ունէր մտքին մէջ պատրաստ, ըլլան անոնք պատմուածքներ, բանաստեղծութիւններ,

զանազան նիւթերու մասին պրպտումներ եւ թատերգութիւններ, բայց պսակածեւ ժահրի համաճարակին հետեւանքով դաժան մահը խլեց իր երիտասարդութիւնը, հողին յանձնելով իր արեւը եւ տաղանդը, իրմէ զրկելով ընտանիքը, շրջապատը եւ իր աշակերտները, որոնք այնքան կը սիրէին զինք՝ իր քաղցր եւ սիրելի ներկայութիւնը:

Խո՛ւնկ ու մո՛մ գերեզմանիդ:

Հողը թեթե՛ւ գայ վրադ, սիրելի՛: Յուշօս:

***Դժբախտ մամադ՝ որ այս ծանր պարտականութիւնը պարտադրաբար ստանձնեց քու յիշատակիդ***

***Ստորեւ կը հրատարակենք Յուշիկ Ղազարեանի անտիպ բանաստեղծութիւններէն փոփոք մը:***

## ԿԱՊԱՆՈՒԻ ԳՈՅՆԸ

Ի՞նչ է իրօք գոյնը կաղանդի:  
Կ'ըսեն կանաչ, ինչպէս կաղնի,  
Կամ կարմիր ալ, կամ՝ ճերմակ ձիւն,  
Ինչպէս պապիկին հին վերարկուն...  
Ոմանք կ'ըսեն՝ ոսկի է փայլուն  
Գալիքին պէս, որ կանգնած է հեռուն,  
Կ'ըսեն կապոյտ ու վարդագոյն,  
Հազար ու մէկ պէս-պէս գոյն  
Կ'ըսեն, կը կռահեն, կ'ենթադրեն,  
Ուրիշներ հաստատ կը պնդեն,  
Բայց ոչ ոք գիտէ իսկապէս,  
Կաղանդի գոյնը ինչի է պէս...

Եկէք պահ մը մենք մտածենք  
Ու կաղանդի գոյնը հիմա գտնենք...  
Նախ հարց տանք մենք իրարու  
Գոյնը ի՞նչ է ուրախ բաներու  
Կամ գոյնն իսկական վաղուան յոյսի,  
Եւ աչքերուն մէջ փայլող լոյսի...

Գոյնը սիրոյ ու հաւատքի,  
Կեանքին ազատ, առանց պարտքի...  
Ա՛խ անկարելի է, անկարելի է այսպէս  
Կաղանդի գոյնը գտնենք ինչպէ՞ս  
Թող զարդարուի ան գոյներով պէս-պէս  
Թող մնայ միշտ սիրուն գեղանի  
Գոյներով բոլոր գօտիին Միրանի:



### Մ Ա Ղ Ո Ւ Ո Ր Ր

Աղուորը աղուոր բառ մ'է սոսկ,  
Որ սրտին մէջ կը ծնի  
Ու կոկորդէն վեր լողալով  
Տաքուկ-տաքուկ  
Շրթունքէն դուրս կը սպրդի:

Աղուորը պատկեր է կամ բոյր,  
Պատառ մը ձայն ու համբոյր,  
Մեղրամոմէ հալող տուն  
Ֆէյսպուքային երկխօսութիւն  
Եւ...  
Եւ ինչ կ'ուզես, ալ դուն չարէ  
Աղուորներուն էն աղուորն ընտրէ  
Բայց չմոռնաս, աղուորս,  
Թէ բառարանին մէջ հաստափոր  
Աղուորը, աղուոր բառ մ'է սոսկ:

### Մ Պ Ա Մ ՈՒ Մ

Այս գիշեր ալ, ամէն գիշերուայ պէս,  
Մէկ շունչով կը փորձեմ լեցնել  
Թոքերս ամբողջ, տիեզերքով...  
Ես կը շնչեմ անոր աստղերն անհամար...  
Տիեզերքն ու ես,  
Լուռ կը հասկնանք մենք իրար...  
Ան ալ էգ մըն է, ինծի պէս  
Խորունկ ու մութ ու անծայր...  
Երկուքս ալ յամառօրէն կը սպասենք  
Տիեզերագնացին մեր ասպետ,  
Որ աստղերը իր ափին մէջ  
Մէկ բուռ ընէ  
Եւ լեցնէ դատարկութիւնը  
Մեր անսահման...:

### Ե Ր Կ Ե Ս Ո Ւ Թ Ի Ե Ն

... Եւ կը մնաս վերջապէս  
Քու անձիդ հետ... մինակ  
Սենեակին կիսամութին մէջ  
Կ'ողջագուրուիք, կը համբուրուիք,  
Իրրեւ հին բարեկամներ՝  
Երկար ատեն, իրար կեանքէ բացակայ...  
Յետոյ կը սկսիք մտերմիկ զրոյցի-  
«Ինչպէ՞ս ես... լա՞ւ ես»:

Խօսակցութեան ճիշդ կիսուն  
Երբ ան կը սկսի պատմել  
Արկածներն իր անցեալի,  
Յանկարծ կ'անդրադառնաս՝  
Թէ խօսակիցդ չես ճանչնար  
Օտար է ան քեզի

Իր գաղափարներով խենթ  
Եւ արարքներով անիմաստ,  
Օտար է իր սէրը քեզմէ  
Նոյնիսկ ատելութիւնը՝ անթեթ,  
Խաչմերուկներուն վրայ կեանքի  
Ընտրութիւնները սխալ  
Եւ...  
Եւ երբ մնաս վերջապէս  
Քու անձիդ հետ  
Մինակ  
Սենեակին կիսամութին մէջ,  
Կը հասկնաս  
Թէ քու անձը,  
Օտար է քեզմէ:

# Գանձասար

## ՄՈՒՍՍՊՈՒՆԷԼ

Խոր էր վիհը  
Խոր ու մութ,  
Լերան կողմն հասած  
Մինչեւ աշխարհի սիրտը  
Վիհին յատակին՝  
Հսկան նստած էր մինակ...

Խոր վիհին, խոր մութին,  
Խոր խորքին մէջ,  
Պահակ էր հսկան  
Լերան սրբազան,  
Իր հասակով յաղթ  
կը լեցնէր անէութեան  
Դարպասն այս,  
Եւ ամբարձր իր  
Ահա՛, այս պահուն,  
Կը ճգմէ թզուկ մ'անկոչ...

Չմագլցած լերան փէշերը կապոյտ  
Թզուկն այս համարձակ,  
Լսած էր շշուկներ չարագուշակ,  
Բայց ինչպէ՞ս հաւատար  
Հին առասպելներուն մաշած...  
Ո՛չ, չէր գիտեր,  
Թէ լեռն ունի պահապան,  
Արքայ մը հին  
Մաշած առասպելէն ալ անդին,  
Եւ չէր գիտեր,  
Թէ արքաներուն համար հսկայ  
Չկայ անէծք  
Չկան չարքեր  
Չկան շուններ պահապան:

Արքան ազատ  
Մագլցեցաւ ազատն ի վար  
Աշխարհի սրտին,  
Լերան կողմն,  
Խոր վիհին խոր մութին,

Խոր խորքին մէջ,  
Իր թեւերը կապեց ան  
Ի՛ր պատրաստած շղթաներով,  
Եւ կտակ մը  
Շշուկ մը  
Առասպելներ հին ու մաշած,  
Պատուիրած էր  
Բոլոր արիներուն հաւատարիմ,  
Ամրապնդե՛լ շղթաներ  
Որպէսզի մնայ ինք  
Կապոյտ լերան պահապան:

Անդորրը վերադարձաւ,  
Խաւարին մէջ թզուկը նենգ  
Խրխրալով վերջին շունչը փչեց,  
Ու հոգին իր փոքր ու անշղթայ  
Բարձրացաւ դանդաղ  
Մոռացութիւնն ի վեր...  
Մինչ հսկան,  
Արքան Արիանց,  
Լերան սրտին, քարերով  
Արիւնլուայ ձեռքերը կը սրբէր...

Անյատակ վիհին յատակին՝  
Հսկան է հանդարտ իր նստուածքով Արքայի,  
Ոտքերուն տակ փռուած է  
Դիակն այն թզուկին,  
Որ փորձեց քիչ առաջ՝  
Պղծել հեքիաթային իր անէծքը հազարամեայ:

Իշխան էր հսկան ու արքայ  
Եւ իր առասպելով ցարդ կը թնդայ  
Երկիրն ու երկինքն իր խաւերով,  
Քամի՞ծաղով կը լսէ ան  
Արձագանգներ սարսափահար:  
Քաջքեր չկան,  
Չկան շուններ պահապան  
Չկայ անէծք



Չկայ վիշապ  
Սուտ են առասպելները բոլոր,  
Սուտ...

Ան իր կամքովը ազատ  
Ձգեց թագն ու  
Կեղծիքները աշխարհի,  
Նախընտրեց դառնալ  
Կապոյտ-գերի  
Եթերային կապանքներով ան շղթայեց  
Հոգին ու սիրտը ըմբոստ,  
Որպէսզի առասպելն իր անմահանայ  
Որպէսզի կամքն իր աստուածանայ

Եւ հպատակները հլու  
Երկաթներով ամրացնեն  
Կապանքները Արքային...

Թող քանդուի այն աշխարհը  
Որ կը փորձէ քակել շղթան,  
Ձի անարգուած են հոգիները  
անկապանք:

Հիմա  
Արքան իր ձեռքի արիւնը  
Կը մաքրէ սեւ քարերով,  
Մինչ թզուկը, մահուան սեմին  
Կ'երկարէ ձեռքերը անօգնական,  
Բռնելու թռչող իր հոգին՝  
Հոգին, որ կապանք չունի  
Հոգին, որ լուռ կը բարձրանայ  
Ու յետոյ կը գլորուի  
Աշխարհքն ի վար,  
Մոռացուլթիւնն ի վար...:



STUDIO  
VENUS


# Գանձասար

## ՄՕՄԵԱՅ ԾԱՌԵՐ

Ահա նորէն դուք կը խօսիք հին  
Հեռաւոր անցեալէն,  
Ձեր կողերէն լոկ հով մը չէ  
Այլ ամբողջ անցեալ մը կը հնչէ  
Մօտեաց ծառեր:

Օտարութեան մէջ կորսուած ականջներուս  
Ձեր փսփուլքը կը հասնի այսօր,  
Տերեւներու լոյսին ու շուքին մէջ  
Ամբողջ փառաւոր անցեալ մը կը կարդամ  
Հոգիիս ծանօթ՝  
Ինձմէ օտար  
Բառերով:

Լոյսի շիթերուն մէջ ես կը տեսնեմ  
Արքաներ ձեր փառքին նուիրուած  
Եւ աստուածներ խնկարկուած,  
Հովի կերպարանքով կը սահին  
Պատուհանէս ներս ու  
Ղարիպի ձեռքէս բռնած  
Ձիս կը տանին աշխարհներ հեռու  
Սրտիս ծանօթ  
Աչքիս օտար  
Երկիրներ...



Օտարին պարարտ հողին մէջ խրուած  
Արմատներդ չեն գիտեր արեւուն բոյրը,  
Եւ ճիւղերդ երկինք բարձրացուցած,  
Կը սպասես Աստուածային նշանի  
Կը սպասես... Կը սպասես...  
Եւ սպասումիդ մէջ երկար  
Կը յիշես անցեալդ Մարգարէի:  
Կը յիշես արքաներ փառքիդ ընծայուած  
Կամ թէ ինչպէս աստուած մ'էիր խնկարկուած,  
Սօսափիւնդ մարգարէութիւն մ'էր սրբազան  
Արժանի գոհերու արժանի մեծարման,  
Արքաներ կը չոքէին շշուկիդ առջեւ  
Եւ Բագինդ միշտ կը բուրհէր գինի ու Արիւն...

Կը յիշես ու տերեւներդ տխուր կը սրսփան  
Հոս հայոց արքաներ չկան  
Չկան մոգեր  
Սրբազան գոհեր  
Չկա՛ն ու չկա՛ն...  
Կը յիշես, կը տխրիս ու կը լռես:

Օտարին հողը հարուստ է ու պարարտ  
Ճիւղերդ ամուր են, տերեւներդ առատ  
Բայց...:

*Յուշիկ Ղազարեան*



# ԴԺՈՒՄՐ ԲԱՆ Է ՅԱՅ ԸԼԼԱԼԸ (Թարթափումներ)

*Մարուշ Երամեան*

Երբ անգլերեն գրութեան մը վրայ պետք էր աշխատել, անդրադարձայ, թէ որքա՞ն անելի հեշտ է անգլերեն գրաշարելը, հայերենին հետ բաղդատելով՝ բոլոր գլխագիրները ծրագիրը ի՞նք կը տեղադրէ հոն ուր պետք է՝ կետէն ետք, երկիրներու եւ քաղաքաներու անուններուն պարագային, բոլոր, կամ գրեթէ բոլոր ուղղագրական սխալները կը սրբագրէ սուսիկ-փուսիկ, առանց իսկ նշելու, եւ

հայ ըլլալը, մանաւանդ սփիւռքի մէջ: Երբ մեր գաղութներուն մէջ ենք, անպայմա՞ն Յայաստանի դրօշը մեր շուրջ կը պահենք, անպայման կ'ուզենք որ ծածանի մեր դպրոցներէն ներս, գրասենեակներուն մէջ թէ այլուր: Ու երբ Յայաստան կ'երթանք որեւէ խմբային ձեռնարկի մասնակցելու համար, կը բարձրացնենք դրօշը ա՛յն երկրին, ուրկէ կու գանք...

Նոյն այս հարցումը բարձր կարգի աշակերտներուն երբ տուեր էի, խումբ մը անմիջապէս «այո» եւ այլ խումբ մը անմիջապէս «ոչ» պատասխաններ էր ու յետոյ լռեր էին, յանկարծ անդրադառնալով հարցումին տարողութեան: Մտածեր էին, փորձեր էին պատասխաններ գտնել, բայց դիւրին չէր եղած:

Արցախի վերջին դէպքերուն մասին մտածելը կը ստիպէ, որ վերաքաղ մը ընենք մեր պատմութեան, որովհետեւ «ինչո՞ւ»ներու շարաններ կը տանջեն մեզ, մանաւանդ գիշերները: Ոչ մէկ հայ այս օրերուն հանգիստ քուն ունի:

Ընկերային ցանցերուն վրայ ալ յաճախ կը հանդիպինք սրտցաւ պորթփումներու՝ «Այս օրերուն կ'ամչնամ հայ ըլլալուս», «Արժանի ենք այս եղածներուն», «Ներդրումներս, հակառակ նախկին որոշումիս, Յայաստան պիտի չընեն» եւ նման այլ խօսքեր: Մէկը նոյնիսկ գրեր էր՝ «Յաջորդ կեանքիս նոր վեկիացի պիտի ծնիմ եւ հանգիստ ու խաղաղ ապրիմ»:

Որքա՞ն դժուար է եղեր հայ ըլլալը ուրեմն: Օտար երկիրներու մէջ, ուր թէեւ ծներ ու մեծցեր ենք, ընդհանրապէս որպէս «օտար», որպէս «եկուոր» կը դիտուինք: Չի բաւեր մեր առօրեան շահիլն ու կեանքը կերտելը, դեռ պիտի մտածենք հայ մնալու մասին, մեր գաւակներուն ամեն օր, կոիւ-վիճա-



կարգ մը այլ դիւրութիւններ կու տայ աշխատողին:

Այս անդրադարձը զիս ուրիշ տեղեր տարաւ եւ սկսայ մտածել, թէ արդեօ՞ք դիւրին է



# Գանձասար

բանութեամբ, պիտի ստիպենք հայերէն խօսիլ, դպրոցներէն ներս հայերէն սորվեցնելու համար բազմատեսակ միջոցներ պիտի խորհինք ու երբ, այս բոլորէն ետք, մեր զաւակները օտար ամուսնութիւն կնքեն, խորապէս պիտի ցաւինք, եութենական վիրաւորանք մը ապրելով մեր հոգիներուն մէջ:

Բայց կար Յայաստանը, բազում տառապանքներէ անցած եւ ի վերջոյ անկախացած մեր երկիրը, որ վերջին տասնամեակին սկըսեր էր դառնալ աշխարհի գեղեցիկ երկիրներէն մէկը, մեզի համար շատ սիրելի եւ նոյնքան շատ հաճելի տեղ մը, որ մեր օտար

Յանկարծ ամէն բան սկսաւ երերալ: Ծանր, անասելի յոգնութիւն մը պատեց մեզ եւ ամէն բան ձգելով, թեւաթափ, կը սպասենք: Ինչի՞:

Դժուար, շա՛տ դժուար բան է հայ ըլլալը, որովհետեւ, ինչպէս գրեր էր բարեկամուհիս՝ Անահիտ Արամունիս իր ֆէյսպուքեան էջին.

*«Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:*

*(Իսկ եթէ շատ լինէի՞նք...)*

*Մենք մեզ ո՛չ ոքից չենք գերադասում:*

*(Գերադասում ենք թուրքից, քուրդից, աֆղանցուց ու էլի*



հարսերն ու փեսաները նոյնիսկ սկսեր էին սիրել:

Յայաստանը մեզի համար դարձեր էր կեանքի ապահովութիւն. փաստօրէն հոն ապաստանեցան հալէպահայեր եւ պէրու-թահայեր, երբ իրենց քաղաքներուն հիմերը սկսան խախտիլ օտարին բիրտ հարուածներուն տակ:

Հոն ապաստան գտեր էին, մարդոցմէ առաջ, մեր գիրքերը, ձեռագիր մատեանները, սփիւռքահայ գրողներու արխիւները, գաղթէն փրկուած կիներու ձեռագործ աշխատանքները, որոնք իրենց ատենին զարմացուցեր էին Եւրոպայի պալատներն ու արքունիքները...

*շատերից... )*

*Պարզապէս մենք էլ պիտի ընդունենք, որ մենք, միայն մենք Արարատ ունենք, (Արարատը մերը չէ)*

*Պարզապէս Դաւիթն այստեղ է կռուել:*

*(Սասունն էլ մերը չէ)*

*Պարզապէս գիտենք .....*

*Ուսուցման համար եւ աշակերտել գեղեցիկին,*

*Բարո՛ն,*

*Վսեմի՛ն,*

*Լաւի՛ն...*

*(երբեմն էլ վատին կամ չարին... )*

*Պարզապէս մենք մեր դարաւոր կեանքում,*

*Երբ եղել ենք շատ  
Դարձեա՛լ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի,  
(Ճնշել ենք... փաստեր կան )  
Ո՛չ որ չի տուժել զարկից մեր բազկի:  
(Տուժել են... փաստեր կան)  
եւ այլն.....»*

Անդրադարձները թերեւս մեզ հասցնեն ինքնաճանաչման, ազգային, հաւաքական ինքնաճանաչման եւ փորձենք գոնէ օգտուիլ եթէ ոչ մեր անցեալի բազում դասերէն, այլ ուրիշ, մեր վիճակին մէջ գտնուած երկիրներու փորձէն:

Մեկ բան յստակ է սակայն՝ որքան ալ ցաւով եւ տառապանքով լեցուն ըլլայ մեր ուղին, միշտ ալ խոյն ուղիով ընթացք ենք, շարունակել ենք ապրիլ մեր ազգային յատկանիշները միշտ յիշելով եւ յիշեցնելով, ինչ որ կը նշանակէ թէ հակառակ դժուարութեան, այնքան ալ դժգոհ չենք մեր հայ ըլլալուն, ապա թէ ոչ վաղուց դարձած կ'ըլլայինք «ծագումով հայ» նորվեկիացիներ, ֆիններ կամ ճաբոնցիներ (այս երկիրներուն հարցերը կարելի նուազագոյնին հասած են):

*«Գիտցի՛ր, հա՛յ ժողովուրդ, որ արժէք ես դու, եւ խօսք ունիս ասելու այս նամարդ աշխարհին»* ըսած է Ա. Ա. Ահարոնեան:

Այսօր սակայն աշխարհը մեր ազնիւ խօսքին ու հարուստ մշակոյթի լեզուն չէ որ կը հասկնայ, այլ՝ ուժի եւ հզօրութեան լեզուն:

Չեմ կրնար ամէն պահու չյիշել Պերճ Զեյթունցեանի այնքան արդիական խօսքը.

*«Մենք վրէժ ունենք լուծելու: Վրէժի լաւագոյն ճանապարհը բարեկեցիկ երկիր կառուցելն է թուրքի քթի տակ եւ բարոյապէս ուժեղ, կեղտից ու աղբից մաքրուած, որպէսզի հայը ոչ թէ արտագաղթի, այլ ուզենայ հայրենիք վերադառնալ»:*

*«Անկախութիւնը բացարձակ արժէք է իրաքանչիւր ազգի համար, սակարկութեան ենթակայ չէ, չի կարելի անկախութեան, պետականութեան դէմխօսել, վիճել անկախութեան շուրջ ...»*

Որքա՛ն ծանր է մեր արիւնը, որքա՛ն բան շալկած բերեր ենք մեզի հետ մինչեւ այսօր, որքա՛ն չապրուած յուշեր ...

Կարուսելի պէս գլխուս մէջ կը դառնայ Սիամանթոյի տողը՝ *«Ես երգելով կ'ուզեմ մեռնիլ»*. Կը բարկանամ, որովհետեւ ես, մենք, բոլորս այսօր կ'ուզենք ապրիլ, եւ երգելով ապրիլ: Մեր ե՞րգն է արդեօք որ նե-

ղութիւն կը պատճառէ այլ ազգերու, թե՞ գալիքին ուղղուած մեր լուսաւոր նայուածքը:

Բայց ա՛լ յոգներ ենք այսքան չարութենէ մեր շուրջ եւ ... մեր մէջ, ու կը գարմանանք, որ կը շարունակենք անմիաբան մնալ. ասիկա կը թուի թէ արդէն մեր ծիսային համակարգին մաս կը կազմէ, այս անմիաբանութիւնը, որ մի՛շտ ալ ծառայել է թշնամիին, մի՛շտ բզկտել է մեր երկրին սահմաններն ու արիւններ է մեր հողերը:

Ոչ միայն անմիաբան, նաեւ կոյր ենք կարծես ի ծնէ, կամ ծնունդէն ալ առաջ՝ ծիներով, կոյր, չտեսնելու համար, թէ ինչպէ՛ս մեր շուրջիները կ'օգտուին մեր անմիաբանութենէն:

Այո, դժուար, շատ դժուար բան է հայ ըլլալը, բայց նաեւ՝ հպարտառիթ, որովհետեւ, ի հեճուկս արտաքին պայմաններուն, ի հեճուկս մեր բոլոր ներքին թերութիւններուն, ստեղծած ենք գեղեցիկ, խորունկ եւ հոգեկան այնպիսի մշակոյթ մը, որ ոչ միայն մեր, այլ ամբողջ աշխարհին ժխտականները կը հաւասարակշռէ իր դրականութեամբ, պայծառութեամբ կը շողայ եւ կը պահէ հաւատքը գեղեցիկին ու բարիին հանդէպ:

Այսօր մեր մշակոյթին միայն կը հաւատանք, համոզուած, որ այս դժուարագոյն, այս ծանրագոյն շրջանն ալ պիտի անցընենք եւ շարունակենք ԱՊՐԻԼ:



## ՄԵՆՔ

### Անի Բրդոյեան-Ղազարեան

**«Պատերազմը պիտի աւարտի, դեկավարները պիտի ձեռնուին, իսկ ծերունին պիտի մնայ իր նահատակ որդիին սպասումով, այդ կինը՝ իր սիրելի ամուսինին սպասումով, այդ զաւակները՝ իրենց հերոս հորը: Չեմ գիտեր, թէ ո՛վ ծախեց հայրենիքը, բայց տեսայ, որ ո՛վ վճարեց գինը»:**

*Մահմուտ Տերուիշ*

Ծախեց...

Չենք գիտեր ո՛վ...

Մնաց տխուր իրականութիւնը:

Ամեն տեղ ցաւ, սուգ ու շիւան:

Սնանկացած ենք ներքուստ, կորաքամակ դարձած՝ արտաքուստ:

Համաճարակի ընթացքէն աւելի հիմա է որ կ'ապրիք մեկուսացումը:

Մեկուսացած ենք ազգովին եւ մեր կերպարը կ'որոնենք՝ ո՛վ ենք մենք...

Մենք... «Հպարտ» քաղաքացիներ ենք՝ ցնորքով հպարտացած եւ ի վերջոյ «պարտ»ութեամբ հասկցած, որ անիկա ցնորք էր...

Ի՞նչ գնով...

Այս հարցին պատասխանը ճշալով կ'արձագանգէ Եռաբլուրէն, յստակօրէն կ'երեւի ոտք, ձեռք, աչք կորսնցուցած զինուորներուն վրայ, դաչուած է գերիներուն եւ անհետ կորսուածներուն հարազատներուն հայեացքին մէջ: Ամենայստակը՝ եօթանասուն օր անտառներուն մէջ թաքնուած, հրաշքով փրկուած մեր վեց երիտասարդներուն աչքերէն, ուր վճարուած գինը ծածկող մե՛ծ պարոյկ մը կայ, ցցո՛ւն, գոռացող հարցում մը՝ «ո՛ւր եկակք»...

Հիասթափութենէն սթափելու ջանքեր կ'ուզենք գործադրել, բայց նոր հարուածները իրարայաջորդ սաստկութեամբ կը քարացնեն մեզ, կ'անշարժացնեն, մեր ողերէն

շարք մըն ալ քաշելով:

Տուներ կը հրդեհին. կը դիտես ցաւը բնակիչներուն աչքերուն մէջ, որոնք կարծես վերջին ներքին գրոյցի մէջ են տան հետ: Տունը



իր հրդեհին մէջէն կ'աղաչէ, կը պաղատի, որ լքեն գինք, հեռանան, փրկուին թշնամիին ճիրաններէն:

Դպրոցներ կ'ամայանան: Դպրոցներ, որոնց դասարաններուն մէջ պարծանքով հաղորդուած է Շուշիի ազատագրման մանրամասնութիւնները, հնչած են ազգային-



ազատագրական երգեր...

Խլուեցաւ մեզմէ այդ պարծանքը, յաղթանակին անունն իսկ աղաւաղուեցաւ մեր մտայնութեան մէջ, իսկ ազգային երգերը լսե-

րելի է հասնիլ «վստահութեան», բայց կը փորձեն շարունակաբար, առանց անդադառնալու, որ կ'ոտնահարեն էականները, կը մոռնան կարեւորները եւ անելի կը հեռանան



լու ցանկութիւնը՝ վերացաւ սորվեցնելու փափաքէն առաջ. ի՞նչ անանդել նոր սերունդին...

Վանքեր կը մենանան: Վանքեր, ուր սգաւոր ճոխութիւն մը տիրեց հրաժեշտի օրերուն, լի էին անոնք որմերը հոտոտողներով, մկրտուողներով, հաղորդուողներով, պսակուողներով, մոմերուն վերջին գոյգը վառողներով եւ վերջին աղօթքը, յուզումնառատ աղերսը առ Աստուած առաքողներով:

Կը դիտենք մեր շուրջը՝ կորսուած մակութիւն, վերացած երիտասարդութիւն, յուսահատութիւն, դատարկութիւն եւ ձայներուն ընկերացող սոսկալի լռութիւն...

Այն աստիճան սոսկալի, որ յստակ ձայն մ'իսկ կը սարսռացնէ մեզ եւ պատերազմի վերսկսումը կանխատեսել կու տայ:

Մինչ «վստահութիւն»ը յօդս ցնդած կը փորձէ ինքզինք ժողուել ու կպիլ արժանաւորի մը, զոր պիտի գտնէ՞, կա՞յ արժանի մը...

Անդին «ես»ն ու «աթոռ»ը կը վիճին, կը բարձրաձայնեն, կարծելով որ այդպէս կա-

«վստահութենէ»... ոչ ոք կը զիջի...

Իսկ խայտառակ պարտութեան հետեւա՞նքը, աչք կը ծակէ. Բարձունքները նուաճուած անողնաշար հայրենիք եւ գոյութիւնը վտանգուած կաթիլ մը կըրցախ...

Սոսկումով կը յիշենք սարսռալի անցեալ տասներկու ամիսը, էջ առ էջ կը դառնան դէպքերը, պատկեր առ պատկեր կ'երեւին վիշտերը սերը հագած տարիի մը, որուն հրաժեշտ տալու պահուն կ'ուզես եօթ կղպանքներով փակել դարպասը, եօթ կարծր շղթաներով կապել նախաշեմը եւ շարտել տարին անհաս անդունդը, որ չկրկնուի, իսկ ցաւոտ յուշերը երբեք կապանքի տակ պէտք չէ ձգել, որ պտտին անոնք մեր մտքերուն մէջ, կենդանանան, տարագաւորուին եւ թերեւս որոշենք մօտ կամ հեռու գալիքին անոնցմէ պատգամ մը քաղել, բան մը սորվիլ: Բան մը, որ անդունդէն աստիճան առ աստիճան վեր կարենալ բարձրանալու ուղիի մը առաջնորդէ մեզ, փրկէ՛...

## ՁԻՒՆԱՄՐՐԻԿ

### Մարիանա Պերթիզլեան-Ղազարեան

Բաղաբերդի լեռնային հովիտներն ու բարձունքները ամբողջությամբ ձիւնով ծածկուած են հիմա:

Առատ ձիւն կը մաղէ, անխօս տխրութեան պէս, իոն՝ վիշտէն կուչ եկած՝ հողին վրայ, դատարկ տուններուն, ուր քամին պատուհաններուն փշրուած ապակիներուն քսուելով անասելի ցաւի մը երգը կը սուլէ, որ լսելի է միայն հողի հեռացած տերերուն:

Անարատ ձիւնի փաթիլները կը թափփին, կարմիրով ներկուած մակերեսներուն, սառած առուններու ափերուն, ուր ծաղիկները քնացած են հողին տակ:



Յոյսը իր վերջին ճանկերը կը փորձէ խրել բռնաբարուած հողի երակներուն. «արիւնը ջուր չի դառնար, հողին յիշողութիւնը երբեք չի մեռնիր», կ'ըսէ վերջին անբառ ճիչը...

Ձիւնը՝ վիշտն ու պատկանելիութեան յիշողութիւնը կրնա՞յ ջնջել... աղօթքը անաղարտ, որ օր մը բարձրացած էր հոնկէ թէ առած, դէպի անհունը լուսէ, դէպի աստղահոյլերը...

\* \* \*

Հաւանաբար, սրբութիւն մը կամ ժառանգութիւն մը, աւելի թանկ է անոր, որ գրկուած է անկէ:

Որբանոցի մանկան համար չկայ աւելի փափաքելի իղձ, քան ունենալը եւ գրկելը հարազատ մօրը:

\* \* \*

Անոնք՝ մեր պապերը, կամքէ անկախ, պարտադրաբար, բռնութեամբ կորսնցուցին մեզի ժառանգուելիք հայրենիքը՝ Արեւմտահայաստանը...

Մեր ծնողները չտեսան, արդարօրէն իրենց սեփականութիւնը եղող մեզի կտակուելիք գանձը...

Մենք՝ մեր գիտակցական կեանքի ամբողջ ընթացքին, այդ կսկիծը շալկած մեր ներսիդին քալեցինք, այդ տաքուկ գանձով շերմացած, օծուած, զմռսուած՝ անուշաբոյր երազի պէս, անհասանելի ոսկեպատ կենաց ծառի պէս, փոխանցեցինք սկուտեղը անգին, ուխտի նոր տապանակը մեր՝ տակաւին չծնած, կողոպտուած անմեղ մեր գաւակներուն...

Ձերմութիւնը անոր ուժ կու տար մեզի...

Ինչպիսի ցաւ էր այդ... ո՛չ ոք կրցաւ նկարագրել իր բառերով, գիրերն ու խօսքը մնացին՝ թերի...

Կսկիծն այդ, դառնութիւնը անանուն «երկնային պարգէլ»ի մը պէս, ծիներով փոխանցեցինք որբացած մեր յաջորդին...

\* \* \*

Մենք՝ երբ տակաւին չէինք ժամանած, մոլորակը՝ կապոյտ յուսատու, ան կը շրջէր արդէն՝ գրկած ծովածաւալ աշխարհը մեր հայրենին: Եկանք ձեռնածալ, բացիք ափերը մեր յոյսին:

Հայկ նահապետ իր որդիները դրկեց հեռաւոր աշխարհներ:

Իր յաջորդներէն մեկուն յանձնարարեց ցախ տեղադրել, երերուն դրախտավայրի



հեռավոր մեկ մակերեսին, որ ան դառնայ, բերրի. Արայի տարած ցախը դարձաւ պիտանի, վերածելով մեծ անդաստան՝ Արեւելեան տասերորդ նահանգը, հայրենի Արցախի...

Ձիերու երամակները վազվզեցին արեւելքէն արեւմուտք, արեւմուտքէն արեւելք... դարերուն ընդմէջէն, փոթորկալի, սաստկաշունչ, անդուլ քամիներ անցան, խորին հայոց աշխարհէն: Լեռներուն վրայ մնացին ոտնաձայները հերոսներուն եւ վանքերուն աղօթող զանգերուն անլեզու ղօղանջը:

Հանդարտ օրեր եկան՝ Վաչագան թագաւորի արքունի որսորդները Վարազաթումբի գագաթէն Արաքս գետի հովիտը հսկելով փող կը հնչեցնէին, որ թագաւորը վարագի որսն իր բաց չձգէր... Վարազաթումբը՝ փափաքելի բարձունք ամրակուռ թշնամիներուն եւ իրական տերերուն համար, ուրկէ պէտք է վերահսկել տարածքը շրջակայ:

Վաչագան բարեպաշտ թագաւոր, յաւիտենական իր նիրհին մէջ երազ տեսաւ, ցաւով սոսկաց աննախադէպ արիւնալի աշնան համար այս վերջին...

Աղբիւրները լեղի բխեցուցին, աղի արցունք կուտակեցին, գետեր իրենց հունները փոխեցին վաւաշոտ բռնակալներու պարտադրանքով:

Գանձերու սարը յօշոտուեցաւ, ցեղախումբեր իրենց հետքը թողուցին, իշխանագուններու եղեմանման ազնիւ հողին վրայ եւ անցան...

Թարթառ գետի ափին, տխուր մտածող քարերը վաճառուեցան:

Մինչ գետը կը քալէր, կ'երթար հեռուներ, կը հասներ նոյնիսկ մեզի, քարերը մնացին շուար եւ անշարժ...

Դուն՝ բաց սիրտ Դադիվանք, Թադէոս առաքեալին, Դադէին, Մխիթար Գօշին տուիր գորով, ապաստան եղար ընտրանիներուն: Քրիստոսի բարի լուրը Թադէոս առաքեալ ունկերուն մէջ ծրարած հասցուց, քեզի տալով նախապատուութիւնը, իր յաջորդներուն փոխանցելով լոյսին զօրութիւնը, բարիին ներկայութիւնը: Մխիթար Գօշ Ամենակալին արդար դատաստաններն ու կանոնները գրի առաւ քու տաքուկ գոգիդ մէջ: Գիրերն այդ սրբազան վերածուեցան դարաւոր օրէնքի:

Արգունխաթուն իշխանուհին իր ընդար-

ձակած վանական համալիրին մէջ Վախթանգ իշխանին եւ իր նահատակ երկու որդիներու յիշատակին ասեղնագործ ժանեակներու նրբութեամբ խաչքարերուն կեանք եւ հոգի տուաւ, որոնք մինչ օրս շուարած կը ճամբորդէն, գտնելու իրենց համար ապահովագոյն վայրը: Խորաններու վարագոյրներ՝ առաքիւնի իշխանուհիի մատներու հըմտութեան արգասիքը թեւ առին՝ Հայաստան աշխարհի հեռավոր վանքերը գարդարելու, Գօշավանքին, Մակարավանքին սեր եւ արուեստ հաղորդելու:

Արեւելեաց աշխարհի բարձրաբերձ բլուրներու, պահապան եկեղեցիներու իւրաքանչիւր գաւիթի տակէն, պահուած գանձ մը ձայն կու տայ, գլուխը բարձրացնելով, վստահեցնելով, որ հաւատարիմ է հողին, նախանձախնդիր պահպանութեան...

Մարտակերտի Վանք գիւղէն, Գանձասար վանքէն, Յովհաննէս Մկրտիչ աչքերը յարած երկնքի գութին, կը հսկէ տարածքը՝ պաշտպանելու ոսոխի յարձակումներէն:

Գանձասարը՝ գրչութեան մեծ կեդրոն, հարուստ ձեռագրատունով, դպրանոցով, բարձունքէն գետի պէս տարածուեցաւ, քար առ քար, գիւղ առ գիւղ, քաղաք առ քաղաք, Հայաստան աշխարհի երակներով ծնունդ տուաւ բազմաթիւ հոգեւոր գործիչներու, գիտնականներու, որոնք իրենց աչքերու լոյսը նուիրեցին յարակից շրջաններու հոգեւոր եւ մտաւոր կեանքի զարգացման:

Դեռ երկու հազարամեակ առաջ, Տիգրան թագաւոր իր չորս Տիգրանակերտներէն լաւագոյնը ստեղծեց այստեղ եւ մեր օրերուն վեհանիստ Տիգրանակերտը կրկին ժպտեցաւ լոյսին, եւ կանչեց մեզ՝ իր տուն տեսութեան...

Փոքր Սիւնիքը շունչ առաւ, Ղազարոսի պէս ոտքի կանգնեցաւ, մեծ ջանքերով, գորովով, բազմաթիւ խոշտանգումներէ ետք, Մեսրոպ Մաշտոցի ոգին գիր դարձած թեքերեցաւ այստեղ: Քարերը երկար գերութենէ ետք սկսան դարձեալ հայերէն բարբառել, գրել հայատառ: Պահպանուած լոյսը, զօրութիւնը անմեկին, կանթեղը լուսաւորեց:

Մաճկալաշէն գիւղէն քիչ անդին, Ամարասի Մարտունի շրջանին մէջ, Հինգերորդ դարու մեծ գիտնականը, սուրբը իր հոգիի արգասիքը բերած, առաջին անգամ քանդակած էր այստեղ, որ հայոց աշխարհի հեռա-



# Գանձասար

Լոր այս անկիւնն ալ հաղորդուէր առաջին դպրոցի շողով:

Ամարաս՝ այցի պիտի գաւք քեզի երբ Ամենակալը որոշէ կրկին լուսաւորել ամէն բան: Չորրորդ դարու Լուսաւորչի հիմնած ուխտավայրին մէջ, առաջին հայրենաւանդ, հայատառ դպրոցեղ ներս, առաջին դպրոցի նստարաններու վրայ, Մաշտոցին տուած ուխտս նորոգելու: Հրաշքով պահպանուեցար հին տէրերու: Մեսրոպի շունչով բարբախող հոգիներուն աղօթքով, կը մնաս կանգուն:

\* \* \*

Արեւելից կողմերուն, նոր ժպտացող կեանքը իջաւ, խառնուեցաւ արնաներկ հողին, վերածուեցաւ ցաւի, լերդացած արեան եւ բողբոջի. խռովք իջաւ հայրենիքի սրտին՝ խորին աշխարհը հայոց...

Խռովքն այդ տարածուեցաւ, Սեւանայ աւազանը առաւ իր ցաւին ու տագնապին հետ...

Բաղաբերդի մէջ մնացին լուսաւորուած հոգիներ, կիսատ մնացած՝ չապրուած գըլ-խատուած կեանքեր, քանդուած երդիկներ, ծխացող տուններով՝ գիւղեր, անշիրիմ մնացած անհետ կորածներ, որոնք դեռ պարզած են իրենց գէնքերը դէպի վեր, հրթիռներ վար առնելու պատասխանատուութեամբ, յաւերժ մնացին գիւտուոր, հայրենի տան պահպաններ, որոնց հոգիները կը սաւառնին բարձունքներուն, սպասելով տէրերուն վերադարձին: Արդարութեան ճիւղ կը ժայթքի, լսելի է ամենուրեք:

Եռագոյն դրօշներով ծածկուած, Կովկասի մարգարիտ՝ Շուշի բերդաքաղաքէն վերադարձող մարմիններուն մէջ ծրարուած բողբոջ է, անասելի վիրաւորանք: Անառիկ բերդաքաղաք, դաւաճանաբար խորտակուած, մշակոյթի պսպղուն հնաւանդ աստղ՝ հոգեվարքի մէջ, թպրտացող աւանդ, միթէ չճանչցա՞ր քու հաւատարիմներդ...

Ողբամ գքեզ, հայր՛ց աշխարհի, հիւսիսային ազգերու վեհագոյնը... Խորենացի՛ դուն վստահաբար, յայտնութեամբ մը, այս օրը ունէիր նկատի. դաւադրութիւններուն մեծագոյնը կատարուեցաւ Բաղաբերդի Գողգոթա՝ Շուշի բարձունքին տեղադրուած Խաչին վրայ: Թագաւորդ ոչ միայն վերացաւ՝ ան դարձաւ դահիճդ, խաղաղութիւնը վրդովեցաւ, ամենուրեք արմատացաւ անկարգու-

թիւնը, ի ուրախութիւն թշնամիներուդ:

Կրկին արիւնեցան դեռ չսպիացած դաշտերը: Ծաղիկ կեանքերով անձրեւեց, ոռոգուեցաւ հայրենի հողը: Ո՞վ կրնայ շնչել հայոց արիւնով հագեցած հողին բոյրը: Անուշաբոյր ծաղիկներ գարիւրեցան չնաշխար-



հիկ երկրի ճչացող ցաւէն, արեւը դեմքը իր ծածկեց, ամչցաւ, խորտակուած գարուն կեանքերու, մեր ցեղի գեղեցկագոյն ընտրանիի կորուստին ի տես...

Բաղաբերդը յանձնուեցաւ...

Քարերը կ'արձագանգեն ցաւագին...

Բերդաշէն հողը վշտացաւ իր իշխաններէն...

Տէրերուն նկատմամբ խախտած է հաւատքը. անվստահութիւն, արիւնող, չսպիացող վերք է ամենուրեք, արիւնածոր սիրտը կրնայ բարբախել միմիայն հողի սեփականատէրերուն վերադարձով:

Թեւ ա՛ռ, թռի՛ր, հո՛ղ, դուն ընտրե՛ հարազատ սեպուի իշխանդ...

Աջէն եւ ձախէն, մէջտեղէն բզկտուած հըսկայ հայրենիք է հիմա...

Կրկին կորսնցնե՞լ...

Այս անգամ պատմական հայրենիքի արիւնով վերադարձուած շօշափելի մեծ մասը...

Պարտադրուած ցաւ... տարբեր ցաւ...

Մենք՝ այս անգամ, ոչ թէ մեր նախնիներէն լսեցինք, այլ հեռուէն ականատես եղանք մեր պատմական հայրենիքի, հրաշագեղ մարմնի բզկտուելուն, անխոհեմաբար գիշերուան մութին գաղտագողի, մեր պապերէն իբրեւ նուէր՝ բոլորիս ժառանգուած գանձին, թշնամիին մատուցուելուն...

## ԱՐՑ ԱԽԻՄ

*Սեւան Հանէշեան-Պետուրեան*

Արծուարոյն իմ երկիր,  
Սրտիս տրոփիւնը  
Լեռներուդ մէջ կ'արձագանգէ:

Որպէս արծիւ՝ թեւերս լայն կը ճախրէի  
Խրոխտ լեռներուդ մէջ,  
Հուժկու բազուկներուդ վրայ կը թափառէի...

Հայեացքս ընդարձակ  
Քաջերուս հերոսութիւնը կ'ըմբռնչխնէի,  
Դարերէն եկած դօղանջը կը հնչէր:  
Չորրորդ դարէն իսկ Ամարասը Այբուբենով կը սնանէր,  
Ղազանչեցոցը իր արիութեամբ իսկ շարական կ'երգէր,  
Գանձասարը աղօթքի ուժը կը տարածէր համայն երկրիս,  
Վանքասարը կը հսկէր մեր արիւննով ազատագրուած հողերը  
Եւ Դաղիվանքը կ'օրհնէր մեր սերունդները:

Արծուարոյն իմ երկիր,  
Արտասուքս արդէն արիւնին միացաւ:  
Ա՛խ գաւակներս,  
Լեռներն անգամ անխօս են,  
Իսկ շառաչող քամին կը բացագանչէ  
Վիշտս մեծ է, իմ հօր Արցախ:

Արծուարոյն իմ երկիր,  
Զօրավարներդ պիտի ժայթքեն հողէն,  
պիտի յառնեն ու սլանան լեռներն ի վեր  
հուրէ սուրը իրենց ձեռքին:



# Գանձասար

Արծուարոյն իմ երկիր,  
Իմ Արցախ,  
Ծունկի պիտի չգան զաւակներդ,  
Նոյնիսկ երբ հարուածը ուժգին է  
Ու թիկունքն անգամ վիրաւոր:  
Վկայ ամրաբերդ Շուշին,  
Վկայ արիւնը մեր հերոսներուն  
Եւ վկայ մեր դարաւոր Արցախը:

Որպէս արծիւ կը ճախրեմ  
հերոսներուս հետ միասին  
կը սլանանք այս անարդար  
աշխարհն ի վեր,  
այս անգամ մարդկութեան  
արդարութիւնը մեր ժանիքներուն մէջ առած  
ու բռունցքի հարուածը գալիքին մէջ պարփակած:



## Մ Ա Օ Օ Ք Ք Մ Մ Մ Ա Ն Ո Ռ Ք

Կ'աղօթեմ, Տէ՛ր, որ ծառերը չմահանան...  
Կ'աղօթեմ, Տէ՛ր, որ սէրերը չմահանան...  
Կաթիլներու ջուրին նման  
վեր բարձրանան եւ ամպանան  
ծածկեն գոլնտն այս ապականած  
ու վար ցօղեն դանդաղօրէն եւ համօրէն  
իջնեն գլխուն մէն մի մարդու եւ սրտերո՛ւն,  
մաքրեն մաղձը ու նախանձը  
մաքրեն կիրքը եսին հիւանդ:  
Կ'աղօթեմ, Տէ՛ր, որ ծառերը չմահանան...  
Կ'աղօթեմ, Տէ՛ր...  
Սերմերու պէս դաշտին նետուած  
ԽՈՂը ցնցուղ ցանես մտքին մէն մի մարդու  
եւ տաս անոր գիտակցութիւն՝  
վեհին անեղծ  
եւ վսեմին սրբամաքուր:

Կ'աղօթեմ, Տէ՛ր...  
Որ մարդուն մէջ,  
- կաւովն ափիդ մարդկայնացած-  
Որ մարդուն մէջ,  
- Քու պատկերով ճիշդ քանդակուած-  
Որ մարդուն մէջ,  
- ՄԱ՛ՐԴԸ... ՄԱ՛ՐԴԸ չմահանայ...

Կ'աղօթեմ, Տէ՛ր...

Հրանդ Մ. Մարգարեան  
Դեկտեմբեր 9, 1996  
Քանկրոս, Նիւ Եորք

Ծանօթ- Սոյն բանաստեղծութեան երաժշտութիւնը յօրինեց Հայր Մեղրիկ Բարիկեան, այժմ եպիս-  
կոպոս Մեծի Տանն Կիլիկիոյ Սիաբանութեան, յԱնթիլիաս, Դեկտեմբեր 1998-ին եւ որը վերանայած է  
Օգոստոս 1, 2018-ին յԱնթիլիաս:

## ԱԿՆԱՐԿ՝ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ՝ «ԱՂՕԹՔ ԱՄԱՆՈՐԻ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Լաւ բանաստեղծութիւնները կը ձեւաւորուին խոր մակարդակներու վրայ, որոնք անձանօթ եւ զիրենք ստեղծող գրողներու գիտակցական աշխարհին: Բանաստեղծութիւններ կան, որոնք պատկերներ կը բովանդակեն, յարաբերութիւններ կը մշակեն եւ հընչիւնային համակարգեր կը ստեղծեն: Ասոնք դժուար կը հասկցուին առաջին ընթերցումով, կամ՝ խտացած հիւսուածքով ուղղագիծ տրամաբանութեամբ:

Մարգարեանի բանաստեղծութիւնը կը սկսի աղօթքով, որ՝... ծառերը չմահանան:

«Ծառերը» բառը երեք բաղաձայն կը բովանդակէ: Առաջինը պայթուցիկ «ծա»ն է, երկրորդը, զօրաւոր թրթիռով «ռա» տառն է, որ կը խարսխէ «ծառերը» բառին պատկերը:


Երկրորդ տողը կրկնութիւնն է առաջինին, սակայն բանաստեղծը այս անգամ կ'աղօթէ, որ՝ սերերը չմահանան: «Ծառեր» բառին համանման այս բառը, «սէ» եւ «րէ» տառերով կը մեղմացնէ նախկինին մէջ նշուած բաղաձայնային կարծրութիւնները՝ զանոնք վերածելով մեղմ հնչոյթներու, ե՛ւ եութեամբ, ե՛ւ ստորադասութեամբ:

Ծառերը ջուրով կը սնանին, եւ սերը, բանաստեղծութեան առաջին տան մէջ, կը դառնայ ջուր, կը դառնայ ամպ, եւ երկրագունդին վրայ ցօղելով կը մաքրէ եւ կը սնուցանէ մարդուն ոգեկան եութիւնը:

Առաջին մասի երաժշտական աւարտին, բանաստեղծը կը հրամցնէ իր երկրորդ պատկերը, որը նոյնպէ՛ս, անձրեւի՝ դէպի-վար հոսքին նման, կրկին կը կամրջուի՝ «ծառ» բներգին՝ այս անգամ ցանուած սերմին հետ իմաստութիւն եւ լուսաւորուած խղճմտութիւն մատուցելով մարդ արարածին:

Մենք բանականօրէն մտային հունտ

կը ցանենք, որ կ'աճի եւ դէպի վեր կը սլանայ մեր գիտակցութեան մէջ: Եւ այսպէս, Մարգարեան իր գրութեան երկրորդ տունով, անձրեւի դէպի վար հոսքի ուղղութիւնը կը փոխէ դէպի վեր՝ «վեհ» եւ «վսեմ»... բառե-



րով: Վերջին երկու բառերը քրիստոնէական սրբութեան խորհրդանշաններ կը մատնանշեն... անեղծ, սրբամաքուր...:

Դէպի վեր սլացքը մեզ դէպի Աստուած կը տանի, կերտողը մարդ արարածին, այն արարածին, որ ծառերու նման կաւով կամ կալին մէջ կազմուած է: Բանաստեղծութիւնը կ'աւարտի աղօթքով՝ որ մարդ արարածը չմահանայ - բառացիօրէ՛ն:

«Մարդուն մէջի մարդուն մահացում» ար-



տայայտությունը տրամաբանական մեղմ հակադրություն մը կը ստեղծէ: Ինչպէ՞ս կարելի է *իքսի* մէջի *իքսը* մահանայ, առանց ամբողջական *իքսը* մահանալու: Լետագայ տողերը ասկայն եւ բանաստեղծութեան հիւղվոյթը կը լուսաբանեն այս հարցադրումը եւ կը լուծեն հակադրությունը:

Մարդը նուստացած էակ է առանց կարեկցութեան ջուրին եւ լուսաւորութեան հունտին: Առանց անոնց, ան չի կրնար հասնիլ մարդկային կարողականութեան իսկութեան: Կարեկցութիւնն եւ լուսաւորութիւնը վերուստ տրուած պարգեւներ են, եւ որոնց կարելի է հասնիլ միմիայն աստուածային շնորհքով, որ կը տրուի ի պատասխան աղօթքի աղերսին:

Հոմերոսեան իսկութեան տեսութիւնը, մարդը կը ներկայացնէ որպէս ծառ: Ծառին փոփոխուող տերեւները իր սերունդներն են, իսկ ճիւղերը, իր գաւազները. իսկ պատերազմը, սուր կացին է, որ սարերուն վրայի

կաղնիները կը հատէ:

Երբ մարդը կը ձախողի մարդ ըլլալէ, պատերազմելու կը դիմէ:

Մարգարեան իր բանաստեղծութեան մէջ ներմուծած է հին հնդեւրոպական՝ մարդարարած-ծառ յարակցութիւնը, որ կը բացայայտուի նաեւ հայկական ասանդութեան՝ «ծառն կենաց» բառակցութեամբ: Մարգարեան ներմուծած է նաեւ քրիստոնէական խորհուրդը՝ զայն դրսեւորելով մտային, կառուցուածքային եւ լեզուական հնչեղականութիւններով:

Այս փոքրիկ գլուխ գործոցը իր արժանի տեղը կը գրաւէ Հայ բանաստեղծութեան անդաստանին մէջ:

Ըսաներորդ դարու շարական մըն է այս բանաստեղծութիւնը եւ աղօթք՝ յաջորդ հազարամեակին համար:

**Փրոֆէսոր Ծէյմա Րապրոթ Րասսըլ  
Հարվըրտ Համալսարան, ԱՄՆ  
Հոկտեմբեր 1997**



**Փրոֆէսոր Ծէյմա Րասսըլ** շրջանաւարտ է ՆԵ-ի Զոլոմպիա Համալսարանէն: Տոբթորայի թեզը պաշտպանած է Լոնտոնի Համալսարանի Արեւելեան եւ Ափրիկեան Բաժանմունքին մէջ: Դասաւանդած է Զոլոմպիա Համալսարանէն ներս, ապա ստանձնած է Փրոֆէսորի պաշտօն Երուսաղէմի Հիպոլո Համալսարանին մէջ:

1993 - 2016 Պաշտօնավարած է Հարվըրտ Համալսարանէն ներս, որպէս Մերոպ Մաշտոցի անուան Փրոֆէսոր, Մերձաւոր Արեւելքի Լեզուներու եւ Բաղաքակրթութեան Բաժանմունքին մէջ: Վարչական անդամ է՝ Տէյվիս Կեդրոնի Ռուս եւ Եւրոասիական Բաժանմունքին մէջ: Փրոֆէսոր է նաեւ Հին Մերձաւոր Արեւելքի, Իրանական եւ Հայկական Կրթական Բաժանմունքին մէջ:

Համաշխարհային համբաւ վայելող գիտնականը, բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւններու տեր է եւ հեղինակ վեց համաշխարհայնօրէն ընդունուած անկիւնադարձային գիրքերու:

Ներկայիս կ'ապրի Ֆրեզնո, ԱՄՆ, ուր կը շարունակէ իր ուսումնասիրութիւնները: Ան նաեւ այցելու փրոֆէսոր է կարգ մը համալսարաններու մէջ:



# ԿԿՈՒ ԲԱՅԱՆԻԿ 2021







**«ԿԿՈՒ»Ի ԽՄԲԱԳԻՐ  
ՌԻԹԱ ԿԱՂԵԱՆ-ՏԻՔՊԻՔԵԱՆ**

**ՁԵԻԱԻՈՐՈՂ  
ՌԱՑՑՏԻ ՔԵՇԻՇԵԱՆ**





# ԿԱՂԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԻ ՉՈՐԱ ԾԱԳԵՐՈՒՄ

## ՖՐԱՆՍԱ

Կաղանդ Պապան՝ Բեդ Նոելը Ամանորի գիշերը կու գայ ու կօշիկներուն մէջ նուէրներ կը դնէ: Տօնական կարկանդակին մէջ հատիկ կը պահեն եւ այդ հատիկը որու որ բաժին իյնայ, ան կ'ըլլայ օրուան թագաւորը եւ բոլորը անխտիր պարտաւոր են կատարել իր հրամանները:

Տօնածառին տակ ֆրանսացիները կը սիրեն կաւէ տիկնիկներ դնել:

## ԱՆԳԼԻԱ

Անգլիոյ մէջ սովորութիւն է Նոր Տարուան գիշերը երեխաներու համար անգլիական հեքիաթներ բեմականացնել:

Անգլիայէն սկսած է ամանորեայ բացիկներ նուիրելու սովորութիւնը: Առաջին բացիկը տպուած է Լոնտոնի մէջ, 1843-ին:

## ՆԵՓԱԼ

Նոր Տարին կը նշեն արեւը մայր մտնելէն յետոյ: Գիշերը՝ լիալուսնի տակ նեփալցիները խարոյկներ կը վառեն եւ մէջը կը նետեն անպէտք իրերը: Նոր Տարուան առաջին օրը կը սկսին գոյներու տօնով՝ նեփալցիները իրենց դէմքերը, ձեռքերը, մարմինը կը ներկեն եւ կ'երգեն ու կը պարեն փողոցներուն մէջ:



# ՔՈՒՊԱ

Նոր տարուան նախօրեակին կաթսաներու մէջ ջուր կը լեցնեն, իսկ կէսօրին կը սկսին պատուհաններէն դուրս թափել ջուրը, մաղթելով որ նոր տարուան օրերը ըլլան բարեբեր ու հեզասահ:

Նոր տարուան գիշերը երբ ժամացոյցը 12-ը ցոյց տայ, քուպացիները անհրաժեշտ է որ ուտեն խաղողի 12 հատիկ, որպէսզի բարօրութիւնը, համերաշխութիւնն ու խաղաղութիւնը 12 ամիս իրենց ուղեկցին:

# ՇՈՒԷՏ

Նոր տարին առաջ երեխաները կ'ընտրեն երկրագունդի թագուհի Կուլչիային, սպիտակ հագուստներ կը հագցնեն, գլխուն լուսաւոր թագ կը դնեն: Կուլչիան նուէրներ կը բաժնէ երեխաներուն: Տուներն ու փողոցները վառ գոյներով կը լուսաւորուին:





# ԿԱՂԱՆԴ ՊԱՊՈՒԿՆ ՈՒ ԾԱՂՐԱԾՈՒՆԵՐԸ

Ռիթա Կաղեան-Տիբայիբեան

Կար ու չկար Մուսո անունով ծաղրածու մը կար: Այս ծաղրածուն բարեսիրտ էր, բայց շատ դժբախտ: Ան ուներ հիւանդ տղայ մը, որ ամբողջ օրը անկողինին կը ծառայէր: Խեղճ ծաղրածուն հոգ կը տանէր իր տղուն, որովհետեւ անոր մայրը ինքնաշարժի արկածով մահացած էր:

Ծաղրածուն հակառակ իր կեանքի դժուար պայմաններուն, ցաւը սիրտին մէջ պահած՝ կը յաջողէր խնդացնել երեխաները, այդ իսկ պատճառով բոլորը զինք կը սիրէին ու անհամբեր կը սպասէին:

Կրկեսին մէջ աշխատող ուրիշ ծաղրածու մըն ալ կար՝ Կիրօ անունով: Կիրօն չէր յաջողէր երեխաներուն ժպիտ պարգեւել, հետեւաբար երեխաները կը նախընտրէին Մուսո ծաղրածուին ներկայութիւնը:

Դեկտեմբեր ամսուն երկու ծաղրածուները որոշեցին միասին Կաղանդի տօնակատարութեան ճոխ յայտագիր մը պատրաստել: Սակայն սատանան շշնջաց Կիրօ ծաղրածուին ականջին.

*«Խելքդ աշխատցո՛ւր, յարմար առիթ է, որ Մուսո ծաղրածուին անել կացութեան մատնես, կրկեսի պատասխանատուն նեղանայ իր սխալ արարքէն եւ գործէն արձակէ զինք: Այդպիսով դուն կ'ըլլաս բոլորին սիրած ու փնտռած ծաղրածուն»:*

Իսկապէս շատ յարմար էր առիթը, տօնական օրեր էին, արձակուրդ էր, բոլորը պիտի ուզէին կրկես գալ: *«Ինչ լաւ կ'ըլլայ, որ այդ բազմութեան առջեւ Մուսո ծաղրածուն սխալ մը գործէ, ամօթով մնայ եւ գործէն արձակուի»*, մտածեց ան: Բայց ինչպէ՞ս...

Կաղանդի նախօրեակին, կրկեսը իր դռները բացաւ, երեխաները մեծ ուրախութեամբ փութացին կրկես:

Մուսո ծաղրածուն իր գաւակն ալ բերաւ: Ան մեծ դժուարութեամբ կրցաւ զինք տեղաւորել յարմար տեղ մը, որպէսզի բազմութենէն հեռու ըլլար եւ մարդիկ անըզ-

գուշօրէն չդպչէին խեղճ երեխային, որուն մարմինը վերքերով ծածկուած էր: Ան մաշկային անբուժելի հիւանդութենէ մը կը տառապէր:

Օրուան յայտագիրը շատ ճոխ էր: Ներկաները մեծ հետաքրքրութեամբ կը հետեւէին եւ ծափող-ջոխներով կը քաջալերէին:

Յայտագիրի վերջին բաժինը Կաղանդ Պապային յատկացուած էր:

Երկու ծաղրածուները երգով ու պարով պիտի դիմաւորէին Կաղանդ Պապան:

Մուսո ծաղրածուն ուրախ էր, որ այդ օր իր տղան ալ ներկայ էր: Ան

միշտ կ'ուրախացնէր երեխաները, սակայն իր գաւակը յաճախ զըրկուած կ'ըլլար այդ հաճոյքէն:

Երբ Կաղանդ Պապան ժամանեց, խանդավառութիւնը իր զագաթնակետին հասաւ, հրավառութիւնը սկսաւ: Գոյնզգոյն լոյսերը, Կաղանդ Պապուկին





գալուստը երանութիւն սփռեցին չորս դին: Ճիշդ այդ պահուն, Կիրո ծաղրածուն պահը յարմար նկատեց իրականացնելու իր ծրագիրը: Ան պայթուցիկներուն մէջ գաղտագողի դրած էր այնպիսի պայթուցիկ մը, որ շատ ուժգին էր, ականջներ կը խլացներ եւ մարմնային տարբեր վնասներ կրնար պատճառել: Կիրո ծաղրածուն այնպէս դասաւորեց, որ այդ սարսափազդու պայթուցիկը Մոսո ծաղրածունին ձեռքը անցներ եւ ան վառէր զայն: Բայց այդ վայրկեանին պայթուցիկը գետին ինկաւ, ճիշդ Կաղանդ Պապուկին ոտքերուն քով: Պայթուցիկին ուժգնութենէն խեղճ Կաղանդ Պապան ցնցուեցաւ ու գետին ինկաւ:

Կիրո ծաղրածուն անտարբեր մնաց եւ յանդիմանական նայուածք մը ուղղեց միւս ծաղրածունին: Ներկաները շքմեցան: Մոսո ծաղրածուն հանդարտօրէն ծռեցաւ, օգնեց Կաղանդ Պապային, որ ոտքի ելլէ, աթոռի մը վրայ նստեցուց զինք ու սկսաւ երգել.

Կաղանդ Պապան եկեր է,  
Չիր ու չամիչ բերեր է,  
Երկար պոպոս դրեր է,  
Կրկեսին մէջ կայներ է:

Ներկաները ձայնակցեցան, կրկին խանդավառութիւն տիրեց:

Մոսո ծաղրածուն երգեց ու պարեց, Կաղանդ Պապուկին նուէրներով լի ծրարը ուսին շալկած նուէրներ բաժնեց բոլորին:

Երեխաները կարծեցին, որ այդ ամենը կատակ էր:

Օրուան հերոսը Մոսո ծաղրածուն եղած էր, ան կրցած էր կացութիւնը փրկել եւ աւելին՝ տօնական ուրախ մթնոլորտ ստեղծել: Անոր հիւանդ տղան լիաթօք կը խընդար, կ'երգեր ու կը ծափեր:


Կրկեսին պատասխանատուն գնահատեց Կաղանդ Պապային դերը յաջողութեամբ կատարած Մոսո ծաղրածուն: Կիրո ծաղրածուն իր նպատակին չէր կրցած հասնիլ ու դեռ աւելին՝ ան իր սխալ արարքին պատճառով աշխատանքը կորսնցուց:

«Ան որ փոս կը փորէ իր եղբօր, ինքը կ'իյնայ անոր մէջ»:

Բարի կամեցողութիւն ունեցէ՛ք, եղէ՛ք բարեխիղճ ու միշտ լաւին, կատարեալին ձգտեցէ՛ք:



# ՍԱՆԹԱ ՔԼՈՉ ՔԱՂԱՔԸ



Երեւակայեցէք վայր մը, ուր ամբողջ տարուան ընթացքին Կաղանդ է...

Այս վայրը գոյութիւն ունի: Անիկա կը գտնուի Միացեալ Նահանգներու Ինտիանա նահանգին մէջ: Անիկա Սանթա Քլոզ քաղաքն է:

Սանթա Քլոզ քաղաքին մէջ Կաղանդի տօնը կը շարունակուի ամբողջ տարուան ընթացքին: Կաղանդի լոյսերը վառած կը մնան տասներկու ամիսներուն ընթացքին: Ամէն կողմէ կը լսուին Կաղանդի երգեր: Փողոցներուն անունները Կաղանդի բառապաշարէն առնուած են: Նոյնիսկ խանութները կը կրեն Կաղանդի վերաբերեալ անուններ՝ «Սանթա Քլոզ Հարտուէր», «Հոլիտէյ Տորթոզ», «Սանթա Քանտի Քասըլ»...





# ՄԼՀԱՒԱՏԱԼԻ ԲԱՅՅ ԻՐԱՒ

-Քանատայի մէջ յատուկ նամակատուփ մը կայ Կաղանդ Պապային յղուած նամակներուն համար: Անոր հասցէն HOH-OHO է:

-Աւստրալիոյ մէջ Կաղանդ Պապան երբեմն ուղղաթիռով կամ նաւակով կու գայ:

-Մեքսիքի մէջ կարգ մը մարդիկ մտուրը կը շտկեն բողկերով քանդակուած պզտիկ մարդուկներով:

-Պրագիլի մէջ սովորութիւն է Կաղանդի ծառը զարդարել իջնող ձիւնի փաթիլները յիշեցնող բամպակի փոքրիկ գունդերով:

-Ս. Ծնունդին գիշերը ճափոնցիները շատ կը սիրեն տապկուած հաւ ուտել:

-Միջնադարեան Անգլիոյ մէջ սովորութիւն էր Կաղանդին հրամցնել խոզի գլուխ՝ մանանեխով /*մութարտ*/:





# ԱՐՑԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՇԱԿՎՈՒՄՆԵՐԸ

## ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Գանձասարի ճարտարապետական համալիրը՝ շրջապատի չքնաղ բնութեան հետ, հայ ժողովուրդի հազարամեայ հարուստ ճարտարապետական ժառանգութեան հոյակապ գանձերն է:

Արցախի Մարտակերտի շրջանի Վանք գիւղին մօտակայքը գրտնուող Գանձասարի վանական համալիրը կառուցուած է 13-րդ դարուն:

Խաչէն գետի ափին բարձր բլուրի մը վրայ կը գտնուի Գանձասարի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցին ու գաւիթը, որոնք կառուցուած են (1216-1238) թուականին, Ջալալեան իշխաններու կողմէ:

Վանական համալիրի կառոյցներուն վրայ փորագրուած են շուրջ հարիւր գրութիւններ, որոնց մեծ մասը միջնադարեան արուեստի նմոյշներ են:

Գանձասար վանքը առաջին անգամ օծուած է Վարդավառ տօնին օրը: Վանքի պատերուն փորագրուած պատկերները առեղծուածային եւ անբացատրելի են, այդպէս ալ չորս կողմը սփռուած բնութիւնը:

Արցախեան ազատամարտի ընթացքին վանքը եղած է հակառակորդին գլխաւոր թիրախներէն մէկը. Վանքի պատերու պարիսպներուն վրայ մինչեւ այսօր կարելի է նկատել 90-ականներէն մնացած ռմբակոծումի հետքեր, նոյնիսկ չպայթած ռումբը, որ արձակուած էր վանքին ուղղութեամբ, սակայն նպատակին չէր հասած:

Վանքին մօտակայքը կարելի է տեսնել Գանձասարի մատենադարանը, որ կը կրէ Ս. Մեսրոպ Մաշտոցի անունը: Անկա բաղկացած է գիտական եւ թանգարանային բաժիններէ, գրադարանէ, ընթերցասրահէ եւ դահլիճէ, ուր կը կազմակերպուին գանազան ձեռնարկներ եւ գիտաժողովներ: Արցախի մատենադարանի մէջ կարելի է ծանօթանալ միջնադարեան ժամանակաշրջանէն մինչեւ ժամանակակից շրջանի ձեռագիրներու եւ հնատիպ գիրքերու:



## ԱՄԱՐԱՍԻ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

Ամարաս վանքի եկեղեցին հիմնադրած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ 4-րդ դարու սկիզբը: 5-րդ դարուն սկիզբը հայերէնի առաջին ուսուցիչ՝ Ս. Մեսրոպ Մաշտոց, Ամարաս վանքին մէջ հիմնած է առաջին հայկական դպրոցը, որ նպաստեց հայ մատենագրութեան տարածման: Այսպիսով վանական համալիրը դարձած է միջնադարեան Հայաստանի կրօնական եւ կրթական նշանաւոր կեդրոններէն մէկը:

489 թուականին Աղուանքի Վաչագան Գ. Բարեպաշտ թագաւորը Ամարասի մէջ կը վերագտնէ Ս. Գրիգոր Լուսաւորիչի թորան Գրիգորիս եպիսկոպոսի գերեզմանը եւ վրան մատուռ կը կառուցէ:

Ամարաս վանքը շրջապատուած եղած է հաստաբետ պարիսպներով, բերդամրոց մը, ուր հայ ժողովուրդը պատսպարուած է թշնամիներու յարձակումներէն:

Դարերու ընթացքին Ամարաս վանական համալիրը յաճախ ենթարկուած է մոնկոլներու, արաբներու, կովկասեան թաթարներու, ապա ազերիներու յարձակումներուն, սակայն ամէն անգամ կրկին վերականգնուած է հայ ժողովուրդի ստեղծագործ ջանքերով:

Ըստ աւանդութեան, վանքը նուաճող հրամանատար մը հրամայած է իր զօրքին աւերել եկեղեցին եւ բոլոր քարերը գետը նետել: Շարք կազմելով՝ զինուորները ձեռքէ ձեռք փոխանցած են քարերը եւ Երասխ գետ նետելով կատարած են հրամանատարին հրամանը: Սակայն կարճ ժամանակ մը ետք, հայերը նոյն ձեւով, կրկին վերականգնած են հրաշալի եկեղեցին:

1828 թուականէն մինչեւ 1989 թուական վանքը չէր գործեր, որուն յաջորդեց Արցախեան պատերազմը: Ամարասի վանքը 2005 թուականին, սկսած է վերստին գործել, երբ մեծ շուքով նշուեցաւ գիրքերու գիւտին 1600-ամեակը:



# ԴԱԴԻՎԱՆՔ

Դադիվանքը Արցախի հնագույն հոգևոր մշակութային կեդրոններէն մէկն է, որ հիմնուած է առաջին դարուն քրիստոնէութիւնը քարոզելու համար նահատակուած Դադէի մասունքներուն վրայ:

Դադիվանքի անուանումը կապուած է Թադէոս առաքելի 70 աշակերտներէն մէկուն՝ Դադէի հետ, որ Արցախ եկած էր քրիստոնէութիւնը տարածելու համար, սակայն Վերին Խաչէն գաւառին մէջ սպանուած է:

Դադիվանքը նաեւ Խութեվանք կոչուած է: Այս անուանումը համալիրը ստացած է բլուրի՝ խութի վրայ կառուցուած ըլլալուն պատճառով: Դադիվանքի կեդրոնական եկեղեցին Սուրբ Կաթողիկէն է, որ կառուցուած է 1214 թուականին Արգուխաթուն իշխանուհիին օրով: Իշխանուհին այս եկեղեցին կառուցած է իր ամուսնոյն եւ երկու որդիներուն յիշատակին:

Ուշագրաւ է եկեղեցւոյ մուտքի քանդակը: Եկեղեցին զարդարուած է հարուստ որմանկարներով: Անոնցմէ մէկուն վրայ Քրիստոս Աւետարանը կը մեկնէ Դաւիթ Սքանչելագործին, իսկ Աստուածածինը՝ խաչագարդ ուրարը: Եկեղեցւոյ երկայրկանի զանգակատունը 13-րդ դարէն է: Հոն կան երկու խաչքարեր, որոնց նմանը կարելի չէ գտնել: Խաչքարերը տեղադրուած են 1283-ին, վանքի առաջնորդ Աթանասի օրով: Աւանդութիւնը կը պատմէ, թէ խաչքարերուն նախշերուն համար որպէս օրինակ օգտագործուած են իշխանուհի Արգուխաթունի ձեռագործները:

Դադիվանքի մէջ կը գտնուի նաեւ հրաշքներու պատը: Աւանդութեան համաձայն, այս պատը մեծ զօրութիւն ունի: Այդ պատը կրնայ պահել իր վրայ փակցուած քարը:

12-րդ դարուն Դադիվանքի մէջ որոշ ժամանակաշրջան մը ապրած է հայ գիտնական, օրէնսդիր, առակագիր, հոգեւորական Մխիթար Գօշը: Ան Դադիվանքի մէջ գրած է իր «Դատաստանագիրք»ը:

Դադիվանքը բազմիցս ենթարկուած է թշնամիներու յարձակումներուն: 7-րդ դարուն, արաբական արշաւանքներու ժամանակ, վանքը կողոպտուած է, 12-րդ դարուն թուրք սելճուկները անքած են եկեղեցին: Խորհրդային Միութեան ստեղծումէն յետոյ, երբ տարածքները յանձնուեցան Ատրպայեյճանի իշխանութեան, եկեղեցւոյ որմանկարները զգալիօրէն վնասուած էին ազերիներու ձեռամբ: Վանքը ազատագրուած է 1993-ի Մարտ 31-ին եւ վերօծուած, իսկ 1999-էն սկսած են վանքին վերանորոգման աշխատանքները:



## ՇՈՒՇԻԻ ՂԱԶԱՆՉԵՑՈՑ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին կառուցուած է (1868-1887) թուականներուն, Արցախի Հանրապետութեան Շուշի քաղաքին մէջ: Եկեղեցին օծուած է 1888-ին, Սեպտեմբեր 20-ին:

Եկեղեցին յիշատակուած է Մեսրոպ Դախիտեանի «Ճամբորդութիւն Դէպի Հայաստան» գիրքին մէջ, հրատարակուած 1820-ին: Այն պատճառով, որ զանգակատունը կառուցուած է եկեղեցիէն առաջ եւ եկեղեցւոյ տեղը 18-րդ դարու պատկանող այլ եկեղեցի մը եղած է:

Սրբատաշ կաթնագոյն կրաքարով կառուցուած եկեղեցին՝ 35 մ. բարձրութեամբ, 23 մ. լայնքով, հայկական մեծ եկեղեցիներէն մէկը կը համարուի:

Եկեղեցին գործած է մինչեւ 1930 թուական, մասամբ նորոգուած է (1981-1988)ին: 1988 ին, ազերիները եկեղեցին վերածած են զինապահեստանոցի եւ զանգակատան հրեշտակներու արձանները քանդած են: 1992 Մայիս 8-ին, Շուշիի ազատագրումէն յետոյ, եկեղեցւոյ եւ զանգակատան նորոգութիւնը շարունակուած է, որ ավարտած է 1998-ին:

Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին վերաբացուած է եւ մեծ հանդիսութեամբ օծուած է 1998 Յուլիս 19-ին, Քրիստոսի Պայծառակերպութեան օրը:





# ՆՈՐ ՏԱՐԻ

Նոր Տարուան առաջին օրն էր տարեմուտը: Աշխարհի բոլոր ժողովուրդներուն համար իրենց քաղաքակրթական առաջին դարերէն ի վեր Նոր Տարին կը նկատուի հիմնական տօնական օրերէն մէկը: Սակայն տարբեր ժողովուրդներու Նոր Տարին տարբեր ժամանակներու կ'ըլլար: Ատիկա կապ ունէր աշխարհագրական միջավայրին, կրօնին եւ ասոնց համապատասխան ալ՝ օգտագործած տոմարին, այսինքն՝ ժամանակը չափելու գիտութեան հետ: Տոմարական փոփոխութիւններուն հետ կը փոխուէր նաեւ Նոր Տարին:

Ներկայիս աշխարհի շատ մը երկիրներ Յունուար 1-ը ընդունած են որպէս Նոր Տարի, այսինքն՝ քրիստոնէական Նոր Տարին, որ ծնունդ կ'առնէ հռոմէական տոմարէն:

Հայերս Նոր Տարին կոչած ենք նաեւ Կաղանդ կամ Ամանոր:

ԺԸ. դարուն, Սիմէոն Երեւանցի կաթողիկոսի տոմարով հայերը նոյնպէս ընդունեցին Յունուար 1-ը իբրեւ տարուան առաջին օրը եւ Ամանորի տօն:






# ԽԱՊԵՐ




Հետեւի՛ր Կաղանդ Պապուկը գծելու  
ցուցմունքներուն:



Ներկէ՛ր նախասիրած գոյներով:



Փորձէ՛ր գտնել ելքի ճամբան:



Կրնա՛ս գտնել պատկերին մէջ պահուած ուրիշ  
շարքաբէ գաւազանիկները:

# ՉԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ





Այս ձեռնայինին համար պետք ունիս պաղպաղակի ցպիկներու:  
Անոնցմէ վեցը ճերմակ ներկէ՛, իսկ երկուքը՝ կարմիր: Վարդագոյն խա-  
ւաքարտի մը վրայ գծէ՛ եւ կտրէ Կաղանդ Պապային կլորակ գլուխը:  
Կարմիր խաւաքարտի մը վրայ գծէ՛ եւ կտրէ՛ Կաղանդ Պապային  
եռանկիւն գլխարկը: Կարմիր երկու փայտիկները փակցո՛ւր գլխար-  
կին երկու կողմերը եւ մէկ ճերմակ ցպիկ՝ անոնց տակը: Մնացած  
ցպիկները՝ փակցո՛ւր Կաղանդ Պապային դէմքին վարի մասին վրայ:  
Ներկ մատիտներով աւելցո՛ւր Կաղանդ Պապային աչքերը, քիթը եւ  
վարդագոյն այտերը:





# ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌ

Այս ձեռայինն համար ալ պետք ունիս պաղպաղակի ցպիկներու, սակայն՝ լայն տեսակը: Երեք կանաչ ցպիկներ եռանկիւնի ձեւով իրարու փակցո՛ւր: Դեղին խաւաքարտի մը վրայ գծե՛ եւ կտրե՛ աստղ մը, գայն փակցո՛ւր եռանկիւնին գագաթը: Սրճագոյն խաւաքարտի մը վրայ գծե՛ եւ կըտրե՛ ծառին կոճղը եւ գայն փակցո՛ւր ծառին վարի բաժինին ետեւէն: Եռանկիւնին վրայ փակցո՛ւր տարբեր չափի գոյնըզգոյն կոճակներ:



## ՉԱՆԳԱԿՆԵՐ, ՉԱՆԳԱԿՆԵՐ, ՍԻՐՈՒՆ ՉԱՆԳԱԿՆԵՐ

Պէտք ունիս՝

Դեղին բարակ խաւաքարտերու, զոց կանաչ եւ կարմիր, բարակ խաւաքարտի կտորներու, գունաւոր բարակ պարանի կամ հաստ բուրդի, գունաւոր ուլունքներու:

Պատրաստութիւն

1-Դեղին խաւաքարտին վրայ շրջանակ մը գծե՛, կլոր պնակ մը գործածելով կտրե՛:

2-Պարանի կամ բուրդի կտորին երկու ծայրերը երեքական ուլունք անցո՛ւր եւ հանգոյց մը ըրե՛, որպէսզի դուրս չթափին:

3-Պարանը երկուքի ծալե՛ եւ գայն զետեղե՛ դեղին կլորակին ծայրը՝ պզտիկ բաժին մը դուրս ձգելով:

4-Դեղին խաւաքարտէ կլորակին երկու կողմերը թէթեւօրէն ծալե՛ պարանին վրայ, ինչպէս որ նշուած է նկարին մէջ կցիչով կցե՛:

5-Կանաչ խաւաքարտին վրայ գծե՛ եւ կտրե՛ Կահանդի տերեւներ, իսկ կարմիր խաւաքարտին վրայ գծե՛ եւ կտրե՛ կարմիր կլորակներ: Չաւոնք փակցո՛ւր զանգակին վրայ:





## ՆՈՐ ՏԱՐՈՒՄԸ ՄԱՂԹՄԸՔՆԵՐ ԵՒ ՆԱՄԱԿՆԵՐ ԿԱՂԱՆԴ ԳԱԳՈՒԿԻՆ

Սիրելի՛ Կաղանդ Պապա,

Այս տարի քիչ մը ուրախ, քիչ մը տխուր կը սպասեմ քեզի:

Այս տարի նախորդ տարիներուն չի նմանիր: Ես նուրբ չեմ սպասեր քեզմէ: Պապո՛ւկ, այլ երկու բան պիտի խնդրեմ: Առաջին խնդրանքս, որ նախ Շուշին վերադարձես, իսկ երկրորդը, որ այս տարի ինձի նուրբ չբերես, այլ՝ իմ նուրբը տանիս Արցախ, հոն կան բազմաթիւ նահատակներու զաւակներ, որոնք ինձմէ աւելի արժանի են նուրբի եւ կ'ուզեմ ուրախ տեսնել զիրենք, յուսամ գալուստդ ուրախութիւն պարգեւէ:

Բարի՛ Պապուկ, հաճիս իրականացո՛ւր խնդրանքներս:

Յարութ Աստարճեան  
Ազգ. Միացեալ Նախակրթարան  
Բ. կարգ

Երկար սպասումէ վերջ, վերջապէս հասաւ մեր բոլորին ամենասիրելի տօնը՝ Կաղանդը: Մենք սովորաբար հարազատներով կը տօնենք Նոր Տարին: Համադամ ճաշերով պատրաստուած սեղանը, Կաղանդ Պապուկին բերած գեղեցիկ նուրբները անսահման ուրախութիւն կը պատճառեն մեզի: Սակայն այս տարի նոյն խանդավառութիւնը չենք զգար. Համաճարակը, հայրենիքէն եկած լուրերը մեզի ցաւ կը պատճառեն:

Տէ՛ր Աստուած, այնպէս մը ըրէ, որ վերանան աշխարհի բոլոր չարիքները, ապրինք խաղաղ, առողջ ու երջանիկ: Մեր հայրենիքը վերագտնէ իր խաղաղութիւնը եւ թշնամին հեռանայ մեր երկրէն:

Սագօ Լախոյեան  
Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարան  
Է. կարգ

Նոր Տարի կը նշանակէ նոր յոյսեր, նոր փափաքներ եւ նոր կեանք:

Կը փափաքիմ, որ 2021 տարին ըլլայ առանց համաճարակի, ապրինք առողջ եւ իրականացնենք մեր երազանքները: Խաղաղութիւն թող տիրէ աշխարհին՝ յատկապէս մեր սիրելի հայրենիքին:

Յովնան Քէշիշեան  
Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարան  
Է. կարգ



Այս տարի շատ վատ տարի մըն էր: Մենք շատ կորուստներ ունեցանք: Կորսնցուցինք Արցախի հողամասերը, բազմաթիւ նահատակներ, որբացած երեխաներ, անտուն-անօթեւան արցախցիներ, հաշմանդամ զինուորներ ունեցանք: Ես պիտի խնդրեմ, որ 2021 տարին շատ ավելի բարեբեր ըլլայ:

Թող յաղթեն արդարն ու բարին: Թող լռեն բոլոր զէքերը ու խաղաղութիւն տիրէ:  
Տարօն Տիբախքեան  
Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարան  
Թ. կարգ

Սիրելի՛ Կաղանդ Պապա,  
Այս տարի շատ դժբախտ տարի մըն էր եւ շատ հողեր կորսնցուցինք: Քեզմէ կը խնդրեմ որ Արցախի գրաւուած հողերը վերադարձնելու ուժ տաս ժողովուրդիս, ինձի ալ զանազան գիրքեր նուիրես:

Բարի գալուստ կը մաղթեմ քեզի եւ անհամբեր կը սպասեմ որ նոր տարեշրջանը 2021-ը բարով բերես:

Կաղանդ Պապա, Արցախի իմ դասընկերներս չմոռնաս: Օգնէ՛ անոնց, որ տուն վերադառնան ու իրենք ալ ուրախ Նոր Տարի տօնեն:

Աւետիս ԶիլԱբօշեան  
Ազգ. Միացեալ Նախակրթարան  
Ե. կարգ

Սիրելի՛ Զմեռ Պապիկ,  
Կարօտով կը սպասեմ քեզի: Գիտե՞ս տակաւին խոստումս կը յարգեմ ու դասերս կը ջանամ կատարեալ պատրաստել՝ ըլլալու համար տիպար, օրինակելի հայ աշակերտուհի մը, պարծանք դառնալու ազգիս ու ընտանիքիս:

Կաղանդ Պապիկ, մեր տան դուռը միշտ բաց է քեզի համար, անհամբերութեամբ կը սպասենք գալուդ: Ինչ որ յարմար կը նկատես կրնաս բերել ինձի, սակայն քեզմէ երկու խնդրանք ունիմ եւ կը փափաքիմ, որ շուտով իրականացնես զանոնք: Առաջինը՝ երկրիս խաղաղութիւն, միասնութիւն, փոխադարձ յարգանք եւ իմաստութիւն, իսկ երկրորդը՝ անսահման ուժ եւ կորով մեր սահմանները պահպանող զինուորներուն, որպէսզի պաշտպանեն մեզ եւ վերադարձնեն գեղեցիկ ու չքնաղ մեր բնագրաւեալ Արցախը:

Ալինա Գրիգորեան  
Ազգային Միացեալ Նախակրթարան  
Ե. կարգ

Սիրելի՛ Կաղանդ Պապա,  
Այս նամակովս կ'ուզեմ քեզ տեղեակ պահել, որ մեր չքնաղ Արցախը գրաւած են թուրքն ու ազերին, այս պատճառով ես շատ տխուր եմ: Ոչ մէկ նուէր կ'ակընկալեմ քեզմէ այս տարի: Կը խնդրեմ, որ ինձի նուէր բերելու փոխարէն անտուն դարձած արցախցի երեխաները անպայման յիշես եւ վերադարձնես իրենց տուները, դպրոցներն ու այգիները, վերադարձնես մեր Արցախը եւ մէկ բռունցք դարձնես աշխարհի բոլոր հայերը:

Նուպար Տէկրիմէնճեան  
Ազգային Միացեալ Նախակրթարան  
Ե. կարգ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՄ ԶԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱՂԹԱՆԱԿԻ ՂՕՂԱՆՋՆԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ՊԻՏԻ ՀՆՉԵՆ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԵՆ ՆԵՐՍ ԵՒ ՍՈՒԳՆ ՈՒ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԻՆ ԶԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ	<b>Մասիս Եպս. Զօպուեան</b>	<b>1</b>
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՂ ԱԼԻԲԸ	<b>Չարմիկ Պողիկեան</b>	<b>5</b>
ԲԵՐԻՈՅ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ Հոկտեմբեր 2019- Դեկտեմբեր 2020		<b>8</b>
ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ 2020		<b>17</b>
ՍՕ ԽԱՉԻ ՈՒԽՏԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄ		<b>22</b>
102-ՐԴ ԱՄԵԱԿԸ ԲՈԼՈՐԱԾ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ 2020 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ		<b>34</b>
ՀԱԼԵՊԻ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ՝ 2020-ԻՆ Հարցազրոյցները վարեց՝	<b>Սեւանայ Հալլաճեան</b>	<b>45</b>
ԱՐԱԲԱԿԱՆ ԶԱՐԹՕՆՔԻ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ ԵՒ ՀԱԼԵՊԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՍԱՏՈՒՆԸ (ԺՁ. - ԺԷ. դդ.)	<b>Դոկտոր Հուրի Ազեզեան</b>	<b>48</b>
27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2020-ԻՆ ԾԱՅՐ ԱՌԱԾ ԱՐՑԱԽԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ Համադրեց	<b>Լուսին Ապաճեան-Զիլմբօշեան</b>	<b>55</b>
ՊԻՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՆՔ ՄԵՐ ԵՐԹԸ՝ ՊԱՏՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՅՐՈՒՂԻՆԵՐՈՒՄ ՎՐԱՅ	<b>Ս. Մահսերեճեան</b>	<b>66</b>
ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՓԻ ՄԷՋ	<b>Յակոբ Միքայելեան</b>	<b>79</b>
ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՌՃԱԿԱՏՈՒՄ ԱՐՑԱԽԵԱՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐՈՒՄ	<b>Խաչիկ Շահինեան</b>	<b>81</b>



ՊԱՔՈՒԷՆ ԶՆՉԱԾ ՅՍՏԱԿ ԿՈՉԵՐԸ	<b>Գեորգ Յակոբճեան</b>	<b>86</b>
ԱՐՑԱԽԻ ԶԻՄՆԱՅԱՐՑԸ ՈՒ ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ	<b>Յակոբ Նալպանտ-Տլտլեան</b>	<b>89</b>
ՉՈՒԳԱՅԵՌԻ ՄԸ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ...	<b>Միհրան Քիրտոզլեան</b>	<b>92</b>
ԽՈՅԵՐ	<b>Պերճուհի Աւետեան</b>	<b>95</b>
ՅԵՏ ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՄՏԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ	<b>Կարօ Վ. Մանճիկեան</b>	<b>99</b>
Արցախեան Պատերազմը Հայաստանեան Ապրումներով... Բաց Աչքերով	<b>Նայիրի Սկրտիչեան</b>	<b>104</b>
ԿԱՂԱՆԴԻ ԾԱՌԷՆ ԿԱԽՈՒԱԾ՝ ՆՈՐ ՏԱՐՈՒՄԱՆ «ՉԱՐԴԵՐ»	<b>Գեորգ Պետիկեան</b>	<b>107</b>
ՅՈՒՇԻԿ ԴԱՉԱՐԵԱՆԸ, ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՅՈՒՇՕՆ	<b>Սօսի Եագուպեան-Ղազարեան</b>	<b>110</b>
ԴԺՈՒՄՐ ԲԱՆ Է ՀԱՅ ԸԼԼԱԼԸ (Թարթափումներ)	<b>Մարուշ Երամեան</b>	<b>117</b>
ՄԵՆՔ	<b>Անի Բրդոյեան-Ղազարեան</b>	<b>120</b>
ՁԻՄԱՍՐՐԻԿ	<b>Մարիանա Պերթիզլեան-Ղազարեան</b>	<b>122</b>
ԱՐՑԱԽԻՍ	<b>Սեւան Հանէշեան-Պետուրեան</b>	<b>125</b>
ԱՂՕԹՔ ԱՄԱՆՈՐԻ	<b>Հրանդ Մ. Մարգարեան</b>	<b>127</b>
ԱԿՆԱՐԿ՝ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ՝ «ԱՂՕԹՔ ԱՄԱՆՈՐԻ» ԲԱՆԱՍԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ Փրոֆեսոր	<b>Ճէյմս Րապըրթ Րասսըլ</b>	<b>128</b>